

ԶՄՅՈՒՌՆԻԱ 1922

Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՐԱՆ

ԴԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳԵՏԱԶՈՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ

ԶՄՅՈՒՆԻԱ 1922

**ԲԺԻՇԿ Կարապետ Խաչերյանի
օրագիրը**

**ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ԴՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2011**

ԴՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (23)
Ա-294

Արևմտահայերեն տեքստերը արևելահայերենի
փոխադրող՝ Լարիսա Գևորգյան

Դամակարգչային ընդիանուր ծևավորումը՝ Մարտ Մանավյան
Կազմի ծևավորումը՝ Անահիտ Աբրամյան

Սաքայան Դորա
Ա-294 Զմյուռնիա 1922. թժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը / Դորա Սա-
քայան, ԵՊԴ, Դայագիտ. հետազոտ. ինստ.- Եր.: ԵՊԴ հրատ., 2011.- 200
էջ:

ԴՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (23)

ISBN 978-5-8084-1391-7

© ԵՊԴ հրատարակչություն, 2011 թ.
© Սաքայան Դ., 2011 թ.



ԴՐ ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆ
(1876-1952)

Բժիշկ ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆԻ
«ԶՄԻՒՌՆԻՀԱԿԱՆ ԱՐԼԱԾԱՆԵՐՍ 1922-ԻՆ»
ՕՐԱԳՐԻՆ ԱՎԻՐՎԱԾ ԲԻՋԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Գլխավոր խմբագիր՝ ՂՈՐԱ ՍԱՔԱՅԱՆ

1. **Տօքթ. Կարապետ Խաչերեան, Զմիւռնիհական արլածներս 1922-ին.** Montréal: Arod Books, 1995, 2. Ausgabe 1997.
2. **An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian: My Smyrna Ordeal of 1922.** Արևմտահայերենից անգլերենի թարգմանեց՝ Դոդա Սաքայանը. Montréal: Arod Books 1997.
3. **Smyrne 1922: Entre le feu, la glaive et l'eau. Les épreuves d'un medecin arménien.** Անգլերենից ֆրանսերենի թարգմանեց՝ Ethel Grossier. Paris: L'Harmattan 2000.
4. **Μεταξύ πυρός, ξύφους και θαλάσσης: Στην Σμύρνη το 1922.** Անգլերենից հունարենի թարգμանեց՝ Nakos Protopapas. Montréal: Arod Books 2001.
5. **Esmirna 1922: Entre el fuego, el sable y el agua. El diario del Dr. Hatcherian.** Անգլերենից ու արևմտահայերենից իսպաներենի թարգմանեց՝ Juan R. S. Yelanguezian. Montréal: Arod Books 2001.
6. **Bir Ermeni Doktorun Yasadıkları. Garabet Haçeryan'ın İzmir Güncesi.** Անգլերենից թուրքերենի թարգմանեց՝ Atilla Tuygan. İstanbul: Belge, 2005.
7. **Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը** արևելահայերենով: Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան, 2005.
8. **Смирна 1922. Дневник Карапета Хачеряна.** Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան, 2005.
9. **Smyrna 1922. Das Tagebuch des Garabed Hatcherian.** Գերմաներենի թարգմանեց՝ Դոդա Սաքայանը, Klagenfurt: Kitab, 2006.

Զմյուռնիայի աղետի վիթխարիությունը
կարող էր՝ եթե ոչ կանխվել, ապա գոնե
նվազեցվել, եթե առկա չլիներ կրկնակի
մի պատրանք. դաշնակիցների վստահու-
թյունը թուրքերի՝ և Փոքր Ասիայի բրիս-
տոնյաների վստահությունը դաշնակից-
ների նկատմամբ:

Ռենե Փյուռ
«Զմյուռնիայի վերջին օրերը», Փարիզ 1923

René Puaux

Les derniers jours de Smyrne, Paris 1923

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բժիշկ Կարապետ Խաչերյանի կենսագրությունը.	9
Խաչերյան գերդաստանի տոհմածառը.	16
Ներածություն.	17
Զեռագրի նմուշներ	26
Զմյուռնիայի «Հայնոց» թաղամասը	28
Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը.	29
Եզրափակիչ խոսք	93
Ծանոթագրություններ	101
Նկարներ ու քարտեզներ	119
Բժիշկ Կ. Խաչերյանի օրագրի ընդունելությունը	143
Գրականություն	191

Դ-Ր ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆ Համառոտ կենսանգրություն

Դ-Ր Կարապետ Խաչերյանը ծնվել է 1876 թ. Պարտիզակում¹, հայտնի նաև թուրքական Բախչեշիկ (Bahçecik) անվամբ: Պարտիզակ անունը տրվել է Խօմիտ (Նիկոմդիա) նահանգի ութ փոքրիկ գյուղերից բաղկացած ավանին, որի գյուղերից հինգում ապրում էին հայեր, մեկում՝ հույներ, մյուս երկուսում՝ մահմեդականներ: Դարասկզբում Պարտիզակի բնակչությունը կազմում էր 10,500 մարդ, որի գերակշռող մասը հայախոս էր (Տեր-Հակոբյան, 1960: 32): Այստեղից էլ՝ հայկական անունը՝ «փոքրիկ պարտեզ» նշանակությամբ: Պարտիզակը Թուրքիայի հյուսիսում ասհմանակից է Մարմարա ծովին և գտնվում է Կոստանդնուպոլիսից ոչ հեռու: Քաղաքը հիմնադրվել է 17-րդ դարում այն հայերի կողմից, որ փախել էին թուրք-պարսկական պատերազմի ժամանակ ուազմադաշտ դարձած Սեբաստիայի նախկին՝ բուն Պարտիզակ գյուղից:

Պարտիզակի բարենպատ աշխարհագրական դիրքը անտառապատ բլուալանջերին, ծովի կազդուրից օդը, գեղեցիկ քարաշեն տները՝ չքնաղ ծաղկատաններով, այն դարձել էին Կոստանդնուպոլսում և նրա շրջակայքում ապրող հարուստ հայ մտավորականության համար ամառանցային հրապուրիչ մի վայր: Սակայն Պարտիզակը հայտնի էր ո՞չ միայն իր բնական գեղեցկությամբ, այլև մշակութային կենսունակ կյանքով: Այնտեղ գործում էին հայկական ութ դպրոցներ (այդ թվում՝ մեկ քոլեջ) և առաքելական, կաթոլիկ ու բողոքական դավանանքները ներկայացնող հայկական մի քանի եկեղեցիներ: Պարտիզակում լույս էին տեսնում առնվազն երեք անուն հայատառ լրագրեր ու պարբերականներ: Համբավ ուներ նաև հայ սիրողական թատրոնը: Պարտիզակը հայտնի էր իր բժշկական ու դեղագործական հաստատություններով՝ իրենց առաջնակարգ բժիշկներով ու դեղագործներով: Զնայած հա-

մեստ տարածքին՝ Պարտիզակը Փոքր Ասիայի հայ գրական գործունեության կենտրոններից մեկն էր, որտեղ մշակվում էր հայերենի թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը: Կարճ ասած՝ Պարտիզակի աշխույժ ու ներշնչող միջավայրը արտացոլում էր 19-րդ դարի Անատոլիայում հայ գրականության ու մշակույթի վերածնունդը:

Կ. Խաչերյանը Պարտիզակի հայտնի Խաչերյան գերդաստանի շառավիղներից է (տե՛ս էջ 16): Նախնական կրթությունն ստացել է Պարտիզակի ազգաաամալսարան³, որն ավարտել է 1901-ին: Բժշկական ուսումնառության վերջին տարիներին նա միաժամանակ աշխատել է Կոստանդնուպոլսի հայկական և ֆրանսիական հիվանդանոցներում: Ապա Բուրսայի համանգում⁵ գրեթե տասը տարի նա վարել է թաղապետական բժշկի պաշտոնը: 1910-ին վերադարձել է իր ծննդավայրը՝ Պարտիզակ, որտեղ աշխատել է որպես ընտանեկան բժիշկ: Միաժամանակ առողջապահության ու քաղաքացիական կրթության դասեր է տվել տեղական հայկական դպրոցներում մինչև Առաջին աշխարհամարտը: 1907-ին ամուսնացել է Էլիզա Կոստանյանի հետ՝ ծնված Ակ-Հիսար քաղաքում: Խաչերյաններն ունեցել են երեք որդի՝ Խաչերն (ծն. 1909), Գրիգոր (ծն. 1913), Հովհաննես (ծն. 1916), և երկու դուստր՝ Սիրապիի (ծն. 1911) և Վարդուհի (ծն. 1921):

1914-ին Պարտիզակի 1500 այլ երիտասարդների հետ միասին Կ. Խաչերյանը զինակոչվել է և Առաջին աշխարհամարտի ամբողջ ընթացքում հարյուրապես աստիճանով որպես բժիշկ ծառայել է թուրքական բանակում: Կոստանդնուպոլսում, Դարդանելում, Ջմյունիայում և Ռումինիայում փայլուն ծառայության համար նա պարզեւատրվել է զինվորական մի շառք շքանշաններով: Մինչ Կ. Խաչերյանը ծառայում էր թուրքական բանակում, 1915-ին նույն բանակի զինվորներն ու թուրքերի ամբոխները ջարդեր էին կազմակերպում Պատմական Հայաստանի ու ամբողջ Թուրքիայի հայաբնակ գյուղերում ու քաղաքներում. անմասն չի մնացել նաև Պարտիզակը, որի ամբողջ հայ բնակչությունը կա՛մ կոտորվել, կա՛մ տեղահանվել է, իսկ հայկական Պարտիզակը հիմնովին կոր-

ծանվել է (Մխալյան 1938; Տեր-Հակոբյան 1960):

Զինադադարին (1918) Կ. Խաչերյանը գորացրվել է և ընտանիքի հետ բնակություն հաստատել Զմյուռնիայում՝ այնտեղից 80 կմ հյուսիս գտնվող Էլիզա Խաչերյանի ծննդավայրը հանդիսացող Ակ-Հիսարի մոտակայքում, որտեղ դարեր ի վեր ապրում էր Էլիզայի հարազատների Կոստանյանների գերդաստանը: Այնտեղ Կոստանյանները բնակվում էին իրենց պապենական կալվածքում, որն ընդգրկում էր հսկալյական տարածք զբաղեցնող եկամտաքեր ագարակներ: Ակ-Հիսարի կալվածքում պատերազմի ընթացքում ապաստան էին գտել Կ. Խաչերյանի կինն ու զավակներից չորսը, ինչպես նաև Պարտիզակի ջարդերից փախած Կ. Խաչերյանի եղբոր՝ Նշան Խաչերյանի ընտանիքը և նրանց մայրը՝ Վարդենի Խաչերյանը:

Զմյուռնիայում Կ. Խաչերյանը շատ շուտով բարձր դիրքի է հասել: Ստանձնել է ազգային հիվանդանոցի⁸ վիրաբույժի և կանաց հիվանդությունների⁷, միաժամանակ այցելու հիվանդների ներքին ու արտաքին հիվանդությունների բժշկի պաշտոնները: Երանդուն կերպով մասնակցելով Զմյուռնիայի հայ գաղութի հասարակական կյանքին՝ նա դարձել է տեղի հայունի դեմքերից մեկը: Սակայն 1922-ին՝ Զմյուռնիայի աղետի ընթացքում, Կ. Խաչերյանի գործունեությունը հանկարծակիորեն ընդհատվել է: Մի քանի օրվա ընթացքում Կ. Խաչերյանը կորցրել է իր ամբողջ ձեռք բերածը և նույնիսկ թուրքերի կողմից ձերբակալվել ու բանտարկվել՝ համաձայն հատուկ հրամանագրի, ըստ որի՝ հայ և հույն 18-45 տարեկան տղամարդիկ հայտարարվել էին ուազմագերիներ: Բանտարկության ընթացքում վեց երկար օրեր տառապելուց և հայ ու հույն քրիստոնյա իր հայրենակիցների շարչարանքներին ականատես լինելուց հետո նա ապացուցել է, որ տարիքը 45-ից բարձր է ու քանի ազատվել: 1922-ի սկստեմբերի 24-ին Խաչերյանների ընտանիքին հաջողվել է շրջենավ նստել ու փախչել Հունաստան՝ Միտիլի կղզին՝ իրենց հետևուս՝ Ակ-Հիսարում թողնելով Կոստանյան ու Խաչերյան գերդաստանների տասը անդամներին, որոնց թվում էին Խաչերյան գույգի մայրերն ու եղբայրները իրենց ընտանիքներով: Գեմալյական

բանակը, գրավելով Զմյուռնիան ու շրջանները, հազարավոր քրիստոնյաների հետ միասին կոտորել է Ակ-Հիսարում գտնը-վող երկու ընտանիքներին և՝ Կոստանդնուպոլիսի և Խաչերյան-ների, բոլոր անդամներին:

1923-ի գարնանը Կ. Խաչերյանը կնոց և օպավակների հետ Միտիլիից փոխադրվել է Սելանիկ, որտեղ որոշել է բնակություն հաստատել: Նա այնտեղ ճշանակվել է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸ) տեղական մասնաճյուղի մանկական դարմանատան գլխավոր բժիշկ:

Մանկական դարմանատան կազմալուծումից հետո Կ. Խաչերյանը Սելանիկում աշխատել է որպես Շերքին ու կանանց հիվանդությունների բժիշկ: Նրա հիվանդները հիմնականում Փոքր Ասիայի աղետից փրկված հայ և հույն փախըստականներ էին:

1950-ին բժիշկ Կ. Խաչերյանը և իր տիկինը՝ Էլիզան, նրանց երկու որդիները՝ Գրիգորը և Հովհաննեսը, նաև կրտսեր դստեր՝ Վարդուհու ընտանիքը միացել են ավագ որդու՝ Խաչերես Խաչերյանի ընտանիքին, որն այն ժամանակ ապրում էր Փարիզում: 1951-ին Խաչերյանների ամրող գերդաստանը, Սիրարդիի ու նրա ընտանիքի բացառությամբ⁸, փոխադրվել է Արգենտինա՝ բնակություն հաստատելով մայրաքաղաք Բուենոս Այրեսում: Այնտեղ էլ 1952-ի փետրվարին բժիշկ Կ. Խաչերյանը վախճանվել է:

Որտեղ էլ որ ապրել է, ամրող կյանքի ընթացքում Կ. Խաչերյանը իր տաղանդն ու եռանդը նվիրել է հայ համայնքի բարեկեցությանը: Հարգված բժիշկ լինելուց բացի՝ Կ. Խաչերյանը հանրածանոթ էր որպես հասարակական գործիչ՝ գրադեցնելով զանազան կարևոր պաշտոններ, հաճախ՝ մի քանիսը միաժամանակ: 1908-ին նա մասնակցել է ՀԲԸ-ի տեղական մասնաճյուղի հիմնադրմանը և երկար տարիներ այդ մասնաճյուղի նախագահն է եղել: Պարտիզանակում, այդ պաշտոնին զուգընթաց, երկու տարի պաշտոնավարել է նաև որպես թաղապետության նախագահ (1911-1913): Զմյուռնիայում եղել է Դատաստանական խորհրդի⁹ անդամ (1919-1921) և ապա՝ մոտավորապես մեկ տարի, նոյն խորհրդի ատենադպիրը: Մի-

տիլլիում, ինչպես նաև Սելանիկում, նա ստեղծել է հայ փախատականներին օժանդակելու կոմիտեներ: Սելանիկում նույնպես նա հանրային արգասավոր գործունեություն է ծավալել՝ 1927-ից գրադեցնելով Քաղաքացիական ժողովի, իսկ 1928-ից՝ Դատաստանական խորհրդի նախագահի պաշտոնները: Նույն քաղաքում տարիներով եղել է նաև հայ թաղապետական խորհրդի նախագահը կամ անդամը: Սելանիկում ապրած բոլոր տարիների ընթացքում եղել է ՀԲԸՄ-ի տեղական մասնաճյուղի անդամը կամ նախագահը:

Մեծ է նաև Կ. Խաչերյանի մասնակցությունը հայ մանուկների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպելու գործում: Նա եղել է Սելանիկի Կյուլապի Կյուլպենկյան հայկական վարժարանի արտոնատերն ու խնամակալը, ինչպես նաև նույն դպրոցի հոգաբարձության ատենապետը կամ անդամը: Սկզբունքով անկուսակցական՝ նա տարիներով ծառայել է Սելանիկի Ազգային վարժարանում՝ որպես հոգաբարձութան նախագահ, չնայած որ այդ դպրոցը գտնվում էր դաշնակցական կուսակցության հսկողության ներքո:

Կ. Խաչերյանը աշխատակցել է մի շարք թերթերի: Նրա գրչին են պատկանում հատկապես առողջապահության թեմաներին առնչվող բազմաթիվ հոդվածներ՝ տպագրված «Բժիշկ», «Հայրուծ» և այլ ազգային թերթերում ու հանդեսներում:

Կ. Խաչերյանը ապրել է որպես ազնիվ ու խստաբարո քաղաքացի, մեծ հայրենասեր և բարեպաշտ հայ քրիստոնյա: Նա չի պատկանել որևէ քաղաքական կուսակցության, սակայն մեծ հավատ ընծայելով ՀԲԸՄ-ի բարեգործական նապատակներին՝ եղել է նրա նվիրյալ աշխատակիցը: Իր մասնագիտական ու քաղաքացիական պարտականությունները նա կատարել է լրջությամբ ու նվիրումով, որի համար ամենուր վայելել է թե՛ ազգակիցների, թե՛ օտարների սերն ու հարգանքը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Էջ 9-13)


1. Դր. Խաչերյանի կենսագրությունը Բիմնված է երեք հայրենական ուսումնասիրությունների վրա: Դրանք են՝ Մակարյանի (1929), Մխալյանի (1938) և Տեր-Հակոբյանի (1961): Վերջինն եղել է Պարտիզակի վերջին հայ կառավարիչը: Հայրենակցական այս ուսումնասիրություններից առաջին երկուսը առանձին էշերի վրա պարունակում են Կ. Խաչերյանի կենսագրությունը և կրում նրա լուսանկարը: Բացի այս աղբյուրներից՝ օգտագործել եմ հանգույցալ մորս՝ Սիրարփի Խաչերյան-Սաքայանից ինձ փոխանցված տեղեկությունները, ինչպես նաև անձնական հուշերու մանկական տարիներից: Մեծ ժողու օրագիրը ձեռքս անցնելուց հետո հարցագրույցներ եմ ունեցել նաև Արգենտինայում ապրող մորեղբորս՝ Հովհաննես Խաչերյանի, և մորաքրոջ՝ Վարդուիթի Խաչերյան-Կյուրճյանի հետ:
2. Բժիշկ Կարապետ Խաչերյանը Պարտիզակի Խաչերյան մեծ գերդաստանի հետնորդներից էր: Ըստ Մխալյանի (1938, 82):՝ Խաչերյանների ընտանիքը սերում է Մեծ հաջի Խաչեր տոհմից: Մեծ հաջի Խաչերը ապրել է Պարտիզակում (1750–1809) և հոչակվել որպես Պարտիզակի հիմնադիրը և նրա փայլուն կառավարիչը: Նա մեծապես խթանել է Պարտիզակի բարգավաճումը՝ կառուցելով ճանապարհներ, շենքեր, եկեղեցիներ ու գյուղական աղբյուրներ՝ ապահովելով ջրամատակարարությը, զարգացնելով կրթության գործը և այլն: Իբրև ուսյալ մարդ՝ նա գրել է բնակավայրի պատմությունը: Ասում են, որ Հաջի Խաչերը եղել է Գրիգոր Աղային Դավիթ իշխանի որդին կամ հորեղբորորդին: Տե՛ս էջ 16, Խաչերյանների տոհմածառը, որը միակն է Մխալյանի (1938, 82):՝ Պարտիզակին նվիրված ծավալուն հատորում:
4. Ասում են, որ այդ տարիների Կոստանդնուպոլսի բժշկական համալսարանը Բիմնված է եղել արևմուտքում գործող բժշկական համալսարանների ուսումնական ծրագրերի վրա և գիտական բարձր մակարդակ է ապահովել (Toynbee 1927, 245):

5. Ըստ Մակարյանի Աերկայացրած կենսագրության՝ բժիշկ Կարապետ Խաչերյանը տասը տարի ծառայել է Բուրսայում: Սակայն ըստ քեռուս՝ Հովհաննես Խաչերյանի, այդ տասը տարիների ընթացքում իր հայրը ծառայել է ոչ թե Բուրսայում, այլ Մաղնիսայում:
6. Տե՛ս էջ 104, ծանոթագրություն 7:
7. Ժամանակակից բժշկության մեջ այս երկու մասնագիտությունների համադրումը անսովոր է: Սակայն անցյալի բժշկական կրթությունը կրում էր շատ ավելի տարրողունակ բնույթ:
8. Նրանց ավագ դուստրը՝ Սիլիարիի Խաչերյան-Սաքայանը, ամուսնու՝ Գևորգ Սաքայանի, և երկու դուստրերի մետ, որոնցից կրտսերը ես եմ, 1946-ին հայրենադարձել է Խորհրդային Հայաստան:
9. Դատաստանական խորհուրդները յուրաքանչյուր հայկական համայնքի կարևորագույն մարմինն էին, որոնք կատարում էին հիմնական եկեղեցական ծեսերը՝ կառունք, ամուսնություն, հուղարկավորություն, ինչպես նաև համայնքի անդամների համար խորհրդատըվություններ (ամուսիններին, ընտանիքի տարբեր անդամներին հաշտեցնելու և այլ նպատակներով անցկացվող նիստեր): Կոստանդնուպոլիսի Հայկական Առաքելական Եկեղեցու Պատրիարքարանը ներկայացնող այս խորհուրդները պատասխանատու էին տեղական հայ բնակչության մասին տեղեկությունների հավաքագրման և պահպանման համար և իրավասություն ունեին Հայկական Պատրիարքարանի անունից ծնակերպել փաստաթղթեր ու վկայականներ:

Աստղագույն վյուղում և յունկը

Tun Urumchi 1938: 82)

Դաստիարակության պահանջման առաջնային գործությունները



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչպես ձեռքս անցավ թժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը: Նախ ասեմ, որ թժիշկ Կարապետ Խաչերյանը մեծ հայրս է՝ մայրիկիս՝ Սիրարդի Սաքայանի (ծն. Խաչերյան) հայրը: Մեծ հորս թողած օրագրի գոյության մասին առաջին անգամ տեղեկացա արգենտինաբնակ կրտսեր քեռուց՝ Հովհաննես Խաչերյանից, 1992-ի դեկտեմբերին: Այդ տարի Հովհաննես մորեղբայրս իր տիկնոջ՝ Սիրվարդի հետ Արգենտինայից մեզ այցելում էր Միացյալ Նահանգների Ֆլորիդա նահանգը, ուր ես ես գտնվում էի ամուսնուս հետ: Արդեն քանի տարի է, որ մենք այստեղ գալիս էինք՝ խուս տալու նպատակով Կանադայի ցրտաշունչ ճմուանից: Քենիս ինձ հայտնեց, որ միշտ էլ իր հոր օրագրի գոյությունից տեղյակ է եղել ու անցյալում էլ ինչ-որ ժամանակ այն կարդացել է, քայլ պապիկիս մահվանից հետո այդ օրագիրը ժառանգել է ավագ քեռի՝ Խաչերես Խաչերյանը, իսկ Վերջինին՝ 1975-ին վախճանվելուց հետո՝ նրա դուստր Սոնյա Խաչերյան-Թադևոսյանը: Ահա Սոնյայի միջոցով է, որ օրագիրը կրկին անցել է Հովհաննես քեռու ձեռքը: Խմ խնդրանքով 1993-ի գարնանը Հովհաննես քեռիս հիշյալ ձեռագրի պատճենը Արգենտինայից ինձ՝ Կանադա ուղարկեց:

Օրագրի ընթերցումը, բնականաբար, ցնցող տպավորություն գործեց ինձ վրա, և ես ցավ զգացի, որ այսքան երկար ժամանակ տեղյակ չեմ եղել մեծ հորս թողած այս կարևոր պատմակենսագրական փաստաթղթի գոյությանը: Գիտակցելով, որ այդ գրվածքը ո՛չ միայն մեր ընտանիքին, այլև մեր ամբողջ ազգին է պատկանում, անհապաղ ձեռնամոլիս եղա այն մեքենագրելու և հրապարակելու գործին: Հայերեն բնագիրը հրատարակել եմ երկու անգամ՝ 1995-ին և 1997-ին: Այս հրատարակություններին կցել եմ մեծ հորս համառոտ կենսագրությունը, ներածական մաս, մի շարք լուսանկարներ ու քարտեզներ: Ակնհայտ էր, սակայն, որ այս կարևոր ձեռագիրը պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ էր, որ անմիջապես պետք է ներկայացվեր նաև մեր ազգից դուրս գտնվող լայն

հանրության ուշադրությանը: Այդ իսկ նպատակով առաջին հերթին կատարեցի օրագրի անգլերեն թարգմանությունը և այն տպագրեցի 1997-ին իմ իսկ հիմնած (Montreal: Arod Books) հրատարակչությունում: Անգլերեն հրատարակությունը, որ լույս է տեսել *An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian: My Smyrna Ordeal of 1922* [Մի հայ բժիշկ Թուրքիայում. Կարապետ Խաչերյան՝ «Զմյուռնիական արկածներս 1922-ին»] վերնագրով, շատ ավելի ընդարձակ է, քան դրան հայուրդող երկու հայկական հրատարակությունները: Եվ դա ո՞չ միայն շնորհիվ ավելի ընդարձակ կենսագրականի ու ներածական մասի: Կ. Խաչերյանի օրագրի մեջ նկարագրվող եղելությունները օտարազգի ընթերցողին ավելի հասկանալի դարձնելու նպատակով հարմար եմ նկատել կցել պատմական ու կենսագրական բնույթի մեծ թվով և երբեմն բավական ծավալուն ծանոթագրություններ: Ավելացրել եմ նաև լուսանկարների ու քարտեզների թիվը ու գրել եզրափակիչ խոսք՝ զետեղելով մեծ հորս մասին իմ ունեցած հուշերից, ինչպես նաև մտորումներս մեծ հորս թռղած օրագրի մասին: Անգլերեն հրատարակությանը կցել եմ նաև Զմյուռնիայի աղետի պատմական ժամանակաշրջանին և մասնավորապես Հայոց ցեղասպանությանը վերաբերող գրականության ցանկ: Նոր կառուցվածքը ու բովանդակությունը ունեցող անգլերեն այդ համորը մեծ հաջողություն ունեցավ, և պահանջ առաջացավ, որ օրագիրը տպագրվի մի շարք այլ լեզուներով ևս: Անգլերեն տարրերակի հիման վրա իրար հետևից լույս տեսան ֆրանսերեն (Paris: L'Harmattan, 2000), հունարեն (Montreal: Arod Books, 2001), իսպաներեն (Montreal: Arod Books, 2001), թուրքերեն (Պոլիս: «Բելգե» 2005, հրատարակիչ՝ Ռ. Զարաքոլու) և ուստերեն (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան, 2005) հրատարակությունները:

Ներկա հաստորք Կ. Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագրի և հավելյալ մասերի երկրորդ և վերամշակված արևելահայերեն հրատարակությունն է: Առաջին հրատարակությունը լույս է տեսել 2005 թվականին Երևանում, Հայոց ցեղասպանության թանգարանի կողմից Հայոց եղեռնի 90-ամյակի առթիվ: Այն արևելահայերենով ներկայացնելու որոշումը բխում է սույն օրագիրը Հայաստանի և Սփյուռքի արևելահայերեն խոսող լայն խավերին մատչելի դարձնելու անհրաժեշտությունից:

Զեռագրի կառուցվածքի ու բովանդակության մասին: Հնդ-հնանոր առմամբ՝ ձեռագիրն ունի օրագրային և ինքնակենսագրական բնույթ. այստեղ արձանագրվում էն 1922-ի խնդրո առարկա ժամանակահատվածի՝ Զմյուռնիա քաղաքի ամենօրյա նշանակալի իրադարձությունները և դրանք վերապրող հեղինակի ապրումներն ու խոհերը: Ցուրաքանչյուր օրվա նկարագրությունը սկսվում է տվյալ օրվա, ամսաթվի և տեղ-տեղ էլ՝ տարեթվի հցումով: Դեպքերի նկարագրությունները շարադրված են գլխավորապես ներկա ժամանակով, մի բան, որ խիստ կենդանություն, արտահայտչականություն և այժմեականություն է հայորդում ներկայացվող հյութին: Ամբողջ օրագիրը բաղկացած է խիստ գրված 52 էջից (սույն տպագրության մեջ՝ 64 էջ), որ ընդգրկում է 1922-ի օգոստոսի 28-ից մինչև 1923-ի ապրիլի 7-ը ձգվող ժամանակաշրջանը: Հստ կառուցվածքի և բովանդակության՝ օրագիրը կարելի է բաժանել երեք մասի, որոնցից առաջինը ընկալվում է որպես ներածական, երկրորդը՝ որպես կենտրոնական մաս, իսկ երրորդը՝ վերջաբան: Ներածական մասում նկարագրվում են 1922-ի Զմյուռնիայի աղետին նախորդող և այն ազդարարող 12 օրերը (օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբեր 8-ը) բժիշկ Կ. Խաչերյանի տեսանկյունից: Այստեղ դեպքերը ներկայացվում են իրենց աստիճանական զարգացման մեջ՝ ընթերցողին նախապատրաստելով օրագրի բուն նպատակը հանդիսացող կենտրոնական մասին: Խաչերյան ընտանիքի՝ Զմյուռնիայում ապրած վերջին կիսամյակը նկարագրող այս հատվածը ընդգրկում է 1922-ի սեպտեմբերի 9-ից մինչև 24-ի ժամանակահատվածը: Այն տալիս է Զմյուռնիայի աղետի ընթացքում Կ. Խաչերյանի և նրա ընտանիքի՝ Զմյուռնիայում վերապրած դժոխային 15 օրերի մանրամասն նկարագրությունը, որ ըստ օրագրի հեղինակի բնութագրման՝ «կյանքին ամենատագնապալից ու արկածալից շրջանը եղավ» (էջ 88): Այդ տագնապալից շրջանը իր գագաթնակետին է հասմում այն ժամանակ, երբ Կ. Խաչերյանը ձերբակալվում և բանտարկվում է: Օրագրի բուն մասը ավարտվում է Կ. Խաչերյանի և իր բազմանդամ ընտանիքի (կինը, մինչդ զավակները և սպասուին Արաքսին) Զմյուռնիայից՝ «կրակի քաղաքից» ազատագրվելուն նախորդող երեք տանջալից ու ճգնաժամային օրերի վիպագրությամբ:

Վերջաբանը նկարագրում է Խաչերյան ընտանիքի տարա-

գրությունը հումական Միտիլի (Լեզրոս) կղզում՝ հախքան նրանց վերջնական հանգրվանումը Սելանիկ քաղաքում (7 ապրիլի, 1923): Վերջարանը երկուսուկես էջում ամփոփում է գործեւ յոթ ամսավա ժամանակահատվածը, ինչպես նշում է այդ հատվածի խորագիրը՝ «Միտիլի, 25 սեպտ. 922-ից մինչև 7 ապրիլ 923» (էջ 118): Քանի որ Ակարագրված ժամանակաշրջանը հարուստ չէ հախուն իրադարձություններով, Ակարագրություններն էլ սեղմ ու հավաքական բնույթ են կրում, և հեղինակը հեռանում է օրագրային ոճից: Նյութը, թեև համառոտ, սակայն հուգիչ կերպով արտահայտում է արմատախիլ եղած Խաչերյանների բարոյապես ընկճված տրամադրությունը: Օրագրի այս հատվածում Կ. Խաչերյանի համար մտահոգության առարկա են աշխատանք ճարելու և բազմանդամ ընտանիքը կերակրելու, կայուն բնակատեղի գտնելու և հիճգ անշափահաս երեխանների կրթությունը կազմակերպելու հարցերը: Սակայն Խաչերյան զույգի մեծագույն մղամականը Ակ-Հիսարում մնացած իրենց տասը հարազատների մասին որևէ տեղեկություն չունենալու է: Ամեն օր Խաչերյանները գնում են նավամատույց՝ մյուս փախտականների մեջ իրենց սիրելիններից գերեւ մեկին հանդիպելու հույսով: Ի վերջո ստիպված են լինում հաշտվել դառն իրողության հետ. իրենց սիրելինները ևս թուրքերի վայրագության ու կամակայությունների գործ են դարձել:

Օրագրի վավերագրական ու հավաստի բնույթը հաստատվում է Կ. Խաչերյանի հիշատակած՝ իր ժամանակակիցների ու վայրերի անուններով, ինչպես նաև Ակարագրված պատմական եղելություններով ու նրանց հաջորդականության ճշգրիտ վերարտադրությամբ: Ի դեպ, այդ տվյալները համապատասխանում են այդ շրջանին վերաբերող պատմաժամանակագրական՝ մինչև այսօր և մանականդ վերջին երկու տասնամակների ընթացքում ստեղծված, այդ շրջանի նյութը ամրողացնող գրականության տվյալներին (օրինակ՝ Horton 1926; Houseropian 1971):

Դեպքերի ու դեմքերի Ակարագրությունն այնքան կենդանի է ու հանգամանալից, որ կարելի կլիներ ենթադրել, որ օրագրի գրառումները արվել են Ակարագրվող դրվագներին համընթաց: Սակայն քանի որ նման ենթադրությունը անհամատեղելի է Ակարագրվող ամավոր պայմանների հետ, մնում է հավատալ, որ օրագիրը գրված

է Զմյուռնիայի աղետից անմիջապես հետո: Զեռագրի գրառման ճշգրիտ տեղը և ժամանակաշրջանը որոշելուն նպաստում է նրա ուշադիր ընթերցումը, որը ցույց է տալիս, որ սևագրությունը կատարված է Միտիլիի գաղթած առաջին իսկ օրերին՝ դեպքերի թարմ տպավորության և անմիջական ազդեցության ներքո: Միտիլիի առաջին օրերը պիտի որ այն շրջանը եղած լինեին, երբ դեռ կայուն աշխատանք չունեցող Կ. Խաչերյանը ժամանակ է գտնում՝ մի քանի շաբաթվա իր վերապրած արկածալից օրերը մանրամասնորեն գրի առնելու և դրանով իսկ իր հուզումնալից ապրումները թղթին հանձնելով՝ դրանց ծանր բերությունը մերժական է: Օրագրի՝ Միտիլիիում ստեղծված լինելը պարզորոշ կերպով երևում է «Հետգրություն» (Էջ 88) վերնագիրը կրող համառոտ հատվածում, որտեղ հեղինակը ի մի է բերում իր կիսամյա տառապալից շրջանը և տալիս նրա գնահատականը: Հետգրության մեջ, ողբալով Զմյուռնիայում թողած իր անդառնալի անցյալը և նյութական կորուստները, իրենց թշվառ ներկան ու անորոշ ապագան, հեղինակը գործածում է լեզվական որոշ արտահայտչածներ, որոնք օրագրի հիմնական մասի ստեղծումը անքակտելիորեն կապում են Միտիլիի հետ: Այսպես՝ ի տարրերություն ամբողջ օրագրության մեջ գործածված ներկա ժամանականին՝ փոքրիկ այս հատվածին հատուկ է բայական ժամանակածն երի բազմազանությունը: Օրինակ՝ խոսքն ուղղելով անցյալին՝ հատկապես ուշադրության առարկա դարձած այդ 15 օրվան, հեղինակն օգտագործում է անցյալ, իսկ գալիք անորոշ օրերի համար՝ ապառնի ժամանակածները: Ներկա ժամանակը արտահայտվում է «ներկա» ու «այսօր» բառերով, իսկ ապառնի՝ ուղղակի «ապագա» բառով եզրափակիչ նախադասության մեջ: «Այդ միայն ապագան պիտի հաստատի»: Հետգրության մեջ օգտագործված այս բոլոր լեզվամիջոցները գալիս են բնորոշելու Կ. Խաչերյանի տեղի ու ժամանակի կողմնորոշումը որպես զուտ «միտիլիական»:

Օրագրի հիմնական գրառումները վստահորեն Միտիլիի հետ կապելով հանդերձ՝ պետք է ընդունել, որ հեղինակը օրագրի վերջնական մաքրագրությունը՝ մասսամբ թե ամբողջովին, գուցե և որոշ խմբագրումներով, կատարել է նկարագրվող դեպքերից մի քանի ամիս անց, այսինքն՝ Սելանիկ փոխադրվելուց և այնտեղ աշխատանքի տեղափոխվելուց հետո: Այնտեղ է, որ օրագրի հեղինակը

կարողացել է ընտանիքի ապրուստը որոշ չափով հոգալ, հետևաբար մտքի և հոգու անդորրությունը վերագտնել: Այդ է հուշում ո՛չ միայն ձեռագրի ամրողական ու կուռ կառուցվածքը, այլև օրագրի վերջին էջի տակ դրված Կ. Խաչերյան ստորագրությունը, Սելանիկ քաղաքի անվան նշումը և դրանից անմիջապես հետո ամսաթվի ու տարեթվի արձանագրումը. «1 յունիսի, 1923»: Իր իսկ ձեռագրի հանդեպ Կ. Խաչերյանի ցուցաբերած խնամքն ու հոգատարությունը վկայում են, թե հեղինակը որքա՞ն լավ է գիտակցել իր այս գրվածքում պարունակված նյութի կարևորությունը: Ավելին՝ ձեռագրի մշակված տեսքը համոզում է, որ նրա հեղինակն այն պատրաստել է՝ մի օր գալիք սերունդներին փոխանցելու հեռանկարով:

Օրագրի ընթեռնելիության և լեզվական ոճի մասին: Խնչակն ցույց են տալիս բնագրի արտանկարված նմուշները (էջ 26-27), Կ. Խաչերյանի ձեռագիրը խիստ ուրույն է: Նույնիսկ հայերենին ոչ տեղյակ ընթերցողը առաջին իսկ հայացքից տպավորվում է օրագրի գեղագրությունից, մի բան որ վկայում է հեղինակի մորքի պայծառության, հմտության ու հավասարակշռության մասին: Ի տարրերություն իր մասնագիտությունն ունեցող մարդկանց մեծամասնության՝ Կ. Խաչերյանի գրությունը հսկուկ է ու դյուրընթեռնելի: Տառերը հավասարապես մանր են ու միաշափ, իսկ նրանց շարվածքը կանոնավոր է ու սահմուն: Բնագրի էջերը միանման կերպով խիստ են ու ամբողջացած և ընթերցողի աշքը շոյում են իրենց կազմության համաշափությամբ ու կոկիկությամբ: Թեև տառերի խիտ միակցման պատճենով ձեռագիրն առաջին հայացքից ընթերցողին կարող է անմատչելի թվալ, վարժություն ձեռք բերելուց հետո գրելաձների օրինաշափ կրկնությունները հպատակում են դյուրընթեռնելիության: Այսպիսով՝ միայն առաջին էջերի և գրվածքի ամրող ընթացքում գործածող մի քանի օտար բառերի՝ մասնավորապես իհձ անձանոթուրքական անձնանունների ու տեղանունների վերծանումն էր, որ իհձնից որոշ շանք պահանջեց: Ընդհանուր առմամբ, սակայն, ձեռագիրը տպագրի վերածելը մեծ դժվարություն շնարուցեց: Հավանական է, որ դրական դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ մեծ հորս ձեռագիրը իհձ ծանոթ էր՝ մինչև իր մահը մեր ունեցած թղթակցությունից: Կ. Խաչերյանի հայերենի ավանդական ուղղագրությունը անթերի է, մի բան, որ միշտ պատկանաք է ներշնչում:

Ինչպես կնկատի ընթերցողը, Կ. Խաչերյանի մաքուր ու կոկիկ գրեածնը համապատասխանում է նրա գրավոր խոսքի ոճին: Այն պարզ է ու սեղմ, այսուհանդեռձ արտահայտիչ, հուզիչ ու գրավիչ: Նախադասությունները նույնպես պարզ են ու հակիրճ, ավարտուն ու կապակցված, մի բան, որ հեղինակին բնորոշում են որպես խիստ կազմակերպված ու զուսպ անձնավորության: Բառապաշարը հարուստ է, բառերի ընտրությունը՝ մտածված ու տեղին: Ընդհանրապես, Կ. Խաչերյանի գրավոր խոսքին հասուն է չափի զգացումը: Նույնիսկ հոգեկան ամենաբարդ ապրումների նկարագրման ժամանակ խիստ սակավ են գերադասականներն ու չափազանցությունները: Գրավոր խոսքի ահա այս հատկությանը պետք է վերագրել այն ուժեղ տպավորությունը, որ ընթերցողի վրա թողնում են հեղինակի տողերը: Նույնիսկ հոգեկան խիստ վրդովված վիճակներում, երբ հեղինակը խիստ քննադատության է ենթարկում հակառակորդին, նրա խոսքը զուսպ է, այդ պատճառով էլ՝ համոզիչ ու արժանահավատ: Կ. Խաչերյանը սկզբից մինչև վերջ վառ է պահում ընթերցողի հետաքրքրությունը, տեղ-տեղ էլ նրան այնպես հրապուրում, որ կարելի է խոսել գեղարվեստական բավականության մասին: Այս առումով օրագիրը ունի ո՞չ միայն պատմակենսագրական, այլև գրական որոշակի արժեքը:

Ո՞րն է Կ. Խաչերյանի օրագրի պատմական արժեքը և ինչո՞վ է այն տարրերվում հայ քրիստոնյայի դարավոր տառապանքները նկարագրող՝ ցայսօր հրապարակված նյութերից: Նախ՝ կարևոր է նկատել, որ այստեղ մեր ձեռքին ունենք ո՞չ թե հուշագրություն, այսինքն՝ տարիներ անց, անցյալի հուշերի վրա հիշմաված մի պատմություն, այլ օրագրություն՝ դեպքերի ու իրադարձությունների ականատեսի՝ դրանք խորապես վերապրող անձի կողմից արձանագրված փաստացի նյութ: Նկատի ունենալով, որ Կ. Խաչերյանը իր վիպագրությամ մեջ համեստ է գալիս որպես նկարագրվող դեպքերի ժամանակակիցն ու մասնակիցը և դրանք անմիջականորեն վավերագրողը, օրագիրը պետք է դիտել որպես սկզբնաղբյուր: Արձանագրվող նյութի հավաստիության համար մեծ նշանակություն ունի օրագրությունը հեղինակողի անձնավորությունը՝ նրա նկարագիրը, կրթական մակարդակը և մտայնությունը: Նախ՝ Կ. Խաչերյանը իր իսկ հուշապատման միջոցով ներկայանում է որպես խստարարո,

շրջահայաց ու լոշախոր նկարագրի տեր մարդ: Գրվածքը հեղինակին բնորշում է որպես խորապես կրթված ու լայն մտահորիզոնի տեր մարդու, որ ունի որոշակի գորելառն և երևոյթներն ու իրավիճակները իրենց ամրողության մեջ ընկալելու, նրանց վերլուծումն ու մեկնաբանումը ուղղամտորեն տալու կարողություն: Առաջին էջերից սկսած դեպքերն ու երևոյթները նկարագրվում են ճշմարտացի, հավաստի ու անկողմնակալ ձևով: Այս կապակցությամբ հիշենք այդ ժամանակաշրջանի հունական կառավարության և հունական փախչող բանակի հասցեին (Էջ 30-31-32) արվող Կ. Խաչեռյանի մի շարք քննադատությունները: Հեղինակը իրեն նկատում է որպես մեկը, որ թուրք կառավարությանը ոչ միայն վճար չի հասցրել, բայց եւ որպես երկրի քաղաքացի կատարել է իր պարտականությունները: Հե՞ որ նա Թուրքիայում տասը տարի աշխատել է որպես թաղապետական բժիշկ, իսկ Սուածին համաշխարհային պատերազմի ժամանակ չորս տարի ծառայել է թուրքական բանակում որպես բժիշկ-հարյուրապետ և իր օրինակելի բժշկական ծառայությունների համար արժանացել շքանշանների (Էջ 10, 39, 40, 43, 56, 110): Այս ամենն է, որ Կ. Խաչեռյանին Զմյունիայի ամենատագնապալից օրերին անգամ այնքան տարութերումների առիթ է տվել և ուշացրել հրկիզված քաղաքից հեռանալու նրա որոշումը: «Զմյունիական արկածներս 1922-ին» օրագրի հեղինակը ներկայանում է որպես լավատես և խաղաղասեր մի անձ, որ նոյնիսկ ակնհայտ և անխուսափելի վտանգին դեմ հանդիման, հակառակորդից ակնկալում է ողջամտություն ու գթասրտություն: Ինչպես ինքը եզրափակիչ շարադրանքում (Էջ 88) ընդունում է, իր այս համոզումքի հետևանքով է, որ նա թույլ է տալիս մի շարք «սխալներ և անխոհնեմություններ», որոնք իր և իր ընտանիքի համար կարող էին ճակատագրական դառնալ: Նա երկար ժամանակ հավատում էր, թե թուրքը չի կրկնելու անցյալի դաժան արարքները և աշխարհին ցույց է տալու իր քաղաքակիրթ ազգ լինելը (Էջ 36): Հեղինակի լավատես այս կեցվածքում շրջադարձ է տեղի ունենում միայն այն ժամանակ, երբ նա տեսնում է Զմյունիայի հայկական թաղ Հայմոցը քարուքանդ դարձած և մանավանդ, երբ ինքը ձերբակալվում է: Բանտարկության ընթացքում է, որ իր և մյուս անմեղ հայ ու հույն քրիստոնյաների կրած շարչարանքները նրան վերջնականապես սթա-

փեցնում են:

Կ. Խաչերյանի օրագիրը գալիս է ապացուցելու, որ թուրքերի ատելությունը ուղղված էր անխտիր կերպով բռլոր՝ բայց մանավանդ հայ քրիստոնյաների հանդեպ: Այն գալիս է նաև հերթելու թուրքերի այն «դրույթները», թե թուրքական հանցագործությունները հայերի նկատմամբ սուկ հախազգուշական միջոցներ էին, կամ թե թուրքերը փոխադարձում էին հայերին՝ վերջիններիս ոտնձգությունների դիմաց: Հերքվում է նաև այն պահումը, թե Մեծ Եղեռնի պատասխանատունները երիտթուրքերն էին, և թե քեմալական շարժումը ոճրագործություններից զերծ է:

Կ. Խաչերյանի օրագիրը՝ իր մի շարք հարցադրումներով, հույժ արդիական է: Բացի թուրքերի վարքագծից՝ այն քննադատության է ենթարկում միջազգային հանրությանը, մանավանդ եվրոպական ու ամերիկյան պետությունների ներկայացուցիչներին, որոնց համար «քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր» էին դարձել (Էջ 51): Նրանք իրենց գրահանավերի վրա կանգնած՝ «պարզ հանդիսատեսներ» կամ նկարահանողներ էին, որոնք կամք չունեին լսելու «հրի, սրի ու ջրի միջև» գտնվող խեղճ հայ ու հույն քրիստոնյաների աղերսանքները (Էջ 50):

Մասնավորապես արդիական է այն հատվածը, երբ **Կ.** Խաչերյանը անաշառ կերպով պարսավում է ամերիկյան զինվորներին, որոնք Զմյուռնիայի ջարդի ընթացքում, հետևելով իրենց տրված հրամանին, հսկում էին միայն իրենց պատկանող շենքները՝ «առանց շենք[եր]ից մի քայլ անգամ այն կողմ ընդարձակելու իրենց հսկողության սահմանները» (Էջ 42):

Կ. Խաչերյանը հայ ժողովրդի ողբերգական պատմության ամենաահարկու ժամանակաշրջաններից մեկը ապրած հայ մտավորականներից գուցե միակն է, որ կարողացել է իր անցած Գողգոթան տեղմուտեղը ու համգամանորեն նկարագրել: Նրա օրագիրը խիստ ուսանելի է և առիթ է տալիս բազմաթիվ խորհրդածությունների: Նրա պատմությունը կարող է տալ մի շարք մուտք հարցերի լուսաբանում ու նրանց արդիական պատասխանները:

Այստեղ ցած եմ դնում գրիշս՝ խոսքը տալով պապիկին

Դորա Սաքայյան


14, 62. — *Aspergillus niger* v. *luteus* Vánky & Nagyová
— *Aspergillus luteus* v. *niger* Kämpferi v. *versicolor* Lep.
var. *luteus* v. *luteus* v. *versicolor* v. *luteus* v. *versicolor*
— *Aspergillus versicolor* Czerny f. *luteus* v. *luteus* v. *versicolor*
v. *luteus* v. *versicolor* v. *luteus* v. *versicolor* v. *luteus* v. *versicolor*

Убогий

January 923

ԶՄՅՈՒՐԻՆԻԱՅԻ «ՀԱՅՈՒԹ» ԹԱՂԱՄԱՍ

*



- 1.- Օնցիդին պարուտա
- 2.- Բասմանանեն պողոտա
- 3.- Արար Մահմանեսի
- 4.- Այս Փարասքնի փողոց
- 5.- Մեթթէր փողոց
- 6.- Մողա փողոց
- 7.- Մյուզան փողոց
- 8.- Ֆեթիին պողոտա
- 9.- Ռուշան փողոց
- 10.- Շիրհա փողոց
- 11.- Չարիճ փողոց
- 12.- Տերտեր փողոց
- 13.- Քաճրութօդուր փողոց
- 14.- Քարսըշօլուր փողոց
- 15.- Վեյյան փողոց
- 16.- Մելես պողոտա
- 17.- Քեմեր պողոտա
- A.- Ս. Սթեֆանովի Եկեղեցի
- B.- Առաջնորդական Հազօն
- C.- Ժողովածեղի բողոքական
- D.- Ս. Մեսչորեան վլթաւուն
- E.- Աջաւան, Հիվանդանութ
- F.- Ս. Հովհաննես Վարժարան
- G.- Երկաթուղարին Կամացաւ,
- H.- Եկեղեցի Եկ Վարժարան

*
Մխիթարյանէրի տաճ Խոտակոր
Խաչէրանէրի տաճ Խոտակոր
Դիրք Հայոցի Ըկամանմար

ԴՈԿՏ. ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆ

ԶՄՑՈՒՌԻԱԿԱՆ¹ ԱՐԿԱԾՆԵՐՍ 1922-ԻՆ²

1922, Օգոստոսի 15/28, երկուշաբթի³. — Բնակվում ենք Իզմիրում, Չալգչի Բաշի (Çalgıcı Başı) փողոցում, թիվ 109 Կարապետ Բալաբանյանի ընդարձակ ու հանգատավետ տանը, կնոջ՝ Էլիզայի ու փոքր աղջկամ՝ Վարդուհի Բետ. ուրախ ենք ու հանգիստ: Չորս օավակներս՝ Խաչերեսը, Սիրարիին, Գրիգորն ու Հովհաննեսը, երեք ամիս առաջ դպրոցական արձակուրդների առիթով, կնոջ մորաքրոջ՝ Գյուլիզարի Բետ, գնացել են Ակ-Հիսար⁵ (Ak-Hisar), որտեղ մոտավորապես չորս ամիս առաջ հաստատվել էր եղբայր՝ Նշանը: Հետո գնացել էին նրա տիկինը՝ Արմենուհին, ու օավակը՝ Հովհաննեսը: Պաշտոնի բերումով այնտեղ էր մեկնել նաև քեռայր՝ Հովհաննես Ղազարոսյանը, որի հիվանդության պատճառով մի քանի օր առաջ Ակ-Հիսար էր կանչվել նաև մայր՝ Վարդենին: Այնտեղ արդեն ապրում էին զոքանչս՝ Զարուհի Կոստանյանը և իր օավակները՝ Կոստանը ու Հակոբը՝ իրենց ընտանիքներով: Ակ-Հիսարը նրանց ծննդավայրն էր⁶:

Երեք տարի անդադար աշխատելով՝ Խզմիրում ինձ հաջողվել է գոհացուցիչ դիրքի հասնել: Բավականին լավ գործ ունեմ. մեծ թվով բարեկեցիկ ընտանիքների բժիշկն եմ: Ազգային հիվանդանոցում՝ բժշկի կարևոր պաշտոնն եմ գրադեցնում, մի բան, որ ինձ ապահովում է Այութական և բարոյական շահեր: Զավակներիս բացակայության պատճառով Խզմիրում ծախսերս նվազել են, և ներկա արդյունավետ ամիսներին շահածս ամբողջ դրամը ուղարկում եմ Ակ-Հիսար՝ ձմեռվա պաշարը պատրաստելու համար⁸ և խորհում եմ, թե երբ պաշարն ամբողջանա, ձմեռվա ամիսներին վաստակածս դրամով պիտի կարողանամ

աշխատանոցս կարգի բերել և ավելի ներկայանալի դարձնել բնակարանիս կահույքը: Վերջապես՝ Խզմիրում արդեն դիրքս ապահով է, և տևական աշխատանքով հույս ունեմ հանգիստ ու մարդավայել կյանք վարել ու զավակներիս դաստիարակությանը և գիտական առաջադիմությանը հետամուտ լինել:

Աստվածածնի⁹ երկուշաբթին է՝ հանգստի ու զվարճության սովորական մի օր Խզմիրի քրիստոնյա ժողովրդի համար: Կեսօրից առաջ մարդիկ գնացել են իրենց սովորական զբոսանքին: Երեկոյան շշուկներ են տարածվում, թե թուրքերը հարձակում են գործել Աֆիոն Կարահիսարի (Afyon Karahisar)¹⁰ ճակատում և փոքրիկ հաջողության հասել. այդ լուրը կարևորությունից գորկ ենք համարում:

Օգոստոսի 29, երեքշաբթի. — Կարահիսարի հարձակման լուրը բերնեբերան է շրջում, ինչին, սակայն, դարձյալ կարևորություն չի տրվում: Ամեն մարդ իր գործով է զբաղված:

Օգոստոսի 30, չորեքշաբթի. — Պաշտոնական մի հաղորդագրությունից հասկանալի է դառնում, որ հելլենական բանակը լքել է Կարահիսարը: Այդ քաղաքից այսօր տեղաբնակներ են հասնում, որոնք կացությունը շատ մոայլ գույներով են ներկայացնում: Արտագաղթն սկսվել է: Հայերը լեղապատառ փախչում են և փախուստի ընթացքում հալածվում տեղացի թուրք խուժանի կողմից: Հիվանդանոցի պողիկինիկայում տեսնում եմ վիրավոր տղամարդկանց և կանանց, որոնք Դումլուփընարի (Dumlupınar) լեռների մեջ հարձակման են ենթարկվել: Երեկոյան Կարահիսարի գնացքը բերում է հայ գաղթականների՝ մասնավորապես կանանց, որոնք խուժապի մեջ կորցրել են իրենց ամուսիններին ու զավակներին: Նրանք տեղապորվում են Սուրբ Ստեփանոս եկեղեցու¹¹ բակում և Մեսրոպյան վարժարանի¹² գետնահարկում, ուր մինչ այդ ապաստանել էին նաև Գիլիկեյ (Gilikey) գաղթականները: Հայկական Կարմիր խաչի տիկնանց ընկերակցությամբ այցելում եմ այդ թշվառներին: Կարմիր խաչի կողմից նրանց համար տաք կերակուր է պատրաստվում:

Օգոստոսի 31, Թինգշաբթի. — Հաստատված իրողություն է այլևս, որ քեմալական բանակը¹³ ճեղքել է հունական ճակատը և բոլոր կողմերից առաջ է մղվում: Հունական գորքերը պար-

տուրթյան են մատնվել ո՞չ միայն Կարամիսարում, այլև Դումլու-փընարի (Dumlupınar) առջև, որտեղից հունական բանակը, փոքր դիմադրությունից հետո, խառնիխուուն կերպով նահանջում է դեպի հարավ: Թուրքերը բռնագրավել են մեծ քանակությամբ զինամթերք ու ուտեստեղեն և գերեվարել մի ամբողջ զորագունդ: Հելլենական պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ հունական բանակը կարգապահորեն նահանջում է, բայց վիրավոր զինվորներն ու ճամփորդները հակառակ են հաստատում: Երեկոյան լուր է հասնում, որ Ուշաքը (Uşak) դատարկելուց առաջ հունական զորքը այրել է այն և թուրքերի նկատմամբ որոշ խժդություններ գործադրել¹⁴:

Սեպտեմբերի 1, ուրբաթ. — Ամբողջ քաղաքը խունապի է մատնված. Կարամիսարից, Ուշաքից, Ալաշեհիրից (Alaşehir) և այլ վայրերից փախչող գաղթականները անանցանելի են դարձրել փողոցները. պանդոկները լցված են: Հելլենական ուզմական և քաղաքային իշխանությունները ճգնում են հանդարտեցնել ժողովոդին, սակայն բոլորը հասկացել են այլևս, որ հելլենական բանակի նահանջը, կամ ավելի ճիշտ քայլայումը, սկսվել է: Պոլիս, Հունաստան, Եվրոպական երկրներ մեկնելու անցագրեր հանելու նպատակով ժողովուրդը ներխուժում է անցագրային պաշտոնատեղիները: Շատերը դեռևս լավատես են՝ հուսալով, որ հունական բանակը, ի վերջո, հաջողության պիտի հասնի քեմալական առաջխաղացումը կասեցնելու գործում: Մենք էլ մեր տանը անհանգստանում ենք և մտածում, թե ինչ միջոցով կարող ենք ժամ առաջ մերոնց մեզ մոտ բերել:

Սեպտեմբերի 2, շաբաթ. — Քաղաքի փողոցները բացարձակապես անանցանելի են դարձել. ունեոր դասակարգը պատրաստվում է գործն ավարտել և նզմիրից մեկնել: Սարսափը մեղմելու նպատակով կառավարությունը պաշտոնական մի հաղորդագրություն է հրապարակել, ըստ որի՝ իբր թե թուրքական բանակի նահանջի գիծը կտրվել է, ու քեմալական զորագնդեր են գերի վերցվել: Փախստականներից բացի քաղաքը լցվում է վիրավոր զինվորներով, որոնց հարցուրավոր ինքնաշարժերով հիվանդանոց են տեղափոխում: Կացությունը լրջորեն ծանրացել է:

Երեկոյան գնում եմ կայարան, որի հրապարակը լցված է

Վիրավոր գինվորների մեքենաներով։ Կայարանի ետևի դռնից ներս եմ մտնում ու տեսնում, թե ինչպես են գնացքներից հարյուրավոր վիրավոր գինվորների իշեցնում։ Հերյուրված հաղթական լուրից խուժանը փոքր-ինչ հանդարտված է թվում, թեպետ այդ լուրը զինվորական տեղաշարժին համապատասխան չի նկատվում։ Ժամանում է Սոմայի գնացքը, և մեծ ուրախությամբ տեսնում եմ զավակներիս վերադարձ՝ Կոստանի և նրա տիկնոջ՝ Մարիի ընկերակցությամբ։ Շտապում ենք տուն։ Կոստանը հայտնում է, որ իր հետ է բերել նաև Ակ-Հիսարի հույն քաղաքապետի տիկնոջը, որովհետև քաղաքի ու զամական և քաղաքային իշխանությունները Ակ-Հիսարը թողնելու հրաման են ստացել։ Կոստանը տեղեկացնում է նաև, որ հելլեն կառավարությունը վճռել է դատարկել ո՞չ միայն ներքին գավառները, այլև Խզմիրը։ Այս տեղեկությունը անհավանական է թվում, քանի որ հելլենական բանակը, նավատորմիդի պաշտպանության ներքո, Խզմիրի շրջակայքում կարող է կազմել դիմադրության ու զամագիծ մինչև քրիստոնյա բնակչությանը հելլենական կղզիներ փոխադրելը, ինչպես դա արել էր Նիկոմեդիայից քաշվելուց առաջ։ Կացությունը խիստ լրջացել է, սակայն անհավանական է թվում, որ Խզմիրում խժդություններ տեղի ունենան, քանի որ քաղաքի բնակչության կարևոր մասը կազմում են թուրքերի անկեղծ բարեկամներ և վրոպացիները, մասնավորապես խոալացիները և ֆրանչացիները։

Սեպտեմբերի 3, կիրակի. — Հունական բանակը իր լքած քաղաքներն այրում է ու խժդություններ գործադրում։ Հետզհետեւ այրվում են Ալաշենիրը, Նազիլլի (Nazilli), Կասաբա (Kasaba) և այլն։ Տեղական թերթերը սուս ու պատիր լուրեր են տպագրում, և պաշտոնական մարմինները հայտարարում են, թե անկարելի է, որ թուրք զինվորը ոտք դնի Խզմիր¹⁵։ Ժողովուրդը չի հավատում և վախենում է առավելապես հույն զինվորներից, որոնք, իրենց շարքերից դասալիք դարձած, խումբ-խումբ անցնում են փողոցներով և բացեիբաց, չնչին գներով վաճառում իրենց զենքերն ու հագուստները։

Սեպտեմբերի 4, երկուշարքի. — Փողոցներում խիստ ակնառու է գավառացի քրիստոնյաների իրարանցումը։ Առաջնոր-

դարանի, Մեսրոպյան վարժարանի և Ազգային հիվանդանոցի բակերը լցված են հայ գաղթականներով: Թեև ազգային վարժարանը բացվել է, բայց արձանագրվող աշակերտները խստ սակավաթիվ են: Զինվորական պիտույքները և գույքը այս ու այն կողմ են նետված: Անտեր են մնացել նույնիսկ ձիերը, կովերը, ոչխարները: Որևէ կերպ Հունաստան վերադառնալու նպատակով Կարահիսարի ճակատից փախչող զինվորները ծովեզերք են շտապում: Դասալիք զինվորներից բացի հավահանգիստը լեցուն է գավառացի փախստականներով, որոնք, իրենց անշափահիս զավակներին ու արժեքավոր գույքն առած, անհամբեր սպասում են ծովեզերքում՝ Իզմիրից իրենց դուրս նետելու համար: Սակայն ժողովրդի մեծամասնությունը հավատում է, որ Իզմիրը վտանգից զերծ պիտի մնա՞ Ըկատի ունենալով նրա առնտրական բացառիկ դիրքը, օտարերկրացիների ֆինանսաբնկային և ուսումնական բազմապիսի հաստատությունները, մանավանդ հունական, անգլիական, ֆրանսիական, իտալական աჩեղ գրահավորների¹⁶ ներկայությունը, մի բան, որ անգամ թերահավատներին մեծ վստահություն է ներշնչում:

Սեպտեմբերի 5, երեքշաբթի. — Հացը և սննդամթերքը նվազել են. սկսում ենք տան համար ուտեստեղեն պատրաստել, և միաժամանակ փաթեթների ու կապոցների մեջ տեղավորել մեր արժեքավոր իրերը: Հակառակ այս պատրաստություններին՝ ինձ նման հազարավորները այն համոզմունքին են, թե թուրքը չի կարող Իզմիր մտնել, իսկ եթե նույնիսկ դա նրան հաջողվի, նրան չպիտի թույլատրվի գործադրել իր սովորական խժդությունները¹⁷: Խոտակած հյուպատոսը հայտարարում է, որ քաղաքում ոչ մի դեպք չի պատահելու, որ իտալացի հազարավոր զինվորներ Ռոդոսի մոտ պատրաստ սպասում են Իզմիր փոխադրվելու առաջին իսկ հրամանին: Նույնիսկ խոսվում է այն մասին, որ Հայոցը¹⁸ ամեն թաղից շատ ավելի է պաշտպանվելու և այլն:

Սեպտեմբերի 6, չորեքշաբթի. — Գաղթականների բազմությունը հետզհետեւ ստվարանում է: Կարահիսարից մինչև Մահենաս հելլենական բանակի լքած բոլոր քաղաքներն ու գյուղերը իրի են մատնված: Նրանց բնակիչները խոնված են եկեղեցիների բակերում, պանդոկներում, իջևաններում, տներում, պարտեզնե-

րում, ի վերջո ամենուր, որտեղ կարելի է նատելու տեղ գտնել: Ժողովրդի մի փոքր մասն է միայն մեկնել Խզմիրից: Ակ-Հիսարի վերաբերյալ տարածայնություններ եղան, թե քաղաքի հունական ռազմական իշխանությունը քրիստոնյա բնակչությանն առաջարկել է մեկնել քաղաքից, որովհետև հրաման է ստացել՝ հեռանալուց առաջ քաղաքն այրել: Հույներն ու հայերը թուրք երևելիներին հրավիրում են թաղապետարան և հրապարակելով զինվորական հրամանատարի կարգադրությունը՝ հայտնում, որ իրենք մտադիր չեն գործադրել այն, եթե թուրքերը հանձն առնեն պաշտպանել հույներին ու հայերին թուրք խուժանի հարձակումներից: Թուրքերը երդվում են Ղուրանի վրա՝ պաշտպանել քրիստոնեությանը որևէ հարձակումից: Քրիստոնյաները ևս փոխադարձաբար Ավետարանի վրա են երդվում: Ակ-Հիսարի ռազմական և քաղաքային իշխանությունները մեկնում են քաղաքից, որից հետո քրիստոնյա ու թուրք երևելիները ժամանակավոր իշխանություն են հաստատում՝ մինչև կանոնավոր կառավարության վերականգնումը՝ ժողովրդի իրավունքը փոխադարձաբար պաշտպանելու մտադրությամբ:

Կեսօրից հետո ուժապար տուն է հասնում քեռայրս, որ Ակ-Հիսարի Յաքաֆիոյիի (Yakagöyi) հույների հետ միասին եկել էր Մաղնիսա (Magnisa) և այստեղ-այստեղ թափառելուց հետո դժվարությամբ Խզմիր հասել: Բնավ տեղեկություն չուներ Ակ-Հիսարի դեպքերից և խորենություն էր համարել Ակ-Հիսար գնալու փոխարեն վերադառնալ Խզմիր: Ճեռագրական հաղորդակցումը Ակ-Հիսարի հետ խզվել է, և վերջին գնացքով ժամանող ճամփորդներից տեղեկանում ենք, որ այնտեղ ևս կացությունը տագնապալի է:

Սևպտեմբերի 7, Թինգջաբրի. — Մեր ծանոթներից ունենո՞ց շատ հայեր և հայ թժիշկաներ (դոկտ. Զելեպյանը, Սպարտալյանը, Եղիայանը, Փեշտիմալշյանը, Դարբինյանը) մեկնել են քաղաքից. թուրքական կառավարության կողմից կասկածելի նկատվող անձինք խորենություն են համարում Խզմիրից հեռանալը: Զինվորական տարիք ունեցողները, հավատալով հանդերձ, որ եվրոպացիների աչքի առաջ անկարգություններ չեն կարող տեղի ունենալ, Խզմիրից ժամանակավորապես հեռանում են: Իսկ

Ես հարմար եմ գտնում քաղաքից շմեկնել, որովհետև թուրքական կառավարության դեմ որևէ կասկածելի արարք թույլ չեմ տվել: Ընդհակառակը՝ մոտավորապես տասը տարի թաղապետական բժշկի պաշտոնն եմ վարել, ամրող չորս տարի կատարել եմ զինվորական ծառայություն և բարվոք պաշտոնավարություն հաստատող փաստաթղթեր ունեմ ձեռքիս¹⁹: Հետևաբար՝ երեք տարվա աճընդմեջ աշխատանքին շնորհիվ Խզմիրում ձեռք բերած նախանձելի դիրքս չեմ ուզում կորցնել քիչ հավանական ինչ-որ վտանգի պատճառով:

Զինվորական իշխանություններն ու ուստիկանությունը մեկնել են, և քաղաքում տիրում է կատարյալ անիշխանություն: Ժողովուրդը վախենում է դասալիք զինվորների թալանից և հրդեհից: Լուր հասավ, թե Մաղնիսան ևս հրկիզված է դասալիքների կողմից: Հույն ավագ կոմիսար Ստերլյադիսը²⁰, ով երեք տարի շարունակ հայտնի էր իր թրքասիրությամբ, քաղաքից մեկնեց թուրքերի «յութա»-ների և թիթեղ զարկող խուժանի ժխորի մեջ: Փոքր Ասիայի հելլենական զորամիավորումների գերագույն հրամանատար Հաջի-Անեստիս²¹ էլ, իր սպայական կազմով հանդերձ, մեկնել է հույն պայմաններում:

Խզմիրում իշխանություն այլևս գույություն չունի: Հակառակ դրան՝ անկարգություններ տեղի չեն ունենում: Նավահանգիստը լուրջ տեսք է ստացել: Տորս կողմը նետված են այլևս կարասիներ: Ժողովրդի մի մասը շտապում է ծովից անդին նետվել, իսկ ուրիշները լոկ հանդիսատեսներ են, որ այս ամենը վաղանցուկ երևույթ են համարում: Չէ՞ որ նավամատույցը լեցուն է ամենազգի զրահավորներով, որոնք դեռևս մեծ վստահություն են ներշնչում իրենց նայող ծովածավալ բազմությանը: Անցագրային գործողություն այլևս չկա, ամեն ոք ազատորեն կարող է իրեն շոգենավ գցել: Մեզ հրաժեշտ են տալիս Կոստանը և Մարին, որոնք մեկնում են Կիպրոս՝ իրենց ազգականների մոտ:

Սևատեմբերի 8, ուրբաթ. — Ծանապարհներին վխտում են են դասալիք զինվորները, որոնք, գենքերը նետած, ծովեզերք են շտապում: Ում չի հաջողվում Խզմիրից շոգենավ նատել, իր ճանապարհը շարունակում է դեպի Չեչմե: Թուրքական բանակը

հասել է Մենեմեն, որը հելլեսները, ըստ իրենց սովորության, մեկնելու առաջ կրակի են տվել:

Թուրք գինորների հզմիր ժամանելը ընդամենը մեկ-երկու օրվա գործ է: Թուրքական բանակի ներխուժումից առաջ շատերը հեռանում են Խզմիրից. մեր ազգականներից տիկ. Ծահանդուխտ Առաքելյանը իր ամբողջ ընտանիքով Պոլիս է մեկնում: Կեսօրից հետո գնում եմ քաղաք՝ կացությունն աչքի անցկացը-նելու: Այլազգի գրահավորները իրենց հպարտ ներկայությամբ շարունակում են վստահություն ներշնչել:

Նավահանգատից վերադարձիս հանդիպում եմ ֆրանսիական հյուպատոսարանի իրավագետ, փաստաբան պրն Հարություն Սիսլյանին, որի կարծիքն եմ հարցնում ներկա կացության մասին: Նա համոզի կերպով ասում է. «Վախենալու բան չկաթուրքական բանակը այս անգամ մուտք պիտի գործի խիստ օրինապահորեն և աշխարհին պիտի ցույց տա, որ թուրքը քաղաքակիրթ ազգ է: Միայն թե հարկ կլինի մի քանի օր տնից դուրս չգալ և բավականաշափ ուտեստեղեն ունենալ»: Նրա կարծիքով՝ մեծ անխոհեմություն կլիներ տուն, աշխատանք, դիրք թողած՝ անծանոթ հորիզոններ փնտրելը և այլն: Այդ մարդը հյուպատոսի անձնական բարեկամն էր, և նրա խոսքերն ասվում էին հյուպատոսի անունից: Տուն եմ հասնում ուրախ տրամադրությամբ և վճռում մնալ Խզմիրում, որպեսզի ընտանիքին ապագան և դիրքս իմ իսկ սեփական ձեռքերով շխաթարեմ:

Ստապոեմքերի Թ, շարաք. — Տաղուկալի գիշեր եմ անցկացնում: Կեսգիշերին դուրս եմ գալիս պատշգամբ և դիտում հույն Բեծյալների խուճապահար փախուստը: Հեռվից հյացանի ընդհատ-ընդհատ ձայներ են լսվում: Վերադառնում եմ անկողին՝ ուժասպառ մարմինս և փոթորկված ուղեղս փոքր-ինչ հանգըստացնելու. անկարելի է քենել: Վաղ առավոտյան վեր եմ կենում և պատրաստվում Կոկար Ցալը (Kokar Yalı) գնալ՝ բժշկութի տիկին Տեփանյանի տանը վիրահատություն կատարելու նպատակով: Քեռայրս հրաժեշտ է տալիս Միտիլիի իր ընտանիքի մոտ մեկնելու դիտավորությամբ: Նրան հորդորում եմ՝ պատրաստ շոգենավ չգտնելու դեպքում տուն վերադառնալ:

Կոկար Յալը գնալուց առաջ դեղատում եմ մտնում և տեղեկանում, որ անգլիացի ծովակալի հրահանգով հունական զրահավորները մեկնել են Իզմիրից և մնացել են միայն Եվրոպական և ամերիկյան զրահավորները: Թուրք առաջապահները հասել են թուրքական թաղերը և տեղացի թուրքերի օգնությամբ փորձում են կտրել հելլենների համանջի գիծը: Բասմահանչոստիկանատան մոտ ևս հելլեն զինվորները կրակ են բացել թուրքերի վրա, որոնցից երկուսը սպանվել են: Հակառակ ձախորդ լուրերին՝ նախորդ երեկոյան տիկին Տեփանյանին տված խոստումս հարգած լինելու համար գնում եմ նավահանգիստ, որտեղից էլ շոգենավով հասնում Կոկար Յալը: Հանրակառքի գծերի վրայով անցնում են հելլեն հետևակայինները, որ գլխիկոր, բայց օրինակելի կարգապահությամբ նախանջում են դեպի Չեշմե: Արտահույզ է նրանց նահանջը, հուսահատական: Զինվորները լքված են իրենց սպանների կողմից, որոնք օր առաջ թողել են պաշտպանության գծերը և փախուստի դիմել: Անցնելով զինվորների շարքերի միջով՝ հասնում եմ տիկին Տեփանյանի տունը, որտեղ տեղեկանում եմ, որ վիրահատության ենթարկվելիք կինը չի եկել: Չեմ սպասում և անմիջապես վերադառնում եմ նավամատույց: Պատրաստ շոգենավ չկա, ո՞չ էլ հանրակառք: Ուղղվում եմ դեպի Գյող Թեփե:

Ամբողջ ճանապարհը լցված է նահանջող զինվորներով. ճանապարհ շարունակում եմ անորոշ քայլքով, երբ ինձ կանչում են մի տնից: Ներս հրավիրողը պրմ. Ասատոր Տ. Արիստակեսյանն է: Մի փոքր հանգստանում եմ: Տեր և տիկին Արիստակեսյանները խորհուրդ են տալիս շոգենավով վերադառնալ: Սպասում եմ փոքր-ինչ և նկատում, որ Կոկար Յալը շոգենավը մոտենում է: Շուապում եմ նավամատույց. շոգենավը լցվում է Կոկար Յալը քրիստոնյա բնակիչներով, որոնք, տեսնելով թուրքերի մոտենալը, խորենություն են համարում Իզմիրում ապաստանել: Շոգենավում կարդում եմ հրեանների կողմից ֆրանսերենով հրատարակված մի թերթ, որ պատմում է, թե տասնյակ հազարավոր հելլեն զինվորներ գերի են վերցվել, և փառարանում է Մուստաֆա Քեմալին ու նրա հաղթական բանակը:

Շոգենավը հասնում է Իզմիր, և ես տուն եմ շտապում, որ-

տեղ կինս ու զավակներս աჩ ու սարսափի են մատնված: Իրենց հանդարտեցնելուց հետո գնում եմ դեղարան և տեսնում, որ թուրք առաջապահների ժամանման պատճառով ամբողջ Հայ-նոցը անկարգության է ենթարկվել: Հայերը խոհեմություն են համարում մի քանի օր նավահանգստի կողմն անցնել՝ խուսա-փելու համար Թեզկիլիի շրջակայքի թուրքերի հարձակումներից: Կրկին վերադառնում եմ տուն և կնոջս հետ խորհրդակցելով՝ վճռում փոխադրվել նավահանգիստ և մի քանի օրով բնակվել Պերճ Սիվրիիսարյանի տանը: Մի քանի ամիս ի վեր այնտեղ բնակություն են հաստատել պրն Երվանդ Ադամյանն ու նրա կի-նը՝ տիկ. Վերգինեն, որ մի քանի օրից զավակ պիտի ունենա, և ում ծննդաբերության գործողությունը, ըստ նախնական պայմա-նավորվածության, ինձ էր համաձնվել: Այս պարագան լավագույն առիթն էր մեզ համար՝ ընտանիքով այնտեղ փոխադրվելու:

Ժամը տասնմեկն է. անցնում եմ հունական թաղերով և նա-վահանգստի մոտ հանդիպում բազմաթիվ մարդկանց, որ այն-տեղից փախչում են դեպի Աերքին թաղերը: Մենք, որ նավա-հանգիստը ավելի ապահով էինք կարծում, զարմանքով նկա-տում ենք, որ այնտեղի ժողովուրդը հակառակ կարծիքի է: Մի պահ կանգ եմ առնում՝ որդշելով՝ պետք է ե՞տ դառնալ, թե՞ շա-րունակել ընթացքս: Նախընտրում եմ նավահանգիստ գնալ՝ եղելությունը անձամբ հասկանալու համար: Նավահանգիստի վրա քիչ թե շատ հանդարտություն է տիրում: Հանդիպում եմ պատվելի Խաչատոր Քառոյանին, ում հետ մի քանի վայրկյան գրուցում ենք և իրար խրախուսում:

Հասնում եմ Սիվրիիսարյանի տուն. Պարոն Երվանդը տանը չէ: Տիկին Վերգինեին բացատրում եմ խնդիրը՝ հայտնելով, որ իր ծննդաբերելու օրերը շատ մոտ են, և այս խուճապի մեջ, մա-նավանդ գիշերվա ընթացքում, մարդ նոյնիսկ ամենաբարձր վարձատրության դիմաց, ո՞չ թիշկ կարող է գտնել, ո՞չ էլ դա-յակ, եթե հենց այժմվանից իր տրամադրության տակ թիշկ չու-նենա: Ես նրան հիշեցնում եմ, որ Խզմիրում հաստատվելուց ի վեր այդ ընտանիքի թիշկն եմ եղել, և թեև նախապես տիկ. Վերգինեի ծննդաբերության առնչությամբ շահեկան պայմանա-վորվածություն ունեի, այս դեպքում որևէ փոխհատուցում չեմ

խնդրում, այլ միայն մի քանի օրվա հյուրընկալություն իրենց տանը՝ մեր սեփական ծախսերով: Սիրահոժար համաձայնելով հանդերձ՝ տիկինը հարկ է համարում խորհուրդ հարցնել ամուսնուց, որը բացակայում է տնից: Երկու անգամ ամուսնու ետևից մարդ ենք ուղարկում, սակայն իզնոր:

Նատել եմ տան պատշգամբում: Կեսօրին տեսնում եմ քեմալական հեծելազորի մուտքը ծովափի: Տեղացի թուրքերը՝ ձեռքներին թուրքական դրոշ պարզած, գոչում են. «Կեցցե՛ Ձեմալ փաշան»: Փունքայի կողմից դեպի կառավարական տուն առաջցող ձիավորները դաժան տեսք ունեն: Նավահանգստում խոնված քրիստոնյաները սարսափով են դիտում թուրք զինվորների մուտքը և իրենց զավակներին ու կապոցներն առած՝ ուղղվում են դեպի ներքին թաղերը: Տեսնելով նրանց փախուտը՝ թուրքերը շանում են հանդարտեցնել քրիստոնյաներին՝ ասելով, որ վախենալու բան չկա, որ մինչև հիմա իրենք քրիստոնյաների հետ եղրոր նման են ապրել, և որ սրանից հետո ևս այդպես պիտի ապրեն և այլն: Խեղճերը հավատում են այս կեղծ և պատիր խոսքերին ու փոքր-ինչ հանդարտվում: Թուրք հեծյալներին հաջորդում են հետևակայինները, որ նոյն ուղղությամբ առաջանում են դեպի կառավարական տուն: Նրանց ահարկու դեմքերը բոլորին սարսափ են ազդում²²:

Թուրք զինվորի հաղթական մուտքը տեսնելու դժբախտությունն ունենալուց հետո պատրատվում եմ տուն վերադառնալ՝ առանց տիկին Վերգինեի հաստատ պատասխանն ստանալու: Երբ մտագրադ իջնում եմ աստիճաններից, տիկ. Վերգինեն, առանց պրն Երվանդի վերադարձին սպասելու, տալիս է իր համաձայնությունը, որ մենք ընտանիքով անմիջապես իրենց տուն փոխադրվենք՝ ծննդաբերական գործիքներն էլ մեզ հետ բերելով: Ծնորհակալություն եմ հայտնում և մեկնում տուն՝ օսմանյան մի շքանշան կրծքին ամրացրած: Հունական փողոցներում ամայություն է տիրում:

Ծանապարհին հանդիպում եմ թուրք ձիավորների, որոնք արդեն ձեռնարկել են հսկողության գործը: Հասնում եմ տուն. այնտեղ են Մինաս Անմերջյանը և Լուս Առաքելյանի քույրն ու

քեռայրը: Վատահինցնում եմ, որ քաղաքը կանոնավոր կերպով գրավված է թուրք զինվորի կողմից, և վախենալու ոչինչ չկա: Հյուրերի մեկնելուց հետո առանձնացնում ենք Սիվրիիհասրյանների տուն փոխադրվելիք հագուստեղենն ու ուտելիքը և ժամը երեքին, կնոջս ու զավակներիս հետ միասին, ճամփա ենք ընկնում դեպի նավահանգիստ: Գլխարկս թողել եմ տանը և գլխիս ֆես դրել: Բաճկոնիս ամրացրել եմ օսմանյան զինվորական շքանշանը և մետաղյա ոսկեգույն մասիկը: Վարդուիին գիրկս է, իսկ փոքրերը մեկական կապոց ունեն ձեռքներին: Փողոցները ամայի են: Մերթընդմերթ հանդիպում ենք թուրք պահակների: Արտառոց որևէ բան չի պատահում, և ապահով հասնում ենք Սիվրիիհասրյանների տուն: Տեղավորվում ենք մեզ հատկացված սենյակում: Պատրաստվում եմ կրկին տուն գնալ՝ գործիքներիս և զարդեղնեների սնդուկը բնրելու: Այդ ժամանակ ներս է մտնում Երվանդ Աղամյանը և մեզ իր բնակարանում տեսնելով՝ շատ է ուրախանում: Երբ հայտնում եմ կրկին տուն գնալու դիտավորությունս, ընկերանում է ինձ՝ Հայնոցում բնակվող հիվանդ եղբորը իր բնակարան փոխադրելու մտադրությամբ: Սկզբում ամայի փողոցներով ենք անցնում: Ես մտնում եմ տուն, իսկ Երվանդը գնում է Հայնոց: Տունն աշքի եմ անցկացնում: Չեմ մոռանում հավերիս և վառեկներիս հաջորդ օրվա կուտն ու ջուրը պատրաստել: Կես ժամ հետո, Երվանդից բացի, դուն առաջ են նրա եղբայր Գրիգորը, սրա տիկինը, կնոջ քույրն ու եղբայրը՝ Խոսրով Մաթիլյանը: Մի կապոց հանձնում եմ Երվանդին և սնդուկս առած՝ ճամփա ենք ընկնում դեպի նավահանգիստ: Շանապարհին շատ եմ հոգնում: Այսօրվա տանշանքս աննախներաց է, սնդուկս էլ՝ բավականաշափ ծանր: Հարմարվելով հիվանդ Գրիգորի քայլերին՝ միան կես ժամից, բայց ապահով հասնում ենք Սիվրիիհասրյանների տունը: Այլևս հանգիստ ենք և մտադիր՝ մի քանի օր տանը մնալ: Սակայն այդ իրիկուն իսկ սրտի դառնությամբ տեղեկանում ենք, որ Հայնոցում արդեն սկսվել են հարձակումներն ու թալանը թուրք խուժանի և զինվորի կողմից: Եղածը համարում ենք անկարգ զինվորների ձեռքի գործ և սովորական դեպք, մինչև պաշտոնական իշխանությունների վերահաստատումը: Գիշերը ոչինչ չենք լսում:

Սեպտեմբերի 10, կիրակի. — Առավոտ է. նավահանգստում հանդարտություն է տիրում: Ուրախանում ենք, որ թուրքական գրավումը տեղի ունեցավ առանց արյունահինության: Սակայն պատշաճամբից տեսնում ենք տասնհինգամյա մի պատանու դիակ, որին մի քանի հոգի մոտակա փողոցից տեղափոխում են նավամատուցի պատի մոտ: Թերևս հրացանազարկ են արել՝ ըստ զինվորական օրենքների գիշերը դրսում գտնվելու պատճառով: Ժամը ինձին Երվանդի ու Խոսրովի ընկերակցությամբ դուրս ենք գալիս տնից և ուղղվում դեպի Հայնոց՝ տեղեկանալու, թե արդյոք գիշերը այնտեղ որևէ բան պատահե՞լ է: Ծանապարհին հանդիպում ենք օտարահպատակ մի քանի հայ երիտասարդների, որոնցից տեղեկանում ենք, որ թուրք զինվորը և խուժանը թալանել են Հայնոցը, առեանգել կանանց ու աղջկերին և պաշարել Սուրբ Ստեփանոս եկեղեցին ու Առաջնորդարանը: Ընկերներս նախընտրում են ետ դառնալ: Խսկ ես սպասուի՛ Բետ անցնում եմ Զալգըչը Բաշը պողոտայով, որն ամայացած է: Նախ՝ հանդիպում եմ թուրք մի զինվորի, որ հարցնում է մեծ զորանոցի ճանապարհը: Հետո՝ մոտենում է մի ուրիշ զինվոր և նոյն հարցն է տալիս: Ցույց տված ճանապարհին (հայկական մեծ պողոտան՝ Ռեշիդիye) մասին զինվորն ասում է՝ «արյան ու կրակի մեջ է»: Հասնում եմ մեր տուն և ջանում դուռը բացել. չեմ կարողանում: Երկի գիշերը, դուռը բռնի ուժով բանալու փորձերից, կողպեքը փշացել է: Տան դուռը և պատուիհանների փեղկերը մնացել են անվճա: Մի քանի անգամ բախում եմ Հս ոն Առաքելյանի դուռը. պատասխանող չկա: Լուսավորչի փողոցն ամայի է: Օրիորդ Տ. Գասպարյանի տան դիմաց մեծ քանակությամբ չորացած արյուն եմ տեսնում: Սակայն առանց ընկրկելու հասնում եմ հայկական մեծ պողոտա: Նախ տեսնում եմ Բալըկշյանների տունը, որի դռները ջարդուիշուր են եղել, կարասիները՝ հառնիխուռն դիմվել բակու: Մեծ պողոտայի տների դըռները հերթով բացված են, և այստեղ-այնտեղ նշմարվում են արյան հետքեր: Խանութները ևս քարուքանդ են, ապրանքները կողոպտված: Թալանված տներում թուրք զինվորները խուզարկություն են անում: Առաջնորդարանի կողմից լսվում են հրացանի կրակոցներ: Երևում են ֆրանսիացի զինվորներ, որ թուրք

գինվորների հետ միասին փութեկոտ անցուդարձ են անում: Կող - քովս անցնող տեղացի թուրքերը և զինվորները, դատելով արտաքինիցս, ինձ թուրքի տեղ են դնում: Սակայն այդտեղ մնալը այլևս խոհեմություն չէ: Զանում եմ ջրաբուժարանի փողոցով անցնել և մեր տաճ դիմաց ինձ սպասող սպասուի՛ն էլ հետո Վերցնելով՝ վերադառնալ նավահանգիստ, բայց տեսնում եմ, որ այդ փողոցի տները նույնպես ավերվել են ու թալանվել:

Առանց հուզումն ու հոգեկան տագնապս մատնելով՝ ետ եմ դառնում և մտնում Չալգըշը Բաշը ու հասնում տուն: Կրկին փորձում եմ բանալ դուռը, սակայն անկարելի է: Մերթ ընդ մերթ լսվում են հրաձգության ձայներ: Առանց ժամանակ կորցնելով՝ սպասուի՛ Արաքսու հետ շտապում եմ նավահանգիստ և ապահով տուն հասնելուս պես պատմում տեսածն՝ այն, որ Հայնոցն ու շրջակա թաղերը դարձել են անմարդաբնակ, մինչդեռ Ֆրանկների թաղի շուրջը գտնվող հույն թաղերում երևում են հատուկենու անցորդներ: Հայնոցի վիճակը տեսնելուց հետո միայն հասկացա, որ թուրքը միշտ նույն ջարդարար ու կողոպտիշ տարրն է, լինի Ալբանիայում, Մակեդոնիայում թե Թրակիայում, լինի Արաբիայում, Սիրիայում թե Հայաստանում: Թուրքը նույն արյունարբու գազանն է՝ անկախ այն բանից՝ սքոռված է իթթիադական²³ թե իթլաֆական²⁴, համիդական²⁵ թե քեմալական դիմակի տակ: Թուրքը նույն գիշատիշ բորենին է՝ թե՝ Փոքր Ասիայի ներքին գավառների խորքերում, թե՝ Պոլսի և Իզմիրի նման եվրոպականացած քաղաքներում:

Հայնոցից նավահանգիստ վերադարձիս հանդիպեցի եվրոպական պահակազօրքերի, որոնցից այնշա՞փ մեծ ակնկալություններ ունեինք: Երիտասարդների քրիստոնեական ընկերակցության շենքի դիմաց (նախկին՝ հայ աղջիկների որբանոցը) տեսնում եմ մի քանի ամերիկացի զինվորների, որոնք ուղղակիորեն այդ շենքն են հսկում՝ առանց շենքից մի քայլ անգամ այն կողմ ընդարձակելու իրենց հսկողության սահմանները: Համաձայն մեր տեղեկության՝ բոլոր օտար պահակազօրայինները հրահանգ էին ստացել՝ պաշտպանել միայն հյուատոսարանները, իրենց դպրոցներն ու եկեղեցիները, հիվանդանոցներն ու առևտրական հաստատությունները: Կեսօրից հետո և գիշերը

Խավահանգստում տիրում է խաղաղություն:

Սեպտեմբերի 11, երկուշաբթի. – Գիշերային լուսաթյան մեջ լսելի են թնդանոթների խոլ կրակոցները Նարլը Դերեի (Narlı Dere) կողմերում, Չեշմե (Ceşme) թերակղզու պարանոցի մոտ, թուրքերի և հելլենների միջև տեղի ունեցած ընդհարումներից: Խզմիրից շոգենավ նստելու հնարավորություն չունեցած հունական վաշտերը ուղղվում են դեպի Չեշմե և հետապնդվում թուրքական բանակի կողմից: Այնտեղ հելլենները ճգնաժամային կոյփ են մղում թուրքերի ձեռքը գերի շընկնելու համար: Պատըշգամրից դիտում ենք հանրակառերի երթեւեկը, բազմաթիվ քրիստոնյաների հանդարտ անցուդարձը և կանանց արտաքին խաղաղ տեսքը՝ մի բան, որ մեր ալեկոծված հոգիներին մի տեսակ վստահություն է ներշնչում: Ուտելիք գնելու նպատակով ճանապարհվում են դեպի Բելլա Վիստա. խանութները առհասրակ փակ են: Բաց են միայն ծխախոտավաճառի և մսավաճառի խանութները:

Ծուկայում բավական մեծ բազմություն է խմբվել: Տեսնում եմ գլխից վիրավոր և չարաշար ծեծված տասներկուումյա մի հույն աղջկա, որը գիշերվա ընթացքում լկվել ու գանակոծվել է թուրք պահակների կողմից: Գնում եմ մի մսավաճառի խանութ. խանութպանը, դատելով զինվորական շքանշանիցս և ոսկե մահիկիցս, ինձ թուրք պաշտոնավորի տեղ է դնում և «քեյ Էֆենդի»²⁶ ասելով ու աթոռ հրամցնելով՝ խնդրում է, որ փոքրինց սպասեմ, որ լավ միս ստանամ: Թուրքը կրկին ի պատվի է: Նստում եմ իբրև թուրք և դիտում հրապարակը: Ֆրանսիական հիվանդանոցի մոտ գտնվող ոստիկանատան գլխին թուրքական դրոշ է պարզված, և ցիրուցան փողոց են նետված հունական իշխանության շրջանի պաշտոնաթղթերն ու տեսրերը:

Տեղեկանում եմ, որ այդ կողմերում որնէ արտառոց բան չի պատահել: Միսը գնում եմ և տուն վերադառնում: Կեսօրից հետո դուրս եմ գալիս տնից և անցնում Ֆրանկների թաղով. խանութները փակ են: Թուրքական և հրեական խանութների վրա թուրքերենով գրված են «խալամ» և «մուսնի»²⁷ բառերը: Մեյխանե Բողազի (Meyhane Bogası) կողմից անցումն արգելված է: Ես եմ

դառնում ու նկատի ունենալով ուշ ժամը՝ ավելորդ եմ համարում Հայնոցի կողմ գնալ: Ֆրանկների թաղի հանդիպակաց փողոցներից մեկով նավահանգիստ եմ ուղղվում: Նավահանգստում թուրք ոստիկաններն են շրջում՝ նախքան հունական գրավումը իրենց կրած համազգեստներվ, իսկ տեղացի թուրքերը, դեմքի ստոր արտահայտությամբ և Մուսթաֆա Քեմալի մեծադիր նկարը իրենց կրծքին ամրացրած, բարձրաձայն խոսում են իրար հետ և կատակում: Հունական գրավման ժամանակ կարմիր ֆեռով թուրքերը հազարավոր անցորդների մեջ հազիվ էին նշմարվում, և լսելի ձայնով խոսելը՝ կարծես հանցանք էին համարում: Հիմա, սակայն, քաղաքի բացարձակ տերերն են դարձել և իրենց շարժուձևերով արհամարիում են գլխարկավորներին, որոնց թիվը այլևս զգալիորեն նվազել է: Անվտանգ տուն եմ հասնում: Ընթրիքից հետո սկսվում են տիկին Վերգինների երկունքի ցավերը: Լուսադեմին նա ծննդաբերում է: Նախ՝ ծնում է առողջ ու կատարյալ մի տղա, ապա՝ քիչ անց, ևս մի տղա՝ չորս ամսվա մեռած ու քայլայված (macéré) վիճակում:

Սեպտեմբերի 12, երեքշաբթի. — Զերբարակություններն սկսվել են: Նավահանգստով դեպի պահակակետ են տարվում չափահաս այբեր և երիտասարդներ: Հալածանքն ուղղված է մասնավորապես հայերի դեմ այն պատրվակով, թե իր նրանք դիմադրություն են ցույց տվել Սուրբ Ստեփանոս եկեղեցում ու Առաջնորդարանում և թուրք զինվորների դեմ զենք գործադրել: Իրողությունն այն է, որ տեղացի և մասնավորապես գավառաբնակ հայերը ապաստանել են հայոց եկեղեցում, և երբ թուրքերը այն պաշարելուց հետո հայերին հրամայել են անձնատոր լինել, վերջիններս մերժել են և համաձայնվել հանձնվել միայն եվրոպացի զինվորներին: Առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը²⁸ դուրս է հանվել Առաջնորդարանից՝ լատին կղերականների ընկերակցությամբ, և Առաջնորդարանում ապաստանած հայերը ֆրանսիացի զինվորների հսկողության ներքո նավահանգիստ են տարվել ու այնտեղ ազատ արձակվել: Կեսօրից առաջ գնում եմ Զալգրուշ Բաշը ու տեսնում, որ մեր տանը ձեռք չի դիպել: Հետո դիմացի ներ փողոցից ուղղվում եմ դեպի Կառուջը Օղլու (Katirci Oglu) փողոցը: Անցնում եմ հունական և հո-

լանդական հիվանդանոցների առջևից և Բելլա Վիստայի ճանապարհով տուն հասնում: Կեսօրից հետո մնում եմ տանը և պատշգամբից տեսնում ձերբակալված քրիստոնյաների, որոնց խումբ-խումբ տանում են տարրեր ուղղություններով:

Սևպետմբերի 18, չորեքշաբթի. — Առավոտյան բավականին լավ տպավորության տակ ենք արթնանում: Նավահանգստում որևէ արտառոց բան չենք տեսնում: Զալգըշը Բաշը տունն աշքի անցկացնելու նպատակով դուրս եմ գալիս. բոլոր թաղերը զարդարված են մասնավորապես ֆրանսիական և իտալական դրոշակներով: Ուրիշ մեծ ու փոքր պետությունների դրոշները սակավաթիվ են: Բայց օտար դրոշակ կրող շենքերը չեն պատկանում այդ պետությունների հապատակներին կամ պաշտպանյալներին: Այդ դրոշները պարզել են յոկ այն հույսով, որ իբրև օտար դրոշ կրող շենքեր հարձակումից զերծ պիտի մնան: Մենք էլ նավահանգստի մեր տան վրա պարզել ենք ֆրանսիական եռագույնը, որը մյուս դրոշներից ավելի հեշտ է պատրաստել: Անցնում եմ հունական թաղերով և հասնում լատինների մայր եկեղեցուն՝ Կաթեդրալին, որտեղ հազարավոր մարդիկ են խոնված:

Ավելի եմ առաջանում, անցնելով նաև հունական ուրիշ թաղերով և տեսնում եմ, որ շատ հույններ նստած են փողոցներում՝ իրենց տների վրա թուրքական դրոշը պարզած: Հասնում եմ Այ-Տրիֆոնա եկեղեցին, որի զանգակատան վրա ծածանվում է թուրքական լայնատարած դրոշը: Նույն դրոշը նկատելի է նաև ուրիշ եկեղեցիների վրա: Այ-Տրիֆոնայի բակում բազմություն է խոնվել: Կանանց և երեխաների բղավոցը լսելի է խիստ հեռուներից: Բակի անկյուններում և պատերի տակ կերակուր է պատրաստվում, և ծուխը ամպի նման բարձրանում է: Այ-Տրիֆոնայի թաղով անցնելիս հանդիպում եմ հույն մի բարեկամիս, որ նստած է իր տան առջև՝ կնոջ և դրացիների հետ: Հարցնում եմ, թե այդ թաղում որնէ բան պատահե՞լ է: Պատասխանում է, որ թաղի երեք կողմերը ենթարկվել են աննշան հարձակումների: Իսկ հայոց թաղը ամբողջովին թալանվել ու կողոպտվել է, կանայք ու աղջիկները՝ լլկվել, և շատ սպանություններ են կատարվել: Զալգըշը Բաշը մասին եմ հարցնում: Պատասխանում է, որ թիշ առաջ այդ կողմերում եղել է մի հույն ծերունի, որի ասածի

համաձայն՝ այդ թաղի ներքելի կողմերում ոչինչ չի պատահել, իսկ Հայնոցին կից հայկական տների վրա հարձակումներ են գործվել: Հայտնում եմ մեր տունը աշքի անցկացնելու դիտավորություն, բայց ինքը դա խոհնմություն չի համարում: Սակայն ես, այնտեղ հասնելուց հետո, որոշում եմ մի անգամ գնալ՝ տեսնելով՝ կողոպտված ենք, թե՞ ոչ:

Մի քանի թաղերով անցնելով՝ մտնում եմ Զալգշը Բաշը, ուր անցուղարձը խիստ նվազ է: Քոչ (Կս) փողոցի անկյունում տեսնում եմ մի թուրք զինվորի: Հասկանալի է, որ Հայնոցը և շրջակայքը պաշարված են: Հեռվից դիտում եմ մեր տաճ պատրժգամբն ու պատուհանները, որոնք անվնաս են մնացել: Դուան վրա կողմնակի մի հայացք եմ գցում և տեսնում, որ դուոք փակ է և անեղջ է մնում: Տաճ նկատմամբ ունեցած հետաքրքրությունը բավարարելուց հետո կատարյալ սառնարտությամբ մտնում եմ հանդիպակաց անցուղին և ուղղվում դեպի Կաթորջը Օղլու փողոցը, որտեղից հունական հիվանդանոցի ճանապարհով հասնում եմ նավահանգստի տունը: Ուրախ եմ՝ տեսնելով, որ հունական թաղերում հանդարտություն է իշխում, և որ մեր տունը անվնաս է մնացել. հույս ունեմ, որ մեկ-երկու օրից քաղաքի անվրտանգությունը կվերահաստատվի:

Կեսօրից հետո՝ ժամը երկուամբ, հայոց թաղի ուղղությամբ նշմարվում է լայնածավալ ծովս: Տաճ վերնահարկից դիտում ենք այդ ծովսը: Ուրիշ տների տաճներից էլ շատերը դիտում են այն ու ասում, թե հայոց թաղը կրակի է տրված. ուրիշներն էլ ասում են, թե կրակը Հայնոցից չէ, այլ նրա մոտակա թաղերից: Իրողությունը անձամբ ստուգելու նպատակով ճամփա եմ ընկնում: Հունական հիվանդանոցի մոտ տեսնում եմ կանանց, որ իրենց մանուկներին գրկած, անշափահաս երեխաների ձեռքից բռնած ու կապցներ առած՝ լեղապատառ փախչում են: Զանազան գույքեր շալակած տղամարդիկ հետևում են իրենց կանանց: Առաջանում եմ մինչև Կաթորջը Օղլու, որտեղից երևում է Ս. Ստեփանոսի՝ դեռևս կանգուն մնացած եռակերտ գմբեթը: Հրդեհը երկու ուղղությամբ է տարածվում. մեկը՝ եկեղեցուց վեր գըտնը վող Հայնոցի, մյուսը՝ Առաջնորդարանի և նորակառուց խանութների դիմաց գտնվող շենքերի ուղղությամբ ընդհուպ մինչև

Մեյսանե Բողազը: Այս երկու թևերը միմյանցից անջատ են, և ակնհայտ է, որ հրդեհը միտումնավոր է, քանի որ կրակն սկսվել է միաժամանակ մեկից ավելի տեղերում: Հայնոցի հրդեհը ավելի ընդարձակ է, ավելի ծավալուն: Քայլերս ուղղում եմ դեպի Չալգը Բաշը, բայց Կաթըոջը Օղլուից Չալգըջը Բաշը տանող անցման վրա հանդիպում եմ մի թուրքի, որ մոտենում է ինձ ու ասում: «Մենք պետք եղածն արեցինք, դուք ե'տ դարձեք»: Թուրքը, որ, անշուշտ, հրդեհի հարցում գործուն մասնակցություն ուներ²⁹, ինձ ևս իր ցեղակիցը և գործակիցներից մեկը կարծելով՝ թելադրում է, որ այլևս չառաջանամ, այլ ետ դառնամ: Իրողությունը հասկացողի նման պատասխանում եմ՝ «շա'տ լավ» և կանգ առնում մի պահ, որպեսզի թուրքը փոքր-ինչ հեռանա և հետո խոսակցության չրոնվի: Եթե 20-30 քայլ հեռանում է, ետ եմ դառնում և քայլ առ քայլ հետևում նրան՝ երկուսին միջև պահպանելով միննույն հեռավորությունը: Մինչև հունական հիվանդանոց այս կերպ ենք քայլում: Թուրքը ուղղվում է դեպի ֆրանկների թաղը, իսկ ես մտնում եմ հիվանդանոցների փողոցը ու մի երկար շունչ քաշում:

Սարսափով դիտում եմ փախստականների անհամար բազմությունը: Հունական և իտալական հիվանդանոցների պատուհանները լեցուն են փախստականներով, որոնց մեջ կան ծանոթ դեմքեր, իսկ հոլանդական հիվանդանոցի դռները ամուր փակված են: Շտապ անցնում եմ այդ փողոցով և հասնում նավահանգստի տունը: Պատմում եմ սիխոր կացության մասին. տնեցիները բոլորը վերնահարկ են բարձրացել: Ծոված լայնածավալ ամպի պես տարածվում է Հայոց թաղից մինչև Փունթա, և մոխիրները թափվում են մեր գլուխների վրա: Քամին, որ հայոց թաղի կողմից դեպի Փունթա է փչում, հետզինտե սաստկանում է կրակի իսկ արծարծումից: Մայրամուտից հրդեհը արդեն անցել է հունաց թաղերը, որտեղից խոշոր խմբերով դեպի Քարափ են խուժում ահագին բազմությունները: Կեսգիշերին կրակը տարածվում է տարբեր ուղղություններով ու աներևակայելի արագությամբ հասնում մինչև նավահանգստատ: Հրդեհի ծավալմանը զուգընթաց նավահանգստում բազմապատկվում է ահուդողի մատնված մարդկային էակների ալիքը, որը տարածվում է մինչև Փունթա:

Բոցերը հետզինետե մոտենում են մեր բնակարածիք: Այրվող նյութերի ճարճատյունից ու պայթուցիկների՝ բոցերեն ամսերի վերածումից գոյանում է մի դժոխային պատկեր, որի նմանը երբեք մինչև օրս չեմ տեսել: Պոլսում և այլ բաղաքներում լայնածավալ հրդեհներ տեսել էի: Դարդանելի ու Ռումինիայի ռազմավայրերում ականատես էի եղել անթիվ քաղաքների ու գյուղերի հրկիզման, բայց այդ հրդեհները ինձ վրա մեծ տպավորություն չեին թողել: Դզմիրի ներկա հրդեհը աննկարագրելի է ու անբացատրելի:

Այլևս հույս չի մնացել մեզ համար, մեր ոչնչացումը սոսկ ժամերի հարց է: Անցագրի պաշտոնատեղին, որ գտնվում էր նա-վահանգստի հանդիպակաց կողմում և բաղկացած էր բավական ընդարձակ ու իրար կից շենքերից, մեկ ժամվա ընթացքում մոխա-կույտի է վերածվել: Նապահանգստի բոլոր շքեղակերտ շենքերը՝ Քարփեթ Օրիանթալի (Carpet Oriental) բարձրադիր հաստատու-թյունը, Սփորթինգ Քլյուբը (Sporting Club), Թեաթրը դը Սմիռնը (Théâtre de Smyrne), Քրեմեր Փալասը (Kraemer Palace) և գեղակերտ այլ շենքեր մի քանի ժամվա ընթացքում հիր բաժին դարձան: Այդ շենքերի կմախքացած պատերի փլուզումից առաջացած դղրդյունն ու ահարկու ցնցումը տարածվում են հեռուները, և մենք մահվան սարսու ենք զգում՝ ինքներս մեզ վերջին դատաստանի զոհերը համարելով: Սակայն և այնպես կյանքը քաղցր է, և հուսահատա-կան այս րոպեներին անգամ ապրելու տենչանքը մեզ չի լքում:

Այս տաճը ապաստանողները պատրաստում են իրենց կապոց-ները՝ Փունթայի արտերի մեջ պատսպարվելու հեռանկարով: Դուրս եմ գալիս պատշգամբ և տեսնում, որ այդ կողմն էլ ապահովություն չկա, քանի որ Փունթայի կողմ քշված հազարավոր փախստական-ներ խումբ-խումբ դեպի հրդեհի ճակատն են շտապում՝ կրակը ավելի ապահով համարելով: Վերջապես՝ մարդկային ալիքների մակընթա-ցություն ու տեղատվություն, երբ մարդիկ շվարած չգիտեն, թե ո՞ւր գնան: Կրակը առաջանում է դեպի մեր բնակարանը, և մեր աշքերի առջև պարզվում է մահասարսու մի պատկեր:

Սեպտեմբերի 14, Թինգշարքի. — Մեր կապոցները պատրաստ՝ սպասում ենք մինչև առավոտ: Արևածագից հետո տեսնում ենք, որ տաճ բնակիչներից շատերը ինքնարերաբար մեկնում են՝ առավել

ապահով տեղ գտնելու մտածումով։ Իսկ ես, հակառակ կնոջս արնդումներին, չեմ ուզում շտապել՝ դրսում մնալը ավելի վտանգավոր համարելով։ Վերջապես Երվանդ Աղամյանը, չնայած որ կինը երկու օր առաջ է ծննդաբերել, որոշում է դուրս ելնել. մենք էլ այլևս ստիպած ենք նրանց հետևել, և մեզ փողոց ենք գցում, ես՝ գործիքներիս սնդուկը բռնած, իսկ զավակներիս ձեռքը՝ կապոցներ տված։ Ուղղվում ենք դեպի Փունթա և մի քիչ առաջանում. սակայն Հալեբը կողմից հրաձգության ձայներ ենք լսում ու դողահար ետ դառնում։

Քաղաքին տիրանալուց հետո թուրքերը բռնագրավել են նաև առագաստանավերն ու մակուլները և կոտրել են նրանց թիակները, որպեսզի քրիստոնյաները հնարավորություն չունենան փոխադրվելու դեպի շոգենավերն ու գրահավորները։ Միայն մի քանի մակուլ-կավարներ են երևում, որոնք որպես մինչև զրահավորները հասնելու փոխադրավարձ աներևակայելի գումարներ են պահանջում. շատերը շտապում են վճարել այդ գումարները, սակայն սակավաթիվ են նրանք, որոնց հաջողվում է շոգենավ մտնել։ Բարեբախտ են միայն օտարահպատակները. մեծ պետություններին պատկանող շոգեմակույկները զրահանավ են փիսադրում իրենց հպատակներին ու պաշտպանյալներին։ Նրանք նավահանգստի շնչերից մինչև ծովափ շարված սվինավոր զինվորների զույգ շարքերի միջով անցնում են կատարյալ հանգստությամբ ու կանոնավորությամբ։ Հազար անգամ զղում եմ, որ մեկ տարի առաջ ֆրանսիական պաշտպանյալ³⁰ դառնալու համար ինձ առաջարկված պայմանները շընդունեցի։ Սակայն՝ ավա՞ն։

Անցնում ենք ծովեզերյա պատճեշի ետին կողմը, որտեղ խոնված է կանանց ու տղամարդկանց մի հոծ բազմություն։ Մեր ետևում գտնվում են երկու իտալուհիներ, որոնք ձայն են տալիս իտալացի նավաստիներին ու ուզմածովայիններին։ Վերջիններս զրադկած են իտալահպատակներին շոգեմակույկի մեջ տեղավորելով։ Առիթը հարմար ենք նկատում, և մեր մեջ հույս է ծագում իտալուհիներից առաջ շոգեմակույկ մտնել։ Նավաստիներին ֆրանսերն աղաչում ենք, որ մեզ ևս ընդունեն։ Նրանք խոլ են մնում մեր աղաչանքների հանդեպ, և երկար կանգնած զինվորները մեզ մեղմորեն շարքից դուրս են հանում։ Մեզ վերստին հանրակառքի

գծերի վրա ենք գտնում: Ընդհատ-ընդհատ հրաձգության ձայներ են լսվում:

Հրդեհը շարունակում է իր ավերիչ գործը և մինչև շվետական հյուպատոսարան ամեն ինչ լափել է արդեն: Երեք մահասարսուոն ազդակների՝ հրի, սրի ու ջրի միջև ենք գտնվում: Մեր վիճակը ամբողջովին հուսահատական է: Կինս ու զավակներս սկսում են դառնորեն արտասպե՛ ասելով. «Ախ, հայրի՛կ, ինչո՞ւ մեզ թուրքի գալուց առաջ չազատեցիր, և հիմա մեր չարաշար սպանության պատճառն ես լինելու, ա՞յս ... »: Պատասխան չունեմ տալու: Ես էլ եմ ձայնակցում հրանց լացուկոծին և խոստովանում, որ այս մեր վիճակի միակ հանցավորն ու պատասխանատուն ես եմ և լալագին աշքերով ներում եմ խնդրում: Այլևս փրկության հնար չկա: Ապրելու հույս չի մնացել այլևս: Կրակը, հրազենն ու թուրքի մտրակը երեք կողմից սեղմել են քրիստոնյա ամբոխին: Եթե հույսի որևէ նշույլ մնացել է, ապա դա ծովն է: Վաղ առավոտից արդեն շատերա են սկսել ջուրը նետվել և օտար գրահավորներից ու փոխադրանավերից ապաստան խնդրել: Երանի՛ հրանց, որ լողալ գիտեն և որ մենակ են: Լողորդների մեջ կանայք ու աղջիկներ էլ կան: Մոտիկից դիտեցի մի հելլենուիու, որ ծովը նետվեց և քաջ լողորդի պես առաջացավ դեպի մոտակա փոխադրանավը: Երկու նավաստիներ փոխադրանավից մի մակույկ իշեցրին և ծովից դուրս քաշեցին քաշարի կնոքը: Բայց ես ինչպե՞ս կարող եմ նույնիսկ խորհել նման միջոցի մասին, ես, որ ընտանեկան ամուր կապերով կաշկանդված եմ, ես, որ մի ամբողջ ընտանիքի թշվառության ու ողբերգական վախճանի միակ պատասխանատուն եմ:

Դարձալ անցնում ենք ծովեզրյա պատնեշի ետին կողմը և որոշում մեզ նետել որևէ փոխադրանավ՝ թեկուզ գոհելով մեր ունեցած բոլոր գորաբեղնեներն ու զարդեղնեները: Մակույկավարներին ուղղված մեր թախանձագին աղաշանքները ապարդյուն են մնում: Թենք կարծես ապկվում են գործիքների ու զարդեղնեների սնդուկի ծանրությունից: Կինս առաջարկում է՝ ծովը նետեմ դրանք, քանի որ մեզ դրանցից այլևս օգուտ չկա, և եթե նույնիսկ որևէ հյուրընկալ երկիր հասնենք, կարող ենք մուրալով էլ ապրել: Բայց ես համառորեն ուզում եմ կրել այդ ծանր բեռը, որ միակ հույս է այս կատարյալ հուսահատության մեջ: Ալիքները գարնվում են ծովա-

փին, և մենք թրջվում ենք մինչև ծնկներս: Բայց շարունակում ենք մակույկավարներին աղաշել, որ մեզ շոգենավ փոխադրեն. իզոր:

Ծովակի մոտ խարսխված օտար փոխադրանավերի ու զրահավորների մեջ որոշակիորեն տեսանելի են դեպի մեզ ուղղված շարժանկարի գործիքներ՝ մեր թշվառությունը պատկերող ֆիլմեր նկարահանելու համար: Այդ լուսանկարիչներն ու նրանց գերեք-ջանիկ ընկերները մեր տաճաշաճների պարզ հանդիսատեսներն են: Նրանք մերժում են ապաստան տալ նույնիսկ լողալով կամ մակույկներով նրանց մոտեցողներին, որպեսզի պահպանած լինեն իրենց քաղաքական չեզոքությունը: Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր են դարձել նրանց համար: Մինչև կեսօր սոված ու ծարավ, արևի կիզիչ ճառագայթների տակ թափառում ենք ծովեզերքի երկայնքով մեկ և հասկանում, որ մեզ համար փրկություն չկա: Չափազանց հոգնած ենք ու քայլելու անկարող: Մեր հուսալքումի այդ պահին նշմարում ենք, որ քամին իր ուղղությունը փոխել է: Մինչև հիմա Հայոցից դեպի Փունթա էր փշում, այժմ ծովից դեպի ցամաք, այնպես որ հրդեհը սկսել է տարածվել ներքին թաղերը:

Սիրիիհիսարյանների տունը առայժմ վտանգից զերծ է մնում: Աղամյան ընտանիքը ևս, մեզ պես ժամերով թափառելուց հետո, տեսնելով, որ փրկվելու հույս չկա, և որ հրդեհի վտանգը անցել է, նախընտրում է տուն վերադառնալ՝ հատկանի նկատի ունենալով տիկ. Վերգիտնեին, որի նորածինը դեռ երկու օրական է: Հետևում ենք նրանց ու տուն մտնում՝ մի քանի ժամ հանգստանալու: Կեսօրից հետո՝ ժամը չորսին, պատշգամբից տեսնում ենք բազմաթիվ հայ որբերի³¹, որոնք Փունթայի կողմից ուղղվում են դեպի Փասափորք՝ ամերիկյան դրոշի պաշտպանության ներքո: Տեղեկանում ենք, որ նրանք ամերիկյան շոգենավով Պոլիս պիտի փոխադրվեն: Մեր սըրտերում արթնանում է որբերի հետ փրկվելու հույսը, և տնից դուրս ենք գալիս, ես՝ գործիքներիս սնդուկն առած, կին՝ Վարդումիւն գրկած, իսկ զավակներս ու սպասութին՝ կապոցներ բռնած: Ծվեդական հյուպատոսարանից մինչև Փասափորք քայլում ենք երբեմնի հոյակապ շենքերի կմախքացած պատերի առջևով: Ներսում դեռ մխում են գերաններ ու զանազան վառելանյութեր: Այդ դժոխային վայրերից հեռանալու միջոցը փնտրող, շվարած ու աստանդական

անցորդմերիս մերթընդմերթ վտանգ են սպառնում պատերի հանկարծակի փլուզումները:

Հրկիզված շենքերի մեջ առանձնապես ուշադրություն է գրավում Թեաթրող դը Սմիլոնը (Théâtre de Smyrne), որ իր կմախքացած վիճակում անգամ ցցել է վեհ ճակատը, ինչպես անցյալում բարձր էր պահում այն՝ հոխորտացող իզմիրցիների հապարտ հայացքներից վեր: Առաջ հիացմունքով ու հաճույքով էինք դիտում այդ շենքը, իսկ հիմա սոսկումով ու շտապելով ենք անցնում առջևից՝ վախենալով, որ դրա հանկարծակի փլուզումը կարող է շախչախել մեր հուսահատ ճակատները: Նավահանգաստում հանդիպում ենք Հարություն Պենլյանի ու Արամ Առաքելյանի ընտանիքներին, որոնք միանում են մեզ: Ծովի բաց տարածքի վրա տեսնում ենք ամերիկյան մի փոխադրանավ և փնտրում հրան հասնելու համար մի մակույկի վրա նետվելու միջոցը, սակայն անկարելի է լինում: Ծովի ալիքները բարձրանում են, և դարձյալ մինչև մեր ծնկները թրչվում ենք: Նավահանգաստի վրա տնային գույքերի կողքին, այստեղ-այնտեղ նետված են թանկարժեք առարկաներ ու մարդկային դիակներ, որոնց վրայով, գրեթե կոխկոտելով, անցնում ենք: Մեր ազնիվ օգացումները բրացել են, և սոսկ անձնասիրությունն է, որ տիրաբար իշխում է մեր եռության վրա: Զանում ենք որևէ կերպ փրկվել այս դժոխային քաղաքից: Սակայն այս անգամ ևս մեր գերմարդկային ճիգերը ապարդյուն են անցնում: Նույնիսկ որբերը փոխադրանավի մեջ լրիվ շեն տեղապորվում: Ամերիկյան փոխադրանավ են մտնում միայն որբութիները, իսկ տղաների մուտքը հետաձգվում է հաջորդ օրվան: Երկու-երեք ժամ տևող այս անօգուտ թափառումից հետո, Երվանդ Աղամյանի հետ համաձայնության գալով, վերադառնում ենք տուն, որ այլևս գերծ է հրդեհի վտանգից:

Կրակը կանգ է առել մեր տան շարքի անկյունում, սակայն դեռ շարունակում է լափել հետին թաղերը: Իբրև մեր ազգական, տան մեջ ընդունվում է նաև Արամ Առաքելյանի ընտանիքը: Այս անգամ տան բազմությունը քառապատկվել է: Բոլորս էլ չափազանց հոգնած ենք ու շարժվելու կարողություն չունենք: Առանձնանում ենք ետևի սենյակներից մեկում և զանում հանգաստացնել մեր շարչարված մարմինները: Հակառակ մեր արտակարգ հոգնության՝ քունը մեր աշքերից հեռու է մնում: Պատշգամբից դիտում ենք մոխրա-

կույտի վերածված թաղերից բարձրացող ծուխը: Նավահանգստի անվնաս մնացած տների առաջ խճողված են մարդկային թշվառ էակներ, որոնք եկել են ապաստան գտնելու քարերի վրա՝ ծովից փշող ցուրտ քամուն դեմ հանդիման: Այդ թշվառ էակներից շատերը դեռ մի քանի օր առաջ ապրուստի ու հանգստի բոլոր միջոցներն ունեին, իսկ այժմ ամեն ինչից զրկված՝ փողոց են գետվել անպահով ու անհույս:

Բաց ծովում ֆրանսիական մի փոխադրանավից լսվող երաժշտության հնչյուններն ու էլեկտրական վառ լույսերը նավահանգընտից արձակվող աղիողորմ ճիշերի և մթության մեջ գործվող անհամար ոճիրների հակապատկերն են կազմում: Այդ փոխադրանավի գեղարվեստաներները հզմիրի մարտիրոսությունը ներկայացնող շարժանկարներ են պատրաստում՝ դրանք իրենց ազգակիցներին ցուցադրելու համար: Բոլոր շոգենավերում արդեն մի քանի օր է, ինչ այդ ուղղությամբ մեծ գործունեություն է ծավալվում: Ահա քաղաքակիրթ Եվրոպայի և Ամերիկայի գործունեությունն ու հետաքրքրությունը՝ իրենցից այնքան ակնկալված նյութական ու ուազմական օժանդակության փոխարեն: Հենց որ դժոխային կրակը իր ավերից դերը կատարեց՝ թողնելով քրիստոնյա ամբողջ բնակչությանը անտուն ու անօգնական, եվրոպացիները մտածեցին, թե ինչպես կարող էին տարբեր ձևով ցույց տալ իրենց մարդասիրությունն ու գթասրտությունը: Անգլիական զրահավորներից ակսեցին ուսւմբեր արձակել՝ կմախքացած շենքերի պատերը փլցնելու համար, որպեսզի հաջորդ օրերին թուրք կողոպտիչները կարողանային փլատակների տակ անվտանգ ոսկյա ու արծաթյա ձուլածոներ փնտրել՝ թուրք բարբարոսությունը դրանցով զարդարելու համար, և որպեսզի հնարավորություն տան շահատերերին ու վաշխառուներին՝ իրար խառնված պղնձից ու կապարից, հողից ու քարից մեծամեծ շահույթներ ստանալ:

Հակառակ մեր աներևեկայելի շարշարանքներին՝ սփոփիչ ու կազդուրիչ քունը մեր աշքերին չի մոտենում, և մեր աշքերի առաջ շարժանկարի արագությամբ պատկերանում են ցերեկվա զարիութելի դեպքերը, որ թերևս սկիզբն են երկունքի:

Սևպոնմբերի 15, ուրբաթ. – Աղավուտ է. հրդեհի վտանգը

գրեթե անցել է: Նավահանգստում ոչխարի հոտերի նման կուտակված են մարդկային էակներ: Հայոց թաղից մինչև Փունթայի շրջակայքը 24 ժամվա ընթացքում ավերակ է դարձել: Տասնյակ հազարավոր մարդիկ մնացել են ո՞չ միայն անպատսապար ու թշվառ, այլև ամեն վայրկյան նշավակ բարբարոսությունների ու ամեն տեսակ հարձակումների: Թուրքական թերթերը պաշտոնական հաղորդագրությամբ տեղեկացնում են, թե լայնածավալ այդ հրդեհի հեղինակները հայ հեղափոխականներն են, որոնք, ներքին քաղաքները մինչև Մաղնիսան կրակի տալուց հետո, իրենց գործն ամրողացրին՝ Խօմիրի հրդեհը սարքելով: Մինչդեռ հայերը, եթե նույնիսկ այդպիսի դիտավորություն ունենային, փոխանակ հրդեհը իրենց թաղից սկսելով՝ կարող էին հելլենական բանակի մեկնումից առաջ, և նույնիսկ դրանից հետո նախ թուրքական թաղերը կրակի տալ: Ի դեպքություն գրավումից քիչ հետո Հայնոցը մեծ մասամբ դատարկված էր, և այդ գիշերն իսկ թուրքերը Հայոց թաղում սկսել էին թալանը, սպանություններ ու ամեն տեսակի վայրագություններ: Խոկ մինչևն չորեքշաբթի հրդեհի օրը, ոչ ոք չեր համարձակվում անցնել Հայոց թաղով, որ մնաց թե այն զանազան տեղերից հրդեհի տրվեր:

Թուրքերը վաղուց ի վեր որոշել էին Խօմիրի քրիստոնյա թաղերը ոչնչացնել՝ հատուկ ծրագրի համաձայն: Խթթիմադական թուրքերի մտադրությունը ընդհանուր պատերազմի ընթացքում Խօմիրի քրիստոնյա թաղերը քարուքանդ անելն էր Բաքոսի լեռան (Kadife Kale) վրա գետեղված թնդանոթներով, եթե դաշնակից զոահավորներին հաջողվեր Խօմիրի ծովախորշ մուտք գործել: Եթե այն ժամանակ հարկ չհամարվեց այս ավերիչ ծրագիրն իրագործել, քեմալական թուրքերն այս անգամ իրենց նպատակին հասան և իրենց տարիներ առաջ մշակած ծրագիրն իրականացրին նախ Հայոց թաղը կրակի տալով: Այն հանգամանքը, որ այդ օրերին քամին Հայնոցից դեպի Փունթա էր փշում, իրենց բարեբախտությունն էր: Եթե քամին փշեր հակառակ ուղղությամբ, նրանք իրենց գործը ախտի սկսեին Փունթայից, և կրակը պիտի տարածվեր մինչև Հայնոց ու կանգ առներ Հայոց թաղի հարավային սահմանում՝ Բուլվարի հրապարակում, որ բաժանում է Հայնոցը հրեական ու թուրքական թաղերից: Նախորդ կուսակալ Ռահմի թելը Հայնոցի մի մասը քանդել էր Բասմախաննեից մինչև Կոնակ (Konak) իրը թև գրոսայգի կառուցելու

ոիստավորությամբ կամ, ո՞վ գիտե, թե ի՞նչ գաղտնի ծրագրով:

Վերևում արդեն պատմել եմ, որ հրդեհի ծագած օրն իսկ Զալգըջը Բաշը գնալուս ճանապարհին հանդիպել էի մի թուրքի, որ ինձ իր ազգակիցը և հրդեհի կազմակերպիչներից մեկը կարծելով՝ պատվիրել էր ետ դառնալ, քանի որ ինքը պետք եղածն արդեն արել էր: Արժանահավատ մի անձ, որ մինչև հրդեհի օրը ֆրանսիական դրոշի հովանու տակ համարձակվել էր իր բնակարանում մնալ, ինձ պատմեց, թե ինչպես իր տան հանդիպակաց շենքն է մտել մի թուրք ու մի քանի րոպեից դուրս եկել: Դրանից մի քանի րոպե անց տունն սկսել է բոցավառվել, որը տեսնելով նա ստիպված է եղել իր ընտանիքի հետ հապճեա փախուստի դիմել: Ասողներ կան, թե թուրք խուժանը և հավանաբար հրդեհի կազմակերպիչ մարմինները հրշեց խմբերին արգելել են մարել կրակը: Նույնիսկ ասում են, թե հրշեց ջրհանի սնդուկներում ջրի փոխարեն բենզին են լցոել՝ հրդեհը է՛լ ավելի աստվացնելու նպատակով: Կասկած չկա, որ թուրքերը այլևս տեղեր յուղու քրջեր, բենզինով լեցուն թիթեղներ և ուրիշ դյուրավառ ցյութեր են տեղավորել: Այդպիսով հրդեհը, որ ծագել է տարրեր տեղերից, տարածվել է ամեն կողմ՝ մի քանի ժամվա ընթացքում մոխրակույտի վերածնելով Հոնիականի այս գեղեցիկ քաղաքի ամենից բարգավաճ մասը՝ քրիստոնյա թաղերը: Իրոք, դժոխամիտ թուրքերը հասան իրենց գազանային նապատակին. գյավուր³² հզմիրը դարձավ թուրք Խզմիր:

Կեսօրից առաջ մունետիկն ազդարարում է, թե բոլոր նրանք, որոնց տները չեն այրվել, կարող են վերադառնալ իրենց տները. իսկ նրանք, որոնք անտուն են մնացել հրդեհի պատճառով, կարող են կառավարությանը դիմել, որպեսզի իրենց բնակատեղի հատկացվի: Մեզ համար Խզմիրում կամ Թուրքիայի որևէ այլ մասում ապրելը այլևս անխոհեմություն է նշանակում: Մտածում ենք, թե ինչ միջոցով պիտի կարողանանք ჩեռանալ այս ավերակ դարձած տեղանքից:

Այդ օրը՝ Զալգըջը Բաշըով անցնող ու նավահանգստի տանն ապաստանած մի մարդ ասում է, թե այդ թաղի կեսը կրակից զերծ է մնացել իր առանձնաշնորհ դիրքի պատճառով: Ծագրտման կարոտ այս լուրը սրտում արթնացնում է գույքին գեթ մի մասը փրկելու

իղձը, որպեսզի բոլորովին թշվառ վիճակում չհեռանամ այս քաղաքից: Հակընդդեմ մտածումների ու խորհուրդների մեջ տարութերվում եմ՝ առանց մեկն ու մեկին որևէ բան ասելու, եթիւ ինձ է մոտենում Արամ Առաքելյանը: Նրա տունն էլ է գտնվում Չալգըջը Բաշում, և նա ինձ հայտնում է իր բնակարանն աչքի անցկացնելու և հնարավորության դեպքում ընտանիքով այնունի փոխադրվելու իր մտադրությունը: Նրա այդ դիտավորությունից և անուղղակի առաջարկից ես ել եմ փորձության ենթարկվում՝ իրեն ընկերակցելու: Արամ Առաքելյանը ընդհանուր տեղահանությունների ժամանակ իր մաշկը փրկելու համար փոխել էր անունը և ստացել նրա թրքացած լինելը հաստատող փաստաթուղթ, որ իրեն իրավունք էր տալիս, ոստիկանության կողմից քննության ենթարկվելու դեպքում ներկայանալ որպես թուրք: Խսկ ես զրուցրված լինելու պաշտոնաթղթիս վրա ունեմ հարյուրապեսի համազգեստով մի լուսանկար և մի քանի պաշտոնական գրություններ, որոնք հարկ եղած դեպքում կարող են օգտակար լինել:

Հակառակ կնոշա խորհրդի՛ Ա. Առաքելյանի հետ միաբան՝ դուրս եմ գալիս տնից, գլխին՝ ֆեսը, կրծքին՝ շքանշան և ոսկեգույն մահիկը: Մեր ծրագիրն է՝ գնալ Բելա Վիստայից Չալգըջը Բաշը, տեսնել մեր տները և հարմար ճանապարհով ետ վերադառնալ: Տան ետևի փողոցից մտնում ենք հունական թաղերը և տեսնում, որ փողոցներից հինգ-վեց շարք մոխիր է դարձել, և շենքերի փլատակներից դեռ բարձրանում են մոխին ու բոցերը: Տեսնելով, որ մեր ծրագրած ճանապարհը անանցանելի է դարձել, ըմբռնում ենք, որ հրդենիր մեր երկակայածից անհամենատ ավելի լայնածավալ է եղել: Ուղղվում ենք դեպի Փունթա ու տեսնում, որ այդ կողմերում էլ անցուի չի մնացել: Նախ՝ մտածում ենք ետ դառնալ, բայց հետո՝ որոշում ենք մեր ընթացքը շարունակել, քանի արդեն դուրս ենք եկել: Տեսնում ենք, որ ոչ միայն Փունթայի տները, այլև երկաթգծի վրա մնացած վագոնների մի մասն էլ է այրված:

Արդեն քաղաքից դուրս՝ արտերի մեջ ենք. այս վայրերը հրդենի սահմանագծի մեջ են գտնվում և մեզ անծանոթ են: Այնտեղ տեսնում ենք բազմաթիվ հույների, որոնք դուրս են եկել՝ տեսնելու մոխրակույտ դարձած իրենց բնակարանները և թերևս փնտրելու թաքնված մի գանձի ձուլածո: Արտերի մեջ հանդիպում ենք մի

խումբ թուրք գինվորների և հարցման, թե այդ ճանապարհը մեզ մինչև Բասմախանե կհասցնի՞ «Այո՛», — պատասխանում են՝ մեզ թուրք կարծելով: Այս ընթացքում տեսնում ենք հրդեհի ստեղծած ահավոր ու դժոխային վիճակը, հասնում Թեփեջիկ (Terpecik), քիչ անց էլ Քեմեր (Kemer) պողոտայի վրա ենք և ուղղվում ենք դեպի Բասմախանե: Այդ ճանապարհի աշակողմյան քրիստոնյա թաղերը մոխրացած են, իսկ հանդիպակաց թուրք թաղերը գրեթե անվթար են մնացել: Կրակը անցել է նաև ձախ կողմը, սակայն չի ծավալվել, այլ այնտեղ կանգ է առել՝ թուրքերի գործադրած ջանքերի շնորհիվ: Այդ ճանապարհով առաջանում է թուրք ձիավորների մի վաշտ, որին Բետոնում ենք քայլ առ քայլ. կիսավեր տներում տեսնում ենք կողոպուտի ելած բազմաթիվ թրքութիների ու պատանիների:

Հասնում ենք Բասմախանեի հրապարակ և տեսնում մի խումբ թուրքերի: Այդ հրապարակի ու Ռեշիդին պողոտայի երբեմնի գեղակերտ շենքերից կմախքներ են միայն մնացել: Անկարելի է անցնել կենտրոնական պողոտայով ու գնալ Չալգըչը Բաշը: Ուղղվում ենք դեպի Բուլվար (Boulevard), որ գրեթե ամայի է: Բուլվարի դիմաց կանգնած են մի քանի թուրք երիտասարդներ ու պատանիներ, որոնք բարձրածայն խոսում են իրար հետ: Մեր այս անխոհեմ շրջագայության ընթացքում սրտի ցավով տեսնում ենք, թե ինչպես է Հայնոցը ամրողովին գրկվել իր հմայքից ու գեղեցկությունից: Կանգուն են մնացել միայն տների պատերը: Մեկ ժամից ավելի տնող մեր այս ակամա պտույտի ընթացքում տեսնում ենք հրդեհի գործած ահավոր ավերումները: Մեզնից քացի՝ քշերը միայն ականատես եղան այս հրդեհի պատճառած անհամար վնասներին: Այս քատարնելի տեսարանը մեր մտքերում անցնելի պիտի մնա:

Բուլվարից շարունակում ենք մեր ճանապարհը, և ճիշտ այն անկյունից, որտեղ Բուլվար Ռեշիդին ավարտվում է, լսվում է մի ձայն, որը մեզ հրամայում է ետ դառնալ: Են ենք դառնում և տեսնում մի թուրք գինվորի, որ մեզ իր մոտ է կանչում: Պահի վճռական է, ու աետք է հնազանդվել, այլապես հրացանը դեպի մեզ է ուղղված: Մոտենում ենք զինվորին: Ընկերս հարցնում է, թե ի՞նչ է ուզում: Մարդը հարցնում է մեր ազգությունը: Ընկերս պատասխանում է՝ «Փա՛ռք Աստծո, իսլամ ենք»: Զինվորը մեզ տանում է թուրք երիտասարդների մոտ, որոնք Բուլվարի հանդիպակաց կողմն են

կանգնած: Նրանք ընկերոջս մասին ասում են, թե չեն ճանաչում, իսկ իմ մասին՝ թե հայ է: Զինվորը մեզ տանում է Բասմախանեի կայարան, որ ժամանակավորապես վեր է ածվել թուրքական պաշտոնատեղիի: Այնուեղ ևս մեզ նոյն հարցերն են տալիս և մեզնից պահանջում փաստաթղթեր: Արամ Առաքելյանը ցույց է տալիս իր ինքնության փաստաթղթը, իսկ ես՝ զինվորական լուսանկարս կրող պաշտոնաթուղթս: Պաշտոնյաներից մենք ասում է, թե «սրանք իսլամ են, թողենք՝ գնան», իսկ մի ուրիշը, անդրադառնալով Առաքելյանի ինքնության փաստաթղթին, ասում է, թե այդ թուղթը վերջերս է ձեռք բերվել, թե այս մարդը հետո է իսլամացած (այսինքն՝ մյուսիթեղի է), և ո՞վ գիտե, ինչ պարագաների ներքո. ապա հարցնում է նրա նախորդ անոնք և զինվորին հանձնարարում է մեզ ոստիկանատուն տանել՝ մանրակրկիտ քննության:

Զերբակալված ենք: Գնում ենք ոստիկանատուն, ոստիկանապետին ցույց ենք տալիս մեր պաշտոնաթղթերը, որոնք քննելուց հետո վերջինս ոստիկաններին հրամայում է մեզ խուզարկել, և տեսնելով, որ մեզ վրա գենք և այլն չկա, հրամայում է մեզ վեր տանել՝ խատիվ պատվիրելով, որ մեզ հետ լավ վարվեն: Բանտարկված ենք որպես ուզմագերի: Հազար անգամ անհծում ենք այն վայրկյանը, երբ մեր մեջ հղացավ մեր տները տեսնելու գաղափարը և անխոհեմաբար, մեր իսկ ոտքով եկանք հասանք ոստիկանատուն ու կամավոր կերպով գերի հանձնվեցինք: Բայց այլևս ամեն բան վերջացած է: Ոստիկաններից մենք մեզ տանում է վերև ու ցույց է տալիս սրահում գտնվող տախտակյա երկար մի նատարան: Սրահի մի կողմում մի փոքրիկ սենյակ կա, ուր հազիվ տասնհինգ հոգի կողք կողքի կարող է նատել: Այդ սենյակում իրար գլխի կիտված են հայ ու հույն ամեն տարիի յոթանասուն-ութսուն այլեր: Սենյակի ետևի կողմում մի բարձր լուսամուտ կա՝ միակ տեղը, որտեղից բանտարկյալները կարող են լույս ու օդ առնել: Այդ թշվառների համար լույսը այնչափ կարևոր չէ, մինչդեռ այս տոթագին օրերին օդն անհրաժեշտ է: Եթե օդ շնչելու համար մենք մոտենա դռանը և կամ համարձակվի ոտքը սենյակի դռնից դուրս դնել, անմիջապես վրա կհասնի հրացանի բնի հարվածը: Ոստիկանը սպառնագին հրամայում է բանտարկյալներին նատել, մինչդեռ խեղճերը ոտքի վրա նույնիսկ կանգնելու տեղ չունեն: Մեզ թույլատրվում է նատել

Ըստարանին, մի բան, որ մեծ շնորհ է: Մեզ հետ են շուրջ քառասուն բանտարկյալներ, որոնք առանձնաշնորհյալներ են, քանի որ շնչելու առատ օդ ունեն: Սենյակի դուռը մոտ դրված է բենզինի մի թիթեղաման և թիթեղյա փոքրիկ մի ջրաման: Միայն հաճախակի խնդրանքներից հետո է, որ սենյակում գտնվող բանտարկյալներին իրավունք է տրվում ջուր խմել, իսկ բնական կարիքների համար մեծ դժվարությամբ է թույլատրվում ներք իշնել, այն էլ՝ ոստիկանի հսկողության ներքո:

Այս անհջյալ վայրը մեր մուտք գործելուց քիչ անց բերում են ուրիշ ձերբակալվածների, որոնք զինվորների հարվածների տակ ոտքից գլուխ կողոպտվում են: Վայ' նրանց, որ մաքուր հագուստ ու նոր կոշիկ են հագել: Իսկ դրամ, ժամացույց, մատանի և այլ զարդենեներ³³ վայրկենապես մտնում են զինվորների գրպանները: Եթե առաջին անգամ ականատես եղանք կողոպուտին, հասկացանք, թե ինչ էր նշանակում ոստիկանապետի՝ մեր մասին տված հրամանը, թե «մեզ հետ լավ վարվեն»: Ոստիկանատան վերնահարկում տեղավորված են թուրք զինվորներ, որոնք եռուզենի մեջ են: Վերև են բարձրանում՝ բեռնավորված կողոպուտներով, որոնք իրար մեջ բաժանելուց հետո ցած են իշնում՝ անտարակույս նոր գողոններ փնտրելու: Զինվորների հարյուրապետը գալիս է մեզ մոտ: Իրեն ցույց եմ տալիս ինքնության թղթերս և հայտնում, թե ինչ պարագաներում եմ ձերբակալվել: Նա ուշի ուշով քննում է թղթերս, խոստանում մեր մասին կարգադրություն անել և ապա իշնում է ցած: Անցնում է մի ժամ՝ առանց որևէ կարգադրության: Մեզ մոտ գտնվող ոստիկան Հյուսեյինից խնդրում ենք, որ մեր մասին բարեխոսի ոստիկանապետի կամ հարյուրապետի մոտ: Խորիուրդ է տալիս, որ մի քիչ էլ սպասենք: Սպասում ենք ու մտածում մեր ընտանիքների մասին, որոնք չգիտեն, թե մեր գլխով ինչե՞ր են անցնում: Ոստիկան Հյուսեյինը³⁴ մեկական կտոր հաց է բաժանում բանտարկյալներին, որոնք այն հափշտակելով՝ սկսում են ագահարար ուտել: Քիչ հետո ոստիկանը մի կտոր հաց ու մի քիչ պանիր էլ մեզ է տալիս: Վերցնում ենք ու ուզում ենք վճարել: Ոստիկանը մերժում է՝ ասելով, որ այդ սեռնդը մեր բանտարկյալների իրավունքն է:

Երեկո է. արդեն մթնել է, իսկ մենք դեռ ոստիկանատանն ենք: Ազատ արձակվելու հույս չկա: Դառն մտածումների մեջ ենք միաց-

Ճըկած: Զինվորները ոստիկանատում են վերադառնում՝ յուրաքանչյուրը թեկի տակ մի կողոպսված իր սեղմած, որը իրար մեջ են բաժանում։ Տեսնում ենք մետաքսյա գեղեցիկ ու թանկարժեք կերպաներ։ Դրանք թաշկինակի մեծությամբ կտրում են ու իրար նվիրում։ Մեզ մոտենում են զինվորներից ոմանք և հարցնում, թե ի՞նչ ազգի ենք։ Ա. Առաքելյանը իր սովորական հանգերգով պատասխանում է՝ «Փա՛ռ Աստծո, իսլա՛մ ենք»։ Զինվորներից մեկը, որ ինձ ծխախոտ հրամցնելու պատվին է արժանացնում, հարցնում է անուն և այն խալամական անվան նմանեցնելով՝ զարմանք է հայտնում։ «Խւլամի նեղություն պատճառելը մեղք է», — ասում է նա ու կրկին հարցնում, թե ինչ պատճառով եմ ձերբակալվել։ Առանց իր հարցին պատասխանելով՝ խոսակցության նյութը փոխում եմ, և ես Էլ իրեն ուրիշ հարցեր եմ տալիս ու պատմում ընդհանուր պատերազմի ժամանակ տեղի ունեցած միջադեպերի մասին, որոնք շարժում են զինվորի հետաքրքրությունը։ Կեսգիշերն անց է արդեն, երբ այդ զինվորն էլ «քարի գիշեր» է ասում ու հեռանում։ Ամբողջ ոստիկանատունը լուսավորված մեջ է. բանտարկյալները, իրար վրա ընկողմանած, քնած են։ Ընկերու՝ Արամը, պատին հենված, մրափում է։ Իմ աշքերին, սակայն, քունը չի մոտենում։

Սեպտեմբերի 18, շաբաթ. — Կեսգիշերն անց, երբ մտածուներին մեջ թաղված եմ, ուշադրությունս է գրավում կնոջական աղերսող մի ձայն, որ ներքին հարկից է գալիս։ Դրան խառնվում է թուրք մի զինվորի սպառնալից ձայնը, ապա երեք-չորս տարեկան մի մանկան լալագին ճիշը։ Կինը, որի ձայնից զգացվում է մանկամարդ լինելը, խնդրում է զինվորին, որ խնայի իր պատիվը, իսկ զինվորը սպառնագին հրամայում է, որ կինն առանց ձայնի հանձնվի։ Փոքրիկը ճշում է, կինը՝ պաղատում։ Թուրքը անողոք է։ Լսվում է նաև տարիքոտ մի կնոջ ձայնը, որ թուրքի գութն է ուզում շարժել «պատիվը փատիշաբինն է»³⁵ ասելով։ Թուրքը պառավին հրամայում է լոել, եթե չի ցանկանում անմիջապես դիակի վերածվել։ Պառավը լուսում է, մանուկը շարունակում է լալ։ Թուրքը սպառնում է, և իր գազանային նպատակին հասել է արդեն, ինչպես կարելի է կուաթել մի քանի րոպե տևող լուսիքունից։ Միան հաջորդում է ցավատանջ մի հառաջանք ու աղերսական մի աղաղակ, որ գոչում է. «Բավակա՞ն է այլևս ...»։ Լկված կնոջ լալագին աղաշանքն ու

մանուկի սուր ճիշերն անզոր են մեղմել թուրքի գազանային բնազդը: Նա, որսն իր ճանկերի մեջ առած, պետք է հագուրդ տա իր մոլեգին զգացումներին: Ծովնչ բռնած՝ հետևում եմ տխուր ողբերգության հուզումնալից դրվագներին, որոնց հաջորդում է խոր լուսաթյուն ... Հազիվ տասնհինգ րոպե է անցնում, երբ թշվառ որսի մոտից լսում եմ մի ուրիշ թուրքի ձայնը: Ողբերգական ներկայացումը կրկնվում է նույնությամբ. կնօշական պաղատանք, սպառնալից գորոց, մանկական ճիշեր, ցավագին հեծկլտուք, պառավական միջամտության անօգուտ փորձեր: Քիչ հետո մի երրորդ զինվորի ձայնը, և այսպես շարունակ՝ մինչև արշալույս, երբ կնոշ մարտիրոսությունն իր վերջն է գտնում: Առավոտ է. պահակ զինվորի թույլտվությամբ ցած եմ իշնում բնական կարիքի համար և տեսնում եմ ներքին հարկում քարերի վրա նատած մանկամարդ մի կնոշ և մի պառավի երեք-չորս տարեկան մի մանուկ գրկած: Պառավը, որ այդ դժբախտ երիտասարդունու մայրն էր կամ կեսուրը, հանդիսատեսն էր եղել իր աղջկա կամ հարսի լլկման՝ շուրջ տասներկու թուրք բորենիների կողմից ...

Արևը ծագել է. զինվորներն արթնացել են, ինչպես նաև բանտարկյալները: Նստարանին գամված՝ դիտում եմ զինվորներին, որ պատրաստվում են ոստիկանատնից դուրս գալ, կողոպուտի քաղաքում նոր շահատակություններ կատարելու ու թարմ որսեր ճարելու նպատակով: Քիչ հետո տեղեկանում ենք, որ ոստիկանատանը բնակվող զինվորները փոխադրվելու են տարբեր տեղեր. ուրեմն գնալու է նաև հարյուրաթեսություն, որից, եթե նույնիսկ հետաքրքրված էր իմ պաշտոնաթղթերով, հույս կտրել եմ: Ինչպե՞ս կարող ենք ազատվել այս անտանելի կացությունից: Ոստիկան Հյուսեյինը, երբ տնից վերադառնում է, գալիս է՝ մեր որպահությունը հարցնելու: Տեսնելով իր մեջ բարի մարդու սիրտը՝ խնդրում ենք, որ մեր անմեղության մասին բարեխոսի ոստիկանապետին: Հայտնում է, թե ավելի լավ է, որ մենք անձամբ խոսենք ոստիկանապետի հետ, երբ վերջինս քիչ հետո գա բանտարկյալներին հարցաքննելու: Գիշերը բանտարկյալների մոտ մնացող թուրք երիտասարդը մոտենում է ինձ և հարցնում, թե ի՞նչ ազգի եմ պատկանում: Հայ լինելս իմանալուն պես՝ մարդը ժանտախտավորի մոտից փախածի նման անմիջապես մեռանում է: Հակառակ մեր ամքնության ու ցավատանջ մոտածում-

ԸերիհՇ՝ չենք կորցնում ապրելու և մեր ընտանիքներին միանալու հույսը: Թեև ախորժակ չունենք, ուժասպառ չլինելու և հավանական շարշարանքներին տոկալու նպատակով ոստիկան Հյուսելին ուտելիք ենք բերել տալիս:

Զինվորները մեկնում են՝ կողոպուտներով բեռնավորված: Ոստիկանատանը միայն մի քանի պահակ է մնում: Գալիս է մի պաշտոնյա և գրանցում բանտարկյալների անուններն ու տարիքը: Իմ անունն էլ է արտագրում զինվորական փաստաթղթից: Տարիքուները անմիջապես ազատ են արձակվում: Բիշ հետո դեռատիններն էլ են ոստիկանատնից դուրս տարվում ոստիկանի հակողությամբ, հայտնի չեն, թե դեպի ուր համենայն դեպս, իրենց տները չեն ուղարկվում: Ոստիկանատունը գրեթե դատարկվել է. մնացել են միայն մեզնից քիչ առաջ ու մեզնից հետո ձերբակալված երիտասարդները: Արամ Առաքելյանի հետ քննարկում ենք ոստիկանապետին կաշառելու գաղափարը, սակայն ինչպե՞ս մոտենալ նման առաջարկով: Արդյոք այդպիսի քայլը ավելի վտանգավոր չի լինի: Ի դեպ այդ նպատակի համար մեզ մոտ բավականաշափ դրամ էլ չունենք: Չենք տեսնում այս վիճակից դուրս գալու որևէ միջոց:

Զինվորների թողած մի մահճակալի վրա փորձում եմ մի քիչ քննել՝ հոգնած ջղերս ու ընկճակած մարմինն հանգստացնելու համար, սակայն անկարելի է: Պատշգամբ եմ դուրս գալիս և տեսնում մի սայլ, որի վրա դիզված են կրակից հանված քսանից ավելի մարդկային դիակները: Շատերն անճանաչելի են, ոմանք՝ ուսած և մարմինների զանազան մասերը՝ ածխացած: Այդ պժգալի տեսարանը վրաս սարսափ է ազդում: Սայլը ուղղվում է դեպի Բուլվար ու անտեսանելիյանում: Պատշգամբից դիտում եմ անցուդարձ և Օշմարում մի քանի ամերիկացիների՝ թուրք ոստիկանների ընկերակցությամբ: Ոստիկանատան դիմացի խանութների ցուցափեղկերը շարդըված են ու թալանված: Ուշադրությունն գրավում է քրքաղացի նպարավաճառ Զարիկի խանութը: Ո՞ւր մնաց արդյոք նա՝ իր ազնիվ կնոջ ու զավակների հետ ...

Ոստիկանատանը մենք առանձնաշնորհյալներ ենք և կարող ենք պատշգամբից ու պատուիսաններից դիտել շրջակայքը, մի քան, որ չի թույլատրվում մյուս բանտարկյալներին: Ոստիկանատունը

ჩետყჩիետն խոնվում է բանտարկյալներով: Հյուսեյինին հարցնում ենք, թե ինչ է կատարվում. ասում է՝ հրաման է տրվել մինչև իրիկուն ազատ արձակել ոչ կասկածելի բանտարկյալներին: Չենք հավատում, բայց սպասում ենք: Անցնում է ևս մի քանի ժամ: Հյուսեյինին խնդրում ենք, որ մեզ ոստիկանապես գրասենյակը առաջնորդի: Այս անգամ Հյուսեյինը դժկամում է և խստությամբ ասում, թե մեր այս պնդումները պատճառ պիտի հառնան, որ այլևս մեզ ჩետ մեղմ շվարվի: Նա մեզ պատվիրում է, որ այդպիսի առաջարկ շանենք, քանի որ մինչև իրիկուն ազատ ենք արձակվելու: Հյուսեյինը հեռանում է և ապա քիչ հետո ետ գալով՝ հայտնում է, թե ոստիկանապեսը մեզ ուզում է տեսնել: Ա. Առաքելյանի ჩետ Հյուսեյինի առաջնորդութամբ իշնում ենք ներքև և ներկայանում ոստիկանապետին, որ նախարարի պես թիկնաթոռին բազմած՝ հարցնում է, թե ի՞նչ ենք ուզում և ինչո՞ւ ենք Հյուսեյինի վրա ճնշում բանեցնում: Մեր անմեղությունը հաստատելու համար ցույց ենք տալիս մեր փաստաթղթերը և խնդրում, որ մեզ որևէ թուրք բժշկի կամ դեղագործի երաշխավորությամբ ազատ արձակի: Ասում է՝ անկարելի է: Ինքը պարտավոր է մեզ զորանց ուղարկել. այնտեղ միայն կարելի կլինի նպաստավոր կարգադրություն անել: Խոստանում է շուտով մեզ զորանց ուղարկել և պատվիրում մի քիչ էլ սպասել: Գլխիկոր վերև ենք բարձրանում ու սպասում վճռական վայրկյանին:

Ոստիկանատունը ամբողջովին լցված է նորեկ բանտարկյալներով, և երեկվա մեր տեղը գրավված է: Հուսահատ նատում եմ պատշգամբի մոտ՝ մի աթոռի, ու սպասում: Քիչ հետո ներս են բերում Կասարայի երկաթուղու պաշտոնյաներից՝ երիզավոր գլխարկով մի հայ երիտասարդի: Նրան հայ հեղափոխական սպայի տեղ դնելով՝ զինվորներն ու ոստիկանները հարձակվում են վրան: Երիտասարդը բացատրում է, թե իր գլխարկն ու հագուստները երկաթուղային ընկերության համագգեստն են: Լսող չկա: Հանել են տալիս հագուստներն ու կոշիկները և կողոպտում: Հրացանի բներով ու ոտքի հարվածներով սաստիկ ծեծում են: Ցավի սաստկությունից երիտասարդը լալիս է ու աղաղակում: Ուտքերով խփում են գլխին ու լուցնում նրան: Կիսամերկ վիճակում խեղճը չանում է հավաքել իրեն ու կծկվել մի անկյունում: Ավելի ուշ ոստիկանատուն են առաջնորդվում կայարանի հայ պաշտոնյաներից՝ զանազան տարիքի

Վեցյութ հոգի: Նրանց արտաքինից զգացվում է, որ պատկառելի ու պատվավոր մարդիկ են: Մոտենում են մեզ, ու ցածրաձայն խոսում ենք իրար հետ: Պատմում են, որ իրենց ընտանիքներին գետեղել են վագոնների մեջ, իսկ իրենք ոստիկանատուն են բերվել՝ իբր թե գիշերն այստեղ անցկացնելու և առավոտյան կրկին կայարան վերադարձելու հպատակով:

Մթնել է արդեն, պատշգամբի դուռը բացվում է, և տիրող ահ ու սարսափից մարում են ձայները: Հետզհետեւ հավաքվում են ոստիկաններն ու զինվորները, և տիրող լուրջունը խցելով՝ սկսում են խոսել օրվա քաղաքական դեաքերի մասին: Նախ՝ մեկը քննադատում է հունական կառավարությանը, որ խիստ սխալ քայլ է արել՝ Խզմիրը գրավելով: Այս ահավոր աղետից իրեն վերագտնելու համար Խզմիրին անհրաժեշտ է առնվազն հարյուր տարի: Մեկ ուրիշն էլ ասում է. «Հելենական կառավարությունը Թուրքիայի հետ այսօր պատերազմական դրության մեջ է: Պետություն է և հավակնություն ունի Խզմիրի վրա իրավունք ունենալու: Թերևս մի օր Թուրքիայի հետ դարձյալ բարեկամանա, ինչպես այդ պատահեց Բուլղարիայի³⁶ դեպքում: Բայց ինչպե՞ս բացատրել հայերի ըմբռստ և անվայել պահվածքը, որ Խզմիրի շրջանում հայ չեթենար³⁷ մեր դեմ հանեցին, հայերի, որ Խզմիրի վերագրավումից հետո եկեղեցում հավաքվելով՝ թուրք զինվորների վրա զենք գործադրեցին: Խմբից մեկը հայերի հասցեին ամեն տեսակի կեղսոտ ու նախատական խոսքեր է տեղում, մեկ ուրիշն էլ հեգնում է՝ ասելով, թե նրանք բոլորովին ուժասպառ են եղել, և որ Կարաբեքիր Քյազիմ փաշան³⁸ նրանց գլուխը ջախջախել է և այլն: Մենք բոլորս պարզ ունեղիրներ ենք և խոսակցությանը խառնվելու իրավունք չունենք: Այս երկարատև ու մեզ համար տհաճ խոսակցությունից հետո ոստիկաններն ու զինվորները հետզհետեւ հեռանում են, իսկ մենք մնում ենք մեր անողոք ճակատագրի հետ մեն-մենակ: Կեսագիշերը մոտեցել է, ու դեռ նստած եմ աթոռին: Սակայն անկարելի է այլևս այդ դիրքով մնալ. Նստելու կարողություն չունեմ: Գլուխս դնում եմ սենյակի շեմին ու փողում տախտակամածի երկայնքով: Մլուկները ամեն կողմից ჩարձակվում են: Պատին կոթնած՝ ուզում եմ մի քիչ հանգստանալ, սակայն անկարելի է: Բոլոր կողմերից ենթարկվում եմ զագրելի միշտասների հարձակումներին: Վերջապես ժամերն անցնում են՝ մերք

աթոռին, մերք տախտակամածին հատելով։ Այս գիշերը, հախորդի հետ համեմատելով, ավելի հաճգիւտ է անցնում։

Սեպտեմբերի 17, Կիրակի. – Վաղ առավոտյան բանտարկյալ-ները վեր են կենում տխոր դեմքով ու հուսահատ տեսքով։ Արամ Առաքելյանի համար թերևս ազատ արձակվելու հույս գոյություն ունի, իսկ ինձ համար՝ ոչ։ Նրան կնօշու ուղղված բացիկ եմ հանձնում և սպասում ճակատագրական վայրկյանին, որը չի ուշանում։ Գալիս է մի պաշտոնյա ու ընթերցում 45-ից ցած տարիք ունեցողների ցուցակը, որի մեջ իմ անունն էլ կա։ Թվով 39 հոգի ենք։ Մեզ իշեցնում են ներքև և ոստիկանատան առաջ գույգ-գույգ շարում։ Ես առանձին եմ կանգնում խմբի վերջում։ Նայում եմ շորջու ու քիչ հեռվում երկու ծանոթ մարդ եմ տեսնում։ Մեկը Խակ անունով մի հրեա է, որ Ակ-Հիսարում մեր դրացին էր, Իզմիրում էլ հաճախ գնացել եմ իր տունը իրու բժիշկ։ Մյուսը Հաջի Օսմանն է, ակիհսարցի մի վաճառկան՝ հայտնի իր մոլեռանդությամբ։ Երկուսն էլ սրճարանի առաջ հատած թեյ են խորս ու մեզ նայում և, անշուշտ, ինձ ճանաչում են։ Խմբի հսկողությունն ու առաջնորդությունը հանձնված է ոստիկան Հյուսեյնին, ուստ խոստումներ եմ տվել, եթե իմ մասին հարկ եղած բարեխսությունները կատարի։ Կողքս կանգնած է մի թուրք զինվոր։ Մեր անունները կրկին կարդալուց հետո թափորը փութալով ճամփան է ընկնում, և Թեկելիկի ճանապարհով անցնում ենք թուրքական թաղերից։ Խումբ-խումբ կանգնած թուրքերը մեզ են նայում ու ծաղրում։ Շանապարհին թուրք զինվորը հարցնում է ձերքակալվելու պատճառը։ Համառոտ կերպով պատմում եմ։ Երբ իմանում է հայ լինելս, փողոցային լեզվով ասում է, թե «քանդ բուրդ է», և պահանջում, որ ունեցած դրամը, զարդենեն և այլն իրեն հանձնեմ, քանի որ զորանոցում մեր վրա ոչինչ չեն թողնի։ Պատասխանում եմ, որ մոտս ոչինչ չի մնացել, և որ ոստիկանատանը կողոպտվել եմ։ Զինվորը կրկին նոյն առաջարկն է անում ոչնչի փոխարեն և միևնույն պատասխանն է ստանում։ Վերջապես հասնում ենք մեծ զորանոցի առաջ, այն դեղին զորանոցի, որի մասին ձերքակալությանս գիշերը մի թուրք զինվոր ինձ ասել էր, թե «երբ դեղին զորանոց մտնես, այն ժամանակ կիասկանաս, թե ինչ նշանակություն ունի բժշկությունդ կամ հարյուրապետությունդ»։

Զորանոցի դռնից ներս ենք մտնում ու տեսնում բանտար-

կյալների ու գինվորների մի բազմություն: Զինվորական փաստաթղթերս ցույց եմ տալիս մի սպայի. կարդում է դրանք ու խոստանում քիչ հետո կարգադրություն անել: Մոտենում եմ ոստիկան Հյուսեյնին և հիշեցնում նրան, որ չմոռանա բարեխոսել իմ մասին: Քիչ հետո անցնում ենք զորանոցի ներքին դռնով և մտնում պարզապատ, ընդարձակ մի հրապարակ: Այնտեղ մեզ կանգնեցնում են զույգ-զույգ: Հյուսեյնը բանտարկյալների ցանկը ցույց է տալիս մի ենթասպայի, որին հանձնվում ենք ոչխարի հոտի պես: Ինձ ցույց տալով ենթասպային՝ Հյուսեյնը ինչ-որ բաներ է փափսում նրա ականջին: Վերջինս նայում է ինձ, մոտենում ու քաղաքավարությամբ ասում: «Ներողություն, էֆենդի, Ձեզ համար հարմար տեղ չունենք: Հաճեցն'ք այնտեղ՝ խմբի մոտ գնալ: Ես քիչ հետո Զեր մասին կարգադրություն կանեմ»: Մյուս բանտարկյալները հրապարակի վրա են մնում, իսկ ես շնորհակալություն հայտնելով՝ ուղղվում եմ դեպի ցույց տրված տեղը: Պարսպի տակ հատուկ անձերից բաղկացած մի խումբ եմ տեսնում: Խմբի մոտ հարմար տեղ եմ գտնում ու նատում: Հատուկ մարդկանց այդ խմբում ճանաչում եմ Ակ-Հիսարից երկու հոգու. Կոթրաթի Օղլու Յանկոյին և Դելի Յանիին³⁹, որոնց հետ խոսքի եմ բռնվում: Խմբում կա նաև մի հույն քահանա: Ակնոցավոր մի հույն բժիշկ, որ իր թե մոտակա հիվանդանոցում է աշխատել, իր վրա է վերցնում մեր խմբապետի կամ ներկայացուցչի պաշտոնը: Մի թուրք զինվոր մոտենում է քահանային ու հարցնում, թե քանի՞ թուրք է սպանել: Քահանան պարզապես պատասխանում է, թե ինքը սպանություն չի գործել և որ թուրքերի հետ միշտ էլ լավ է ապրել: Ակնոցավորը միշամտում է խոսակցությանը և ասում. «Հոյն քահանաները չեն, որ թուրք են սպանել, այլ հայ քահանաները»: Մեկին արդարացնելու համար մյուսի վրա մուր քսող այս անպատեհ հայտարարությունը վատ տպավորություն է գործում նույնիսկ զինվորի վրա և պատճառ դառնում, որ զինվորը փողոցային խոսքերով ասի՞ երկո՛ւսն էլ միևնույնն են:

Այդ պահին ես դիսում եմ ինձ ուղեկից բանտարկյալներին, որ զույգ-զույգ կանգնած են զինվորի հսկողության տակ: Մյուս կողմում զատում ու հրապարակ են բերում մեկ օր առաջ զորանոց փոխադրված 45-ից ցածր տարիքի բանտարկյալներին և զույգ-

գոյց գետնին նատեցում: Նրանց մեջ է մեր դրացի Ղազար Ղազարյանը, որ բարոյալքված տեսք ունի: Գլխաբաց է, բաճկոնը հակառակ երեսը շրջված: Նա ինձ չի տեսնում:

Բասմախանեից նոր բերված մեր խումբը խառնվում է գորանցում նախապես գտնվող մեծ խմբին, և միացյալ խումբը, որ բաղկացած է 500-ից ավելի բանտարկյալներից, քիչ հետո զորանոցից դուրս է հանվում զինվորների հսկողությամբ: 45-ից ցածր տարիք ունեցողները դուրս հանվելուց հետո աչքի եմ անցկացնում զորանցում մնացողներին և տեսնում բարեկամների ու ծանրթների՝ պարտիզակից Արմենակ Մակարյանին, Ստեփան Գևորգյանին, Օհեմիշցի (Ödemiş) Արամին (Էլմասյան փողոցից), Ղ. Ղազարյանի աներոշը՝ ծերունի Ասատորին և այլոց: Զորանոցի մեկ կողմում կանգնած է կանանց մի խումբ, որի մեջ տեսնում եմ տիկ. Քյոլեյանին ու նրա դուստր Արշալույսին և զրուցում եմ նրանց հետ: Մի ուրիշ տեղում կանգնած են հույն ուազմագերիներ: Ամբողջ հրապարակում աղտողություն և գարշահոտություն է տիրում, որովհետև զուգարան չկա: Զորանոցի բակը մաքրել տալու համար գալիս են առողջապահական զինվորներ: Գնում եմ նրանց մոտ ու հարցնում բժշկի անունը: Քիչ անց գալիս է զինվորական երկու բժիշկ: Մոտենում եմ նրանց ու ցույց տալիս զինվորական փաստաթղթերս ու խնդրում, որ հանուն բժշկության բարեխոսեա՛ ինձ այս վիճակից ազատելու և կամ գեթ բժշկին հարմար մի տեղ փոխադրել տալու համար: Խմ նկատմամբ ჩետաքրքրություն են ցուցաբերում: Որպես ապացույց, որ նզմիրի բնակիչ եմ, նրանց տալիս եմ մի թուրք բժշկի ու մի դեղագործի անունները, որոնք ծանոթ են իրենց: Խոստանում են աշխատել, որ վիճակս ավելի տանելի դարձվի: Հրաժեշտ եմ տալիս բժիշկներին և մոտենում նոր ծանոթացած ենթասպային, որ բարեքախտաբար չերթեզ⁴⁰ էր՝ Քյազիս անունով: Նրան հարցնում եմ, թե ինչպես կարելի է ազատվել այս վիճակից: Պատասխանում է, թե պետք է գրավոր դիմում ուղարկել գլխավոր հրամանատարին: Պատրաստում եմ սևագիրը և ցույց տալիս Քյազիսին, որ խոստանում է թուղթ, գրիչ և դրոշմաթուղթ ճարել: Քիչ հետո բանտարկյալներին բաժանում են կես հաց՝ 24 ժամվա համար:

Զինվորները վաճառում են ամեն ինչ՝ հաց, պանիր, խաղող, ձիթապտուղ, ծխախոտ ու ջուր: Ես էլ մի քիչ ուտելիք եմ գնում:

Հրապարակն ավլված ու մաքրված է: Բնական կարիքների համար բանտարկյալներին պատվիրում են ծովեզերք գնալ՝ անցնելով բերդի միջով բացված անցքով: Այնտեղ՝ կարգուկանոնը հսկելու համար, մի պահակ է կանգնած: Երեկոյան դեմ ես էլ եմ ստիպված լինում անցնել այդ անցքից ու ծովեզերք գնալ: Ծովափը լցված է սոսկալի աղտեղությամբ, և ալիքների երեսին ծփում են մարդկային դիակներ. մի քանի րոպեից ես եմ դառնում: Մի զինվոր առաջարկում է ինձ կոշիկներս հանել ու փոխել իր կոշիկների հետ: Առարկում եմ՝ ասելով, թե իր կոշիկները իմ ոտքերին հարմար չեն: «Ուրեմն ոտարորիկ կմնաս», - ասում է նա: Ցույց եմ տալիս զինվորական լուսանկարս ու ավելացնում: «Ինչպե՞ս կարող է մի հարյուրապետ ոտարորիկ մնալ»: «Հարյուրապետ թե գնդապետ՝ կարև որություն չունի. կոշիկներդ հանի՛ր», - գոռում է նա: Այն ժամանակ ես էլ համարձակվում եմ ասել. «Արի՛ գնանք հարյուրապետիդ մոտ, և քեզ հասկացնեմ, թե ո՞վ եմ ես»: Զինվորը շփոթվում է ու ինձ թողնում-հեռանում: Ես էլ որոշում եմ, ինչ էլ որ պատահի, այլևս երբեք այդ անցքին շմոտենալ:

Մայրամուտից առաջ 45-ից բարձր տարիք ունեցող բանտարկյալներին կանգնեցնում են շորսական շարքերով: Կողքիններս ինձ խրախուսում են, որ տարիքս 45-ից բարձր ցույց տամ ու մտնեմ տարիքուների շարքը: Իրականում ես 46 տարեկան եմ, թեև փաստաթղթերիս մեջ երկու տարի պակաս է գրված: Մոտենում եմ շարքին ու հասում: Ձեռքը մտրակ բռնած մի սպա սկսում է քննությունը և մտրակելով շարքերից դուրս է հանում 45-ից ցածր տարիք ունեցողներին: Կողքովս անցնում է առանց դիտողության: «Փրկված եմ», - մտածում եմ ես ու ուրախանում, որ գիշեր շեղած՝ ազատ եմ արձակվելու: Այդ օրը գաղտագողի ներս բերված մի թերթում կարդացել էինք, որ զինվորական հրամանագրի համաձայն՝ մինչև այս ամսվա վերջը բոլոր քրիստոնյա կանայք, ինչպես նաև 18-ից ցած ու 45-ից բարձր տարիք ունեցող այրերը պետք է թուրքիայից մեկնած լինեն: Խակ 18-45 տարեկան այրերը համարվելու են ուազմագերի⁴¹: Քննությունը ինձ համար նպաստավոր է անցնում, և եթե ուրիշ առիթով չպիտի ցանկանայի ավելի տարեց երեսալ, հիմա ուրախ եմ, որ հաստատվում է 45-ից ավելի բարձր լինելս, և մտածում եմ միմիայն զորանոցից դուրս գալու ու ընտանիքիս միանալու մա-

ԱՄԻ ԺԱՄ ևս է անցնում, ու մենք, չորս-չորս նատած, մնում ենք գետնին:

Մթնշաղին մեզ հրաման է տրվում, որ գնանք մեր տեղերը: Բայց որտե՞ղ է մեր տեղը: Այսօր ժամանակը ուշ էր, և այդ պատճառով գուցե հետևյալ օրը մեզ ազատ արձակեն: Սակայն գիշերը որտե՞ղ և ինչպե՞ս եմ անցկացնելու: Հույս չունեմ, որ զինվորական բժիշկները պայմաններս կրարելավեն: Ես էլ այլևս հարմար չեմ գտնում բժիշկ կամ 44 տարեկան լինելս ցույց տալ: Մինչև այս պահը ինձ չեն կողոպտել: Մոտս բավական դրամ ու զարդեղն կա: Հույս ունեմ, որ ճրանցով կարող եմ ապրել և հարկ եղած դեպքում կյանքս էլ փրկել: Խսկ եթե կողոպտվեմ, ի՞նչ է լինելու վիճակս: Երբ այս մտածումներիս մեջ տարրութերվում եմ, մոտենում է Արմենակը և ինձ պարսպի մոտ բավական ապահով մի տեղ տանում: Ալշտեղ նատած են նաև Ստեփան Գևորգյանը և յոտեմիշցի Արամը: Բազմոցին ինձ էլ նատելու տեղ են բացում: Շաշում ենք միասին և որոշում իրար պաշտպանել ու թույլ չտալ, որ մեզ կողոպտեն:

Ավելի ուշ հերթով մեզ հատուկ տեղ են կանչում՝ արձանագրելու համար մեր անունները, տարիքն ու արհեստը: Նախ գնում ենք երկու հոգի՝ մեր զարդեղնեններն ու դրամը հանձնելով մեր ընկերներին, որոնք իրենց հերթին հույնն են անում՝ մեր վերադարձին: Հետո դրամն ու զարդեղնենները պահում ենք պատի տակ բացված անցքերի մեջ ու բազմոցով ծածկում: Մութն ընկնելուն պես զինվորները մեծ գործունեություն են ծավալում դրամի կամ գոհարեղենի համար՝ իրենց ձեռքի տակով անցկացնելով բոլոր բանտարկյալներին: Մեզ հատկացված տեղից քիչ այն կողմ տեղավորված են կանայք ու աղջիկներ, որոնց այցելության են գալիս զինվորները: Վերջինները, էլեկտրական լապտերներ բռնած, մոտենում են կանանց ու ճրանցից վայելչադեմներին հրապարակավ լլկում՝ երբեմն իրենց մայրերի ու քույրերի գրկում: Խգական սեղի արձակած բղավոցը, ճրանց գոռում-գոշյունը անզոր են իրենց ազատել գազանաբարո զինվորների ճանկերից: Մտածում եմ Արշալույս Քյոլեյանի մասին, որ ցերեկը հայտնել էր, թե ինքը ցարդ անաղարտ է մնացել: Կողոպտութ և լլկումը շարունակվում է մինչև կեսգիշեր: Զերբակալության օրվանից մինչև այսօր մի վայրկյան խսկ չեմ քնել: Այլևս չկարողանալով տոկալ այսքան երկարատև անքնությանն ու տան-

շանքներին՝ գլուխս ծանրանում է, մարմինը թուլանում, բազմոցի ծայրին կծկվում եմ ու ինքնամոռացության ենթարկվում. քնած եմ:

Սևպտեմբերի 18, երկուշաբթի. – Արևածագին արթնանում եմ ուսկրի ու մկանների ցավերով և հարրուխով: Սակայն արևի ճառագայթների տակ մարմինս տաքանում է, ու ցավերս նվազում են: Զորանոց են բերվում ուրիշ բանտարկյալներ, որոնց մեջ են Հակոբ Տ. Հակոբյանը՝ կիսամերկ ու անճանաչելի վիճակում, ակիմիարցի Մելքոն Բաղդասարյանը՝ բոլորովին կողոպտված, ուս մի քիչ դրամ եմ տալիս, սնդրօշի պարտիզապան Սթրաթի տղան՝ Խարալամբրոսը, որ հունական բանակի մեջ սպա էր և բանակի կազմալուծման ու դրսի դեպքերի մասին առատ տեղեկություններ է տալիս: Կեսօրից առաջ հույն ռազմագերիները դուրս են հանվում, որի հետևանքով հրապարակը մի քիչ ընդարձակվում է: Առուծախը, ինչպես նաև կողոպտը վերսկսվել է, որից ես էլ անմասն չեմ մնում: Զինվորներից մեկը տեսնում է թերիս փայլուն կոճակները, որ ոսկի կարծելով՝ ուզում է հափշտակել: Ընդդիմանում եմ, ոսքի կանգնում ու սպա լինելս ցույց տալով՝ նրան ինձնից հեռացնում: Քիչ հետո մի ուրիշ զինվոր է գալիս կոշիկներիս համար, նրա հետ էլ նույն կերպ եմ վարվում ու հեռացնում: Այսպես մինչև իրիկուն ժամանակ ենք անցկացնում. այլևս վարժվել ենք այս կյանքին: Դրսից նոր եկող բանտարկյալների շարչարանքի մասին լսելով՝ մեր սնունդն ենք հոգում և ուտելիքներին անհավատալի գներ վճարում, որպեսզի կարողանանք հարկ եղած դեպքում տոկալ շարչարանքի ու ակամա ճամփորդության: Գիշերը բավական հանդարտ է անցնում, և կողոպուտը ու լկում քիչ է պատահում՝ շնորհիվ բանտարկյալների գոռում-գոյզունի ու դիմադրության:

Սևպտեմբերի 19, երեքշաբթի. – Այսօր էլ արտակարդ ոչինչ չի պատահում: Երիտասարդ բանտարկյալներին դուրս են տանում և մեր տեղեկության համաձայն՝ քշում Փունար Բաշը ուղղությամբ, իսկ այնտեղից՝ Մաղնիսա: Շանապարհին տեղի են ունենում ամեն տեսակի խժդժություններ ու անթիվ սպանություններ: Զորանոցում բանտարկյալների ներկայացուցիչ է նշանակվում Սարաֆյան ազգանունով 25-ամյա աշխույժ մի երիտասարդ, որին ամեն տեսակի դիմում կարելի է կատարել՝ պահակ սպային ներկայացնելու համար: Կեսօրից առաջ ուրիշ բանտարկյալների հետ զորանոց է բերվում

Յան դոկտ. Սարգիս Գալթակչյանը, որ ձերբակալվել է փոխադրանավ մտնելուց մեկ րոպե առաջ: Ինձ առաջարկում է մեր բժիշկ լինելը հայտնել պահակ սպային ու մեզ համար տանելի կյանք ապահովել: Պատասխանում եմ, որ ինքը կարող է իր մասին այդպիսի դիմում անել՝ առանց իմ մասին որևէ բան հայտնելու, քանի որ ես հույս ունեմ ազատ արձակվել՝ առանց բժիշկ լինելս հայտնելու, քանի որ 45-ից ավելի բարձր տարիք ունեմ: Դրսից նոր բերվածների թվում է Յան Հարություն Քյոլեյանը, որի կինը ու աղջկն ել օրեր ի վեր գորանոցում են գտնվում: Հ. Քյոլեյանը չի ուզում անմիջապես ներկայանալ նրանց, որպեսզի զինվորները չհասկանան, որ նա այդ ընտանիքի հայրն է: Վրայի հագուստները կողոպտված են, և մնացել է տակի սպիտակեղենով՝ կեղտոտված սկսության աստիճանի: Հարցնում եմ իր տասնութամյա որդուց, որի մասին արտասվալից աչքերով հայտնում է, որ տեղացի թուքերը սպանել են նրան Փունար Բաշը ճանապարհին:

Կեսօրվա դեմ մի անգամ ևս ցուցադրվում ենք հրապարակի կենտրոնում՝ դարձյալ ազատ արձակվելու հույսով: Սպան վերսկսում է քննությունը, ու ես դարձյալ, բարեբախտաբար, 45-ից ավելի տարեց եմ համարվում: Արդեն մի շաբաթ է՝ ածիլված ու լվացված չինելուս պատճառով 45-ից շատ ավելի մեծ եմ երևում: Երկու ժամ արևի տակ այրվելուց հետո մեզ հրաման է տրվում մեր տեղերը գնալ: Սակայն այս անգամ մեր տեղը, ու մանավանդ մեր բազմոցը, կորցնել ենք, և ստիպված ենք քարերի վրա գետնատարած անցկացնել գիշերը: Ամբողջ գիշերը կրկնվում են սովորական դարձած դեպքերը՝ կողոպուտն ու բռնաբարումը: Չորս ընկերներ՝ գիրկ գրկի նստած, կրկին ողբերգական ներկայացման հանդիսատեսն ենք լինում:

Սեպտեմբերի 20, չորեքշաբթի. — Զորանոցի հրապարակը լցված է աղտեղությամբ: Բանտարկյալները չեն համարձակվում բերդի ճեղքից անցնել ու ծովեզերք գնալ՝ բնական կարիքների համար, այլ հագուրդ են տալիս իրենց անհրաժեշտ պետքերին՝ որտեղ որ պատահի, այնպես որ մեզն ու կղկղանքը առվի պես հոսում են ամենուր: Դրսից բերվող բանտարկյալների բազմությունը հետզհետեւ մեծանում է, իսկ ներսից, մի քանի օր է արդեն, մարդուրս չի եկել: Այս առավոտ էլ տարիքուներին կանգնեցնում են

հրապարակի կենտրոնում: Ժամերով կանգնում ենք աղտևության վրա, ապա ցրվելու հրաման է տրվում: Դրսից անընդհատ բանտարկյալներ են ժամանում: Եկողները հիմնականում երիտասարդներ են: Կանայք մի անկյունում են հավաքված՝ բարոյալքված վիճակում: Տիկ. Քյոլեյանին հարցնում եմ աղջկա մասին. ասում է, թե խեղճ աղջիկը, բարեբախտաբար, ցարդ անաղարտ է մնացել: Գազանաբարո զինվորները իրենց անասնական կրթերը կատաղաբար բազմարել են, ուրիշների թվում, երկու հայութիների հետ: Մեկը՝ բուրսացի գեղանի մի կին է, մյուսը՝ հզմիրցի դեռահաս մի աղջիկ, որոնք ամբողջ գիշեր եղել են թուրք զինվորների հեշտամոլության առարկան:

Զորանոցում ասեղ գցելու տեղ չկա: Դրա տարածությունը չափազանց նեղ է այդքան մեծ բազմության համար: Հետևաբար հույս ունենք մինչև երես արձակվել, եթե որոշում լինի տարիքուններին դուրս հանել: Մեր հույսը ի դերն է ելնում: Ընդհակառակը՝ ուշ երեկոյան զորանոց է բերվում 2.000-ից ավելի մարդ, որով համախմբված՝ բանտարկյալների թիվը 10.000-ից անցնում է: Մութն ընկնում է. ընկերներով շանում ենք պարսպի տակ մի տեղ գտնել, մի բան, որ անկարելի է: Ստիպված ենք լինում կծկվել մի տեղում: Հրապարակի ապականված օդն անկարելի է շնչել: Գարշահոտությունը նողկանք է պատճառում, գլխապտույտից չենք կարողանում ուղիղ կանգնել: Զինվորները իրենց գիշերային գործունեությունն սկսել են: Նրանցից մեկը ուղղակի ինձ է մոտենում ու պահանջում, որ ունեցած դրամը իրեն տամ: «Տալու բան չունեմ. արդեն քանիսի՝ ձեռքից եմ անցել», — ասում եմ: «Ուտքի՝ կանգնիր», — գոչում է նա: Տեղից շեմ շարժում: Մի քանի անգամ ուրքով հարվածում է ազդրերիս: Այն ժամանակ Ա. Մակարյանն ասում է. «Բարեկա՞մ, մենք մի շաբաթ ենք, որ այստեղ ենք, ու հարյուրավորների ձեռքի տակով ենք անցել, մեր վրա այլևս ոչինչ չի մնացել»: Զինվորը հեռանում է՝ ասելով. «Ես հիմա սկիններով զինված ընկերներիս հետ ե՛տ կգամ»:

Քիչ հետո բազմաթիվ զինվորներ մոտենում են նորեկ բանտարկյալների խմբերից մեկին, որ մեզնից բավական հեռու են գրտնըվում, և սկսում են սովորական խուզարկությունն ու կողոպուտը: Բանտարկյալները ցածրաձայն աղաղակում են և դիմադրություն

ցույց տալիս: Բողոքի այդ արտահայտությունը անզոր է՝ կասեցմելու գինվորների եռանդը: Փնտրտուքը շարունակվում է մեծ աշխուժությամբ: Բանտարկյալներն այս անգամ սկսում են այնպիսի մի գոռգոռոց, որն ամբողջ գորանցն է թնդացնում: Կողոպտուի հերոսները ահարեկվում են այս շոնդալից աղաղակներից ու ետ քաշվում: Մի պահ լուսիցուն է տիրում: Քիչ հետո հայտնվում է մի սպա, որ բարձր ձայնով հարցնում է, թե ովքեր են գորացողները և ինչ են ուզում: Պատասխան չկա. կատարյալ լուսիցուն է: Սպան ճախատական շեշտով ավելացնում է. «Դուք, որ իսլամական քաղաքներն ու գյուղերը միխրի վերածեցիք, ժողովրդին կողոպտնեցիք ու ջարդեցիք և շխնայեցիք մանուկներին ու ծերերին: Դուք, որ իսլամական պատիվն աղարտեցիք և մեր կույսերին բռնաբարեցիք, իսկ հիմա զորանցի մեջ հանգիստ նստած՝ ամեն տեսակի պաշտպանություն եք վայելում, ձեր վիճակից գորի լինելու ու մեր կարենցությունը շարժելու փոխարեն ապստամբության ցույցե՞ր եք անում: Դուք բոլո՞րդ ել ջարդվելու ու այրվելու արժանի եք» և այլն:

Այս սպանալից բանախոսությանը հաջորդող խոր լուսիցունից հետո վրա են հասնում բազմաթիվ գինվորներ, որոնք աղաղակ բարձրացրած խմբից ոտքի են հանում 40-50 բանտարկյալների: Վերջիններին զորանցից անմիջապես դուրս են հանում գինվորների հսկողության ներքո և ո՞վ գիտի՞ ի՞նչ դիտավորությամբ: Այս սուկալի միջադեպից հետո գինվորները վերսկսում են իրենց փնտըրտուքն ու կողոպտուք, որ սանձարձակ կերպով տևում է մինչև առավոտ: Մենք ևս ընդունում ենք մի քանի խուզարկու գինվորների այցելությունը, որոնց, սակայն, չի հաջողվում մեզնից որևէ բան պոկել: Արմենակի հետ գիրկընդիմառն պառկած ենք, մեր մարմինների վերին մասը՝ մի բաճկոնով ծածկած: Այցելուններին պատասխան չենք տալիս ու տեղներից ել չենք շարժվում: Նրանք ել մեզ մոտ շատ չեն առաջանում և իրենց շահարեր գործունեությունը շարունակում են հատկապես նորեկ երիտասարդների մոտ: Այս գիշերվա ժամերը բանտարկությանս ընթացքի, գուցե և ամբողջ կյանքին ամենասարադելի ժամերը եղան: Անկարելի է նկարագրել այն սարսափն ու հոգեկան սարսուող, որ գգում էինք ամեն անգամ, երբ տեսնում էինք որևէ գինվորի մոտենալը: Մի բոլե իսկ մեր աշքերը չփակեցինք, ու ժամերը ամիսների տևողություն ունեցան:

Անպտեմբերի 21, Աինգարքի. – Արևն արդեն ծագել է. զորանոցի հրապարակում խիտ-խիտ խմբված բանտարկյալները ոտքի վրա են կամ ավելի ճիշտ՝ աղտեղությունների վրա են: Ակնհայտ է, որ այսօր անպայման կտրվի վերջնական մի կարգադրություն, և դուրս կհանվեն կամ տարիքոտները, կամ երիտասարդները: Մեր ակնկալության մեջ չենք սխալվում: Ժամը ուժին մի սպա է գալիս ու հրամայում է, որ տարիքոտները առաջ գան: Գնում ենք ու ըստ հրամանի նատում չորս-չորս ու գլխարաց: Սպան մտրակի հարվածներով շարքերից դուրս է հանում բոլոր օրանց, ովքեր 45 տարեկանից ավելի երիտասարդ են թվում: Մեր կողքից էլ անցնում-գնում է. որեմն մեր տարիքոտ լինելը վավերացված է: Այս քննությունից հետո հերթը հասնում է տեղացի թուրք երիտասարդների վկայությանը: Մրանք մեկիկ-մեկիկ մեզ աչքի են անցկացնում՝ որոշելու համար, թե կա՞ն արդյոք մեր մեջ նախկինում թուրքական պետության և կամ իսլամ բնակչության դեմ մեղանշածներ: Նման քննությունների ենթարկվում էին ամեն օր և օրը մի քանի անգամ բոլոր քրիստոնյաները, և կասկածելիները առանձնացվում էին հրացանի քնի հարվածներով: Այդ քննությունից ևս անպարտ ենք դուրս գալիս և այժմ անհամբեր սպասում ենք, թե մեր մասին ինչ կարգադրություն է լինելու: Ամեն որ իր սեփական կարծիքն է հայտնում. ոմանք ասում են, թե ազատ ենք արձակվելու, մի բան, որ ամենացանկալի ելքն է: Ուրիշները աքսորի մասին են խոսում, ոմանք էլ կարծում են, թե տարվելու ենք տաժանակիր աշխատանքի: Հարցնում ենք բանտարկյալների ներկայացնությունը Սարաֆյանին: Պատասխանում է, թե ստույգ չգիտի, բայց կարծում է, թե ուղղակի շոգենավ ենք տարվելու: Մեզ համար շոգենավ թե օդանավ՝ միևնույն է: բավական է, որ մի անգամ դուրս գանք այս դժոխքից, որտեղ տանջը-վեցինք չորս դարերի տևողություն ունեցող ամբողջ չորս օրեր:

Եկա մեկ ժամի շափ սպասում ենք կիզիչ արևի տակ: Վերջապես տրվում է դուրս գալու հրամանը: Տարիքոտների քարավանը սկսում է շարժվել չորս-չորս շարքերով: Մենք՝ չորս ընկերներս, իրար բաց չենք թողնում: Զորանոցի ներքին դռնից դուրս ենք եկել ու գտնվում ենք լայն, քարաշեն մի կամարի տակ: Դրսում գտնվող զինվորները նույնական ուզում են մեզնից օգտվել և հրաժեշտի նվիրատվության պատրվակով սկսում են խուզարկությունն ու կողոպուտը: Մի զինվոր

Էլ ինձ է մոտենում՝ ջրով լցված ամանը ձեռքին ու հրամայում է, որ կոշիկներս հանեմ: Առարկում եմ՝ ասելով, թե դրանք իր ոտքերին հարմար չեն լինի, և որ ներսում շատ զինվորներ դրանք աչքի անցկացրին և շիավանեցին: «Նրանց շիավանածը ես կրավանեմ, հա-ճի՛ր կոշիկներդ, թե չէ ջրամանը (մաթրա) հիմա գլխիդ կուտես», — ավելացնում է նա: Դժվար կացության մեջ եմ: Ծիշու այս մեկնե-լուս պահին ինչպէ՞ս զրկվեմ կոշիկներիցս, որ ամեն քանից ավելի կարևոր են, մանավանդ եթե ստիպված լինենք հետիոտն դեպի հե-ռավոր վայրեր ուղղվել: Մարդը սպառնալից սպասում է: Վերջա-պես ցույց եմ տալիս մեկ կոշիկս, որի ներքանը ծակ էր, քանի որ նախապես զրանցում դիտմամբ պատռել էի, և զինվորին ասում, թե այս կոշիկները մի օր անգամ չեն դիմանա: Զինվորը համոզվում է, որ քարավանը կրկին շարժվում է: Մեկ րոպէ անց փողոցում ենք: Աճապարանքով քայլում ենք դեպի նավահանգիստ: Հապճեա անց-նում ենք հետաքրքրասեր թուրքերի միջով, որոնք մեզ զննում են ուշի ուշով: Դրսում քրիստոնյայի հետքը չենք տեսնում. «Գյավուր Խզմիրը» «հիւլամ Խզմիր» է դարձել այլս: Ոտնատակ չլինելու հա-մար շտապում ենք: Ետ մնացողները իրենց գլխներին մտրակի հար-վածներ են ստանում: Անցնում ենք կառավարչատան հրապարակով և հասնում նավահանգիստ: Ծովեզներքում խոնված են ամենա-արյունաբերու ու ստոր խավի թուրք բաշիբոզուկներ, գազանային կերպարանքով բեռնակիր քրդեր, մես-մերկ թուլումբաշիներ. սրանք մեզ ծաղրում են՝ իրենց ժամկեների միջից ասելով. «Աչքներդ լույս. Այս Սոֆիա⁴² եք գնում. Ճեր մուրազին ու փափագին հասաք. բա-րո՞վ գնաք» և այլն: Հասել ենք հրդեհի վայրը: Քարփեթ Օրիան-թալի հոյակապ շենքը և այդ շարքի երբեմնի գեղակերտ շենքերը ավերակների են վերածվել, և քարը քարի վրա չի մնացել: Քարա-վանը դեռ առաջանում է և հասնում Գյող Թեփին (Göz Terpe), Կոր-դելիո (Kordelio) շղգենավային գծի նավամատույցին: Այնտեղ պահիկ զինվորները մեզ հրամայում են գոչել. «Կեցցե՛ Մուսթաֆա Քեմալ փաշան: Կեցցե՛»:

Չատերը ակամա կատարում են հրամանը ու կրկնում. «Թող շա՞տ ապրի Մուսթաֆա Քեմալ փաշան, հազա՞ր ապրի»: Այո՛, թող շա՞տ ապրի Մ. Քեմալ փաշան, հավետ երախտապարտ ենք մնալու նրան, որ հազարավոր քրիստոնյաների արյունը խմելուց, այս

հարուստ քաղաքը կողոպտելուց և այն մոխրակույսի վերածելուց հետո թշվառության մատնեց հարյուր հազարավոր մարդկանց: Այո՛, շա՞տ ապրի, ասում ենք ու քայլում առաջ: Սակայն զարմանքով տեսնում ենք, որ նավահանգստով անցնող հասարակ ժողովուրդը սկսել է խառնվել բանտարկյալներին: Ուշադրությամբ մեր շուրջն ենք զննում ու հասկանում, որ պահակ զինվորներն անհետացել են, և բանտարկյալներից ոմանք սողոսկում են փլատակների արանք-ներից հերս: Իրողությունն այն է, որ պահակ զինվորները Մ. Քեմալի մաղթանքն անել տալուց հետո ետ են դարձել ու մեզ ազատ արձակել: Փա՞ռ Աստծո, հազա՞ր փառք: Բամկոնս ու ֆեսս շիտակ կողմն ես դարձնում և մազերս ու դեմքս փոքր-ինչ կարգի թերում: Անրաժան ընկերներս՝ Ս. Գևորգյանը և Օդեմիշցի Արամը, մեզ հրաժեշտ են տալիս ու մեզնից հեռանում՝ անցնելով կողմնակի մի փողոցվ, որ գնան իրենց ընտանիքները փնտրելու: Գալով Ա. Մակարյանին՝ նրան հանձնարարում եմ ինձնից շրաժանվել ու ինձ հետեւ 8-10 քայլ հեռավորության վրա: Առաջանում ենք դեպի տուն: Ծանապարհին որևէ արտակարգ բան չի նկատվում: Ոմանք, ավերակների կողքով անցնելով, աշխատանքի են գնում. հանրակառքը երթենկում է: Հասնում ենք հրդեմից գերծ մնացած ծովեզերյա տներին: Այնտեղ խոնվել է անպատսպար քրիստոնյաների հսկայական մի բազմություն:

Վերջապես հասնում ենք Սիվրիթիսարյանների տան մոտ, ուր սիրելիներիս թողել էի ձերքակալվելուց առաջ: Դուռը թակում ես սրտատրոփ. ձայն չկա. արդյո՞ք վեցօրյա բացակայության ընթացքում տունը փոփոխության է ենթարկվել: Ականջս մոտեցնում եմ դռանը ու խոլ ձայներ եմ լսում: Երկրորդ անգամ ավելի ուժգին եմ թակում: Դուան փեղկը բացվում է, ու տեսնում եմ Երվանդ Աղամյանի մեծ եղբորը՝ Կարապետին. հանգիստ շունչ եմ քաշում: Ծուտով բացվում է դուռը, ու Արմենակի հետ հերս եմ մտնում: Երկու-դած հայացքով փնտրում եմ կնօշս, որի համար վախենում էի, որ բացակայության ընթացքում հոգեկան հիվանդություն ստացած լինի: Վերջին անգամ բաժանվելիս նա ջղագրգոռության նշաններ էր ցույց տվել: Տեսնում եմ, որ կինս առողջ է, թեև չափազանց նի-հարած ու դժգույն:

Տունը լցված է մեծ բազմությամբ. շատերն ինձ ծանոթ են: Բո-

լորն էլ շնորհավորում են ինձ բանտից ազատվելու առիթով: Բանտարկությանս ընթացքում մեր գրադեգրած սենյակը ուրիշներն են գրավել, ու մեզ վերնահարկում հատկացվել է մեկ ուրիշ՝ փոքրիկ սենյակ: Վերև եմ բարձրանում ու զավակներիս գտնում եմ առողջ վիճակում՝ բացի Վարդուհուց, որ լուծ ունի ու չափազանց նիմարել է՝ իրեն հարմար սենյակի պակասության պատճառով: Առաջին գործս լինում է լվացվել առատ ջրով, քանի որ յոթ օր է՝ մարտին ջրի երես չի տեսել: Հետո խորհրդակցում ենք, թե ինչպե՞ս կարելի է տանջանքի այս քաղաքից հեռանալ: Տեղեկանում ենք, որ ամերիկյան հյուպատոսարանից տրվում են շոգենավի տոմսեր՝ հատը տասը թղթադրամ ուսկով: Կինս տիկ: Մելինեն Արամյանի ընկերակցությամբ անմիջապես հյուպատոսարան է գնում և ութ տոմսակ գնած՝ վերադառնում: Մեր ունեցածները տեղավորում ենք կապոցների մեջ և մեկնելով Սրբինիսարյանների տնից՝ գնում, կանգնում ամերիկյան հյուպատոսարանի մոտ՝ Էլմասյանների տան⁴³ առաջ: Այս տունը ամերիկյան հյուպատոսարանի պաշտպանության տակ է առնվել, և վրան ծածանվում է բազմաստղյա դրոշը: Մեզ պես ուրիշներ էլ սպասում են փոխադրանավի, որ ըստ տեղեկությունների՝ ուղղակի Միտիլի է մեկնելու: Ասում են, թե իբր Փունթայից էլ ամեն օր շոգենավեր են մեկնում ու քրիստոնյաններին փոխադրում հունական մերձակա կղզիները: Սակայն շոգենավ բարձրանալը խիստ դժվար է ու վտանգավոր, որովհետև թուրք զինվորները կողոպտում են փախստականներին ու ձերբակալում նրանց: Եթե 80 ուսկով մեզ հաջողվի մտնել ամերիկյան փոխադրանավ, դա մեզ համար պիտի լինի ամենամեծ բախտավորությունը: Սպասում ենք փոխադրանավին, որն ուշանում է: Զափազանց անհամբեր ենք դարձել: Զինվորների տեսքը մեզ սարսափ է ազդում, ու կրկին ձերբակալվելու վտանգի տակ ենք:

Տոմսակ գնողների բազմությունը հետզինտե ավելանում է՝ ձերբակալվելու վախի համեստա: Գալիս են ամերիկյան զինվորներ ու մեզ պատվիրում, որ մինչև փոխադրանավի ժամանելը հանդիպակաց շենքը մտնենք: Մեր տոմսակները պահակ ամերիկյան զինվորներին ցույց տալով՝ մտնում ենք Էլմասյանների տունը: Նախ սպասում ենք բակում, սակայն տոմսակավորների խճողումից պարտադրված՝ փոքրիկների հետ մտնում ենք հյուրասենյակ, իսկ Ա. Մա-

կարյանը, գործիքներիս սնդուկը բռնած, սպասում է դուան առաջ:

Մեկ ժամից դուռը բացվում է, ու տեսնում ենք ամերիկյան մի շղգեմակույկ, որն սկսում է լցվել ճամփորդներով: Փողոցում կանգնածները անմիջապես շղգեմակույկ են մտնում: Տաճ բակում էլ գտնվողներից ոմանց հաջողվում է մտնել շղգեմակույկ, որը 150 հոգի լրացնելուց հետո մտնում է և նրանց փոխադրանավ տանելուց հետո՝ կրկին վերադառնում: Դուռը բացվում է վերատին, և բակում գտնվողներից շատերին, այդ թվում նաև Արմենակին, հաջողվում է շղգեմակույկ մտնել: Սպասում ենք, որ շղգեմակույկը վերադառնա ու մեզ էլ փոխադրանավ տանի, բայց իզոր: Ասում են, թե փոխադրանավը լցված է փախստականների բազմությամբ և նրանց մի կղզու վրա դատարկելուց հետո է, որ վերադառնալու է, որպեսզի մեզ էլ վերցնի հաջորդ օրը: Մենք, որ երազում էինք նոյն գիշերն իսկ Միտիլիի կամ որևէ այլ կղզի հասնել, պարտավորվում ենք դարձյալ նոյն դժոխքում մնալ, թեն այս անգամ՝ ամերիկյան դրոշի հովանավորության տակ: Տաճ դուռները փակվում են: Ներքին սենյակում գտնել ենք հարմար մի տեղ և տեղավորել մեր մի քանի կապոցները: Ամերիկացիները բավականաշափ հաց են տալիս մեծերին, իսկ փոքրերին՝ խտացրած կաթ: Մի քիչ ուտելուց ու փոքրերին քննցընելուց հետո բարձրանում եմ վերևի հարկը: Այնտեղ ևս գտնում եմ բարեկամների, որոնց թվում՝ ուսուցիչ Կարապետ Նավասարդյանին, Գրիգոր Աշճյանին, Զարեհ Գավեզյանին՝ իրենց ընտանիքներով: Մի շաբաթ է, որ գրեթե չեի քննել: Այս գիշեր մի լավ քնում եմ:

Սեպտեմբերի 22, ուրբայք. — Վաղ առավոտյան պատշգամբից դիտում ենք ծովը և հեռավոր հորիզոնները՝ այնտեղ մի փոխադրանավ տեսնելու ակնկալությամբ, որը մեզ հեռացնելու էր այս անհծյալ ափերից: Նայելուց մեր աշքերը հոգնում են իզոր: Մեր ապաստանած տաճ առաջ իրար վրա են կիտված բազմահազար թշվառներ, որոնք երանի են տալիս մեզ՝ ամերիկյան շենքում գըտնվողներիս: Իրենք էլ են խորհում օգտվել աստղագարդ դրոշի հովանավորությունից: Ամբողջ օրն անցնում է միօրինակ կերպով, և ըմբռնում ենք, թե ստիպվելու ենք գտնել մի գիշեր ևս հյուրընկալվել Էլմայանների շենքում, որտեղ բազմությունը ժամը ժամի վրա ավելանում է: Շատերին հաջողվում է ներս մտնել գնված տոմսակ-

Աերի շնորհիվ, ուրիշներին է՝ զինվորներին բարեխոսելով։ Բարեխոսության գործում մեծ դեր են կատարում նավասարդյան երկու քույրերը և անգերեն իմացող ուրիշ գեղանի օրիորդներ։ Գիշերը հանգիստ ենք անցկացնում։

Սեպտեմբերի 23, շարաթ. — Առավոտյան պատշգամբ ենք դուրս գալիս՝ ծովի վրա փոխադրանավ տեսնելու հույսով, բայց իզոր։ Դուան առաջ ծովածավալ բազմություն է խոնվել։ Ինձ կանչում են պատուհանի մոտ, որ տեսնում եմ փաստաբան Հովհաննես Մսրյանի տիկնոջը, որ խնդրում է՝ իրենց ներս առնենք՝ նույնիսկ դրամական վարձատրություն առաջարկելով։ Մերժում եմ, անշուշտ, դրամի առաջարկը և պատվիրում, որ ամուսնուն պատուհանի մոտ կանչի։ Մի քանի րոպեից Հ. Մսրյանը գալիս է դողահար՝ շնորհ հայցողի տեսքով։ Իրեն հանգստացնում եմ և խոստանում մեկ առ մեկ ներս բերելու իր ընտանիքը։ Ծոգենավի տոմսակս տալիս եմ իրեն և հուշում, որ ձեռքը մի քանի կտոր ուտելիք բռնած՝ ներկայանա պահակ զինվորին՝ հավատացնելով, որ արդեն ներսում էր ու դուրս է եկել՝ ուտելիք գնելու։ Փորձը հաջողվում է, և Հ. Մսրյանը մի քանի րոպեից մեզ մոտ է։ Նոյն տոմսակը տալիս եմ տիկնոջը, որ միննոյն ձևով միանում է ամուսնուն՝ զավակների հետ միասին։ Նրանց ուրախությունն անսահման է, իրենց ապահով են զգում ամերիկյան դրոշի պաշտպանության ներքո։ Իրենց բերած ուտելիքներից Վարդուհուն նվիրում են մի քանի ձու, որ տիկնոջ առաջարկած դրամից ավելի արժեքավոր է, քանի որ խեղճ աղջիկս շափազանց նիմարել է իրեն հարմար սենդի պակասության պատճառով։ Միննոյն ձևով ներս եմ առնում նաև մեր դրացիներից Սեփերյանների ու կնոշա ազգականներից Հարություն Պենլյանի և ուրիշների ընտանիքները՝ ընդամենը 21 հոգի։ Այս ձևով ուրիշներին էլ է հաջողվում տան մեջ ընդունել իրենց բարեկամներին ու ազգականներին, այնպես որ բազմությունը քառապատկվել է։ Էլմայանների ընդարձակ տան մեջ ասեղ գցելու տեղ չկա։

Այս օրն էլ մի կերպ անցնում է, գիշերը վրա է հասնում, և մենք իզոր ենք սպասում, որ փոխադրանավ ժամանի։ Երանի ենք տալիս Արմենակին, որ բանտից ազատվելու օրն իսկ կարողացավ փոխադրանավ մտնել, իսկ մենք բանտարկված ենք Էլմայանների տանը, թեև արտաքուստ՝ ապահով։ Գիշերը անկարելի է հանգստանալ ար-

տակարգ բազմության պատճառով:

Սեպտեմբերի 24, Կիրակի⁴⁴. — Խաչի տոն է⁴⁵: Վաղ առավոտյան ամեն ոք ուրքի վրա է: Բոլոր կողմերը լի են մարդկանցով: Աստիճաններին անգամ խառնիխուն նստած ու պառկած են տղամարդ, կին ու երեխա, այնպես որ վերուվար անելը դժվար է: Գոռում-գոշյունը, ինչպես նաև հուսահատությունը, հասել են ծայրահեղ աստիճանի: Զգիտենք՝ մինչև երբ պիտի սպասենք: Մեր պաշարը սպառվել է: Երեխաները ուտելիք են ուզում: Նրանց համար սովածությունն ականջ չունի: Խաչերեսը փողոց է դուրս գալիս՝ ուտելիք գնելու: Նրա՝ տնից դուրս գալուց քիչ հետո հաղորդում են տոմս ունեցողներին, որ պետք է պատրաստվեն Փունթայի կայարան գնալ՝ այնտեղից շոգենավ բարձրանալու: Սակայն Խաչերեսը մի ժամ է, ինչ չի վերադառնում, մի քանի, որ մեզ մտահոգություն է պատճառում: Կապոցները պատրաստ են, ու սպասում ենք Խաչերեսին, բայց իզոր: Վերջապես նա վերադառնում է ասրսափահար՝ բեռնավորված ուտելիքներով լեցուն տոպրակով: Անխոհեմ տղան պարենը էժան գնելու նպատակով շատ հեռուներն է գնացել և գընումներն անելուց հետո հանդիպել թուրք զինվորների, որոնք դրամ են պահանջել, անունն են հարցել ու ծեծել են, մինչև անգամ սպանացել են սպանել ու ծովը նետել իրեն, եթե դրամ չհանի: Գըրպանում ունեցած դրամը տալով՝ Խաչերեսը դժվարությամբ ազատվել է փորձանքից ու շտապել է տուն, որի առաջ իրեն սպասում էինք, դողահար ու ակնդետ:

Անվտանգ համառում ենք Փունթայի կայարանի հրապարակ և կանգնում հանրակառքի գծի մոտ: Թուրք զինվորները բազմության միջից առանձնացնում են մի քանի տղամարդ՝ հրապարակը մաքրել տալու համար: Նրանց մեջ եմ նաև ես, բայց վարպետորեն փախուստի եմ դիմում: Կայարանի դրսի երկաթյա դռան առաջ պահակ են կանգնած թուրք զինվորներ, նրանց կողքին էլ՝ կարգուկանոնը հսկող ամերիկացի զինվորներ: Բազմությունը հետզհետև խոնցում է, և ժամերով սպասում ենք արևի կիզիչ ճառագայթների տակ: Կեսօր անց է, իսկ շոգենավի հետքը դեռ չկա: Վերջապես ժամը շորսին տեսնում ենք ամերիկյան մի զրահավոր և մի քանի փոխադրանավեր, որոնք նկատելով՝ մեր սրտերը բարախում են հուզմունքից ու հրճվանքից: Երկաթյա դուրս բացվում է, և բազմությունը

խուժում է դեպի դուռը. սակայն աճապարանքի ու հրմշտուքի պատճառով անկարելի է լինում մի քայլ իսկ փոխել: Ես գրկել եմ Վարդուհուն. կինս մի ձեռքն է բոնել գավազան ու բրդյա մեր միակ ծածկոցը, իսկ մյուս ձեռքով՝ ջրով լի մի շիշ: Իսկ սպասուիին ու երեխաները մեկական կապոց կամ պայուսակ ունեն ձեռքներին: Մենք էլ ենք խառնվել ծովածավալ բազմությանը և ջանում ենք առաջանալ դեպի ողորմության դուռը: Շատերը ատիպած են գետին գցել իրենց կապոցները, պայուսակներն ու պարկերը, որոնց վրայով պետք է անցնել՝ դուանը մոտենալու համար: Քայլ իսկ փոխելն անկարելի է: Թիկոննքից ու կրծքից ճնշման եմ ենթարկվում և վախենում եմ, որ Վարդուհին խեղդամահ լինի: Ծգնաժամային րոպեներ եմ ապրում ու ֆիզիկական ամբողջ ուժու հավաքում՝ խեղճ աղջկաս ստույգ մահից փրկելու համար: Դուանը բավականաչափ մոտեցել ենք, բայց անկարելի է քայլել մեր ոտքերի տակ կուտակված առարկաների վրայով: Հավասարակշռությունն կորցնում եմ ու գետին ընկնում: Վախենում եմ, որ բազմությունը ոտնատակ անի ինձ, ու Վարդուհու հետ խեղդվենք: Միայն գերմարդկային ճիգեր գործադրելով՝ ինձ հաջողվում է ոտքի կանգնել: Մի քանի քայլ ևս, և հանում ենք դուան առաջ, որի միջով անցնում եմ բավական մեծ դժվարությամբ:

Երեխաները, չկարողանալով քարշ տալ իրենց բեռները, գետին են գցել դրանք՝ բացի Սիրարփիից,⁴⁶ որ պայուսակը պինդ բոնել է: Ուժապառ ենք եղել: Տեսնում ենք, որ բակի ներսում մի ուրիշ երկաթյա դուռ էլ կա, ինչպես նաև երկաթյա մի բարձր ցանկապատ: Բակի ներսը հսկում են թուրք զինվորներ, որոնց կողքով պետք է անցնել՝ դեպի ներսի դուռն ուղղվելու համար: Զինվորները մեզ կանգնեցնում են՝ կարգապահությունը հսկելու պատրվակով: Հնագանդում ենք ու մի քիչ սպասում, որպեսզի մեր ուժերը վերագտնենք: Մեր կողքը կանգնած զինվորին խնդրում ենք, որ մեզ թույլ տա դեպի դուռն առաջանալ: «Հասկանալի պատճառով» թուրքը հրամայում է մի քիչ էլ սպասել: Նրան մոտեցող ամերիկացի մի զինվորի բարեխոսությամբ մեզ թույլ է տրվում առաջանալ: Մի քանի քայլ ենք անում՝ նախ ուղղվելով դեպի երկաթյա դուռը, որի մուտքը խիստ դժվար է գտնել: Նշմարում ենք, որ ոմանք, առանց դունից անցնելու, ցանկապատի վրա են ելնում ու հերս ցատկում:

Մենք էլ ենք փորձվում այդպես անել ու մոտենում ենք ցանկապատին: Կնոջ օգնությամբ բարձրանում եմ երկու մետրանոց ցանկապատի վրա ու անվնաս ներս ցատկում: Երեխաներին էլ ներս եմ առնում բավականին մեծ դժվարությամբ՝ սրածայր ձողերի վրայից գրեթե քաշելով: Ես ու երեխաները ներսում ենք, իսկ կինս՝ դրսում: Խնչպէ՞ն եմ կարողանալու կնոջ էլ ներս առնել: Տեսնում ենք դրսում շրջող մի թուրք զինվորի: Նրան դրամ եմ խոստանում՝ խնդրելով, որ ինձ մի քիչ օգնի կնոջ ներս քերելու: Դրամի ձայնն առած թուրքը համաձայնում է ու ցանկապատին մոտենալով՝ կոանում: Կինս ոտքը դնում է զինվորի ուսին, թուրքը, ուսերը բարձրացնելով, ոտքի է կանգնում: Կինս ցանկապատի գագաթին է: Ներսի կողմից նրան թևերիս մեջ եմ առնում ու ցած իշեցնում: Այլևս բոլորս էլ ներսի կողմն ենք, մեզ փրկված ենք կարծում ու առատորեն վարձատրում թուրք զինվորին:

Երբ պատրաստվում ենք դեպի նավամատույց առաջանալ, ահա մեզ է մոտենում մի ուրիշ թուրք զինվոր, որ ավինը հրացանի ծայրին ամրացրած՝ հարցնում է, թե մյուս զինվորին ի՞նչ տվեցինք: Պատասխանում եմ, թե մի փոքրիկ նվեր էր իր օժանդակության դիմաց ու իրեն ևս դրամ եմ առաջարկում: Բացարձակապես մերժում է և ավինի ծայրը կրծքիս սեղմած՝ հրամայում է դոնից դուրս գալ: Երեխաներս աղիողորմ լաց են լինում ու ճշում, կինս լալագին պահատում է: Թուրքը անողոք է մնում, և գնում ենք մինչև այն դուրս, որտեղ պահակ է կագնած ամերիկացի մի զինվոր: Սվինը կրծքիս սեղմած՝ թուրքը սպառնում է, որ դուրս ելնեմ: Տկար անգլերենովս ամերիկացի պահակին աղերսում եմ, որ գթա գոնե գրկիս անմեղ մանուկին ու միջամտի: Պահակը ամերիկյան սառնարտությամբ պատասխանում է. «Դա իմ գործը չէ» (That is not my business)⁴⁷: Այլևս ուրիշ ճար չի մնացել: Սակայն երբ դոնից դուրս գալուս միայն մի քայլ է մնացել, թուրքը, թերևս խորինով, թե իմ դուրս ելնելուց որևէ շահ չի ունենալու, կնոջ էլ ցոյց տված թղթադրամի առատությունից շլացած՝ գրպանում է դրամը և թեռանում: Ազատված եմ գազանի ճիրաններից: Սակայն չաշշարանքից ու հոգեկան տագնապից ընկնաված եմ: Գլխապույտից աչքերս մթնում են, ուշաթափվում եմ և հազիկ հասցնում եմ մի քարի վրա նատել:

Մի քանի րոպեից վիճակս լավանում է, սթափվում եմ և հան-

գիստ շունչ քաշում, երբ ահա բարեկամն՝ Զարենի Գավեզյանը շտապում է ինձ մոտ ու խնդրում, որ մի բոպեով դոնից դուրս ելնեմ՝ ստուգելու, թե Գրիգոր Աշճյանը ո՞ղջ է մնացել, թե՞ ոչ. Առ բացատրում է, թե այդ անձը, որ տարիներ ի վեր վատառողջ է եղել, հիմա բազմության մեջ նվաղել է ու հատակին փուլել: Բացատրում եմ, որ խոհեմություն չեմ համարում ցույց տալ բժիշկ լինելս, այլապես կրկին կծերբակալվեմ: Պատմում եմ, թե ի՞նչ դժվարությամբ եմ հասել մինչև այստեղ: Զ. Գավեզյանը կրկին պաղատում է՝ հանուն զավակներիս սիրո: Գ. Աշճյանի հանդեպ տածած հարգանքից դրդված՝ մի պահ փորձության մեջ եմ ընկնում կ ոտքի ելնում՝ նրա խնդրանքին գոհացում տալու համար: Բայց կինս ու զավակներս արգելում են, որ գնամ և պնդում՝ ասելով, թե իրենց որք ու անպաշտապան եմ թողնելու: Վերջապես խոհեմությունը հաղթում է զգացումիս, և կտրուկ կերպով պատասխանում եմ, թե չեմ կարող գնալ բժշկական քննության, որովհետև եթե Գ. Աշճյանը նվաղել է, չեմ կարողանալու որևէ բան անել առանց դեղի ու դարմանի: Իսկ եթե մեռած է, դարձյալ ոչինչ չեմ կարող անել: Պարուն Գավեզյանը մենանում է: (Հետո իմանում ենք, որ Գ. Աշճյանը արդեն մահացած է եղել):⁴⁸ Մի քանի քայլ առաջանում եմ, բայց կրկին նվաղում եմ և ստիպված մի քանի վայրկյան ևս նատում գետնին: Ապա ուշքի եմ գալիս, աչքերս բաց եմ անում և նայում շոգենավին, որի վրա են մագլցում հարյուրավոր փախստականներ: Պետք է շտապել շոգենավ մտնել: Բոլոր ուժերս հավաքում եմ, Վարդուին գրկած՝ ճամփա եմ և ընկնում դեպի նավամատուց, որը վերջին թուրք պահակի հսկողության տակ է: Կինս ու զավակներս ինձ հետևում են, քայլում եմ ուժասպառ ու սրտատրով և հասնում պահակին: Նրա կողքով անցնում եմ գունաթափ ու գլխիկոր: Պահակը ուշադրությամբ զըննում է ինձ, բայց, բարեբախտաբար, անցնելուս չի խանգարում: Առանց աշ ու ձախ նայելու և սրտիս ներքին փոթորիկը հայտնի դարձնելով՝ քայլերս արագացնում եմ և վերջապես հասնում շոգենավին: Այնտեղ մի պահ կանգ եմ առնում և ստուգում՝ պակաս անձ շունե՞մ արդյոք: Բոլորս այստեղ ենք, սպասուին միասին՝ ութ հոգի: Հանգիստ շունչ եմ քաշում: Մնում է անմիջապես շոգենավ մտնել: Կամրջակի վրա ահագին բազմություն է կուտակվել: Վրայով շատ դժվար է լինելու անցնել: Մագլցում եմ շոգենավի վրա և ըն-

տանիքիս յուրաքանչյուր անդամին մեկիկ-մեկիկ վերև քաշում: Հրաշքով բոլորս էլ ազատված ենք: Այդքան փորձանքներից ու շարշարանքներից հետո մանավանդ իմ ողջ մնալը իրական հրաշք է: Մեզ հետ հավասարապես շոգենավ են մտնում բոլոր նրանք, որոնց հաջողվել է նավամատույցից անցնել՝ ավել կամ նվազ դըժ-վարություն կրելուց հետո:

Տոմսակի քննություն չկա: Տոմս չունեցողն էլ կարող է ազատ ներս մտնել: Մեր ամբողջ հարստությունը կորցնելուց, բանտարկ-վելուց ու կեղեքվելուց հետո մեր չունեցածից 80 թղթադրամ ուսկի էինք հատկացրել՝ գնելու համար շինու տոմսակներ, առանց թվի ու առանց պաշտոնական նմիքի, ծխախոտի թղթի մեծությամբ պարզ թղթի կտրոներ, վրան «pass to ship» գրությամբ և առանց ստորագրության: Եթե այս տոմսերը մեզ օգտակար եղան Էլմասյանների տունը մտնելիս, շոգենավ բարձրանալիս որևէ դեր չունեցան: Այսպիսով՝ Խզմիրից մեկնելուց առաջ կողոպտվեցինք ոչ միայն թուք բարբարոսների, այլ վերջում նաև ամերիկյան Ռելիֆ-ի (Relief Organization) կողմից, որի մարդասիրական նպատակն էր փախստականներին ապահով տեղ փոխադրել իր խսկ սեփական միջոցներով: Ծինծու տոմսերից գոյացած հասույթը, անշուշտ, Ռելիֆ-ի գանձարանը չէր մտնում: Այդ տոմսերը վստահաբար ստորադաս պաշտոնյաներն էին պատրաստել՝ մեծ մասամբ հօգուտ իրենց գրապահն մի անգամ ևս կողոպտելով արյունաքամ եղած փախստականներին:

Մայրամուտը մոտենում է: Փնտրում եմ գիշերելու հարմար տեղ: Գնում եմ շոգենավի պաշտոնյայի մոտ, և ինձ հաջողվում է հանգստավետ մի անկյուն գտնել առաջին կարգի ճամփորդների սրահում՝ մի պայմանով, որ ես դրասում մնամ: Մերոնք սրահ են մըտնում, իսկ ես դրասում՝ լավ պատսպարված մի տեղում կծկվում եմ՝ մտազբաղ ու ուժասպառ: Շարավից լեզուս շորանում է: Գրպանից հանում եմ մի լիմոն, կտրում, կեսը պահում, իսկ մյուս կեսի հյութը ծծում եմ ու մի քիչ զովանում: Քիչ հետո մյուս կեսը նվիրում եմ մի հայ տիկնոց, որի բերնի ջրերը հոսելիս են եղել՝ տեսնելով լիմոնի հյութ ծծելս: Այդ տիկինը, որի հետ բարեկամանում ենք, դ-ր Զելեբյանի մոտիկ ազգականներից է եղել:

Նայում եմ արյունաներկ դրոշին, որ ծածանվում է նավ-

մատուցի այան վրա: Ուստի եմ անում երբեք չապրել նրա իշխած վայրերում: Մութն արդեն ընկել է, երբ յոթ փոխադրանավից բաղկացած տորմիղը ճանապարհ է ընկնում ամերիկյան զրահանավի առաջնորդությամբ: Ցամաքից արդեն բաժանված ենք: Արտասպալից աչքերով ու հոգումնալից սրտով նայում ենք նավահանգստում խոնված բազմությանը և մեզ երջանիկ համարում, որ վերջապես ազատվել ենք այս դժոխային քաղաքից: Հետզինետ անցնում ենք նավահանգստի կանգուն մնացած շենքերի ու հրդեհի թողած ավերակների առջևից և Կարաթաշի (Karataş), Գյող Թեփեի (Göz Terep) ու Կոկար Յալի (Kokar Yalı) կողքով: Այլևս հեռացել ենք Խամիրից և ուղղվում ենք անձանթ վայրեր գրեթե կիսամերկ վիճակում: Այդ վայրերը մեզ համար նույնն են, ինչ Խարայելի զավակների համար՝ Ավետյաց երկիրը, ուր չի տիրապետելու թուրք բարբառությունը, ուր չենք տեսնելու թուրք զինվորի ու արնագույն դրոշը: Մի քանի ժամից հասնելու ենք այդ ցանկալի երկիրը և համբուրելու ենք նրա հողը:

Ծոգենավի մեջ կան ասողներ, թե վտանգը բոլորովին անհետացած չէ, թե հավանական է, որ հրաձգության ենթարկվենք բերդի մեջ գտնվող թուրք զինվորների կողմից: Հասնում ենք բերդին ու նայում երկու կողմից փարոսներին, որոնց միջով շոգենավերն անցնում են անվտանգ, ամերիկյան զրահավորի առաջնորդությամբ: Բերդից դուրս գրահանավը մի քանի րոպե ևս ընկերակցում է մեր նավատորմիդին ու ետ՝ Խամիր վերադառնում: Խսկ մենք բաց ծովի մեջ ենք այլևս, ամեն վտանգից գերծ: Ծովը խաղաղ է, և շոգենավերը սուրում են, բայց դեպի ո՞ւր. կա՞մ Քիոս, կա՞մ Միտիլի, որոնք պապատարան են դարձել Թուրքիայի քրիստոնյա փախատականների համար:

Հակառակ անթիվ տանջանքներին՝ քաղցած չեմ, բայց լեզուս ծարավից չորանում է: Անընդհատ ջուր եմ խմում՝ առանց հաշվի առնելու ջրի սղությունը շոգենավի վրա: Ամբողջ մարմինս հոգնած է, ու գանակոնձված մարդու պես յուրաքանչյուր շարժումից սուր ցավեր եմ զգում: Ուղենու չի հանդարտվել, և գլուխս սաստիկ ցավում է: Չեմ կարողանում աչքերս փակել, հակառակ որ ամբողջ գիշերներ անքուն եմ անցկացրել: Հիշողության միջով հետզինետ անցնում են Փունթայի կայարանում տեղի ունեցած վերջին մահա-

սարսուու դեպքերը, որոնց ազդեցությունից ու տպավորությունից չեմ կարողանում ազատել հոգիս: Մտատանջության ու հուսահատության այս վայրկյաններին դիտում եմ լայնածավալ ծովի ու աստղագորդ երկնքի գեղեցկությունն ու հմայքը և խորհում, թե արժե՞ արդյոք ապրել այս անստուգ կյանքը՝ այսքան տանջանքներից և անհամար կորուստներից հետո: Այժմ, որ կնոշու ու զավակներին ազատեցի, խորհում եմ, թե արդյոք ի՞նչ վիճակի են մատնվել Ակ-Հիսարում մայրս, եղբայրս ու յուրայինները, ինչպես նաև կնոշու բազմաթիվ հարազատները⁴⁹:

Սեպտեմբերի 25, երկուշարք. — Կեսգիշերից հետո տեղեկանում ենք, որ մոտեցել ենք Միտիլիին, և որ առավոտվա երեքին շոգենավերի տորմիղը կհասնի կղզու ծովախորշը: Միտիլի քաղաքի նավահանգիստը պսպում է շոգենավերի արձակած էլեկտրական լույսերից: Մանոթ է ինձ Միտիլիին, որը տասը տարի առաջ այցելել էի, երբ կղզին դեռ քուրք վարչության տակ էր գտնվում, և երբ կառավարիչն էր Ֆայիդ Ալի Բեյը (Faik Ali Bey)⁵⁰ բանաստեղծ բարեկամս, որ ծագումով քուրք էր ու Բայերին համակիր: Նա միակ անձն էր, որին ընդհանուր տեղահանության ժամանակ, երբ Քյութաթիայի (Kütahya) կառավարիչն էր, հաջողվել էր աքսորից զերծ պահել այդ գավառի Բայերին՝ նրանց համար ամեն կերպ երաշխավորելով: Դիտում եմ քաղաքի մի կողմում գտնվող բերդը, որի կողքն էր գտնվում հայասեր կառավարչի բնակարանը, որը հրավիրվել էի ճաշի: Մեր ժամանումը Միտիլի ինձ մեծ ուրախություն է պատճում, և գործունակություն եմ գգում՝ խորհելով, թե ապաստան ու միսիթարություն եմ գտնելու քրոշ մոտ, որ հզմիտից մեկուկես տարի առաջ Միտիլի է գաղթել⁵¹: Մտածում եմ՝ եթե հանկարծ Միտիլիի փոխարեն ուրիշ մի տեղ փոխադրվեինք, յոթ հոգով ի՞նչ պիտի անեի: Քրոշ տունը գնալու բարերախտության ավելանում է նաև գործիքներին սնդուկը վերագտնելու հետանքարը. վստահաբար Ա. Մակարյանը այն հանձնել է իր մորեղերը, որ իմ քեռայրն է:

Արևը ծագում է, ու ես շտապում եմ կնոշու ու զավակներին մոտ, որոնք սրահում գիշերը շատ լավ են անցկացրել. նրանք էլ են ուրախությամբ տեղեկացել շոգենավի՛ Միտիլի ժամանման մասին: Մեր փոխադրանավին ընկերացած մյուս նավերը նավահանգստին ավելի մոտ են գտնվում, և շոգեմակույններն ու նավակները սկսել

են ցամաք համել փախատականներին: Շատերը փոխադրանավ են բարձրանում՝ փնտրելու իրենց ազգականներին ու բարեկամներին, իսկ մեզ, հակառակ մեր ակնկալության, ո՞չ հարցնող կա, ո՞չ փնտրող: Մակույկներից մեկում տեսնում ենք մի հայ քահանայի, որի ընկերացող անձին խնդրում ենք՝ քաղաք վերադառնալուն պես քեռայրիս լուր տա: Մի ժամ սպասում ենք, բայց իզուր: Հասկանում ենք, որ դեռ երկար ժամեր պետք է սպասենք, մինչև որ ցամաքահանվելու մեր հերթը գա: Իսկ երեխանները ուտել են ուզում: Մեր պաշարը սպառվել է, իսկ շոգենավի վրա անկարելի է ուտելիք գտնել: Երեխանների դրդումով՝ Պենջան ընտանիքի հետ նավակ ենք վարձում, և տասը րոպեից նավահանգատում ենք՝ ողորմելի վիճակում: Սպասուի Արաքսին, որ Միտիլիից էր եկել Իզմիր, մեզ առաջնորդում է քրոջ տուն: Նավահանգատից մինչև տուն բավական երկար է տևում:

Ծանապարհին քայլելիս բոլորս չափազանց հուզված ենք: Ութ տարի է, որ քրոջս ու զավակներին չեմ տեսել: Դեռ մեկ ամիս առաջ մտածում էի ճրանց փոխադրել Իզմիր, երբ քեռայրիմ՝ ծխախոտի արտադրության մեջ ունեցած աշխատանքը վերջանար, ու ես ճրա համար հանրային վարկերի վարչության մեջ մի նոր գործ գտնեի: Եթե այս ծրագիրս իրականանար, մի բան, որում վստահ էի, ինչպիսի՞ ուրախությամբ պիտի դիմավորեի քրոջ՝ զավակների հետ միասին Իզմիրի նավահանգատում: Իսկ հիմա նա է, որ իր վշտացյալ վիճակի մեջ մեզ հյուրընկալելու է իր տանը ու իր հորդառատ արցունքը խառնելու է մեր արցունքներին, երբ տեսնի մեր այս ողորմելի կացությունը: Այս մտածումներով քայլում ենք լուսումունջ և վերջապես հասնում ենք մի նեղ փողոց: Քայլում ենք զառիվեր, տեսնում մի դուռ բացվելը և քրոջս ու աղջիկների՝ մեզ դիմավորելը արտավալից աչքերով: Միրսու պոռթկում է, չեմ կարողանում այլն ս զդերիս տիրապետել և հոգուս փոթորկալից հուզումը զապել: Արցունքը աղբյուրի պես հոսում է բոլորիս աչքերից: Ողջագուրգում ենք սիրեցյալ քրոջս հետ ու կարոտակեալ համբուրվում: Մեր գրկախառնումը երկար է տևում: Ապրում ենք հուզումի, վշտի, սիրո և կարոտի րոպեներ:

Հյուր են գալիս հայրենակից տիկիններ, որ շանում են մեզ հանդարտեցնել և մաղթում են, որ մայրս, եղբայրս ու մեր մյուս բազ-

մաթիվ սիրեցյալներն էլ փրկված լինեց՝ թեկուզ և ամեն ինչ կորցրած։ Հետզինետե տուն են հասնում քեռայրս և Արմենակը. Վերջինս ապահով կերպով փոխադրել է գործիքների ու զարդեղենների սնդուկը։ Այդ սնդուկն այս աշխարհում մեր միակ հույսն ու հարստությունն է։ Նրանով է, որ պիտի ջանանք վերակառուցել մեր հիմնովին կործանված տունը։ Բացի գործիքներից ու արձաթեղեններից՝ նրա մեջ եմ պահել բժշկական վկայականս, որի կարևորությունը գգալի է լինելու շատ շուտով։



Հ. Գ. - Ներկա ինքնակենսագրության կիսամսյա շրջանը (922-ի 9 Սեպտ. - 24 Սեպտ.) կյանքիս ամենատագնապալից ու արկածալից շրջանը եղավ, և եթե կարողացա տոկալ այդքան շատ շարշարանքների ու գրկանքների, ապա միայն հասուն տարիքիս ու առողջ կազմվածքիս շնորհիվ։ Այս շրջանում գործեցի սիսալներ ու անխոհնմություններ, որոնց հետևանքը աղետալի կերպով կրեցի։ Կորցրի հարստությունս, թանկարժեք գույքս, որ ստեղծել էի շարաշար աշխատանքի ու գրկանքների շնորհիվ։ Եվ այսօր բազմանդամ ընտամիքիս հետ ընկած եմ մի անծանոթ միջավայր։ Պիտի կարողանա՞մ արդյոք վերակառուցել արմատախիլ եղած տունս ու ապրեցնել մերձավորներիս։ այդ միայն ապագան պիտի հաստատի։



ՄԻՏԻԼԻ, 922-ի սեպտեմբեր 25-ից մինչև 923-ի ապրիլ 7

Մեր բնակությունը ակամա հաստատում ենք Միտիլիում՝ գիտենալով հանդերձ, որ մասնագիտության համար հարմար միջավայր չէ, քանի որ կղզու բնակչությունը չափազանց այլամերժ է։ Սակայն մեր անպատմելի դժբախտության մեջ մեծագույն բախտավորությունը քրոջս ու քեռայրիս ներկայությունն է, որոնց տանը բնակվում ենք և որոնց տնային իրերը գործածում ենք՝ կարծես թե մերը լինեին։ Մեր բնակության առաջին յոթ օրը անց ենք կացնում տառապանքներից ընկճված ու բարոյալքված վիճակում։ ամեն օր նավամատուց ժամանող փախստականների մեջ խզուր փնտրում ենք Ակ-Հիսարում մնացած մեր սիրելիներին՝ մորս, եղբորս ու նրա ընտանիքին։ զոքանչիս, Հակոբ աներձագիս ու իր ընտանիքին և կնոցս մորաքրոջը (ընդամենը 10 հոգի)։

Հետզհետե եկողներից ատանում ենք Ակ-Հիսարի մասին սոսկալի լուրեր։ ասում են, թե քեմալական զինվորների գրավումից հետո Հակոբին ուրիշ հայ ու հույն կասկածելիների հետ կախաղան են հանել, թե ընդհանուր ջարդ է տեղի ունեցել, թե տղամարդկանց տարել են Մաղնիսայի մոտ գտնվող Գեղիզ գետի եզերքը, ուր բոլորին գնդացրի կրակի են տվել, թե քաղաքում կանայք ու մանուկները շարդի են ենթարկվել, թե դեռատի կանայք ու գեղանի աղջիկները առևանգվել են ու տարվել թուրք երելիների տները, թե զինվորական տարիք ունեցողները Մաղնիսա են փոխադրվել, իսկ տարիքուները աքսորվել են ներքին գավառները և այլն։ Այս քստմնեցուցիչ տարածայնություններն ու ահավոր լուրերը կարող են առավել կամ նվազ ստույգ լինել. բայց այն, ինչ արևի պես պայծառ է և ստույգ, այն է, որ Ակ-Հիսարի քրիստոնյաները չարաշար սիսալվեցին, երբ թուրքերի հետ իրար պաշտպանելու մասին համաձայնություն կնքեցին։ Թուրքերը իրենց մաշկը փրկելու համար Ղուրանի վրա երդում արեցին և սպասեցին քեմալական զինվորների ժամանը։ Հենց որ իրենց համար վտանգն անցավ, թուրք զինվորների օժանդակությամբ ամեն բարբարոսություն գործեցին քրիստոնյա

անմեղ բնակչության նկատմամբ, որը նրանց երդումին հավատալու միամտությունն էր ունեցել: Երանի՝ թե Կարահիսարի անկումից հետո հայերն ու հույները, իրենց ընտանիքներն ու արժեքավոր գույքն առած, մեկնեին Խզմիր կամ ծովեզերյա մի այլ վայր, ինչպես արել էին քրքաղացի քրիստոնյաները: Մեր սիրելիների Խզմիր ժամանելը, անշուշտ, մեզ համար խթան պիտի հանդիսանար Խզմիրից ժամ առաջ մեր գույքով ու կարասիներով փախչելու:

Մեր նյութական կորուստների կողքին անբաղդատելի մեծ արժեք ունեն մեր բազմաթիվ սիրելիների թանկագին կյանքերը: Նրանք նահատակվեցին թուրք բարբարոսության ձեռքով: Մեր սիրեցյալների հարցով բոլորովին հուսահատ ենք, թեն բարեկամներն ու հայրենակիցները մեզ ջանում են հուսադրել՝ ասելով՝ եթե ոչ բոլորը, ապա գոնե մի քանիսը կարող է փրկված լինեն և անակնակալ կերպով մի օր հայտնվեն: Լոկ միսիթարական խոսքեր, որոնք վաղանցուկ կերպով առաջացնում են հույսի նշույլներ:

Միտիլիում մեր բնակության երկրորդ շարաթվա ընթացքում աշխատանքի եմ անցնում թշվառ ու բազմանդամ ընտանիքս ապրեցնելու համար: Մեր հայրենակից դոկտ. Նավասարդ Դերմինջյանի թելադրանքով հաճախում եմ Վասիլ Պապադոպուլոսի դեղարանը: Առաջին օրերին նրանից շատ բան չեմ հասկանում: Ավելի ուշ Պոլսից, իբր կասկածելի, Միտիլի է գաղթում Պապադոպուլոսի աներձագը՝ դոկտ. Պրոդրոմոս Յանոպուլոսը, որի հետ բարեկամանում ենք ու սկսում գործակցել՝ իրար հրավիրելով բժշկական խորհրդակցությունների: Դեղագործ Վ. Պապադոպուլոսի հանձնարարությամբ Յանոպուլոսը շուտով սկսում է աշխատել որպես փնտըրված բժիշկ, որը ինձ է դիմում բժշկական մի շարք հարցերով, ու ես էլ օգտվում եմ իր հաճախորդներից: Սակայն այդ բժշկական այցելությունների վարձերը բավարար չեն՝ ապահովելու համար ընտանիքին սնունդը ու մանավանդ մոտալուտ ձմեռվա հագուստեղենը:

Տեսական ու հաստատուն աշխատանք գտնելու հույսով դիմում եմ ամերիկյան Ռելիֆի՛ ամերիկյան հիվանդանոցում պաշտոն ստանալու փափագով: Դիմում ես նաև Երուսաղեմի պատրիարք Եղիշե Արքեպոս. Դուրյանի՛⁶², որ մանկության տարիներին Պարտիզակի ազգային վարժարանի տնօրենը ու մեր տան բարեկամն է

եղել միշտ, և խնդրում եմ, որ Երուսաղեմի ազգային հաստատություններում ինձ համար բժշկական պաշտոն ապահովի: Միաժամանակ անոնս արձանագրել եմ տալիս Միտիլիի գաղթականական տեսչությունում և սկսած նոյեմբերի 1-ից՝ նշանակվում եմ գաղթականների բժիշկ, նախ՝ քաղաքի մի քանի թաղերում, ապա՝ մերձակա շորս գյուղերում՝ շաբաթը երկու անգամ այցելություն կատարելու: Ավելի ուշ ամերիկան Ռելիֆի կողմից այցելու բժիշկ եմ նշանակվում և ստանում ամսական կոկիկ աշխատավարձ: Եղիշե պատրիարքը մասնավոր գրությամբ խորհուրդ է տալիս դիմել Կահիրե, ՀԲԸՄ-ին, որին ինքը ևս համձնարարում է ինձ որևէ պաշտոնի նշանակել: Բարեգործականին հղած դիմումս արդյունավետ հետևանք չի ունենում: Դիմումս կրկնում եմ և պատասխան ստանում, թե պատվիրակ Պ. Միքայել Նաթանյանին հրահանգվել է նապատակվոր կարգադրություն անել, երբ հիշյալը մոտ ապագայում Հունաստան ժամանի: Ընտանիքս ապրեցնելու չափ աշխատանքս կարգավորելուց հետո ձեռնարկում եմ գաղթականական հանձնաժողով ստեղծելու գործը՝ իզմիրի գաղթականներին նպաստ ու հագուստեղեն բաշխելու համար: Ինձ ընկերակցում են Զ. Գավեզյանը, դոկտ. Նաշյանը, Արսեն Պալյանը և ուրիշներ: Այդ հանձնաժողովը մինչև Վերջ բավական լավ գործունեություն է ծավալում, թեև համերաշխաբար չի գործակցում Նիկոմեդիայի գաղթականական հանձնաժողովի հետ:

Մի քանի ամսվա փորձառությունից ակնհայտորեն պարզ է դառնում, որ Միտիլիին ինձ համար աշխատանքի տեսակետից խիստ սահմանափակ միջավայր է, իսկ երեխաների համար կրթական տեսակետից՝ բոլորովին անհարմար: Ենք կարող երեխաներին շարունակաբար առանց ուսումի թողնեն: Խաչերեսը ամերիկան հիվանդանոցի մեջ մի փոքրիկ գործ է գտել ու դարձել «Office boy»՝ միաժամանակ ֆրանսերենի և անգլերենի մասնավոր դասեր առնելով: Գրիգոր դեղարան է հաճախում՝ փողոցներում շթափառելու համար: Միրարփին մնում է տանը ու խնամում Վարդուհուն: Իսկ Հովհաննեսը խաղում է փողոցում Համբարձումի՝ քեռորդուս հետ: Մտածում եմ ձմեռը անցկացնելուց հետո փոխադրվել Եգիպտոս, ուր հաստատված են բավական թվով ազգականներ, այդ թվում՝ հորաքույրս ու զավակները՝ և ուր կարելի է ազգային կամ եվրոպական

դաստիարակություն տալ գավակներիս: Սակայն Եգիպտոսը, իր մի շարք առավելություններով հանդերձ, իսլամական երկիր է, և ես այսուհետև, այսպիսի դառը փորձառություններից հետո, չեմ փափախազում իսլամական լծի տակ մտնել: Նախընտրում եմ Աթենքը, ուր փոխադրվել է Խօմիրի հայության կարևոր և բարեկեցիկ մասը: Դեռ վերջնական որոշում չկայացրած՝ ահա Սելանիկից Միքայել Նաթանյանի ստորագրությամբ հեռագիր եմ ստանում, որով իհան առաջարկում է նոյն քաղաքի բարեգործականի դարմանատան բժշկությունը: 1923 թ. ապրիլ 1 թվակիր այդ հեռագիրը ստանալու պես տուն եմ շտապում և կնոջս ու քրոջս հետ խորհրդակցում: Սելանիկը բժշկական գործունեության և երեխաների դաստիարակության համար հարմար միջավայր նկատելով՝ հեռագրով պատասխանում եմ, թե ընդունել եմ առաջարկված պաշտոնը: Մինչև ապրիլի 7-ը անհրաժեշտ պատրաստությունները տեսնելուց հետո Զատիկի շաբաթ օրը՝ ապրիլի 7-ին, հաճելի եղանակով շոգենավով ճանապարհ ենք ընկնում: Շոգենավը կանգ է առնում Կաստրոյում ու Մուդրոսում (Լիմանի), Դեդե Աղաչ (Dede Agac) ու Կավալայում (ուր մնում է երեք օր), և ապրիլի 13-ին հասնում ենք Սելանիկ, ուր Բարեգործականի տեղական մասնաճյուղի ու պատվիրակ Մ. Նաթանյանի հետ համագործակցելով՝ հիմնվում է մանուկների դարմանատունը: Նորահաստատ պաշտոն իհան մեծ շահույթ չի ապահովում, սակայն պատճառ է դառնում, որ ծանոթություններ հաստատեմ հայ գաղթականության մեջ ու բավական հաջողություն գտնեմ: Մինչև հարմար տուն գտնելու երկու շաբաթ բնակվում ենք պանդոկում: Քիչ անց Միտիլիից Սելանիկ է փոխադրվում նաև քույր՝ իր ընտանիքով: Սելանիկը նկատում եմ շատ ավելի հարմար միջավայր, ուր մտածում եմ վերջնականապես տեղավորվել՝ վերահաստատելու համար ընտանեկան քույսն և վերականություն համար երեխաների դաստիարակության գործը, որ ընդհատվել է գրեթե մեկ տարի ի վեր:

Սելանիկ

1 Բունիսի, 923

Կ. ԽԱՉԵՐՅԱՆ

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ

Պապիկիս՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի մասին ունեցած հուշերս կապվում են Հունաստանի Սելանիկ քաղաքի հետ, որ ծնվել եմ Զմյուտնիայի 1922-ի աղետից ուղիղ ութ տարի և չորս ամիս անց և որտեղից հեռացել եմ տասներկու տարեկան հասակում: Մեծացել եմ Փոքր Ասիայից ապաստանած գաղթականների շրջապատում, որ սարսափազդու պատմությունները առօրյա խոսակցության նյութ էին: Զնայած դրան՝ ունեցել եմ երջանիկ մանկություն: Զրկանքներ չեմ իմացել և շրջապատված եմ եղել սիրելիներով, որոնց անցյալի դառը փորձը կարծես իմն էլ դարձավ, իսկ կործանման ճախորդող շրջանի «երանելի» օրերը» կարծես ի՞ն էլ ապրած օրերն էին:

Կյանքի առաջին տասներկու տարիների ընթացքում պապիկ՝ բժիշկ Կարապետ Խաչերյանը, իմ կյանքի կենտրոնական դեմքն է եղել: Ես նրան ընկալել եմ որպես Խաչերյանների տան սյունը, և թեև մեր ընտանիքը Սաքայանների ընտանիքն էր, ես մեծացել և ուժ ու կորով եմ ստացել՝ Խաչերյանների հովանու տակ, ինձ ամուր զգացել՝ հենվելով Խաչերյանների սյունին: Պապիկիս ու տատիկիս տունը շատ ավելին էր, քան իմ երկրորդ տունը: ԶԵ՛ որ այնտեղ ապրում էր շատ երիտասարդ, և դրա համար էլ խաղընկեր մոռաքույր՝ Վարդուհին, ապա՝ երկու քեղիներս, ազնիվ ու գեղատես երիտասարդներ Գրիգորն ու Հովհաննեսը, որոնք, լինելով իրենց հոր արժանավոր որդիները, իրենց հերթին բարերար ազդեցություն են ունեցել ինձ վրա: Հիշողությանս մեջ մանկությանս բոլոր լավ ու վատ օրերը կապվում են Խաչերյանների տան հետ: Այնտեղ էին տեղի ունենում մեր ընտանեկան բոլոր հավաքույթները, նշում տարեղարձներն ու հայ ավանդական տոները: Այնտեղ ամեն տարվա ապրիլի 24-ին տատիկս մատաղ էր պատրաստում՝ ի հիշատակ մեր ճահատակների: Այդ տնից ալբանական ճակատ եմ մեկնել քեռիներս՝ որպես Հունաստանի քաղաքացիներ կովելու Փաշիստական Խուլիայի դեմ: Դնշախի՛ տոն էր, երբ նրանք երկուսն էլ ճակատից ողջ-առողջ տոն վերադարձան: Այսօրվա պես հիշում եմ այն օրը, երբ փողոցում խաղալիս առաջինը ես հեռվից նկատեցի Գրիգոր քեռուս վերադարձը ալբանական ճակատից՝ անճանաչելիորեն հյուծված ու ամխնաս, և փոխանակ վագելու նրան ընդառաջ և առաջինը ես նրա հետ գրկախառնվելու, վա-

գեցի հակառակ ուղղությամբ՝ դեպի պապիկենցս տուն, և սանդուղքները չորս-չորս բարձրանալով՝ բարի լուրջ բերեցի մերոնց: Մանկության տարիներին ավագ քեռիս՝ Խաչերես, իր ընտանիքի հետ ապրում էր Ֆրանսիայում: Նրա նամակներից յուրաքանչյուրը կարեր իրադարձություն էր մեր ընտանիքներում. մանավաճան՝ 40-ական թվականների ազգին, երբ նրա նամակներից մեկը մեզ հասավ գերմանա-ֆրանսիական ճակատից, իսկ որոշ լուրժունից հետո մեկ ուրիշը՝ Գերմանիայից՝ ֆրանսիացի ուզմագերիների ճամբարից:

Սելանիկում մեր ընտանիքները իրար մոտ էին բնակվում: Այդ մոտիկության պատճառով ես միշտ կարող էի դպրոցից կամ խաղարիապարակից վագել տատիկենց-պապիկենց մոտ: Սիրում էի նրանց ընդարձակ և հարմարավետ բնակարանը, ուր տարին բոլոր ծաղկում էին տատիկիս փարթամ բույսերը և ուր խոհանոցից տատիկիս համեղ ճաշերի ու խմորեղենների անուշ բուրմունքներն էին տարածվում: Նրանց դուռը միշտ բաց էր իմ ու քրոջ՝ Վերայի Խաչերյանների առաջին թոռների, առաջ: Պապիկենցս տանը ես միշտ ինձ համար զբաղմունք էի գտնում. թերթում նրանց գրադարանի՝ պատկերազարդ գրքերն ու հանրագիտարանները, բժշկական գունագեղ գրքույկներն ու թերթոնները: Իսկ դրսում խաղալիս ես միշտ նախընտրում էի պապիկենցս թաղն ու այդ թաղի երեխաներից՝ շիռուանալով նրանց տան առաջից, որի հասցեն մինչև օրս հիշում եմ. Այիսու Դիմիտրիոս 55 (Αγίου Δημητρίου 55): Որպես հունական թաղում խաղացող հայի երեխա՝ ինձ կարծես ուժ էր տալիս այդ տան պատին ամրացրած տախտակը, որի վրա հունարեն տառերով գրված էր պապիկիս անունն ու ազգանունը և նրա բժշկական մասնագիտությունը: Խաղալիս առանձնապես լավ էի զգում, երբ գիտեի, որ պապիկս տանը էր: Իսկ երբ նա ներսուդուրս էր անում, սիրոս լցվում էր հրճվանքով: Իր բարձրահասակ և վայելուց տեսքով նա իմ աշքում աշխարհի ամենահզոր մարդն էր, ամենավայելուց տեսքով պապիկը: Հաճախ նրան տեսնելիս թողնում էի խաղընկերներիս, վազում նրա մոտ և կարծես մեր մտերմությունը ցուցադրելու միտումով նրան հպվում կամ ձեռքը բռնում և հետո կրկին խաղիս վերադառնում: Իսկ նա ինձ շնորհում էր իր մեղմիկ ու բազմիմասն ժպիտը, այն նույն ժպիտը, որով նա մտնում էր մեր տուն ամեն անգամ, երբ հիվանդանում էի, և մայրս նրան իմաց էր տալիս: Որքան էլ որ վատառողջ լինեի, ուրախանում էի, որ պապիկս լիովին ինձ էր պատկանելու, ամբողջ ուշա-

դրությունն ինձ նվիրած՝ ինձ մոտ էր նստելու, ինձ քննելու էր և նույնիսկ ինձ հետ կատակներ էր անելու: Հետո էլ կրծքին շղթայով ամրացրած ուկե ժամացույցն էր հանելու ու վրան նայելով բազկերակս էր չափելու: Այդ ժամացույցի վրա էր նա ինձ առաջին անգամ սովորեցրել ժամերն ու րոպեները: Պապիկս մեկնելուց հետո կարծես անմիջապես ապաքինվում էի:

Որքան մեծանում էի, այնքան ավելի լավ էի ըմբռնում պապիկս մեծությունը և հաւականում, թե ինչու բոլորս՝ նույնիսկ տատիկս, նրան դիմում էինք հոգնակի թվով: Աստիճանաբար հասկանում էի, որ պապիկս միայն մեր տան սյունը չէ, այլ Սելանիկի հայ համայնքի հենարաններից մեկը: Երբ ես Սելանիկի հայկական Կյուլապի Կյուլպենկյանի անվան վարժարանի աշակերտուիր էի դարձել, հպարտություն էի զգում ամեն անգամ, երբ տեսնում էի պապիկս՝ որպես այդ վարժարանի արտօնատիրոց ու խնամակալի, մեր դպրոցի բակում տնօրենի և դպրոցի այլ ղեկավարների հետ շրջելիս: Խակ կիրակի և տոնական օրերին, երբ Սելանիկի հայ առաքելական եկեղեցում որպես համայնքի ճանաչված անձ և եկեղեցական խորհրդի նախագահ՝ նա հանգիստ քայլերով ուղղվում էր դեպի իրեն հատկացված նատարանը, ես զգում էի այն պատկառանքը, որ համայնքում գոյություն ուներ նրա հանդեպ:

Տարիներ անց սկսեցի գիտակցել այն բարերար ազդեցությունը, որ պապիկս ունեցել է ինձ վրա: Հասկացա, որ նրան եմ պարտական լեզվաբանության նկատմամբ իմ ունեցած սերը: Նա էր, որ ինձ գիտակցել տվեց մարդկային լեզու կոչվող երևույթի առեղծըվածային բնույթը՝ իմ մեջ առաջ բերելով հետաքրքրություն դեպի բառերը, դեպի նրանց ծնունդն ու մահը: Ինքն էր, որ ինձ սովորեցրեց բառարան օգտագործել: Նա էր, որ առաջինը ստուգաբանեց իմ երկու անոնները՝ նախ հայկական անուն, որ կմունքիս եմ ստացել՝ *Տիրուհի*, որը նա մեկնաբանեց որպես *Տիրամայր*, ապա հունականը՝ ինչպես որ այն գրված էր հունական ծննդյան վկայականին մեջ՝ Դորա (*Δώρα*)՝ պարզեց՝ կրճատ ձևը *Թեոդորա* (*Θεοδόρα*): Աստծո պարզեց անվան: Ու տարիներ անց ես փորձեցի ստուգաբանել նրա՝ Կարապետ անունը՝ և գտա, որ դրա իմաստը՝ առաջնորդ կամ ռահվիրա, շատ համապատասխանում էր նրա էությանը: Երբեք չեմ մոռանա մեծ հորս շատ հատուկ խոսելաձը, երբ բառերը նրա բերնից դուրս էին գալիս մարգարիտների նման, հատիկ-հատիկ: Այն խնամքը, որով նա ընտրում էր բառերը, հատուկ հմայք էր շնորհում նրա խոսքին, և բոլորը լուս էին՝ նրան

ունկնդրելու համար: Ինքն էր, որ իմ մեջ սեր առաջացրեց դեպի լեզուները, բայց ամենից շատ՝ դեպի իմ մայրենին՝ հայերենը:

Պապիկիս տանը, հետևելով նրա օրինակին, բոլորը խսում էին մաքոր արևմտահայերեն: Ժամանակ առ ժամանակ նա զգուշորեն ուղղում էր յուրայինների այս կամ այն բառը կամ արտահայտությունը՝ ամեն անգամ հղկելով մեր լեզուն: Նա չէր թաքցնում իր դժկամությունը, երբ տանը լսում էր թեկուզ մեկ օտար բառ՝ միախառնված հայերենին: Նրա նշանաբանն էր. «Այս տունը մեկ կտոր Կիլիկիա է», իսկ Կիլիկիան ու Հայաստանը նրա համար հոմանիշներ էին: Երբեք չեմ մոռանա, թե ըստանեկան նեղ շրջապատում, երբ լավ տրամադրության մեջ էր, նա ինչպիսի կարոսով էր սկսում երգել՝ «Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա ...»: Հետո էլ ինձ նատեցնում ծնկին, որպեսզի ձայնակցեմ: Նա հաճախ ասում էր. «Այս շեմքեն Աերս հայերեն պիտի խոսինք, միայն դուրս՝ օտար լեզուներ»: Միաժամանակ, նա շատ կողմնակից էր օտար լեզուներ սովորելուն: Նա ինքը տիրապետում էր մի քանի լեզվի. բացի անթերի հայերենից ու թուրքերենից՝ գիտեր ֆրանսերեն, հունարեն և մի քի՞ անգերեն: Իր բոլոր հինգ երեսաներին էլ հայկական տարրական դպրոցից հետո ուղարկել էր ուսանելու տեղական կամ եկրոպական քոլեջներ: Եվ այս ողջունեց ծնողներին՝ ինձ Սելլանիկի գերմանական գիմնազիա (Deutsche Schule Saloniki) ուղարկելու որոշումը, երբ արդեն ավարտել էի հայկական Կյուլպենկյան վարժարանի տարրական բաժինը: ԶԵ՞ որ նրա կրտսեր որդին էլ իմ սիրելի քեռի Հովհաննեսը, նույն գերմանական գիմնազիայի շրջանավարտն էր:

Հայ ժողովրդական բանահյուսությունից նրա հաճախակի մեջքերումները իմ մեջ սեր առաջացրին դեպի առածներն ու ասացվածքները: Ասույթներ, որոնք վեր էին հանում մարդկային առաքինություններ, ինչպիսիք են ճշմարտությունն ու ազնվությունը, բարությունն ու աշխատասիրությունը, զարդարում էին նրա առօրյա խոսքը: Ահա օրինակ մի քայլակ, որ ժառանգել եմ նրանց ու կյանքում դրանով հաճախ դեկապարզել.

Կամք, աշխատանք ու կորով՝

Երեք ձիրքեր են, որով

Մարդ ծովի վրա թե Բողի

Անպայման կհաջողի:

Ժամանակ առ ժամանակ նա սիրում էր իր զավակներին խորհուրդներ տալ: Եղե՛ք ... Հատկապես չէր սիրում շափազանցու-

թյունը, և ես լավ եմ հիշում, թե ինչպես էր նա սանձում մորս՝ իր դուստր Սիրարփի ոգևորությունը, երբ նա որևէ բան նկարագրելիս շափազանցությունների մեջ էր ընկնում կամ երբ աներկբա կարծիքներ էր հայտնում: «Աղջիկս», - ասում էր նա, «երբեք չշափազանցնես: Վճռական հայտարարությունները վեսավկար են: Թո՞ղ, որ միշտ դուռ մը բաց մնա»: Ահա սա եմ մտաբերում ամեն անգամ, երբ խիստ և կտրուկ ընդհանրացումներ անելու փորձության մեջ եմ ընկնում: «Թո՞ղ, որ միշտ դուռ մը բաց մնա ...», - լսում եմ պապիկիս ձայնը:

Բժիշկ Խաչերյանի հայրենակից, Պարտիզակի վերջին կառավարիչ Տեր-Հակոբյանը, իր 1960-ին գրած «Պարտիզակը խասութիկ» գրքում պապիկիս ծննդավայր Պարտիզակը մեկ բառով բնորոշելով, կոչել է ՍԵՐ: Էլ ինչո՞ւ զարմանանք պապիկին՝ իր յուրայինների, հայրենակիցների, համայն մարդկության հանդեպ ունեցած անսահման սիրո վրա: Ինչո՞ւ զարմանանք, որ նա ամեն քայլափոխին սեր ու համերաշխություն էր սերմանում ...

Պապիկիս օրագրի ընթերցումը իմ արդեն հասունացած տարիքում ո՛չ միայն հաստատեց նրա մասին իմ ունեցած կարծիքը, այլ նաև ինձ օգնեց ամբողջացնելու 12-ամյա երեխայի հիշողության մեջ ուրվագծված նրա կերպարը: Նրա զապվածությունը օրագրության համար բառերն ընտրելիս պատկառանք է ներշընչում: Այսպես, 1915-ի ցեղասպանությունն ակնարկելիս, բժիշկ Խաչերյանը զգուշաբար գործածում է «ընդհանուր տեղահանություն», «անցյալի սխալներ» կամ «աքսոր» արտահայտությունները: Տպագրիչ է նաև նրա արտակարգ մարդասիրությունը: Օրագրի մեջ նա տարբեր առիթներով արտահայտում է մարդկանց բարորության, արժանապատվության և ազատության հարցերի հետ կապված իր մտահոգությունները: Օրագրի հեղինակը հանդես է գալիս նաև որպես լավատես մարդ, որը քաջածանոթ լինելով հանդերձ հակառակորդի՝ անցյալում գործած ոտնագություններին ու վայրագություններին, շարունակում է հավատալ մարդու բնածին առաքինություններին: Միայն այդպես կարելի է հասկանալ բժիշկ Խաչերյանի տատանումները, երբ նա կանգնած էր «անդոհական» քաղաքից հեռանալու որոշման առաջ: Երկար ժամանակ նա համոզված էր, որ թուրքերը չեն կրկնելու անցյալի «սխալները և աշխարհին ցույց են տալու, որ իրենք քաղաքակիրթ ազգ են» (Էջ 36): Իր այս լավատեսության մեջ նա տատանվում է միայն այն ժամանակ, երբ իր աշխով է տեսնում կործանված

Հայնոցը և մանավանդ, երբ ձերքակալվում է: Հիշենք թուրք ազգի խաչերյանական բնորոշումը՝ ավերված Հայնոցը տեսնելուց հետո (Էջ 69): Հիշենք նաև նրա հետգրությունը, որի մեջ ընդունում է իր սխալները:

Հարց է ծագում, թե արդյո՞ք բժիշկ Խաչերյանը սխալական էր: Ծառ դյուրիհն է հետին հայացքով մեղադրել նրան՝ ժամանակին վճռական քայլերի չդիմելու և իր անմիջական ընտանիքը ավելի շուտ Զմյուռնիայից չհանելու, մանավանդ իր և իր կնոջ՝ Ակ-Հիսարում մնացած հարազատներին թուրքերի յաթաղանից չփրկելու համար: Վստահ եմ, որ դրա համար նա իր ամբողջ կյանքի ընթացքում իրեն մեղավոր է գգացել: Խսկ նրա զավակները մինչև իրենց կյանքի վերջը մնացել են բազմաթիվ հարցադրումներով, որոնցից գլխավորն այն էր, թե ինչպես կարող էր իրենց այդքան իմաստուն հայրը այդպիսի «անիմաստ» որոշում կայացնել և մյուս հայ բժիշկների հետ ժամանակին չհեռանալ այդ դժոխային քաղաքից: Նմանօրինակ քննադատություններ լսել եմ հանգուցյալ մորից՝ նրա հետ այդ հյութի շուրջ մեր հաճախակի խոսակցությունների ժամանակ: Սակայն եթե մայրս իր հոր օրագիրը կարդացած լիներ, վստահ եմ, որ նա իր հոր մտքերի ընթացքը և տրամաբանությունը այդ ճգնաժամային օրերին ավելի ճիշտ պիտի ըբրուներ: Հե՞ որ բժիշկ Խաչերյանը իրեն համարում էր որպես մեկը, որը լիովի կատարել էր իր քաղաքացիական պարտականությունը այն երկրի հանդեպ, որը ծնվել ու ուսում էր ստացել: Որպես օրինավոր քաղաքացի և արդարադատ մարդ նա իր նման հազարավոր քրիստոնյաների նման, պարզապես ի վիճակի չէր կանխատեսելու մոտեցող աղետը ...

Երախտապարտ եմ պապիկին՝ այսպիսի կարևոր փաստաթուղթ թողած լինելու համար, ականատեսի մի վկայություն, որը հաստատում է, որ հայ ժողովրդի Եղեռնը 1915 թվականի ողբերգությամբ իր վերջը չի գտել և որ ինչպես հզոր երկրաշարժից հետո տեղի են ունենում լրացուցիչ ցնցումներ, 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը հաջորդել են ուրիշ՝ ծավալով ավելի փոքր, բայց ոչ նվազ կործանարար աղետներ, որոնցից մեկը 1922-ի Զմյուռնիայի աղետն էր:

Ընորհակալ եմ նրան նաև այն բանի համար, որ ինձ հնարավորություն ընձեռեց տեղեկանալու ոչ միայն մորս և նրա հարազատների կյանքի մի տագնապալից ժամանակահատվածի մանրամասներին, այլև գիտակցելու, որ իմ ծնվելը հրաշքի պես

Մի բան էր, քանի որ մորս փրկվելը այդ աղետից մի հրաշք է եղել. որ ես և իմ զավակներն ու թոռները կարող էինք չլինել, ինչպես հազարավոր հայեր պարզապես չծնվեցին, քանի որ իրենց ծնող չի եղել... Ինչպես օրագրի առաջին պարբերությունից տեղեկանում ենք, Փոքր Ասիայի 1922-ի այդ դժոխային օրերի նախօրեին 11-ամյա մայր՝ Սիրարփին, և նրա երեք եղբայրները, Խաչերեսը՝ տասներեք, Գրիգորը ինը և Հովհաննեսը՝ յոթ տարեկան, գտնվում էին Ակ-Հիսարում, որտեղ, ինչպես ամեն ամառ, իրենց ամառային դպրոցական արձակուրդն էին անցկացնում իրենց մոր՝ Էլիզա Խաչերյանի (Ծ. Կոստանյան) պատեհական կալվածքում: Այնտեղ նրանք ամեն ամառ երկու տատիկների, նրանց երկու քենիների և հորեղբոր ընտանիքների, և մանավանդ՝ շամուսնացած ու իր կյանքը այդ երեխաներին նվիրած Գյուլիզար «Մորքուրի» սիրո ու գորգուրանքի առարկան էին: Հաճախ է մայրս իր կյանքի ընթացքում ինձ պատմել այդ երանելի ամառների ու բոլոր իր այն սիրելիների մասին, որոնք, ինչպես Ակ-Հիսարի այն հայ ու հույս քրիստոնյանները, ժամանակին չեն կարողացել փախուստի դիմել և դաժանորեն սպանվել են ներխուժող Շուրքական բանակի ու տեղական ամրությ կողմից: Շա՞տ է նա լացել, մանավանդ ամեն ապրիլի 24-ին, շա՞տ է սգացել նրանց կորուստը: Նրանք, ավաղ, տասը հոգի էին: Ի՞նչ քարերախտություն, սակայն, որ երեխաների քենիներից ավագը՝ Կոստանը և նրա կինը՝ Մարին, Վերջին վայրկյանին որոշել են Ակ-Հիսարից մեկնել և հասցրել են նատել Ակ-Հիսարից Զմյուռնիա տանող վերջին գնացքներից մեկը՝ փրկելով ոչ միայն իրենց, այլև մորս ու նրա երեք եղբայրների կյանքը: Այդ մասին մեծ հայրս տեղեկացնում է իր օրագրի սեպտեմբերի 2-ի նշումներում. «Երեկոյան գնում եմ կայարան, որի հրապարակը լցված է վիրավոր զինվորների մեքենաներով: ... Սումայի գնացքը ժամանում է, և մեծ ուրախությամբ տեսնում եմ զավակներիս վերադարձ՝ Կոստանի և նրա կնոջ Մարիի ընկերակցությամբ: Ծտապով գնում ենք տուն ... »

Կատարելով այս օրագիրը իր սիրելի ազգին հանձնելու նրա լուս պատգամը՝ սույն տպագրությունը դիտում եմ որպես հուշարձան՝ թիշկ Կարապետ Խաչերյանի թիշտակին, որ նրա աշխարհաւիյուն զավակները, թոռները և ծոռները կանգնեցրել են Մայր Հայունիքում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (Էջ 29-100)

1. Զմյունիա (թուրք. Իզմիր - Izmir) վաղնշական քաղաքը, որ այժմ հզմիր է կոչվում, Փոքր Ասիայի արևմտյան ափին գտնվող և դեպի Եգեյան ծով դուրս եկող կարևոր նավահանգիստ է: Վաղ շրջանի հնագիտական արձանագրությունները վկայում են, որ քաղաքը կառուցվել է մ.թ.ա. 1130 թվականին առլեների կողմից: Ասում են, թե «Զմյունիան» եղել է տարածքը նվաճած ամազոններից մեկի անունը: Ըստ ավանդապատման՝ Զմյունիան Հոմերոսի ծննդավայրն է եղել: Իր բնական գեղեցկության, առողջարար կլիմայի, բերքատու հողի և ապահով նավահանգստի շնորհիվ նախապատմական ժամանակներից Զմյունիան ունեցել է քաղաքաշինության ու նորաբնակության համար գերազանց դիրք, այդ հսկ պատճառով կովախնձոր է եղել հողմեացիների, Բոյլեների, ավելի ուշ բյուզանդացիների ու Թուրքերի միջև: Հողմեացիները Զմյունիան անվանել են «Ասիայի առաջին քաղաքը»: Լամարթինը այն կոչել է «Արևելքի աստղ», հույները՝ «Ալկոն Փոքր Ասիայի»: Այս բոլոր գովասանքներով հանդերձ Զմյունիան հայտնի է նաև որպես մեծ աղետների, հաճախակի երկրաշարժերի (ավերվել է 177-ին մ.թ.ա. լիովին և 1675-ին, 1688-ին, 1739-ին և 1778-ին՝ մասնակիորեն), մեծ հրդեհների (1845-ին), համաճարակների (ժանտախտ՝ 1812-ին) և ջրմեղեղների վայր (Պոյաճյան 1972): Զմյունիան Օսմանյան կայսրության մաս դարձավ 14-րդ դարի վերջին՝ Բայազիդ Սուլաջինի (1389-1403) օրոր (Eversley 1917):
2. 1922 թվականի սեպտեմբերին հինավոր Զմյունիան հսկայական հրդեհից ավերվեց, իսկ ամբողջ հայ և հոյն բնակչությունը կա՛մ հախճիրի ենթարկվեց, կա՛մ էլ փախուստի մատնվեց (տես՝ Horton 1926, Houserian Dobkin 1971): Այս արեստի պատճառը դարձած իրադարձությունների հաջորդականությունը հետևյալն է՝ Առաջին աշխարհամարտում դաշնակից պետությունների կողմից Թուրքիայի պարտությունը և Օսմանյան կայսրության անկումը, 1919-ից սկսած քեմալական շարժման առաջացումը և Առաջին աշխարհամարտին հաջորդած խաղաղության պայմանագրերը: Հոյների վաղեմի երազանքը իրականացավ, երբ պատերազմից հոգնած դաշնակից պետությունները Հունաստանին թույլատրեցին Զմյունիան Հունաստանի վարչակազմին ենթարկել, և 1919-ի մայիսին, Առաջին աշխարհամարտի վերջում կնքված Վերսալյան պայմանագրի համաձայն, հունական նավերը ափ իջան Զմյունիայում: Զանալով

վերագրավել հին հունական հողերը՝ հույն բանակը առաջացավ երկրի խորքերը՝ առանց թուրքերի կողմից դիմադրության հանդիպելու: Զմյուննիայի քրիստոնյան բնակչությունը՝ հայերը և հույները, քաղաքական այս փոփոխությունն ընդունեցին ոգևորությամբ, և քաղաքում երեք տարի սովորականի նման կյանքը շարունակվեց: Սակայն այս համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանն ընդհատվեց, եթե 1922 թվականի օգոստոսին Աֆինն Կարահիսարի մոտ հունական զորքերը հզոր պարտություն կրեցին Մուստաֆա Քեմալի կողմից ղեկավարվող թուրքական բանակի կողմից: Հունական բանակը կազմակուծվեց և Հունաստան փոխադրվեց: Մուստաֆա Քեմալի հաղթական հարձակման դեմ Զմյուննիայի քրիստոնյա փոքրամասնությունները մնացին անպաշտպան: 1922-ի սեպտեմբերի 9-ին թուրքական բանակը ազատորեն մուտք գործեց Զմյուննիա, որը և հայ ու հույն բնակչությունը Մուստաֆա Քեմալի ազգայնականների թիրախը դարձավ: Սեպտեմբերի 13-ին թուրքական բանակը կրակի տվեց Զմյուննիայի հայկական և հունական թաղամասերը (Ruaux 1923; Morgenthau 1929): Կրակը մեծ արագությամբ տարածվեց դեպի քաղաքի հյուսիսն ու արևմուտքը: Քրիստոնյա փախստականները խուժեցին դեպի ծովափ՝ Հունաստան, Խոսիա կամ որևէ այլ երկիր տանող փոխադրամիջոց գտնելու հույսով: Քարափի վրա փախչող մարդկանց թիվը անսահմանորեն աճեց Փոքր Ասիայի մյուս շրջաններից խուժող փախստականների պատճառով (Morgenthau, նույն տեղում): Հարյուր հազարավոր խոճապահը մարդիկ խճողվել էին Զմյուննիայի նավահանգստում՝ առանց ուտելիքի, ապաստանի և բժշկական օգնության: Այս ողբերգական եղելությունները պատմության մեջ մտել են «Զմյուննիայի հրդեհ», «Զմյուննիայի աղետ» կամ ավելի ընդհանրական՝ «փոքրասիական աղետ» անունով: Փոքրասիական աղետը վերջ դրեց քրիստոնյա հայերի և հույների ներկայությանը Զմյուննիայում և նրա շրջակայքում: Եվ պատհական չէ, որ շատ պատմաբաններ Զմյուննիայի աղետը դիտում են որպես ցեղասպանություն (Patziloglou 1988): Աշխարհի մահմեդականները ողջունեցին Մուստաֆա Քեմալի հաջողությունը որպես «Խալամի մեծագույն հաղթանակ՝ քրիստոնեության, Արևելքի հաղթանակ՝ ընդդեմ Արևմուտքի, Ասիայի ընդդեմ Եվրոպայի և թուրք ազգայնականների հաղթանակ՝ ընդդեմ իմպերիալիստական Բյուտանիայի» (Sonyel 1975: 173):

3. Կ. Խաչերյանը իր օրագրության առաջին արձանագրումը մկնում է՝ տալով երկու օրաթիվ (15/28 օգոստոս, 1922), այսինքն, նախ՝ հին կամ հույնան և ապա՝ նոր կամ գրիգորյան տոմարով: Հետագա գրառումները նա կատարում է գրիգորյան օրացուցի համաձայն:
4. Չալգըք Բաշը (Çalgıcı Başı) կոչվում է այն փողոցը, որը Խաչերյան ընտանիքը բնակվում էր մինչև քեմալական բանակի մուտքը Զմյուննիա: Այն չէր գտնվում ուղղակի հայկական թաղամաս

Հայնոցում, այլ այդ թաղամասի հյուսիսարևելյան սահմանի վրա (տե՛ս այդ փողոցի մոտավոր տեղադրումը Զմյուռնիայի Հայնոցի քարտեզի վրա, էջ 28):

5. **Ակ-Հիսարը գտնվում է Զմյուռնիայից 80 կմ հյուսիս-արևելք:** Այն գյուղատնտեսական հարուստ շրջան է՝ հայտնի ձիթապտղի, ծխախոտի, բամբակի, չոր թուզի և չամչի արտադրությամբ: Մինչև փոքրասիական աղետը՝ Ակ-Հիսարը շատ հայերի ու հույների այդ թվում տիկին Էլիզա Խաչերյանի ծնողներին կալվածատեր Կոստանյանների բնակավայրն է: Կ. Խաչերյանի օրագրության հենց առաջին էջերից երևում է, թե ինչքան սերտ էր Կոստանյան և Խաչերյան նահապետական ընտանիքների բարեկամական կապը, որ գոյացել էր նրանց երեխաներին Էլիզայի և Կարապետի ամուսնությամբ: Տեսնում ենք, օրինակ, թե ինչպես 1915-ին Պարտիզանկից տեղահանված Խաչերյան ընտանիքը ապաստան էր գտել ու նոր օչախ հիմնել Ակ-Հիսարում՝ Կոստանյանների կալվածքում: Ծակատագիր հեգանանքով երկու ընտանիքներն էլ քեմալական բանակի 1922-ի սեպտեմբերին Ակ-Հիսարը վերագրավելուց հետո նույն դաժան ճակատագիրն ունեցան՝ երկուսն էլ չարդի ենթարկվելով: 1915 թվականին Պարտիզանկից փախած Խաչերյան ընտանիքի ողբերգական վախճանը Ակ-Հիսարում հաստատում է պատմաբանների այն դրույթը, որ այդ ժամանակաշշանում որևէ հայ թուրքի յաթաղանից փրկություն չուներ:
6. **Հայերը դարերով ապրել են Զմյուռնիայում և նրա շրջակա տարածքներում:** Հայերի ներկայության մասին առաջին անգամ թիշտակվել է 1261 թվականին, երբ բյուզանդական կայսր Միքայել Պալեոլոգի (1260-1282) և ջենովացիների միջև կնքված առնտրական պայմանագրում հոյվան առևտորականների կողքին նշված են նաև հայերի անուններ: «Հայերը Զմյուռնիայում և նրա շրջակայքում» աշխատության մեջ Վիեննայի Միսիֆարյան Միարանության հայր Հակոբ Քոյսյանը մատնանշում է, որ հայերի առաջին ներգաղթը Զմյուռնիա և նրա շրջակայքը տեղի է ունեցել 1375-ին՝ Կիլիկիայի Ռուբրինյան իշխանության անկուսից հետո, երբ մամլուկ զավթիչներից փախչող 30.000 հայեր ապաստանեցին Կիպրոս, Ռոդոս, Կրետե կղզիներում ու այլուր, այդ թվում՝ նաև Զմյուռնիայում: 1605-ին նույնպես՝ Շահ-Աքբաս Ա-ի օրոք՝ 90.000 հայերի բռնի տեղահանման ժամանակ դեպի Պարսկաստան, Երևանից, Նախիջևանից և Ղարաբաղից հազար հայ ընտանիք կարողացավ Փոքր Սսիա գաղթել: Հայերի մեկ այլ զանգվածային ներգաղթ դեպի Զմյուռնիա տեղի է ունեցել 18-րդ դարի վերջերին, երբ 300 հայ ընտանիք այստեղ է տեղափոխվել Աշտարակից, Կարբիից ու Օշականից՝ այդ վայրերը Սղոց Մահմետ Խանի կողմից գրավվելուց հետո: Վերջին երեք դարերի ընթացքում Զմյուռնիայի հայ ազգաբնակչությունը առանձնապես չէր աճել, սակայն դրա թիվը զգա-

լիորեն մեծացել էր Առաջին աշխարհամարտից հետո և մասավանդ 1915-ին հայերի դեմ օսմանյան Թուրքիայի իրականացրած Եղեռնի հետևանքով, երբ Զմյուռնիայում ապաստան էին գտնում տեղահան եղած հազարավոր հայ փախստականներ:

Հայունի է, որ Օսմանյան կայսրության տնտեսական կյանքում հայերը մեծ դեր են խաղացել՝ հատկապես շնորհիվ արտաքին առևտուրի, դրամատնային, արդյունաբերության, շինարարության, բժշկության և արվեստի բնագավառների մասնագետների: Մեծ թվով հայ առևտրականներ արտահանում էին գորգեր, ծխախոտ, կաշի, բուրդ, հացահատիկ ու չորացրած մրգեր, ինչպես նաև ներմուծում սարքավորումներ, նավթ, շաքար և այլն: Նրանք նաև վարաետարինատավորներ էին՝ ոսկեիջներ, ժամագործներ, ջուլհակներ, մետաքսագործներ և այլն: Մինչև 1922-ի սեպտեմբերի ողբերգական դեպքերը Զմյուռնիան Փոքր Ասիայի հայ մշակույթի երկրորդ կարևոր կենտրոնն էր: Այստեղ գործում էին չորս հայկական եկեղեցներ, այդ թվում՝ 16-րդ դարի ճարտարապետական կոթող Սուրբ Ստեփանոս եկեղեցին (տե՛ս ծանոթագրություն 11): Հայկական տարրական և բարձրագույն դպրոցներից շատերը անվանի էին, ինչպես, օրինակ, Աղջիկների Հոփհսիմյան վարժարանը՝ հիմնադրված 1830-ին, Տղաների Մասրոպյան վարժարանը՝ հիմնադրված 1799-ին: Զմյուռնիան ուներ նաև հայ բարձրարվեստ թատրոն: Հայունի էր նաև Սուրբ Գրիգոր ազգային թիվանդանոցը, որը հիմնադրվել էր 1802-ին (տե՛ս ծանոթագրություն 7): 1795-ից սկսած՝ Զմյուռնիայի հայկական տպարաններում տպագրվում էին բազմաթիվ հայկական գրքեր, պարբերաթերթեր ու օրաթերթեր: Մինչև 1922-ը այնտեղ տարբեր ժամանակներում հրատարակվել են 36 անուն հայկական լրագրեր և ամսագրեր: Աշխարհում հանրահայտ դարձած հայերից շատերի անունները կապված են այդ քաղաքի հետ (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 4, 1978, էջ 312-213; Houserian Dobkin, 1971; «Մեր Զմյուռնիան», 1960):

7. Հայկական Սուրբ Գրիգոր Ազգային թիվանդանոցը կառուցվել է 1801-ին (բարերարներ՝ Հակոբ և Հովհաննես Սպարտալյաններ): 1878-ին այն հիմնավորապես վերակառուցվել է: Հիվանդանոցի եռահարկ գեղեցիկ շենքը գտնվում էր ծաղկանոցի, մրգատու այգու ու բանջարանոցի ճիշտ մեջտեղում: Ծինությունը ժամանակակից էր, ընդարձակ, լավ սարքավորված և կարող էր սպասարկել մինչև 70 թիվանդի: Հիվանդանոցը, որ բաց էր բոլոր ազգությունների առաջ, ուներ նաև այցելու թիվանդների կլինիկա և առանձին շինություն, ուր խնամվում էին 15 ծերեր ու հաշմանդամներ, ինչպես նաև 25 հոգեկան թիվանդներ: Հիվանդանոցը նեկավարվում էր Թաղապետական խորհրդի կողմից, որի անդամներին ընտրում էր Հայկական քաղաքացիական խորհրդը: Կարիքավոր թիվանդների ծախսերը հոգում էին ազգային բարեգործական ընկերությունները, կամ

հրանք վճարվում էին հիվանդանոցի Բողատարածքից ստացված եկամուտներից (տե՛ս «Մեր Զմյուտնիան», 1960):

8. Զմեռվա Բամար սՅնդամթերքների պաշարներ պատրաստելը (ապուխտ [բաստուրմա], երշիկեղեն [սուչուխ], դավուրմա [տիբալ], թարխանա [շորացրած հատուկ թթխմոր՝ ապոր պատրաստելու համար], յուֆկա [շորացրած մակարոնանման խմոր], չորացրած և պահածոյացված մրգեր ու բանջարեղեն, ջեմեր, մուրաբաներ և այլն) կազմում էր Փոքր Ասիայում ապրող հայ և Բույն ընտանիքների ամառային ամիսների կարևոր օքաղմունքը: Գյուղատնտեսական մթերքների իր առատությամբ Ակ-Հիսարը հարմարագույն վայրն էր այդ պաշարների պատրաստության համար:
9. Խոսքն այստեղ Աստվածածինի Վերափոխման կրոնական տոնի մասին է: Ինչպես Հայ Առաքելական Եկեղեցու մյուս չորս կարոր տոներին (Ծննդյան տոնը, Զատիկը, Վերափոխումն Ս. Աստվածածին, Համբարձման և Սուրբ Խաչի տոները)՝ հաջորդող երկուշարթին մեռելների Բիշատակին նվիրված օր է (Մեռելոց): Շատերի համար այդ օրերը նաև հանգստի ու զվարճության օրեր են:
10. 1919-ին հունական բանակը մտավ Փոքր Ասիա և առանց դիմադրության հանդիպելով՝ առաջացավ Թուրքիայի խորքերը՝ հասնելով մինչև Խզմին (Նիկոլետիա): Սակայն երեք տարի անց՝ 1922-ի օգոստոսին, հունական զորքերը Աֆիոն Կարամիսարի մոտ՝ Զմյուտնիայից 200 մղոն դեպի արևելք, քնմալական բանակի կողմից պարտություն կրեցին ու կազմալուծվելով նահանջեցին ու փախուստի դիմեցին:
11. Հայկական Սուրբ Ստեփանոս մայր Եկեղեցին գտնվում էր հայկական թաղամաս Հայնոցի (տե՛ս՝ ծանոթագրություն 17) արևմտյան սահմանին: Եկեղեցու շենքը կառուցվել է 16-րդ դարում և առաջին անգամ վերակառուցվել 1688-ին: Ապա հաջորդել են 1743-ի և վերատին՝ 1845-ի վերակառուցմները: Սուրբ Ստեփանոս Եկեղեցին իր ճարտարապետական հրաշագեղությամբ այդ տարածքում երկրորդն էր՝ Կոստանդնուպոլսի բյուզանդական ճարտարապետության նշանավոր հուշարձան Ս. Սոֆիայի տաճարից հետո: Օսմանյան կայսրության՝ ‘millet’կոչվող (ոչ մահմեդական փոքրամասնությունների համար) հատուկ կառուցվածքի համաձայն՝ հայերն ունեին իրենց սեփական դպրոցները, որոնք հայ Եկեղեցու տնօրինության տակ էին գտնվում: Հատ կանոնի՝ Զմյուտնիայի հայկական ծխական դպրոցն էլ գտնվում էր Եկեղեցուն կից: Սուրբ Ստեփանոսի արևելյան կողմում գտնվում էր նոճիապատ դարավոր գերեզմանատունը՝ իրն շիրմաքարերով, որոնցից ովանց վրա փորագրված մեռյալների ծննդյան տարեթվերը (օրինակ՝ 1551 և 1567), ինչպես նաև ծննդավայրի տեղանունները ցույց էին տալիս, որ այնտեղ թաղված են

- եղել Շուշի, Թիֆլիս կամ Նախիջևան քաղաքներից դարեր առաջ գաղթած հայեր: Գերեզմանատան միջով հոսում էր Մելես գետը, որի երկու ափերը միանում էին Քարավանների կամքով, մի անոն, որ այդ կամուրջն ստացել էր բանուկ ժամերին ուղղերի քարավանների աշխալյժ երթեւեկի պատճառով («Մեր Զմյունիան» 1960; Baedeker 1905):
12. Զմյունիայի հայտնի Տղաների Մեսրոպյան վարժարանը հիմնադրվել է 1799-ին: 1898-ին այն ուներ 300 աշակերտ և 16 ուսուցիչ: Այս դպրոցի շրջանավարտներից շատերը հաջողությամբ շարունակում էին իրենց ուսումը Փարիզի, Լոնդոնի և Եվրոպական այլ առաջադեմ քաղաքների համալսարաններում («Մեր Զմյունիան» 1960; Պոյաճյան 1917):
13. Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը (1881-1938) թուրքական հանրապետության հիմնադիրն է (1923) և նրա առաջին նախագահը: Համաշխարհային Առաջին պատերազմի ընթացքում՝ 1915-ին՝ Դարդանելի նեղուցի պաշտպանությունից հետո, նա վերադարձավ որպես ազգային հերոս՝ ստանալով գեներալի աստիճան և փաշայի տիտղոս: 1919-ին նա սկսեց լայնածավալ գործունեություն թուրքական ուժերը համախմբելու ուղղությամբ: Նա կազմակերպեց տեղական ուստիկանությունը և նպաստեց ուազմական ուժերի կազմավորմանը: 1920-ին Անկարայում ընտրվեց Ազգային ժողովի նախագահ: Թեև անցյալում եղել էր իթթիհառիստ (տե՛ս՝ ծանոթագրություն 23), նա արևմտյան պետություններին սիրաշահելու նպատակով ձևականորեն կապերը խօսեց երիտրուրքերի մետ, սակայն շարունակեց զարգացնել թուրքական ազգայնականությունը: Որպես ազգային «ազատագրական» քանակի հրամանատար՝ Քեմալը 1922-ին առաջնորդեց թուրքական զորքերը, որոնք թալանի, բռնաբարությունների ու սպանությունների ծրագրով հասան մինչև Զմյունիա և Նվաճեցին այն (Rusaux 1923, Walker 1980: 345): Փոքր Ասիայում «անհավաստներին», այսինքն՝ հույն և հայ քրիստոնյաներին մաքրագործելով՝ նա երկուում ձեռք բերեց անսահման ուժ՝ ուղղելակություն (Horton 1926, Toumbourou 1927; 1975: 186):
14. Հույների կողմից թուրքերի դեմ դաժանությունների առանձին դեպքի մասին առաջին անգամ խոսվեց 1919-ին, երբ հունական բանակը մուտք գործեց Զմյունիա: Սակայն դաշնակից իշխանություններն անմիջապես միջամտեցին, և հույն կառավարությունը խիստ միջոցներ գործադրեց հանցավորների հանդեպ: Ավելի ուշ շրջանում ևս, հատկապես երբ հունական բանակը նահանջում էր, հույն զինվորների վայրագությունների ուրիշ դեպքեր են արձանագրվել («Մեր Զմյունիան» 1960: 186):
15. Գոյություն ունեն բազմաթիվ վկայություններ այն մասին, որ 1922-

ին հունական կառավարությունը Զմյուռհիայի հանրությունից գաղտնի է պահել թուրքական բանակի առաջխաղումը, թեն այդ մասին ժամանակին տեղյակ է պահել հունական բանակի ու հունական վարչության անձնակազմին, որոնք ժամանակին կարողացել են փախուստի դիմել թողմելով, որ հայ ու հույն խաղաղ բնակչությունը Վրիժառու թուրքերի կամայականությունների գործ դառնա: Այսպիսով՝ 1922-ին Փոքր Ասիայի քրիստոնյա ազգաբնակչության ողբերգության պատասխանատվությունը կրում են ո՛չ միայն թուրքերը, այլև այդ ժամանակաշրջանի հույն քաղաքական գործիչներից ումանք (Kleanthis 1983):

16. Ամբողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում և հատկապես երբ Զմյուռհիան այրվում էր, Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, Խորհրդային և Ամերիկայի Միացալ Նահանգներին պատկանող 23 ուազմանավեր և փոխադրանավեր խարիսխ էին ձգել Զմյուռհիայի նավահանգստում: Հատկանշական է, սակայն, այն, որ այդ նավերից ո՛չ մեկը չմիջամտեց և ոչինչ չճենարկեց նավամատուցում գտնվող հազարավոր փախատականներին փրկելու համար (Walker 1980):
17. Այս բառերը վերաբերում են հատկապես 1894-1896 և 1915-ին տեղի ունեցած ջարդերին: Հայերի մեջ արդեն 17-րդ և 18-րդ դարերում նկատելի ազգային ինքնագիտակցության արթնացումը և 19-րդ դարում թուրքերի կողմից հայ բնակչության հանդեպ գործադրված հալածանքներն ու դաժանությունները այն հետևանքն ունեցան, որ հայերի մեջ ուժեղացավ քաղաքացիական իրավունքները ձեռք բերելու պահանջը: Մի կողմից Ռուս-թուրքական պատերազմի շրջանի թուրքերի ու քրդերի ձեռնարկած հայկական ջարդերն ու Օսմանյան կայսրության ուժորմների ձախողումը, մյուս կողմից՝ հույների ու բալկանյան սլավոնների ազատագրական պայքարի հաջողությունն ու նրանց՝ թուրքական լծից ազատագրվելը, բնականաբար, որոշ արևմտահայերի մեջ ևս առաջ բերեցին ինքնավարության գաղափարը: Ստեղծվեցին հայկական գաղտնի հեղափոխական խմբավորումներ և քաղաքական կուսակցություններ, որոնցից միայն հնչակյան կուսակցությունն էր, որ բացեիքաց ձգտում էր Հայաստանի Ռուսական ու Օսմանյան կայսրությունների լծից ազատվելուն և հայկական ինքնավար հանրապետության ստեղծմանը: Հիշենք սաստուցիների ապատամբությունը 1894-ին կամ Կոստանդնուպոլիսի հայ բնակչության բողոքի ցուցը, որոնք առիթ տվեցին սուլթան Արդուլ Համիդին 1894-1896 թվականների նախաճիր կազմակերպել: Այն ընդգրկեց Օսմանյան կայսրության ամբողջ տարածքի հայությունը՝ արյունոտ ջարդերի ենթարկելով մոտ 300.000 հայի: Այսուհանդերձ, հայկական հեղափոխական շարժումը շարունակվեց մինչև XX դարի սկիզբը, երբ կառավարության գլուխ անցան երիտրությերը: Թեև վերջիններս

քաղաքականապես հակադրված էին Արդուլ Համիդին, ճրանք շարունակեցին Եռա Բայատյաց գործը: Երիտրուրքերը ամբողջ հայ ազգաբնակչությունը դիտում էին որպես արևմտյան դաշնակիցներ ու Ռուսաստանի համակիրներ և այն կոչում «Քինգերորդ շարապյուն»: Որպես Հայկական Հարցի Վերջնական լուծում՝ Երիտրուրքերի կառավարությունը որդեգրեց ենեոնի քաղաքականությունը՝ «ընդհանուր տեղահանություն» կամ «ընդհանուր վերաբնակեցում» կեղծ անվան տակ:

1915թ. ապրիլի 23-ի երեկոյան թուրքական ոստիկանությունն սկսեց ձերբակալել Կոստանդնուպոլիսի Եշանավոր Բայերին: Զերբակալություններն ընդգրկեցին արևելյան նախանձների բոլոր քաղաքները: Հայ տղամարդիկ՝ հիմնականում Երիտրասարդներ, տեղանուտեղը սպանվեցին կամ քշվեցին երկրի խորքերը՝ օտարերկրացիների աշքից մեռուի նրանց նախնի ենթարկելու համար: Թուրքիայի արևելքում առաջին մերժին տղամարդկանց և հայ առաջնակարգ մտավորական դասակարգը ոչնչացնելուց հետո թուրքերը հարձակման անցան Թորքա-Հայաստանի և Փոքր Ասիայի յուրաքանչյուր քաղաքում ու գյուղում՝ կոտորելով կամ տեղահանելով (մի քանի բացառությամբ՝ տե՛ս ծանոթագրություն 31) ամբողջ հայ բնակչությունը: Կանայք, երեխաներն ու ծերերը իրենց տներից հանվեցին ու քշվեցին դեպի հարավ և թուրք դաժան պահակախմբերի հսկողության տակ ամփաներով քայլեցին հյուսիսային Սիրիայի այրող անապատներով՝ քաղցած ու ծարավ: Դեյր էլ Զոր կոչվող մահվան բացօրյա ճամբարում հազարավոր հայեր տանջամար կամ սովամար եղան: Թուրք պահակախմբերը մեծ թվով հայերի Սև ծովում խեղդամար արեցին և կամ Քեմախի կիրճը նետեցին: Սովոր, համաճարակները ու թուրքի յաթաղանը խլեցին մեկուես միլիոն հայերի կյանքը, և հայերը դարձան ՀՀ դարի առաջին ցեղասպանության զոհերը (Lang & Walker 1987:7):

Հայ քաղաքացիների նկատմար Օսմանյան իշխանության կատարած հանցագործությունները «արդարացնելու» նպատակով Թուրքիան հրորինել է այն տեսությունը, թե իր հայ թեղափոխական ու ազատագրական շարժումը սպառնալիք էր պետական անվտանգության համար: Դրանով մեծապես չափազանցվում է ո՞չ միայն հայ թեղափոխականների մասնակցությունն ու ազդեցությունը, այլև դիտավորյալ կերպով անտեսվում է այն փաստը, որ հայերի երկու սոցիալ-թեղափոխական կուսակցություններն ել այն քանից հետո, երբ Երիտրուրքերն իշխանության գլուխն անցան, իսկական ուժորմների հույսով իրենց ինքնավարության ու անկախության պահանջներից մետ էին կանգնել (Հայ ցեղասպանության մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս սույն գրքի «Գրականություն» բաժինը, էջ 191):

18. Հայնոց էր կոչվում Զմյուռնիայի հայկական թաղամասը (տե՛ս Էջ 28): Հայկական հին թաղամասը կոչվում էր «Ալիքան Մահալ» (Բուն. Վերին Թաղամաս) և գտնվում էր հին հայկական մատուի և գերեզմանոցի շորջ գտնվող մի բլրակի վրա, որ հարում էր թուրքական թաղամասին: XV դարի վերջին հայերը տեղափոխվեցին Զմյուռնիայի կենտրոնական մասը և հիմնադրեցին Հայնոց՝ Բունական քրիստոնեական թաղամասին անմիջապես կից՝ նրա հարավում: Սեպտեմբերի 13-ին թուրքական բանակը կրակի տվեց Զմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը (Руах 1923; Morgenstau 1929; Housserian 1971): Հրդեմը մեծ թափով տարածվեց՝ ավելիով Զմյուռնիայի ամենաբարգավաճ շրջանները: Նախքան Զմյուռնիայի հրդեմը տեղական հայ համայնքը հիմնականում տեղափոխված էր Հայնոցում, թեև մեծամարդուատ շատ հայեր ապրում էին նաև նա- վամատուցում կամ եկրոպական թաղամասերում: Հստ Բադեկեր-ի ճանապարհորդական ուղեցույցի (Bädeker 1905: 194)⁶ Հայնոցը գտնվում էր Զմյուռնիայի կենտրոնում, նավահանգստից մոտ մեկ կմ հեռավորության վրա, իսկ հունական թաղամասը Հայնոցի հյուսիսում էր և ձգվում էր դեպի հյուսիս: Հրեական թաղամասն սկսվում էր Հայնոցի հարավային մասից, իսկ վերջինիս հարավ- արևմուտքում գտնվում էր թուրքական թաղամասը: Այսինով՝ տեսնում ենք, որ Զմյուռնիայի բնակչության աշխարհագրական սահմանները ձգվում էին ըստ կրոնի՝ քրիստոնյաները՝ հյուսիսում, իսկ ոչ քրիստոնյաները՝ հարավում (տե՛ս Զմյուռնիայի 1905-ի քար- տեզը ըստ Բադեկերի, Էջ 172):
19. Հանրածանոր է, որ 1914-ին Օսմանյան կայսրության բանակ՝ զին- վորական ծառայության կոչված քրիստոնյա տղամարդիկ՝ հայերն ու հույնները, որպես օրենք տեղափորվում էին ուազմաճակատից հեռո՛ւ տաժանակիր աշխատանքի զանազան ճամբարներում: Հայ և հոյն այն գորակոշիկները, որոնք ծառայել են օսմանյան բա- նակում, հատկապես բալկանյան պատերազմի ժամանակ աշքի են ընկել իրենց ինհանությամբ (Lang & Walker 1987: 7): Հստ Ամերիկայի դեսպան Մորգենթաուին՝ նրանք «ավելի լավ են ծառայել, քան որնէ այլ՝ ոչ թուրքա- կան տարր» (Morgenstau-ի մեջբերումը վերցված է Lang & Walker-ից՝ 1987: 7): Գոյություն ունի վիճակագրություն, որի համաձայն՝ թուրքական ճակատում ծառայող թժիկների շարքերում իրենց թվով աշքի են ընկել հա- յերը և հոյնները: Բժիշկ Կ. Խաչերյանը իր զինվորական շքանշան- ներն ստացել էր հիմնականում Դարդանելի ճակատամարտի ըն- թացքում, որտեղ 1915-ին Մուսթաֆա Քեմալը գերմանացիների օգնությամբ պարտության է մատնել դաշնակիցներին:
20. 1919-ին Արիստիդիս Ստերլիյադիսը Զմյուռնիայի հոյն ավագ կո- միսար նշանակվեց: Ասում են, որ նա չափազանց խիստ և մոռայ

անձնավորություն էր: Զանալով բնակչության տարրեր խմբերին ցույց շտալ որևէ խտրականություն ու լինել անաշառ՝ նա թուրքերի հետ ապելի մեջ է վարվել, քան Բույների ու Բայերի հետ: Իր այդ թքամոլության հասնող անաշառության պատճառով նա Զմյունիայում հույների կառավարման ամբողջ ընթացքում քրիստոնեական համայնքում ժողովրդականություն չի վայելել: Չնայած դրան, երբ 1922-ին քեմալիան բանակի մուտքից հետո Ստերյադիսը նավով փախուստի է դիմելիս եղել, նրա նավ նատելուց առաջ թուրք ամբոխը ցնծացել է («Մեր Զմյունիան» 1960: 196): Պետք է նշել, սակայն, որ Ստերյադիսը Զմյունիայից փախող հույն պաշտոնյաներից վերջինն էր (Housepian 1971: 100):

21. Հաջի-Անեստիսը Զմյունիայի հույն զորամիավորումների գերագույն միամանատարն էր՝ Բայտնի իր մտային անկայունությամբ: Նա մեկն էր Հունատանի բարձրաստիճան վեց ներկայացուցիչներից, որոնք Փոքր Ասիայում հույների ուազմական մեծ ձախողության համար մեղավոր համարվեցին և Վենիզելոսի կողմանակիցների կողմից մահապատժի ենթարկվեցին (Housepian 1971: 201):
22. Գեներալ Մուրսել Փաշայի հեծելազորի անսպասելի մուտքը Զմյունիա ցնցող տպավորություն թողեց նոյնիսկ ամենաանկողմնակալ ականատեսի վրա: Հարյուր հազարավոր փախստականներ, որ խոնվել էին նազարիանգություն, տեսնելով թուրքական հեծյալների ժամանումը, ամ ու սարսափի մեջ ընկան: Զմյունիայի աղետի թեման արծարծող գրականությունը լի է այն տեսարանի ըկարագրությամբ, երբ խունապահար մարդիկ ամարկու հեծյալներին տեսնելուն պես սկսում են փախուստի դիմել, իսկ թուրք հեծյալները փորձում էին նրանց փախուստը կանխել՝ կոչելով «Korkma!» (Քո՞քմա - Մի՞ փախեցիր) (Pausch 1923: 9; Housepian 1971: 103): Խնչախի՞ խարեւություն, եթե նկատի ունենանք այդ փախստականների տխուր փախճանը:
23. Իթիհադ բարը վերաբերում է երիտրուրերին կամ «Միություն և առաջադիմություն» (Յուրը. İttihad ve Terakki Cemiyeti) կոմիտեին, որ հիմնադրվել էր 1889-ից՝ թուրք սուլթան Արդուլ Համիդ Ա-ի վրա ճնշում գործադրելու, բարենորոգումներ իրականացնելու նապատակով (տե՛ս սույն էշում ծանոթ. 25): Ազդեցություն կրելով Եվրոպական պողիտիվիզմի և ազգայնականության գաղափարախոսությունից՝ իթիհադիստները սահմանադրության կոչ էին անում՝ ապահովելով քաղաքացիական և դավանանքի ազատություններ, նապատելով պանթուրքիզմին: Իթիհադիստները 1915-ի Հայկական Ցեղասպանության կազմակերպիչներն էին: Նրանց պարագլուխներից էին Էնվեր, Թօմաք

և Զեմալ փաշաները, որոնք շատ երիտթուրքերի նման Առաջին Բամաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո գերմանացիների օգնությամբ արտասահման փախան: 1919-ին նրանք օսմանյան ուղղական հատուկ դատարանների վճռով պատերազմի հանցագործ հայտարարվեցին և իրենց բացակայությամբ մահվան դատապարտվեցին (Սողոմոն Թերլեռյանի կողմից Թալեաթ փաշայի սպանության մասին, տե՛ս «Գրականություն» բաժինը, էջ 191):

24. **Իրիլաֆը կարճատև կյանք ունեցող հակաթթիհադական կուսակցություն էր, որ 1912-ին կազմալուծվեց:**
25. **Արդուլ Համիդ II-ը պատմության մեջ է մտել որպես «Օսմանյան կայսրության երկարամյա գոյության ամենաատելի, խորամանկ, դավադիր և դաժան սուլթանը»: Նա իշխել է 1876-1909 թվականներին (Eversley 1917): Իբրև հայտնի հետադիմական՝ Համիդը արհամարիում էր արևմտյան ազատամտությունը, խոսքի և մամուլի ազատությունը: Նա 1895-ին, Եվրոպացիներին հաճանալու նպատակով համաձայնվեց բարենորդումներ անել: Ծուտով, սակայն, նա հրաժարվեց բարենորդումների գաղափարից և 19-րդ դարի վերջում շարունակեց հայերի և բոլղարների զանգվածային ջարդերը: Այդ պատճառով էլ ստացավ «Արյունոտ» կամ «Կարմիր սուլթան» անունը:**
26. **Բեյ և Էֆենդի՝ թուրքերի մեջ տղամարդկանց դիմելու երկու տարբեր ձևեր են: Բեյ օգտագործվում է բարձրաստիճան մարդկանց դիմելիս, իսկ Էֆենդի ընդհանրապես տղամարդկանց դիմելու բաղաքավարական ձև է Թուրքիայում: Էֆենդի կարող են կոչվել ամեն հավատքի տղամարդիկ, մինչեռ բեյ-ը վերապահված է մահմեդականներին:**
27. **Սուսկի՝ «հրեական»:**
28. **Արքեպիսկոպոս Ղևոնդ Դուրյանը՝ Զմյուռնիայի հայկական թեմի առաջնորդը, լավ հարաբերությունների մեջ չեր թուրքական կառավարության հետ: Եթի 1919-ին հունական բանակը Զմյուռնիան գրավեց, նա հունական դրոշ կախեց Սուրբ Ստեփանոս եկեղեցու վրա, իսկ դարպասին փակցրեց Կոնստանտին թագավորի նկարը: Դեռ ավելին. նա մտերմական կապերի մեջ էր թուրքերին ատելի հունական ուղղափառ եկեղեցու առաջնորդ Խրիստոսությունի հետ: 1922-ի սեպտեմբերի 10-ին Խրիստոսություն տանջամահ եղավ թուրք խոժանի կողմից (Rusach 1923: 8-9; Housepian 1971: 118):**
29. **1922-ից ի վեր ականատեսների վկայությունների վրա հիմնված տարբեր աղբյուրներ հաստատել են, որ սեպտեմբերի 13-ին Զմյուռնիայի հայկական թաղամասը հրդեմել են թուրքերը՝ հույս**

ունենալով, որ հրդեհը տներում թաքնված հայերին փախուստի կմատներ և կքշեր նրանց իրենց տներից: Այդ հրդեհից, բացի հարյուրավոր հայերից, 1500 հայկական տուն ու խանութ է կործանվել (Rusaux 1923; «Մեր Զմյուռնիան», 1961: 198-199):

30. Պրոտեգé կոչվող կարգավիճակը Օսմանյան կայսրության հպատակներին ընծայում էր եվրոպական որոշ պետություններից մեկի հովանավորությունը, որի դիմաց հովանավորյալը պարտավոր էր ծառայություններ մատուցել տվյալ պետության հյուպատոսարաններին և հաստատություններին: Ինչպես Թուրքիայի ամեն արտասահմանյան քաղաքացի, պրոտեգé կարգավիճակ ունեցողները ազատվում էին բոլոր տեսակի հարկերից, զինվորական ծառայությունից և երկրի դատարանին ենթարկվելուց (Bowie 1970: 1):
31. Օսմանյան կայսրության երկու ամենաառաջավոր քաղաքների՝ Կոստանդնուպոլիսի և Զմյուռնիայի հայ բնակչությունը 1915-ի ողբերգական դեպքերից ավելի քիչ տուժեց, քան Թուրքիայի մյուս շրջանների հայությունը: Քանի որ Զմյուռնիայի հայությունը տեղահանման չէր ենթարկվել, 1915-ից մինչև 1922-ը այնտեղ կարող էին ապաստան գտնել թուրք յաթաղանից փրկված՝ մյուս շրջաններից տեղահանվող հայերից ոմանք. նրանց թվում էին նախճիրից փախած որբերը:
32. Գյավուր բարը, որն իր ծագումով նշանակում է հեթանոս կամ անհավատ, թուրքերի կողմից օգտագործվող նվաստացուցիչ անունն էր բոլոր ոչ մահմեդական փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, հատկապես՝ հայերի, հույների և թրեանի: Այսպիսով՝ գյավուր Զմյուռնիա նշանակում է հեթանոսների, անհավատների քաղաք Զմյուռնիա: Կ. Խաչերյանի «Գյավուր Զմյուռնիան դարձել է թուրքական Զմյուռնիա» նախադասությունն էլ այստեղ ակնարկում է թուրքերի վերջնական նպատակի հրականացումը, որը Թուրքիայի կերտումն էր միայն թուրքերի համար, այսինքն՝ պանթուրքիզմը:
33. Զմյուռնիայի աղետից փրկվածների վկայությունները Մ. Հուսեփյանի գրքում (Housepian 1971: 209) լիովին համընկնում են թժիշկ Խաչերյանի տվյալ տեղեկությունների հետ հատկապես այն մասին, թե ինչպես էին թուրք զինվորները թալանում բանտարկյալներին ու գերիներին՝ հափշտակելով նրանց կոշիկները, փողը, ժամացույցները, անգուստենքները և մինչև անգամ՝ սպիտակեղենը:
34. Սպանդի և աքսորի այդ աթաքեկիշ ժամանակներից մեզ հասել են մի շարք սրտամկիկ պատմություններ այն մասին, թե ինչպես որոշ հասարակ թուրք քաղաքացիներ, իրենց կյանքը վտանգի

տակ դնելով, օգնության ձեռք են մեկնել հայերին: Երևում է, որ զինվոր Հյուսեյինն էլ նրանցից մեկն էր: Առանց Հյուսեյինի օգնության գուցե բժիշկ Խաչերյանը ավելի տխուր ճակատագիր ունենար:

35. Բոնաբարության ենթարկվող կնոջ մայրը կամ կեսուրը օգտագործած «պատիվը Փաղիշահինն է» արտահայտությամբ Բիշշեցում է օրինազանց թուրքին՝ փաղիշահի կամ սուլթանի հանդես նրա ունեցած զինվորական պարտականությունը: Դա մի փորձ է՝ բոնաբարողի գիտակցության մեջ արթնացնելու պատվի զգացումը:
36. Բուլղար ժողովուրդը ևս երկար ժամանակ տառապել է Օսմանյան կայսրության լի տակ: 1875-ին բուլղար գյուղացիների դաժանորեն ճնշված ապստամբությունը (տես՝ Eversley 1917: 319) Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում համընդհանուր սարսափ ու զայրույթ առաջացրեց (Douglas 1998: 279): Իր ազատագրումից հետո և Առաջին աշխարհամարտին նախորդող տարիներին Բուլղարիան թուրքիայի հետ պատերազմական վիճակի մեջ էր: Սակայն երբ Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց, Բալկանյան երկրորդ պատերազմի ժամանակ 1913-ին կորցրած տարածքները վերագրավելու հույսով Բուլղարիան դաշնակցեց Գերմանիայի հետ, մի բան, որ բուլղարներին դրեց թուրքերի կողմը, քանի որ վերջիններս նույնական Գերմանիայի դաշնակիցն էին (McIntyre 1988: 19-20):
37. Զեթեները (թուրք. չետեր) բանտից ազատված և Քեմալի բանակում ներգրավված ավազակներ էին, որոնք հայտնի էին իրենց դաժանությամբ (տես՝ Housepian 1971: 27): Զեթեներ էին կոչվում նաև երիտրուքտերի կողմից կազմակերպված զինված այն ուժերը, որոնք կրում են հայ աքսորյալների թալանի ու կոտորածների պատասխանատվությունը: Բժիշկ Խաչերյանի օրագրում թուրք զինվորը շեթե բառն օգտագործում է «հանցագործ» իմաստով:
38. 1920-ի սեպտեմբերին, երբ օսմանյան կառավարությունը Լուստանդնուպոլսում արդեն ստորագրել էր Սկրի պայմանագիրը, Մուսատաֆա Քեմալը իրագործեց դեռ նոյն տարվա գարնանը պատրաստած՝ Հայկական Հանրապետության վրա հարձակվելու իր ծրագիրը: Նա հրամայեց գեներալ Քյազիմ Կարարեքիրին՝ թուրք ազգայնական զինված ուժերի արևելյան բանակի հրամանատարին, անցնել ուսւ-թուրքական նախապատերազմյան սահմանը և արշավել Հայաստանի վրա: Նոյն տարվա նոյեմբերին Կարարեքիրը գրավեց Ղարսը, Արդվինը և Ալեքսանդրապոլը (այսօր՝ Գյումրի) և ստիպեց Երևանի այդ ժամանակվա՛դեռ նոր ու խախուտ կառավարությանը խաղաղության պայմանագիր կնքել (Toynbee 1923/1975: 123; Hale 1994: 62): Այդ պայ-

մանագրում թելադրվող կործանարար պայմաններից խուսափելու նպատակով (պայմանագիրը փաստորեն խլում էր հայկական մնացած պատմական հողատարածությունների մեծ մասը) երևանյան կառավարությունը միաժամանակ բանակցություններ կարեց սովետների հետ և, ի վերջո, երկրի կառավարումը հանձնեց Վերջիններին:

39. Զմյուռնացիք սիրում էին մականուններ տալ մարդկանց: Այս դեպքում Դեկի Յանի նշանակում է «խենթ Յանի» (թուրք. դեկի՝ «խենթ», «խելագար», իսկ Յանի՝ Յուաննի «Հովհաննես» անվան կրճատ ձևն է):
40. Չերքեզները ծագումով կովկասյան ժողովուրդ են: 19-րդ դարում նրանք բռնի ուժով ոռուական բանակի կողմից քչվեցին Հյուսիսային Կովկասից դեպի Օսմայան կայսրություն, որն աքսորյալներին ընդունեց որանք հաստոկ փախատականների (թուրք. տահաչիլ հավատքի աքսորյալներ): Սակայն օսմանյան կառավարությունը չկարողացավ հարկ եղած օգնությունը ցույց տալ աքսորյալ չերքեզ ժողովուրդին, և նրանցից շատերը սովոր ու համաճարակների զոր դարձան: Վերապրոդներին օսմանյան կառավարությունը նպատակադրված ձևով վերաբռնակեցրեց կայսրության ամբողջ տարածքում և օգտագործեց նրանց՝ չերքեզ տղամարդկանց մարզելով որպես կայսրությանը հյու-հնազանդ զինվորական վերակացուների: Վերջիններս դաժան միջոցներով չաշարում էին ոչ թուրք տեղական բնակչությանը, հատկապես բականյան և փոքրասիական քրիստոնյաններին: Ցեղասպանության որոշ պատմաբաններ չերքեզների արտաքսումն ու բռնի տեղահանումը դիտում են որպես երիտրությունը բնորոշ փոքրամասնությունների նկատմամբ վարած քաղաքականության հախատիք: Այսօր չերքեզների հետնորդներն ապրում են Մերձավոր Արևելքում՝ հատկապես Հորդանանում, Սիրիայում և Թուրքիայում:
41. Համաձայն քեմալական բանակի պաշտոնական մի հրամանագրի, որը փակցված էր ամենուրեք կամ ցրված էր ինքնաթիռներից, հայ և հոյն 18-45 տարեկան ուազմունակ տղամարդիկ հայտարարվել էին ուազմագերիներ: Խսկ հայերի և հոյների մնացած հատվածին ներկայացվել էր վերջնագիր, որը պարտադրում էր նրանց մինչև 1922-ի հոկտեմբերի 1-ը հեռանալ Զմյուռնիայից և նրա շրջակալիքից (Rouaux 1923: 29; Houserian 1971: 172):
42. Այս (հուն. αγία-սուրբ) Սոֆիայի մայր տաճարը բլուզանդական եկեղեցական ճարտարապետության ամենաչքեղ հուշարձանն է, որ կառուցվել է 532-537-ին Կոստանդնուպոլիսում: 557-ին երկրաշարժից ավերվել էր գմբեթը, իսկ 989-ին մեկ այլ երկրաշարժից

վնասվել էր հիմնական կառույցը: X դ. վերջին գմբեթը վերակառուցել է Անդի հրավիրված հայ արքունի ճարտարապետ Տրդատը: 1453-ին՝ օսմանների կողմից Կոստանդնուպոլիսի գրավումից հետո, Եկեղեցին ներքին վերակառուցումներից հետո մզկիթի վերածվեց: Ծենքը այսօր գործում է որպես թանգարան: Դարեր շարունակ հույնների համար Այս Սոֆիան եղել է Բյուզանդական կայսրության կորած փառքի, ինչպես նաև հույնների քաղաքական անզորության ու ճրանց նվաստացման խորհրդանշիչը: Այստեղից էլ բխում են թուրք խուժանի հեգենական ակնարկները:

43. Հայ մեծահարուստ Էլմասյան ընտանիքի շքեղ առանձնատունը մեկն էր հրդեհից հետո Զմյունիայի նավահանգստում կանգուն մնացած սակավաթիվ շենքերից: Նրա վրա ծածանվում էր ամերիկյան դրոշը, և միայն նավի համար տոմսեր ունեցողներն էին, որ իրավունք ունեին նախքան շղգենավ նստելը այդ շենքում և ամերիկյան պաշտպանության ներքո ապաստան գտնել (Housepian 1971: 173):
44. Պապիկիս օրագրության և Հուսեփյանի (Housepian 1971) աշխատության միջև համապատասխանությունների շնորհիվ ես ի վիճակի եղա վերականգնել մեր ընտանեկան՝ այդ օրինական օրեմի պատմությունը: Հուսեփյանի գրքից կարողացա, օրինակի համար, մանրամասն տեղեկություններ ստանալ այն մասին, թե ինչպիսի հանգամանքներում է հրականացել պապիկիս և իր ընտանիքի փախուստը «դժոխային» Զմյունիայից: Մասնավորապես տեղեկացա, թե վերջին պահին վճռական դեր է խաղացել մեթոդիստ Ասա Ջենինգսը (Asa Jennings)՝ Նյու-Յորք նահանգի հյուսիսից՝ Երիտասարդների քրիստոնեական միության (YMCA) Զմյունիայի մասնաճյուղ ուղարկված հոգևորականը, որի հերոսական ջանքերի շնորհիվ պապիկիս ընտանիքը հազարավոր ուրիշների հետ շղգենավ է նստել ու փրկվել: Ջենինգսը YMCA-ի վերջին Եերկայացուցիչն է եղել, որ դեռ մնացել էր Զմյունիայում՝ դառնալով քրիստոնեական փոքրամասնությունների ողբերգության ականատեսն ու վկան: Լսելով իր խղճի ձայնը՝ նա կարողացել է իրագործել այն, ինչ օտարերկրյա շատ կազմակերպություններ ու հիմնարկություններ չեն կարողացել կամ ավելի ճիշտ՝ չեն ցանկացել անել: Ինքնագլուխ կերպով և առանց իր կառավարությունից որևէ լիազորություն ունենալու նա բանակցել է հունական, ամերիկյան և թուրքական իշխանությունների մետ և 1922-ի սեպտեմբերի 24-ին, ամերիկյան ռազմանավի պաշտպանության Եերքո, 20 հունական փոխադրանավերով իրականացրել է 15.000 կանանց, երեխաների և տարեցների ապահով փոխադրումը Զմյունիայից Միտիլի (Housepian 1971: 178-186): Մեծ մարդասեր Ասա Ջենինգսի անունը ուկի տառերով գրված

պիտի մնա Զմյուռնիայի արյունոտ պատմության մեջ:

45. Խաչի տոնը (Խաչվերաց) Հայկական Առաքելական Եկեղեցու պատարագային տարվա 12 մեծ տոներից մեկն է և պատմականորեն հիշեցնում է 326-ին խաչը գտնելը Երուսաղեմում: Այդ տոնը համընկնում է 7-րդ դարի սկզբին հայերի՝ պարսիկներից ազատագրվելու օրվան:
46. Կարդալով պատմիկն օրագրում այս փոքրիկ տեղեկությունը մայրիկի՝ Սիրարիի պարմածքի մասին այդ համատարած խառնաշփոթության օրերին, եթե նա ընդամենը 11 տարեկան էր, իմ հիշողության մեջ արթնացավ հանգուցյալ մորս բնավորության գծերից կարևորագույնը՝ նրա անշեղելի նպատակասլացությունը և անկոտրում հաստատակամությունը:
47. Ամերիկացիները այդ ժամանակաշրջանում արտաքին հարաբերությունների հարցում վարում էին մեկուսացվելու քաղաքականություն: Նրանք որոշել էին չմիջամտել անդրատլանտյան գործերին և մասնավորապես Փոքր Ասիայի հայերի ու հույների ողբերգության հարցին: Գրականության մեջ ասվում է նաև, որ ամերիկացիները պրեելքի ժողովորդների հետ շփվելու փորձառություն չունեին և ապագապես ի վիճակի չեին դիրքորոշվել նախճիրների դեպքում (Walker 1990: 265):
48. Ստեփան Աշճյանը՝ Գրիգոր Աշճյանի որդին, Հուսեիլյանի գրքում նալիրդում է, որ թուրքերը սեպտեմբերի 24-ին հորը սպանել են Զմյուռնիայից փախստականներ տեղափոխող շոգենավից Մի քանի մղոն հեռավորության վրա (Housepian 1971: 209):
49. Հրդեմը, կողոպուտը, բռնաբարությունը և սպանությունները միայն Զմյուռնիային հատուկ չեն: Հայ և հույն համայնքներ ունեցող Փոքր Ասիայի յուրաքանչյուր քաղաքում ու գյուղում, որոնք վերագրավել էին թուրքական բանակի կողմից, նույն երկույթը կրկնվում էր. մանավանդ սևծովյա քաղաքներում և Կապատովկիայում, որտեղից փաստորեն հույն քրիստոնյաների ամբողջ բնակչությունը բնաշնչներ կամ գաղթի ճանապարհը բռնեց: Նույն տեղի ունեցավ նաև Զմյուռնիայի արքարձաններում և մոտակա քաղաքներում, այդ թվում՝ Ակ-Հիսարում: Այնտեղ 1922-ի սեպտեմբերին նախատակվեցին Խաչերյանների մեացած բոլոր տասը հարազատները: Ակ-Հիսարը դեռ 1895-ի հոկտեմբերին նախճիրի թատերաբեմն էր, որը բազմաթիվ հայերի սպանություններ տեղի ունեցան (Walker 1980: 158):
50. Քուրդ բանատեղծ Ֆայք Ալի Բեյը (Faik Ali Beg), որ 1915-ին ընդհանուր բռնագաղթի ժամանակ ծառայել է որպես Քյութաթիայի կառավարիչ, մրածարվել է իրականացնել իր կառավարության հրահանգները և «սպառնում էր ձերբակալել ու մահվան

դատապարտել որևէ մեկին, ով հայերի վրա ձեռք կբարձրացներ» (Beylerian 1983: 208): Սա, իհարկե, բացառիկ դեպք էր: Որպես օրենք՝ օսմանյան պաշտոնյաները, որոնք չէին համագործակցում իրենց կառավարության հետ, փոխարինվում էին երիտթուրքերի շարքերից բերված դաժան կամակատարներով: Կային նաև զանազան օրենքներ ու հրահանգներ, որոնք մահապատճի էին դատապարտում բոլոր մահմեդական քաղաքացիներին, որոնք պաշտպանում կամ թաքցնում էին հայերին:

51. 1915-ի օգոստոսի 2-ին՝ Պարտիզակի ամբողջ հայ ազգաբնակչությունը (կանայք, երեխաներ և ծերեր) բռնի տեղահանվեց և քշվեց դեպի Սիրիայի անապատները, մինչդեռ երիտթասարդ տղամարդիկ, հատկապես մտավորականները, տեղնուտեղը սպանվեցին (Մխալյան 1938, Տեր-Հակոբյան 1960): Շատ քերին է հաջողվել խոսափել բռնի տեղահանումից և տեղի խիզախ թուրքերի օգնությամբ տարիներով թաքնված մնալ հեռավոր վայրերում: Նրանց թվում էին Ղազարոսյանները, Կ. Խաչերյանի քրոջ՝ հինգ հոգուց բաղկացած ընտանիքը, որը մինչև 1919-ը թաքնված է մնացել Խզմիտի հահանգում և ապա կարողացել է ապաստանել հունական Միտիլլի կղզում:
52. Արքեպիսկոպոս Եղիշե Դուրյանը (1860-1930)⁶ արևմտահայ մեծ քանաստեղծ Պետրոս Դուրյանի եղբայրը, իր ժամանակի հայկական առաքելական ենեղեցու ամենաառաջավոր հոգկորականներից մեկն էր: Նա նաև բանաստեղծ էր, գրող և լրագրող: 20 տարեկան հասակից սասար տարի (1880-1890) ապրել է Պարտիզակում՝ բժիշկ Խաչերյանի ծննդավայրում, և այդ ժամանակ արդեն անոն շահել որպես հոգեենորական և ուսուցիչ, իսկ ավելի ուշ՝ որպես հայկական ազգային դպրոցի տնօրեն: Պարտիզակի կրթական համակարգում և մշակութային կյանքում նրա խոշոր ներդրումների շնորհիվ այդ տարիները պատմության մեջ են մտել որպես Պարտիզակի ՈՒԿԵԴԱՐԸ (Տեր-Հակոբյան 1960: 77-79): Իր կյանքի ընթացքում արքեպիսկոպոս Եղիշե Դուրյանը եղել է Զմյունիայի Առաջնորդը, ապա դարձել է Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի Աթոռների Պատրիարքը:

Նկարներ ու քարտեզներ



Կոստանդնուպոլիս 1899
Կարապետ Խաչերյանը՝ բժշկական համալսարանի ուսանող



Կ. Խաչերյանի ուսանողական նկարի ետևի կողմը (տե՛ս էջ 120)



Միտիլի 1922. Խաչերյանների ընտանիքը գաղթական:
Երկրորդ շարքում՝ ձախից աջ՝ բժիշկ Կարապետ Խաչերյան, տիկին
Էլիզա Խաչերյան, Վարդուհի (1,5 տ.), Խաչերես (13 տ.):
Առաջին շարքում՝ Միրարփի (11 տ.), Գրիգոր (9 տ.), Հովհաննես (8 տ.):



Սելանիկ 1934. Դ-ր Կ. Խաչերյանը իր
տիկնոց՝ Էլիզայի և զավակների՝
Վարդուհու ու Հովհաննեսի հետ



Սելանիկ 1925. Սիրարփի և
Խաչերես Խաչերյանները
Ֆրանսիա մեկնելուց առաջ



Մարտել 1926.
Սիրարփի Խաչերյանը



Փարիզ 1934.
Խաչերես և Գրիգոր Խաչերյանները



Անկանոն 1940. Կյուլանեմնեան Վարժարանի 1939-1940 շրջանավարտները ուսուցական և Վարչական կազմի մեջ:

Առաջին շարք. երկու աշակերտ բարերար Կյուլանի Կողմանկան ճաման հետո:
Երկրորդ շարք. ձախից աջ՝ 1. Ա. Բարադամյան (ուսուցիչ), 2. (Դ) Արդիոհային (հոյն տօնուեն), 3. (Խճամական, անունը անհանոր), 4. Հ. Միրզեմյան (ինմանակալ), 5. Դ.-Ի Կարպատն Խաչեմյան (ուսուցիչ), 6. Հ. Հ. Ալումբյան (ուսուցիչ), 7. Հ. Շիվանյան (ուսուցիչ), 8. Թ. Բոյաջյան (Բայ տօնուեն),
9. Ս. Պոտույան (ուսուցիչ):

Երրորդ շարք. ձախից աջ՝ 2. Օր. Յովանն Կողմանի (ուսուցուիթի), 3. Յ. Վիշապյան (ուսուցուիթի),
աջից ձախ՝ 1. Թ. Խասկինին (ուսուցիչ), 2. Խ. Խանջյան (տառչիչ), 3. Օր. Էլիահո Զարիֆի (ուսուցուիթի):



Փարիզ 1950. Խաչերտս ընտանիքը Արգեմոնինա կիուսարվելուց առաջ:
Երկրորդ շաբթ. ճակած աջ՝ Գրիգոր Խաչերտյան, Հարութի Խաչերտյան-Եղոյան, Տիգրան Կոտրեցան (Վարդուհին ամսակիցն),
Մարինե Ավետիսյան-Խաչերտյան (Խաչերտյան կիևն), Խաչերտյան և Հովհաննեսին Խաչերտյանները:
Առաջին շաբթ. ճակած աջ՝ Սոնյա (Խաչերտյան դուստրը), տիկին Էլիօնա Խաչերտյան, դուստրը,
Կոտրեցան (Վարդուհի որդին) և Տիգրանի որդին (Վարդուհի Կոտրեցան):



Բուենոս Այրես 1953. Տիկին Էլիզա Խաչերյանը



Բուենոս Այրես 1984. Դորա Սաքայանը իր քեռու՝
Հովհաննես Խաչերյանի հետ



Բուենոս Այրես 1984. ձախից աջ՝ Սիրվարդ (Հովհաննեսի կինը), Դորա
Սաքայան, Հովհաննես Խաչերյան, Լևակի Մարքովից (Դորայի ամուսինը),
Վարդուիսի Խաչերյան-Կլուրճյան



Միամի, Ֆլորիդա, 1992.
Ճախից աջ՝ Սիրվարդ (Հովհաննեսի կինը), Դորա Սաքայան,
Հովհաննես Խաչերյան



Բուենոս Այրես 1995.
Ճախից աջ՝ Վարդուիթի Խաչերյան-Կյուրճյան, Դորա Սաքայան,
Ելիզա (Հովհաննեսի դուստրը) և Հովհաննես Խաչերյաններ



Զմյուռնիա, Աղջկերի Սուրբ Հոգիսիմյան վարժարան



Զմյուռնիա, Տղաների Սուրբ Մեսրոպյան վարժարան



Ա. Ստեփանոս եկեղեցին
(գմբեթ և զանգակատուն)



Ա. Ստեփանոս եկեղեցու մուտքը



Արքեսպիսկոպոս Եղիշե Դուրյան



Արքեսպիսկոպոս Ղևոնդ Դուրյան



ԶՄՅՈՒՆԻԱ 1920. Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ Թիվանդանոց այցի եկած Հայաստանի պատվիրակությունը՝ Ազգային Թիվանդանոցի մի խումբ աշխատակիցների թետ: Աջ կողմի ամենամետևում թժիշկ Կ. Խաչերյան



ԶՄՅՈՒՆԻԱԻ Ազգային Թիվանդանոցի շքամուտքը



Զմյուտնիայի Բայ աղջիկների որբանոցը աշխատակազմի Բետ



Զմյուտնիայի Բայ տղաների որբանոցը աշխատակազմի Բետ



Զմյուռնիա, Կառավարական հրապարակը



Զմյուռնիա, Նավահանգստից մի տեսարան



Զմյուռնիա, Անցագրատուն (Passaport)



Զմյուռնիա, Սպորտային ակումբը (Sporting Club) և այլ շենքեր




Զմյուռնիա, Նավահանգստից մի տեսարան




Զմյուռնիա, Քարափից մի տեսարան



Օմյունիայի թատրոնը
(Théâtre de Smyrne)
Բրդեմից առաջ




Belfrey of Aya-Fotini



Զմյուռնիան բոցերի մեջ



Զմյուռնիայի թպտրոնը և այլ շենքեր Բրդեհից հետո




Զմյուռնիա 1922. Մարդիկ հրի, սրի ու ջրի միջն...




Մարդիկ սպասում են նավերին...



Փունթա, մարդիկ շտապում են շոգենավ նստել...



Զմյունիայի քարտեզը
ըստ Baedekerի ճանապարհորդական ուղեցույցի (1905).
Կենտրոնում՝ Հայկական թաղամաս «Հայնոց»



Փոքր Ասիա

**ԶՄՅՈՒՐՆԻԱՑԻ ՄՈՏ ԳՏԵՎՈՂ ՀՈՒՍԱԿԱՆ
ՀԻՆ ՔԱՂԱՔԱԿՐՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻՑ**



Եփեսոս. Աղրիանի տաճարը



Եփեսյան Արտեմիս



Եփեսոս. Կորնթյան խոյակ

ԲԺԻՇԿ ԿԱՐԱՊԵՏ ԽԱԶԵՐՅԱՆԻ ՕՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հրատարակված ու չհրատարակված կարծիքներ

Ինչպես նշում եմ ներածության մեջ (էջ 17), մեծ հորս՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի գոյության մասին տեղեկացա շատ ուշ։ Այն ձեռքս անցավ 1993-ին, և ես անմիջապես ձեռնամոլս եղա հայերենով բնագիրը հրատարակելու աշխատանքին։ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» վերնագրով գրքի առաջին՝ 1975-ի հայերեն հրատարակությունը, ի զարմանս շատերի, կանադահայ համայնքում բավականին անձկատ անցավ։ Զնայած դրան՝ դրանից անմիջապես հետո ես ձեռնարկեցի դրա անգլերեն թարգմանությունը և 1997-ին Մոնթելում հիմնելով «Արոդ» (Arod) հրատարակչությունը՝ լույս ընծայեցի «An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian, My Smyrna Ordeal in 1922» (թարգմ. Մի հայ բժիշկ Թուրքիայում։ Կարապետ Խաչերյան, «Զմյուռնիական արկածներս 1922-ին») վերնագրով գիրքը։ Այդ գիրքը անգլիախոս ընթերցողների շրջանում մեծ հաջողություն ունեցավ և համբավ բերեց Կ. Խաչերյանի օրագրին։ Արդյունքում հայերեն 1995 թ. հրատարակությունը շուտով սպառվեց, և 1997-ին անհրաժեշտ եղավ մի անգամ ևս հրատարակել հայերեն բնագիրը։ Ապա պահանջ առաջացավ գիրքը թարգմանել մի շաբթ այլ լեզուների։ Փրանսերեն, իսպաներեն, հունարեն, գերմաներեն, ռուսերեն և նոյնիսկ թուրքերեն։

Կարապետ Խաչերյանի օրագրի տարբեր լեզուներով հրատարակությունները փայլուն ընդունելություն գտան, որի հետևանքով սկսած 1997-ից աշխարհի չորս կողմից գիրքը ներկայացնելու հրավերներ ստացաւ։ Ընորհանդեսներ տեղի ունեցան Կանադայի ու Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում, ապա՝ Արգենտինայում, Հունաստանում, Կիպրոսում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլուր։ Գրքի ներկայացման երեկոների մեջ ամենից հիշարժանը

* Հրատարակչության «Արոդ» անունը «Դորա» անձնանկան շրջապատճեն է։ Dora → Arod:

մնաց անգլերեն տարրերակի շնորհանդեսը, որ տեղի ունեցավ ամբողջ Կանադայում բազմաթիվ գրախանութերից բաղկացած, “Chapters” անունը կրող հաստատության Մոնրեալ քաղաքի կենտրոնական մասնաճյուղում: Ուրքաթ օրը՝ 1997-ի հոկտեմբերի 3-ին՝ “Chapters-Montreal” կենտրոնական գրախանութիւն երկրորդ հարկում նոր գրքերի ներկայացմանը հատկացված սրահը լեփ-լեցուն էր: Գրական երեկոյին ներկա էին Մոնրեալի ոչ միայն հայ և հույն, այլև թուրք համայնքի տարրեր ներկայացուցիչները: Եկել էին Մոնրեալի հույն ու թուրք հյուպատոսները, հայ մշակութային և եկեղեցական կենտրոնների ներկայացուցիչներ, լրագրողներ, քաղաքի համալսարաններից, մանավանդ իմ պաշտոնավարած Մաք Գիլ (McGill) համալսարանից դասախոսներ, ուսանողներ և, անշուշտ, կանադացի այլ ընթերցաներներ: Քար լուսության մեջ 45 րոպե տևող ելույթու լսելոց հետո առաջինը խոսք վերցրին թուրք ներկաները, որոնք կազմակերպված կերպով և իրար հաշորդող գրգոր փոխերով փորձեցին գրական երեկոյին ընթացքը փոխել:

Առաջինը խոսեց մի թուրք հոգեբան: Նրա սադրիչ հարցերին պատասխանեցի նախ ես: Թուրք այցելուի դրույթն այն էր, որ Առաջին աշխարհամարտին և նրա հետևանքով զոհվել են ո՛չ միայն հայեր, այլև 2,5 միլիոն թուրքեր: Ես հիշեցրի թուրք հյուրին, որ այստեղ խոսքը 1915-ի աշխարհամարտում թուրք կամ այլազգի զոհերի մասին չէր, այլ այդ նոյն ժամանակաշրջանի նախորդ և հետագա տարիներին Թուրքիայի ամրող տարածքում ապրող հայերի թուրք կառավարության կողմից իրագործված նպատակադրության մնացնջման մասին էր: 1922-ի Զմյուռնիայի դեպքերի նպատակը ոչ այլ ինչ էր, եթե ոչ 1915-ի ցեղասպանությունից հետո Թուրքիայում մնացած հայ բնակչության մաքրագործումը: Դեռ ավելին, Թուրքիայի կառավարությունը Զմյուռնիայի աղետի ժամանակ Մուստաֆա Քեմալի ձեռքով ավարտեց ամրող քրիստոնյա, հայ ու հույն՝ իր իսկ քաղաքացիների վերացման ծրագիրը և իր երկրում համատարած թրքայնացման (պանթուրքիզմի) երազը իրականացրեց: Երեկոյի ընթացքում թուրք այցելուների հակածառությունները շարունակվեցին, և արդեն քաղաքական բնույթ ստացած բանավեճին մասնակցեցին նաև հույն հյուպատոս Դիմիտրիոս Յոաննուն և ուրիշ ներկաներ: Թուրք հոգեբանից հետո խոսեց Թուրքիայի հյուպատոս Ալի Արգունը, որը նախ՝ ինձ ուղղեց անթիվ

հարցեր, որոնց ինձանից բացի ուրիշներ ևս պատասխանեցին: Մթնոլորտը շիկացավ, և ես ստիպված եղա կարգի հրավիրել պարոն հյուպատոսին՝ հիշեցնելով նրան, որ սա գրական երեկո է և ո՞չ քաղաքական հավաք: Իսկ երբ նա բողոքեց՝ ասելով, որ ես այս գրքով ներկայանում եմ որպես քաղաքական եռանդուն գործիչ, ես հարց ուղղեցի ներկաներից մի խումբ ուսանողների: «Կարո՞ղ եք պարոնին ասել, թե ես ով եմ»: «Գերմաներենի մեր դասախոսը», — գոչեցին նրանք միաբերան: Հաջորդ խոսողը մի թուրք տիկին էր՝ Մոնթեալի Concordia համալսարանի մի դասախոս, որն անտեղի հարցերով փորձեց մեզ նույնանուն նյութից շեղել և որին դիպուկ Ակատողություններով լուեցրեց հույն լրագրող տիկին Դրիս Կանեան: Թուրք ընդդիմախոսները պարտվեցին, սակայն այնքանով հաջողություն ունեցան, որ իրենց ելույթներով խլեցին շնորհանդեսի համար մեզ հատկացված երկու ժամկան մեջ մասը՝ հազիվ ժամանակ թողնելով գրքի քննարկման, մտքերի փոխանակման և գրքերի վաճառքի ու մակագրությունների համար:

Մի քանի օր անց ես ստացա համակ Ontario-ում գործող Chapters հաստատության կենտրոնական գրասենյակից: Իր համակում Chapters-ի հախագահ պարոն Lawrence N. Stevenson-ը, անդրադառնալով շնորհանդեսի ժամանակ որոշ մարդկանց կողմից ինձ հարուցված դժվարություններին, շնորհակալություն էր հայտնում ինձ, որ ի վիճակի եմ եղել հսկողության տակ պահել երեկույթի ընթացքը՝ զայելով նրանց, ովքեր փորձել են շնորհանդեսը վերածել քաղաքական ասուլիսի:

“Chapters” գրախանություն տեղի ունեցած միջադեպը արձագանք գտավ ամենուր և հատկապես Կանադայի հունական և հայկական մամուլում: Արդյունքը եղավ այն, որ Կ. Խաչերյանի օրագրի նկատմամբ հետաքրքրությունը է՛լ ավելի մեծացավ: Ստորև բերվում են հրապարակված ու չհրապարակված կարծիքներից մի քանիք՝ նշված շնորհանդեսի, ինչպես նաև օրագրի՝ տարբեր լեզուներով լույս տեսած հրատարակությունների մասին: Դրանք գրախոսականներ և կանոնավոր կամ էլեկտրոնային փոստով առաքված համականեր են, որոնք այստեղ թարգմանել ու բերել են ամբողջությամբ կամ հատվածներով:



Հոկտ. 4, 1997

Երեկ ներկա գտնվեցի պրոֆեսոր Դ. Սաքայանի՝ An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian, My Smyrna Ordeal in 1922 (թարգմ. «Մի հայ բժիշկ Թուրքիայում, Կարապէտ Խաչերյան, Զմյուռնիական արկածները 1922-ին») վերնագիրը կրող գրքի շնորհանդեսին: Թեև ուրախացա՞ նկատելով հույն և թուրք հյուպատունների ներկայությունը գրախանութիւնի լեկի-լեցուն դահլիճում, բայց և մեծ հիմարակափություն ապրեցի տեսնելով թուրք հյուպատուի ուղղակի թշնամական ու կոպիտ հարձակումները հեղինակի, ինչպես նաև հայ ու հույն մյուս ներկաների վրա: Դժգոհություն հայտնելով, որ հեղինակն օգտագործել է «ցեղասպանություն» բառը, նա փաստորեն պահանջեց տիկ: Սաքայանից բացատրել, թե ցեղասպանության վեց չափանիշներից ո՞ր մեկն է, որ կիրառելի է Զմյուռնիայի աղետի նկատմամբ: Տարօրինակ է, որ դիվանագետը նման հարցեր է ուղղում լեզվաբան պրոֆեսորին, որը պարզապես թարգմանել ու հրատարակել է իր մեծ հոր օրագիրը: Չլինելով ո՞չ միջազգային իրավաբան, ո՞չ էլ բարոյախոս, պրոֆեսոր Սաքայանը ներկայացրել է դեպքերը այնպես, ինչպես նրանք գրված են եղել իր մեծ հոր օրագրում անմիջապես Զմյուռնիայի ջարդերից հետո: Ակներև է, որ թուրք դիվանագետի նմանօրինակ վրդովմունքի հիմքում ընկած է անսահման մեղքի կամ ամորի զգացումը, հատկապես այն կապակցությամբ, որ Թուրքիայի կառավարությունը պատմական այդ բոլոր իրադարձություններին պատշաճ ձևով չի անդրադարձել:

Ին վերաբերում է թուրք հյուպատուի պահանջած բնորոշումներին՝ հայերի նկատմամբ կատարված ոտնձգությունների կապակցությամբ, ապա դրանք, անշուշտ, պետք է քննարկվեն միջազգային իրավունքին և մարդկային իրավունքներին նվիրված համապատասխան հավաքներում:

Հարի Տիգրանյան
Իրավաբան, Մոնթեալ

(Էլեկտրոնային նամակ՝ ուղղված ՀԱՅԱՍՏԱՆ Էլեկտրոնային ցանցի ընթերցողներին. թարգմանությունը՝ անգլերենից)



Հոկտ. 6, 1997

«.... Այդ թուրքերը չեն ունենա այդպիսի ամբարտավան և հանդուգն կեցվածք, եթե արևմտյան պետությունները և հատկապես Միացյալ Նահանգները պարզողով կերպով դիրքորոշվեին և հանդես գային Հայոց ցեղասպանության հստակ ու անվերապահ ճանաչմամբ, ինչպես նաև բուն հանցագործների և մանավանդ թուրքական ներկա կառավարության անդամների դատապարտմամբ, այն կառավարության, որը միջոց չի խնայում կազմակերպելու ու ֆինանսավորելու փաստերը ժխտելու ու պատմությունը ինեղաթյուրելու արշավները»:

Բերնհարդ Պիշաքճյան

Prof. Bernhard Bichakjian

Dept. of French, University of Nijmegen, Holland

(հատված Էլեկտրոնային նամակից. թարգմանությունը՝ անգլերենից)



**ԿԱՆԱԴԱՅԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ
հոկտեմբեր 9, 1997**

**ՔՎԵԲԵՔԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ
Հաղորդագրություն**

ՔՎԵԲԵՔԻ ՀՈՒՆԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԸ կոչ է անում մեր համայնքի ծագումով հույն բնակչությանը ուշի-ուշով հնտևելու, որպեսզի մեր ազգի համար կարևոր նշանակություն ունեցող թեմաները շարունակեն մնալ մեր ուշադրության կենտրոնում: Այդ ուղղությամբ աշխատանքները կարևորվում են մանավանդ ներկա պայմաններում, երբ Թուրքիան շանք չի խնայում ինեղաթյուրելու իրականությունը, շարդարարի իր դերը քողարկելու և հանդես գալու գործի դերում:

Լոնդոնի Observer-ի թուրքերի հակահունական գրգոհչ հրատարակությունները, ինչպես օրինակ, այն մասին, թե իբր հույնները ապաստան են տվել քուրդ ահաբեկիշներին, շարունակվեցին Մոն-

րեալում՝ թուրք գործակալների վրուվեցուցիչ ելույթներով «Մի հայ բժիշկ Զմյունիայում» գրքի շնորհանդեսի ժամանակ:

Ծագումով հայ հեղինակի՝ Դորա Սաքայանի այս գիրքը նվիրված է վերջինիս մեծ հոր՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրին, որը նկարագրում է Զմյունիայի ողբերգական դեպքերը և 30 հազար հույնների ու հայերի նահատակությունը:

Քվերեքի կոնգրեսը ողջունում է մեր հյուպատոս պրճ. Յովաննուի միջամտությունը, որն ստիպեց թուրք գործակալներին նահանջելու պատմությունը աղավաղելու իրենց դիրքերից:

Քվերեքի կոնգրեսը կոչ է անում համալսարանականներին ու ամրող հոյւն համայնքին միշտ պատրաստ լինել կամխելու թուրք գործակալների նմանօրինակ փորձերը:

Բավական է, ինչքան մեր ներքին անհամաձայնությունները մեզ շեղեցին մեր գոյատևման ազգասիրական նպատակներից:

Եկե՛ք բոլոր համախմբենք մեր ուժերը, և վստահ եղեք, որ Քվերեքի կոնգրեսը պայքարելու է առաջին շարքերում, ինչպես միշտ, ձեզ հետ միասին, հանուն հայրենիքի պաշտպանության:

Դիմիտրիոս Վելոնաս,

Քվերեքի հունական կոնգրեսի նախագահ

(թարգմանությունը՝ հունարենից)



Հոկտ. 7, 1997

Պրոֆեսոր Սաքայան,

Ներկա եմ եղել անցյալ ուրբաթ օրվա Զեր գեկուցմանը: Ապա մեկ շնչով կարդացել եմ Զեր գիրքը և դեռևս դրա տպավորության տակ եմ: Պարտք եմ համարում Զեզ շնորհակալություն հայտնել:

Ներողամիտ եղեք, որ գերմաններնի իմ գիտելիքների մեծ բացերի պատճառով դժվարանում կամ ավելի ճիշտ վախենում եմ արտահայտվել գերմաններենով: Ուստի ստիպված եմ այս տողերը գրել իմ մայրենի ֆրանսերենով: Որպես կին և ընդհանրապես որպես

Մարդ՝ ես շատ լավ հասկացա այն ամենը, ինչ անցյալ ուրբաթ քացատրեցիք Աերկաներին: Մի քանի խոսք էլ բավական էր՝ ըմբռնելու համար Զեր ընտանիքի ու Զեր ժողովրդի հանճեա իրագործված ոճիրների ու անարդարությունների ողջ ուժգնությունը:

Զեր մեծ հոր օրագրի կապակցությամբ Զեր կատարած գործը, այն թարգմանելը, հրատարակելն ու այդպիսի մեծ ու բազմազգ լսարանի առաջ Աերկայացնելը ինձ խորապես հուզեց: Երանի՛ թե ինձ էլ մի օր վիճակվեր իմ ընտանիքի ու ժողովրդի համար կատարել Զեր գործին հավասար մի արարք, որը իմ կյանքին իմաստ տար:

Ամբողջ սրտով շնորհակալ եմ:

Միրիամ Առագուստին

Myriam Augustin, McGill համալսարանի գերմանական բաժնի Հրդ կուրսի ուսանողութիւն

(Զեռագիր նամակ. թարգմանությունը՝ Փրանսերենից)



THE GAZETTE (օրաթերթ)

Montreal, Saturday, 4 October 1997 (section "Books")

Մեծարանք մեծ հայրիկին՝ գիրքը հավերժության հանձնելու
միտումով...

Զարդերի ականատեսի օրագիրը տպագրված

Elain Kalman Naves

Զմյուռնիան՝ Տրոյայի շափ Բին ծովափնյա քաղաքը, հազարամյակներով եղել է Փոքր Ասիայի գլխավոր կենտրոններից մեկը: Այսօր՝ իր հզմիր անունով, այն պատկանում է Թուրքիային, սակայն հինգհազարամյա իր պատմության ընթացքում նրա տերերը եղել են հույները, մակեդոնացիները և հոռոմեացիները: Հատ ավանդության՝ նրա արվարձաններում ծնվել է Հոմերոսը. այն եղել է նաև քրիստոնության ամենավաղ օրդաններից մեկը:

Ավելի նոր ժամանակաշրջանում քաղաքի անունը մթագնվել է հսկայական շաիների հասնող աննախընթաց աղեսի պատճառով: Իր

գրքում Դորա Սաքայանը ներկայացնում է ականատեսի պատմությունը 75 տարի առաջ տեղի ունեցած աղետի մասին, որի ընթացքում թուրք ազգայնական ուժերի կողմից սրբ ու հրի ենթարկվեցին հայ և հույն 30 հազար քրիստոնյաներ, այդ թվում՝ Խաչերյան ընտանիքի տասը անդամ:

Սաքայանը, որ McGill համալսարանի գերմանական ուսումնասիրությունների պրոֆեսոր է, ծնվել է Զմյուռնիայի աղետից ինը տարի հետո: Այս վերջին չորս տարում նա ջանափրությամբ աշխատել է իր պատճի օրագրի վրա, որը՝ որպես Զմյուռնիայի դեպքերի ականատես, դրանք գրի է առել հայկական գեղեցիկ տառերով: Վերնագրված «Մի հայ բժիշկ Թուրքիայում» և ենթավերնագրված «Կարապետ Խաչերյան. Զմյուռնիական արկածներս 1922-ին» այս գիրքը վերապրոդի գրականության և ընտանեկան պատմության փայլուն նմուշ է՝ մասնավորեցված գիտական ծանոթագրություններով, տոհմածառերով, քարտեզներով ու նկարներով:

Դորա Սաքայանը ունի առաքելության ուժեղ զգացում: «Օրագիրն սկսեցի կարդալ արցունքների հորձանքի միջով ու սրտի կակիծով, երբ տեղեկացա պապիկիս, մորս և նրա ընտանիքի տառապանքների մասին», — գրում է նա իր գրքի ներածության մեջ:

Ո՞չ էլ ի վիճակի եր զավել իր արցունքները, երբ դիմացս նատած՝ քաղաքի կենտրոնում գտնվող իր բնակարանի՝ ծաղիկներով լի պատշգամբում նա սիրաբուխ խոսքերով նկարագրում էր իր աշխատանքը օրագրի վրա: Կարդալով փաստաթուղթը, որն իր պապիկը խնամքով պատրաստել էր 1922-ի սեպտեմբերին՝ իր ընտանիքի հետ Հունաստանում ապաստանելուց հետո, Սաքայանը անմիջապես հասկացել է, որ օրագիրը շատ ավելի արժեքավոր է պատմական իր նշանակությամբ, քան պարզապես որպես ընտանեկան մի մասունք միայն: Հիմնելով իր «Արոտ Բուքս» (Arord Books) հրատարակչությունը՝ Սաքայանը անմիջապես լույս է ընծայել հայերն բնագիրը և ապա այն անգերենի թարգմանելով և ծանոթագրություններ ավելացնելով՝ վերջնա հրատարակել է նաև ավելի ընդարձակ անգերեն տարբերակը:

Ներողություն խնդրելով իր գերիուզվածության համար՝ Սաքայանը, սրբելով աշքերը բացատրեց, որ դա այն հասուկ դառնությունն էր, որ ժառանգել են 1895-ից մինչև 1923-ը տեղի ունեցած թուրքական ջարդերը վերապրած հայերի բոլոր հետնորդները: «Մեզանից յուրաքանչյուրը կրում է այդ բեռը.... Մայրս այդ հողի

վրա գրեթե ամբողջ իր կյանքում հիվանդ էր: Մինչև իր վերջին օրերը նա հիշում էր իր տատիկներին, իր քեռուն և հորեղբորը.... Ամեն անգամ, երբ նա լսում կամ կարդում էր, որ թուրքերը ժխտում են կատարվածը, նա ասում էր. —Ռ' որ գնացին իմ երկու տատիկները, իմ քեռին ու հորեղբայրը, իրենց զավակները... Ռ' սպանեց նրանց, եթե դա երբեք տեղի չի ունեցել»:

Զմյուռնիայի շարդերը տեղի ունեցան 1915-ի մեծ ողբերգությունից յոթ տարի անց, երբ մեկուկես միլիոնից ավելի հայեր կոտորվեցին կամ սովամահ եղան, մինչ վտարվում էին Թուրքիայից: Այդ երկույթը այժմ դիտվում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Ասում են, որ աշխարհի լուսավորությունն ու անտարքերությունը ի դեմս այս ոճագործությունների խրախուսել է Ադոլֆ Հիտլերին, երբ վերջինս ծրագրում էր հրեաների հարցի վերջնական լուծումը:

Սաքայանի մեծ հայրը պետք է որ ամբողջ կյանքում կրած լիներ վերապրողի խնդի խայթը: Նրան հաջողվել էր փախչել Զմյուռնիայից իր կնոջ և հինգ երեխաների հետ, մինչ ընտանիքի մնացած անդամները այդ բախտին չէին արժանացել: «Այդ ընտանիքից 10 հոգի մնացել էին հետևում (Զմյուռնիայից ոչ հեռո՞ւ՝ Ակ-Հիսարում) և բոլորը նահատակվել էին: Պապիկս մայրը, եղբայրը և նրա ընտանիքը: Տատիկս մայրը, եղբայրը և վերջինիս ընտանիքը: Տարը հոգի»:

Սաքայանը բացատրում է, թե ինչու է ընդգրկել այդքան մեծ թվով ընտանեկան, ինչպես նաև Զմյուռնիայի հայկական համայնքից նկարներ. նրա միտումն է հակազդել թուրքերի մշտական հերքումներին: «Նրանք երբեք չեն ուզում ընդունել, թե ինչ արեցին մեր ժողովրդին: Եթե ունենայինք այնպիսի հակառակորդ, որ գոնեն ընդուներ իր նախնիների կատարած ոճիրը մեր ժողովրդի հանդեպ և կամ փորձեր հաստուցում տալ, թեև նման փորձն էլ շատ բան չէր փոխի, այդքան դժվար չէր լինի տանել այս բեռը: Նկարները դրեցի գործի մեջ՝ աշխարհին ցույց տալու համար, որ սա իրական պատմություն է, մի ընտանիքի իրական պատմությունը: Ահա այստեղ ենք: Դեռ կանք:»

Ոչ միայն կանք, բայց և բարգավաճում ենք: Զէ՞ որ Սաքայանի պատմությունը շատ տեսակետներից նաև արտակարգ հաջողության պատմություն է: «Ամեն հայ կարող է ձեզ պատմել իր կյանքի հա-

տուկ պատմությունը», — ասում է նա ժափալով, մինչ մատուցում է սուրճ և ընկույզով լցոնած հայկական կարկանդակ:

Ծնվել է 1931-ին Հունաստանում՝ Սելանիկ քաղաքում, որտեղ սկսել է ստանալ գերմանական կրթություն, որը շարունակել է Վիեննայում, ուր ընտանիքը տեղափոխվել է, երբ ինքը 12 տարեկան էր: 1946-ին ընտանիքը ներգաղթել է Հայաստան, որն այն ժամանակ Խորհրդային Միության մաս էր կազմում: (Չեմ կարող ասել «վերադարձա» Հայաստան, նույնիսկ ծնողներս չեին կարողանա ասել «վերադարձանք» Հայաստան, քանի որ նրանք ծնվել են Թուրքիայում:) Նա ստացել է իր գիտական աստիճանը Մուկվայում՝ Լոմոնոսովի համալսարանում, և վերադառնալով Հայաստան, դասախոսել է Երևանի պետական համալսարանում 20 տարի, որից 10 տարին՝ որպես օտար լեզուների ամբիոնի վարիչ:

... 1975-ից նա դասախոսում է Մոնթենալի McGill համալսարանում որպես գերմանական բաժանմունքի պրոֆեսոր: Գրել է գիտական բազմաթիվ գրքեր, բայց ոչինչ իրեն այնպիսի գոհունակություն չի պատճենել, ինչպես այս գիրքը: Նա սրտանց ծիծառում է, երբ ասում է. «Այս գիրքն իմ մտավոր աշխատանքի գագաթնակետն է կարծես»: Հետո նա կրկին լրջանում է: «Աշխատում էի գիշերները կամ դասերից ազատ ժամերին ... և երբ տպում էի սողերը պապիկին ձեռագրից, վերապրում այդ ահավոր պատմությունը, մտածում էի, թե ինչպես կարող էր մեր ազգը թույլ տալ, որ իրեն այդպես հալածեն ու խոշտանգեն, և ինչպես կարող էր մի ուրիշ ազգ անպատիծ մնալ ցեղասպանություն իրագործելուց հետո: Ինչպե՞ս կարողացանք այն քշերս, որ ողջ մնացինք, այդ բոլորից հետո շարունակել մեր գոյությունը: Սա հրաշք է»:

Նրա գրքի հզորությունը զապվածությունն ու պարզությունն է: Ինչպես վերապրողների բոլոր վկայությունները, գիրքը մարմնավորում է հազարավոր շգրված պատմություններ: Հարություն տալով դու ինչերյանի օրագրին՝ Սաքայանը ոչ միայն պատկերում է տանջանքի ու կորսորդի, պայքարի և վերածննդի մի ամբողջ աշխարհ: Նա նաև սիրո տուրք է հատուցում իր պաշտելի պապիկին և իր ժողովորդին:

(թարգմանությունը՝ անգլերենից)



ВНМА (Վիմա - Քայլ) (Խունական շաբաթաթերթ)
Ուրբաթ, 10 հոկտեմբեր 1997

**Դորա Սաքայանի «Մի հայ բժիշկ Թուրքիայում» գրքի
շնորհանդեսը**

Լրագրող՝ Իրին Կանեա (Իօնյա Կանέա)

Անցյալ ուրբաթ, հոկտեմբերի 3-ին, գտնվում էինք CHAPTERS գրախանութում, St. Catherine փողոցում: Քաղաքի սրբում թուրքերը մեզ սպասում էին: Մի հաճելի երեկո էր, և ոչ ոք չէր կարող կան-խատեսել այն վրդովեցուցիչ պատահարը, որը հաջորդեց Դորա Սաքայանի գրքի ներկայացմանն ու քննարկմանը:

Հավաքվել էին հարյուրից ավելի գրասեր՝ ծագումով հայ, հույն և այլազգի մոնթեալցիներ: Մեր մեջ էին նաև տասը ինքնակոչ թուրք քարոզիչներ, որ ջանում էին խանգարել մեզ, երբ հեղինակը մեզ իր գրքից հատվածներ էր ընթերցում, և երբ մենք վերապրում էինք մեր հուշերի դառնությունը, բայց և քաղցրությունը: (...)

Հազիվ էր պրոֆ. Սաքայանը վերջացրել ընթերցումը, անմի-ջապես խոսք վերցրեց մի ոմն թուրք, սկզբից ևեթ հայտարարելով, որ հոգեբույժ է: Անտեղի հարցերով նա ջանաց խափանել երեկոն՝ ներկաների ուշադրությունը բուն հյութից շեղելով:

Վերջինն իր պատասխանն ստացավ ո՞չ միայն գեկուցողից, այլև Հունատանի ներկա գտնվող հյուպատոս պրն Դիմիտրիոս Յոան-նուի կողմից: Սակայն իսկույն ուրիշ թուրքեր մեջ ընկան՝ անհամար հարցերով հարձակելով գեկուցողի ու մյուս ներկաների վրա:

Մտածեցի ինքս ինձ. ինչպիսի՞ տարրերություն: Մի քանի ամիս առաջ մի թուրք հեղինակ իր գիրքն էր ներկայացմանում քաղաքին St. Laurent փողոցի գրախանութերից մեկում: Ո՞վ գնաց այնտեղ նրան խանգարելու: Ինչպես հույնները, այնպես էլ հայերը, հեռու մնացին, թեև կարող էին գնալ, բայց չուզեցին միջամտել: Նրանք ցույց տվեցին արժանավայել կեցվածք:

Իսկ մեր «հյուրերը» ո՞չ մեր ապրած երկիրն են հարգում, ո՞չ էլ հեղինակին տրամադրված ժամանակն ու վայրը: Բայց ամենից քիչ նրանք հարգում են իրենց համամարդկանց: Խոսում է հոգեբույժը՝

վկայակոչելով թժշկական իր վկայականը, իսկ ինձ անձնապես սպառնում է հարվածել: Ի՞նչո՞ւ: Որովհետև Ակարահանում էի նրան: Կարծես ես էի այն մարդը, որ գնացել էր իրենց մոտ խանգարելու, և ո՞չ թե նրանք, որ պարտադրեցին մեզ իրենց Աերկայությունը: Թույլ չտվեց, որ աշխատանքս կատարենմ՝ ասելով, որ ես իրեն խոսելիս խանգարում եմ, մինչդեռ միաժամանակ ինքն էր խանգարում պաշտոնական բանախոսին: Ապա նրան «հաջողվեց» կովի բռնվել Աերկաներից մի քանիսի հետ: Կարելի է պատկերացնել, որեմն, թե ինչպիսի «գիտնականի» հետ էր մեր գործը:

Երկուշարթի երեկոյան կրկին քաղաքի կենտրոնում ենք: -Այս անգամ հայկական կոնյակ խմելով զրուցում ենք հեղինակի հետ նրա բնակարանում: —

Ի.Ա. — Սիրելի՛ տիկին Սաքայան, ի՞նչը խթան հանդիսացավ, որ դուք ձեռնարկեիք այս օրագրի հրատարակումը:

Դ.Ա. — Հինգ տարի առաջ քեռուս հետ հանդիպեցի Ֆլորիդայում: Մի խոսակցության ընթացքում քեռիս ինձ հանճարծակի քերեց՝ հայտնելով մեծ հորս՝ թժշկ Կարապետ Խաչերյանի օրագրի մասին: Խնդրեցի քեռուցս օրագրի պատճենը, որին սպասեցի անձկությամբ: Երբ հետագայում այն ձեռքս անցավ, արցունքներս թույլ չէին տալիս կարդալ մեծ հորս ձեռքով գրված տողերը Ժամանակ չունեի, համալսարանում խիստ գրաղված էի, սակայն կարծես մեծ հորս հոգին էր, որ կեսագիշերից հետո էլ ինձ արթուն էր պահում, և մենք ասես կրկին, այս անգամ միասին, գրում էինք օրագիրը ...

Ի.Ա. — Դժվարություն ունեցա՞ք կարդալու Ձեր մեծ հոր հայերենը:

Դ.Ա. — Ունեցա որոշ դժվարություններ թուրքական մի քանի արտահայտությունների կամ անունների կապակցությամբ: Սակայն մնացածը շատ ավելի դյուրիհն էր: Մինչև իր կյանքի վերջը մեծ հորս հետ պահպանել եմ հոգեկան կապս՝ նրա հետ հայերենով թղթակցելով: Այսօր էլ, երբ նրան շատ եմ կարոտում, հաճախ կարդում եմ նրա համակները: Այնպէս որ, նրա ձեռագիրը ինձ քաշածանոր էր:

Ի.Ա. — Ի՞նչը է, որ Ձեզ ամենից շատ տպավորեց, երբ կարդացիք Ձեր մեծ հոր առաջին էջերը:

Դ.Ա. — Երբ կարդաք նրա օրագրի առաջին էջերը, պիտի տեսնեք, որ նա թվարկում է մարդկանց անունները, այն մարդկանց,

որ մճացել են հետևում և ճահատակվել՝ մայրերի, եղբայրների, մոտիկ ազգականների անունները Կարծես ոեքվիեմ լինի, կարծես նա հոգեհանգիստ է անում իր սիրելի հանգուցյալների համար և դրանով իր սեփական հոգուն էլ է հանգիստ տալիս:

Ասում է քիչ, բայց մեզ շատ բան է հասկացնում: Հարկ համարեցի այն նախ հրատարակել հայերենով, ասես որպես մեծ հորս նվիրված հուշարձան: Սակայն նրա պատգամը անհրաժեշտ էր տարածել ավելի լայնորեն, ավելի շատ մարդկանց մատչելի դարձնել: Ուստի և ծրագրեցի օրագրի տարբեր լեզուների թարգմանությունը: Առաջինը այսքան մեծ աղմուկ հանած անգլերեն տարբերակն է:

Ի.Կ. – Ի՞նչ անձնական հիշողություններ ունեք Ձեր մեծ հոր մասին:

Դ.Ա. – Բազմաթիվ, բայց այն քիչն էլ, որ գրում եմ գրքի վերջաբանում, գաղափար է տալիս ընթերցողին այն դերի մասին, որ մեծ հայրս խաղացել է իմ ձևավորման հարցում:

Ի.Կ. – Ձեր հրատարակած գիրքը պատմականորեն վերաբերում է նաև հույն ժողովրդին: Պահանջ գգու՞մ եք այդ գիրքը հանձնելու նաև հույն ընթերցողին:

Դ.Ա. – Անպայման, այն էլ շատ շուտով լույս կտեսնի հունարեն տարբերակը: Հույն երիտասարդ սերունդը պետք է ճանաչի Զմյուն-նիայի աղետի պատմությունը, իրենց նախնիների դառը փորձությունները, մանավանդ նման հավաստի աղբյուրից:

Ի.Կ. – Իսկ ի՞նչ կասեք մի քանի օր առաջ թուրք «հյուրերի» վարքագծի մասին CHAPTERS գրախանություն:

Դ.Ա. – Շատ բան չկա ասելու: Նրանց վարմունքը սպասելի էր և մի անգամ ևս հաստատում է թիջկ Խաչերյանի օրագրի կարևորությունը: Ձէ՞ որ ի դեմս նրա արժանահավատ վկայության՝ հօդս են ցնդում թուրքերի՝ ցեղասպանությունը ժխտելու և պատմությունը վերանայելու ջանքերը: Ժող կարդան ու հարց տան. ինպե՞ս կարող են հայերի «առասպելները» այսքան իրական, այսքան փաստացի լինել:

(Թարգմանությունը՝ Բունարենից)



**Մոնթեալի «Բուրաստան» ամսագիր
օգոստոս-հոկտեմբեր-1997**

**Օրագիր Զմյուռնիայի Աղետի
հեղինակ՝ Նուրինան Ռևոլյույան**

“An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian: My Smyrna Ordeal in 1922.”

Dora Sakayan, Montreal: Arod Books, 1997

Երբ Մեծ Եղեռնի մասին է խոսվում, պատմաբաններն ու ուսումնակիրները հակված են կենտրոնանալ 1915 թվականի վրա, որն արդար Եղեռնի սկզբն է համարվում, բայց ո՞չ վախճանը: Զարդարարությունը շարունակվեց դեռ տարիներով, նույնիսկ քեմալական իշխանության ներքո, Անատոլիայի թե՛ արևելյան և թե՛ արևմտյան ճակատներում, աղետներ, որոնց մասին քիչ է խոսվում: Իզմիրի 1922-ի աղետը, ահա՛, սրանցից մեկն է, որին նվիրված է վերոհիշյալ գիրքը և որի հրատարակությունը գուգադիանց աղետի 75-ամյակին:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ 1919-ին գումարված Վերսալի Վեհաժողովը որոշեց անդամատել Օսմանյան Կայսրությունը, որ պարտված կողմ էր: Մեծ պետություններն իրենք իրենց հատկացված տարածքների կողքին արտոնեցին նաև Հունաստանին, որ գրավի հզմիրն ու հարակից լայնատարած հողամասները այն հիման վրա, թե նրանք պատմականորեն եղել են հունապատկան: 1922-ին, սակայն, Սիրիա Անատոլիայում Մուստաֆա Քեմալի կազմած ազգային բանակը արշավեց դեպի արևմուտք: Սաքարիայի վճռական ճակատամարտի ժամանակ հունական զորքը պարտվեց, և թուրքերը անարգել խուժեցին մինչև Եգեականի ափերը, իրենց ճամփին կոտորելով ամրող հայ և հույն բնակչությանը: Մեծագույն կոտորածը տեղի ունեցավ Իզմիրի մեջ, ուր թուրքերը, ավելի քան 30 հազար քրիստոնյա ջարդելուց հետո, քաղաքը հրդեհի տվեցին: Հազարավոր մարդիկ թակարդվեցին կրակի ու ծովի միջն, օրհնական տառապանքի մեջ, մինչ մեծ պետությունների մարտանավերը՝ խարսխած բաց ծովում, դիտողդ էին այս քստմնելի եղեռնից:

Ներկայացված գիրքը օրագրությունն է բժիշկ Կարապետ Խաչե-

րյանի, որ ապրել է այդ օրերի արհավիրքը և վերջապես կարողացել է իր ընտանիքի հետ ապաստանել Հունաստանում:

(....) Գորքի շնորհանդեսը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-ին, Մոնթեալի Առաջնորդարանի դահիճի մեջ, Հայ Մշակույթի շրջանակի կազմակերպությամբ: Զարմանալի գուգադիպությամբ սա այն թվականն է, որ ժողորդիայում ցայսօր տոնվում է որպես հայութանակի օր, երբ, ինչպես նրանք են ասուն, «հույներին ծովը թափեցինք»:

Նախքան շնորհանդեսը եկեղեցվոյ մեջ կայացավ հոգեհանձրության կարճ ու տպագորիչ մի արարողություն՝ ի հիշատակ Խզմիրի աղետի նահատակների: Տ. Հովհանն Արք. Տերտերյանը իր ուղերձի մեջ շեշտեց: «Մեր ինքնությունը անաղարտ պահելու համար պատմության հետ մեր կապը անխզելի պետք է մնա»:

Որպես ներածական՝ Ն. Պիգունյանը հակիրճ կերպով անդրադապ այն պատմական դեպքերին, որոնք հանգեցրին Խզմիրի աղետին: Ապա օրվա հրավիրյալ բանախոսը՝ Մոնթեալի Կոնկորդիա համալսարանի պատմության բաժանմունքից ցեղասպանության մասնագետ պրոֆ. Ֆրանկ Չալք (Frank Chalk) իր խոսքում ընդգծեց ներկայացված գործի պատմական արժեքը՝ որպես ականատեսի վկայություն, որը մասնագիտական ճշգրտությամբ նկարագրում է դեպքերի զարգացման փուլերը օր առ օր: Շեշտեց նաև, թե այսօր, երբ ժողորդ երիտասարդ հետազոտողները դեմ հանդիման են գալիս այսպիսի փաստերին, զարմանք են հայտնում, թե ինչու են դրանք իրենցից գաղտնի պահիվել:

Ապա խոսք վերցրեց դ-ր Դորա Սաքայանը: Նախ՝ կենսագրական ծանոթություններ տվեց իր մեծ հոր՝ բժիշկ Կարապետ Խաչեռյանի մասին, պատմեց, թե ինչ հետաքրքրական դիպվածով է այս ձեռագիրը ի հայտ եկել, ապա՝ խոսեց այն հետաքրքրության մասին, որ այս գործը առաջ է բերել հույն մտավորական շրջանակներում: (....)

Նշենք նաև, որ հոկտեմբերի 3-ին Մոնթեալի հանրահայտ գրախանության մեջ կայացավ սույն գորքի ներկայացման ու ընթերցման մի երեկոյթ՝ առավելաբար օտար գրասեր հասարակության ներկայությամբ: Դ-ր Դ. Սաքայանն անգերենով ներկայացրեց գորքի ստեղծման պատմությունը և հայտնեց, որ ինքն այս գործը կատարել է լոկ որպես սիրո արարք՝ հանդեպ իր մեծ հոր, որի կրած տառապանքը վավերական վկայություն է և մի հուչակորող

Ավիրպած նաև բոլոր հրանց, որոնք նույնքան և ավելի տառապեցին այդ օրիասական օրերին: Ապա ընտրովի հատվածներ կարդաց օրագրությունից, որոնք իրենց սեղմ ու զուսպ բնույթով հույժ բացահայտի էին կատարված եղենագործությունների մասին:

Հարց ու պատասխանի ընթացքում թուրքական հյուպատոսարանի կողմից ներկայացած մեկ-երկու անձեր ջանացին, ցեղասպանության սահմանումի հարցը բարձրացնելով, նյութը շենել, սակայն դրա Սաքայանը հմտորեն կասեցրեց նրանց: Հունատանի հյուպատոսը իր գնահատանքն ու շնորհավորանքները հայտնեց հեղինակին, որ այս գործով նոր լուսաբանություն էր բերում Խզմիրի աղետի՝ հույններին ու հայերին հավասարապես հետաքրքրող հանգամանքներին:

Ավելացնենք նաև, թե Մոնթեալի The Gazette օրաթերթի հաջորդ օրվա համարում (հոկտ. 4. 1997) լույս տեսավ մի գրախոսական՝ ստորագրված գրաքննադատin Elaine Kalman Naves-ի կողմից, որ դըրվատանքով ու ճշգրիտ բնութագրություններով վերլուծում էր այս գիրքը:

(Փոխադրված՝ արևմտահայերենից)



Հոկտ. 30, 1997

Սիրելի՛ Տօրա,

Ժամանակին կարդացած էի մեծ հօրդ գրքոյկը – մեծ մասամբ օդանաւերուն մէջ, ճամբորդութեան ընթացքին, և հիացումով հաստատեցի նախարանիդ մէջ արտահայտած այն դատումներուդ ճշշմարտութիւնը, որ ան ունի «չափի զգացում», և որ «հոգեկան ծայրահէղօրեն բարդ պայմաններու նկարագրման ժամանակ ալ, գերադրականներն ու չափազանցութիւնները խիստ սակաւ են», «անոր խօսքը գուսպ է» և հետևաբար «համոզիչ ու արժանահաւատ»: Շատ տեղին բնորոշումներ: Այս խմասով մեծ հօրդ հուշերը թէ՛ որակ ունին և թէ՛ պատմագրական արժէք:

Հիմա անգլերէն տարբերակն է, որ աչքէ պիտի անցընեմ: Հայերէնի 18-րդ և 28-րդ էջերէն անգամ մը ևս կը հաստատուի, որ

Թուրքերն էին, որ հրկիզեցին Զմիւռնիան:

Կը շնորհաւորեմ Քեզ, ապրին: Իմ կողմէս ալ կը զրկեմ առանձ-նատիպ՝ մը անցեալ ամիս հրապարակած իմ վերջին գործէս:

Բարեկներով՝ Վ. Տ.

Վահագն Ն. Տատրեան

Ցեղասպանության Ռուսմնասիրություններ

Conesus, N.Y. Միացյալ Նահանգներ

(Փոստով առաքված բացիկ՝ գրված արևմտահայերնն տար-բերակով և ավանդական ուղղագրությամբ.)



Ժնև, 8 հուլիս 1997

Սիրելի՝ Դորա,

Ծովապում եմ Ձեզ հայտնել, թե ինչքան սիրեցի Ձեր վերջին գիրքը, որին տվել եք «Մի հայ քժիշկ Թուրքիայում» վերնագիրը: Սրտաց շնորհավորում ես Ձեզ: Լավ հիշում եմ Ձեր մեծ հոր օրագրի անգլերեն թարգմանության սևագիրը, որը ինձ տվել էիք նայելու և որի ընթերցումը ես մի գիշերում ավարտեցի: Իսկ հիմա այն ներկայանում է ավարտված կերպարանքով, այնքան գեղեցիկ, այնքան մտածված, այնքան կատարյալ: Անկարելի էր պատկերացնել ավելի լավ ներկայացում Ձեր մեծ հոր օրագրի համար: Հիացած եմ Ձեր խմբագրական հմտությամբ: Կարդացի ամեն ինչ, ինչ որ դուք եք գրքում ներդրել, ձեր պատմական ու մշակութային բնույթի ծանոթագրությունները, ձեր ընտանեկան և մանավանդ մեծ հոր մասին ձեր հուշերը: Դիտեցի ձեր ընդգրկած լուսանկարները: Կարդացի Հովհաննես, Վարդուհի, Սիրարփի, Խաչերես, Գրիգոր ինձ համար օտարազգի անունները: Բարեհննչյուն ու բարեհամ, այդ անունները կարծես հալվում են լեզվի վրա: ... Նորից ձեռքս առա ձեր MODERN WESTERN ARMENIAN հայերենի դասագիրքը օտարների համար դասագիրքը և փորձեցի ձեր տառադարձությունների օգնությամբ կարդալ ...

Դիտեցի ձեր տարաքախտ ազգականների դիմագծերը: Կա-

րապետ պապիկի և Հովհաննես քեռու Ակարները հիշեցնում են հին կտուկարանի մարգարեներին: Մարդիկ, որոնք շատ են տեսել, շատ տառապել, բայց և կյանքից շատ սովորել, իմաստուն դարձել: Իսկ դուք, Դորա, Ակարների մեջ միշտ երիտասարդ եք, միշտ ճառագայթող, ընտանիքի թագուհին: Դորա՛, դուք մեծ գործ եք կատարել, որի արժեքը ավելի մեծ է, քան ձեր ամենաճանաչված գիտական գործերինը: Այս գործի մեջ կյանք կա, դաժան ճշմարտությունը զապածությամբ բացահայտելու կարողություն, ականատեսի վերապրածը սերունդներին հանձնելու խիզախ միտում ... Եվ մանավանդ՝ հիշեցում, որ բժիշկ Խաչերյանի ապրածն ու Ակարագրածը այսօր էլ այժմեական է: Փոքր ժողովորդների տարեգրություններ ու ջարդեր, և դրանց հետ կապված մարդկային անսահման տառապանք՝ դրանք բոլորը այսօր էլ օրակարգում են: Իսկ մեծ պետությունների անտարբերությունը այդ բոլորի համենա շարունակվում է: Նայե՛ք Հարավսլավիայի վերջին դեպքերին: Նայե՛ք Թուրքիայի քրդերի ճակատագրին: Ի՞նչ ահավոր է այդ բոլորը մոռանալը: Ի՞նչ աններելի է պատմական փաստերի հերքումը: Եվ ի՞նչ կարևոր է այդ բոլորը գրի առնելը և սերունդներին հանձնելը: Արդյոք դա Զեր մեծ հայրիկի՝ բոլորին ուղղված թելադրանքը չէ:

Կրկին սրտանց շնորհավորում եմ Զեզ:

**Միշտ հիացած Զեզանով,
Զերդ՝ Մարտին**

**Prof. Dr. Martin Bircher, Directeur
Bibliotheca Bodmeriana
Genève, Swiss**

(Փոստով նամակ. թարգմանությունը՝ գերմաներենից)



Հոկտ. 14, 1997

Մեծարգության Սաքայան,

Ուրախությամբ ստացած Զեր պապիկ՝ դոկտոր Կարապետ Խաչերյանի օրագորի բնագիրն ու նրա անգլերեն թարգմանությունը:

Ծառ հուզիչ վկայություն է, և հայ ժողովրդի ողբերգությունը բոլոր հետազոտողները երախտապարտ են լինելու Ձեզ, որ այդ կարևոր փաստաթուղթը ամա հրատարակեցիք և մատչելի դարձրիք շատ հետաքրքրական նկարներով ու ծանոթագրություններով: REԱրտուր (Revue des études arméniennes) կանդրադառնանք այդ հրատարակություններին:

**Զերմ շնորհակալությամբ՝
Ժան-Փիեր Մահէ**

Prof. Jean-Pierre Mahé
École pratique des hautes études à la Sorbonne
45-47, rue des écoles
75005 Paris

(Փոստով առաքված ձեռագիր նամակ՝ գրված հայերենի ավանդական ուղղագրությամբ. փոխադրված նոր ուղղագրության)



REVUE DU MONDE ARMÉNIEN MODERN ET CONTEMPORAIN
Tome 3

Dora Sakayan, *An Armenian Doctor in Turkey. Garabed Hatcherian :*

My Smyrna Ordeal of 1922, Montreal, Arod Books, 1997.

Դ-ր Կ. Խաչերեանի օրագիրը. Հմիունիական արկածներու 1922-ին

Montreal, Arod Books, 1995, 1997.

Գրախոսող՝ Հերվե Ժորժելեն (Hervé Georgelin)

Կանադանակ համալսարանական գերմանագետ Դորա Սակայանը թոռնուիին է բժիշկ Խաչերյանի, որի օրագիրը նա հրապարակել է: Դեպքերի զուգադիպությամբ միայն վերջերս է նրա ձեռքն անցել իր մեծ հոր օրագիրը՝ գրեթե ամբողջապես գրի առնված քննալական բանակի կողմից Հմյունիայի գրավումից անմիջապես հետո, երբ նա ապաստան էր գտել հունական Միտիլլի կղզում: Սաքայանը ձեռնամուխ է եղել իր մեծ հոր օրագրի նախ՝ հայկական բնագդի հրատարակմանը, ապա՝ դրա թարգմանությանը անգերենի՝

Զմյուռնիայի հունական տիրապետության ավարտի մասին վկայությունը հայախոս և անգլիախոս հանրությանը ծանոթ դարձնելու նպատակով: Երկու գործերի մեջ էլ Սաքայանը գետեղել է ներածություն և նյութեր (լուսանկարներ, քաղաքի հատակագծեր՝ պատշաճ կերպով վերնագրված և ժամանակագրված), այսպիսով թույլ տալով, որ այս վկայությունը ավելի լավ տեղադրվի իր ժամանակաշրջանի և իր աշխարհագրական դիրքի մեջ:

Զմյուռնիա քաղաքի հրդեհը մնում է մշտական մի հանելուկ: Փոխադարձ մեղադրանքների խաղը շատ է բարդացնում խնդիրը: Առաջին հայացքից, հին կայսրության ամենաժամանակակից քաղաքներից մեկի այրվելը անվիճելիորեն ահավոր կորուստ էր քաղաքը նվաճողի համար, սակայն հրդեհն ու Ազգային ժողովի կառավարության կողմից քրիստոնյա բնակչության զանգվածային արտաքսումը թույլ տվեցին նավահանգստային քաղաքի վերջնական նվաճումը: Ի վերջո, քաղաքի վերջնական թրքացումը բնական արդյունքն է այդ ավերում-արտաքսման: Բժիշկ Խաչերյանը վկայում է, որ կրակը գետեղվել է քաղաքամասի բազմաթիվ տեղերում միաժամանակ, և որ մի թուրք զինվոր նրան այդ կապակցությամբ հավաստիացրել է, որ «այն, ինչ հարկավոր էր», արդեն կատարվել է: Այստեղ խոսքը տեսակետների մի տարբերակի մասին է, որ գտնում ենք որոշ դիվանագիտական փաստաթղթերում, հատկապես Խրանի Շահի հյուպատոսի համորդման մեջ, որ կարելի է կարդալ 1918-1940 Levant շարքի 55-րդ հատորում, Quai d'Orsay-ի “Թուրքիա” ենթարածնում: Այս առթիվ դեպքերն անըլքա գտնվող ֆրանսիացի դիվանագետներն ու սպաները տարբեր կարծիքներ են արտահայտում: Պարզորշ է, սակայն, որ ի վերջո հրդեհը նպաստավոր էր Մուստաֆա Քեմալի ազգայնական քաղաքականության համար:

Խաչերյանն ու բոլոր դիվանագիտական աղբյուրները համընկնում են հույն բանակի անկանոն նահանջի հարցում: Նրանք նաև հաստատում են այդ նահանջի ժամանակ Փոքր Ասիայի հույների կողմից լքվող քաղաքների նկատմամբ կիրառվող համատարած հրկիզման քաղաքականությունը: Վերջինս կարող էր դիտվել որպես Զմյուռնիայի հրդեհի նախագուշակը, եթե, իմարկե, այն հույն բանակի մեկնումից հետո տեղի ունեցած շլիներ:

Պետք է ողջունել տիկին Սաքայանի հրատարակչական ու թարգմանչական աշխատանքը, որը հետաքրքրվող հանրությանը մատչելի է դարձնում «Փոքրասիական աղետ»-ի հայկական տեսա-

կետը, մի բան, որ հազվագյուտ է, քանի որ լնդիանրապէս այն ներկայացված է հունական տեսանկյունից:

(Թարգմանությունը՝ ֆրանսերենից)



Հուլիս 15, 1996

Սիրելի՝ Դորա,

Հենց նոր վերադարձա Ֆրեզնոյից՝ այնտեղ շաբաթվա վերջն անցկացնելուց հետո. ճանապարհորդության ընթացքում կարողացա կարդալ ամրող գիրքը, որը Ձեր մեծ հոր խմբագրված ու հրատարակված օրագիրն է: Դա բացառիկ մի փաստաթուղթ է, լի խիստ արժեքավոր տեղեկություններով. դրա արժեքը ավելի է մեծանում նրանով, որ նրա մեջ ողբերգական եղելությունները նկարագրվում են մեղմացնող և նույշիսկ դեպքերի ուժգնությունը թուլացնող գույներով: Իմ տպավորությունն այն է, որ այս օրագիրը գրի էր առնված ոչ թե օր-օրի, այլ շարադրված է դեպքերից հետո՝ հիմնվելով առանձին հշումների և հուշերի վրա: Ի՞նչ է Ձեր կարծիքը:

Տպավորված էի Զան Ձեր ներածությունից: Գրում ու վերլուծում եք շատ լավ: Ուզում եմ շնորհակալություն հայտնել, որ ինձ հետ կիսեցիք բժիշկ Խաչերյան ականատեսի վկայությունը: Այն հարստացնում է Զմյուռնիայի աղետի և այնտեղ բնակվող քրիստոնյաների ներկայությանը վերջ դնող եղելությունների մասին մեր ունեցած տեղեկությունները: Համոզված եմ, որ հունական մամուլը մեծ հետաքրքրությամբ կը նշումի այս օրագիրը և հավանաբար այն, մասսամբ կամ էլ ամբողջությամբ, կթարգմանի հունարենի:

Լավագույն ցանկություններով, շնորհավորանքներով և գնահատությամբ, մնամ:

Անկաղ ծորեն Ձերդ՝

Ռիչարդ Հովհաննիսյան

Professor Richard Hovannisian

Department of History UCLA

(Փոստով առաքված նամակ. թարգմանությունը՝ անգլերենից)

30 հոկտ. 1998

Հարգելի պրոֆ. Սաքայան,

Կարդացի Զեր An Armenian Doctor in Turkey հրաշալի գիրքը, և տարվեցի նրա մանրամասներով ու ամրողականությամբ: Հնդկացանությունը որքան որ գրավիչ, այնքան էլ սրտահույզ էր և միտք բերեց մի գիրք, որ կարդացել եմ մի քանի տասնամյակ առաջ՝ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը»:

Քաջածանոթ լինելով ցեղասպանությունների և ողջակիզումների գործած ավերումներին՝ շատ լավ հասկանում եմ այն հոգեկան ապրումները, որոնք Զեզ դրդել են հրատարակել այդ գիրքը և այդ անել այդպիսի կատարելությամբ: Այս անաշառ վկայությունը պետք է կարդան նրանք, ովքեր փորձում են վերամայել պատմությունը և ժխտել պատմական փաստերը:

Մի անգամ ևս, շնորհակալ եմ, որ ինձ նվիրեցիք հայ ժողովրդի ցեղասպանության ականատեսի և վերապրողի գոշին պատկանող այսպիսի արժեքավոր մի գիրք:

Միշտ Զեր՝

Սոլոմոն Լիպ

Professor Solomon Lipp,
Dept. of Hispanic Studies
McGill University, Montreal

(Փոստով առաքված նամակ. թարգմանությունը՝ անգլերենից)



Սեպտ. 27, 1997

Սիրելի՝ պրոֆեսոր Սաքայան,

Հաջորդ երկուշաբթի օրը մեկնում եմ Նիցա (Nice, France) և շտապում եմ դրանց առաջ ուղարկել Զեզ այս նամակը: Այցելելու եմ մորս զարմուհուն, որը ինձ համար մորաքրոց պես է. ես նրան կո-

չում եմ նվարդ մորաքույր: Ամուսնությունից առաջ նրա ազգանունն էր Քավեզյան, և նրա հայրը Զարեհ Քավեզյանն է, այն մարդը, որին ձեր մեծ հայրը իր օրագրի 44-րդ էջում որպես ընկեր է հիշատակում՝ Աշելով, որ շտապել է իր մոտ՝ խնդրելով իրեն պարզել, թե արդյոք Գրիգոր Աշճյանը դեռ ողջ է (թեև նա արդեն մահացած էր): Գրիգոր Աշճյանը իմ մեծ հայրն էր: Ահա թե ինչպես են առեղծված-ենք լուսաբանվում:

Այս գիրքը, անկասկած, շատ կարևոր փաստաթուղթ է: Ծնորհավորում եմ Ձեզ, և ինձ համար պատիվ եմ համարում, որ այժմ Ձեր մեծ հոր օրագրի նման առաջնային աղբյուր հաստատում է այն ամենը, ինչ որ ես իմ գրքի համար հավաքել էի այստեղից-այնտեղից: Շատ երկար և համառորեն որոնել եմ գրքիս համար Զմյուննիայի քարտեզը և չեմ գտել: Պորախ եմ, որ Դուք այն ձեռք եք բերել ու տեղադրել: Պետք է Ձեզ հայտնեն, որ սկզբից ևեք, և դեռ նախքան ծանոթ մարդկանց անունների հանդիպելս, Ձեր գիրքը չէի կարողանում վայր դնել: Սովորաբար ես մտնում եմ անկողին կեսգիշերի մոտ և կարդում մոտ 15 րոպե: Այս անգամ, երբ ավարտեցի գրքի ընթերցումը և լույսը հանգըրի, ամուսինս զարթնեց և հարցրեց, թե ժամը քանիսն է: Պետք է խոստվանեի, որ ժամը առավոտյան երեքն էր:

Երբ մայրս 100 տարեկան հասակում մի քանի տարի առաջ մահացավ, մի տուփի մեջ ես գտա թիթեղյա մաշված մի բաժակ, և դրա վրա փակցված՝ մորս ձեռագրով մի գրություն. «Սա այն բաժակն է, որը հորս ձեռքին էր, երբ թուրք մի զինվոր հրացանի կորով հարված է հասցրել նրա գլխին և նրան անշունչ գետին փոել Հունաստան տանող նավին հասնելուց միայն մի քանի քայլ առաջ: Մորս նրա մոտից հեռացրել են: Մայրս հորս ձեռքից վերցրել է բաժակը: Դա միակ իրն էր, որ մայրս, բացի իր հագին եղածից, Զմյուննիայից բերել էր»:

Նոյն տուփի մեջ ես գտա մեծ հորս մահվանից մեկ օր առաջ ԱՄՆ-ի Արտաքին գործերի նախարար Չարլս Էվանս Հուջ (Charles Evans Hughes) կողմից ստորագրված մի հեռագիր: Հեռագիրն ուղարկված էր Նյու-Յորքում բնակվող մորս ու հորս (նրանք ամուսնացել էին 1920-ին): Մայրս ինձ հայտնել է, որ հայրս, որ բժիշկ էր, դեռ սկզբից լսելով, որ Քեմալը, հույներին պարսության մատնելուց հետո արագորեն դեպի Զմյուննիա է առաջանում, նամակ էր գրել

Մորս ծնողներին՝ հորդորելով նրանց, որ հեռանան Զմյուռնիայից: Սակայն մեծ հայրս այնտեղ իրեն ապահով է զգացել՝ շատ ուրիշ-ների նման մտածելով, որ օսոր ուզմանավերը այնտեղ էին գո-նվում, որպեսզի իրենց ներկայությամբ պաշտպանեին քրիստոնյա բնակչությանը: Հեռագրի մեջ գրված է. «Միտիլիիում ԱՄՆ-ի հյու-պատուին. լիազորում եմ Ձեզ, որ նյու-Յորք մեկնող առաջին նավով ապահովեք Տեր և Տիկին Աշճյանների փոխադրումը»:

Մեծ հայրս ամրող կյանքում տառապել էր շնչարգելության (Asthma) լուրջ նոպաներից: Նա մի շապիկով ապաստանել էր իրենց փողոցի ծայրին գտնվող աղջիկների Սուրբ Հոփիսիմյան դպրոցում: Այդ շենքը առաջինն էր, որ իրկիզմել էր, հետևաբար նրանք փախել ու ապաստան էին գտել նվարդ մորաքույրենց մոտ: Զարենի Քավե-զյանը՝ որպես շրջանի ֆրանչիական երկաթուղիների տնօրեն, իր տան վրա կախել է ֆրանչիական եռագույնը և մի թուրք էլ նշանա-կել է որպես պահակ: Սակայն շուտով հրդեհը հասել է մինչև Քա-վեզյանների տունը, և նրանք բոլորը փախել են քաղաքի արվար-ձանները ու մինչև հրդեհի վերջանալը՝ թաքնվել մի գերեզմանատան մեջ: Ապա նրանք մի կերպ հասել են քարափ՝ շանալով շրջանցել թուրքերին և վերջապես ապաստան են գտել Էլմասյանների տանը: Ունեմ նվարդ մորաքուդ պատմությունը ֆրանչներով, որն իրենից ստացա, երբ գիրքս արդեն լուս էր տեսել: Դժբախտաբար, նրա ա-մուսինը քաղցկեղից տառապում էր և տարիներով լինելով գոնթե մահամերձ վիճակում, ես չէի կարող նրան խնդրել, գործի համար ինձ պատմեր իր պատմությունը: Խսկ երբ ամուսնու մահանալուց հետո նրան այցելեցի, նա ինձ ասաց, որ ինքն էր ուզում գրել իր պատմությունը: Գրեց ֆրանչներով, և ես մի օր այն թարգմանելու եմ (անգլերեն): Շատ չի տարբերվում Ստեփան քեռուս պատմածից, բայց ավելի մանրամասն է: Մեծ հայրս շնչելու դժվարություն է ունեցել: Վստահաբար հրդեհի ծոված, ինչպես նաև իրենց կյանքը փրկվելու նպատակով ամրող վազվուքը զգալիորեն վատթարացրել էին նրա վիճակը:

Քավեզյանները (Զարենից ուներ չորս որդի. նրա կինը մահացել էր դրանից մի քանի տարի առաջ) գնացել են Միտիլիի, հետո ֆրան-չիական մի նավով տեղափոխվել նիցա (Nice), ուր և հաստատվել են: Մեծ մայրս և մնացածը նոյնպես գնացել են Միտիլի, և այն-տեղից մեծ մայրս տեղափոխվել է Նյու-Յորք: Նա հիշողության մեջ

մնացել է որպես գեղեցիկ մի կի՞մ՝ միշտ սևազգեստ: Մելամաղձոտ էր ու հազիվ էր ժպտում, այն էլ՝ միայն ինձ ու եղբորս: Երբեք տնից դուրս չէր գալիս, և ես հիմա եմ միայն հասկանում, որ նա ամբողջ կյանքում ցնցված վիճակից դուրս չի եկել: Խլել էին որդիներից երկուսին էլ և ըստ ականատեսների ավագին սպանել էին: Իսկ կըրտսերը, որին բանտարկել էին, ողջ էր մնացել (Ստեփան Աշճյանի պատմությունը, որպես բանտարկյալ, իմ գրքում կա): Երբ ես Ֆրանսիայում դպրոց էի գնում, Ստեփանը ինձ պատմեց իր և իր հոր պատմությունը, որը նա փաստորեն լսել էր Նվարդ մորաքրոջից, որին ես շուտով այցելելու եմ: Աշխատում եմ ամեն տարի գնալ նրա մոտ, երբ կարողանում եմ: Նա միակն է մնացել իր սերնդից, մոտ 95 տարեկան է և ոչ լավ առողջական վիճակում, թեև նրա բոլոր կարողությունները պահպանված են: Հետո եմ տանում նրան նվիրելու Զեր գրքի հայերեն բնագիրը իրեն նվիրելու: Վստահ եմ, որ հիշատակված մարդկանցից շատերին նա գիտեր: Այն ժամանակ նա 17 տարեկան էր:

Զեր մեծ հայրը հիշատակում է նավասարդյան քույրերին (Էջ 79): Ճանաչում էի նրանցից երկուսին: Նյու-Յորքում նրանք օգտագործում էին նավասարդ ազգանունը: Մայրս պատմում էր, որ Զմյուռնիայում նրանք հայտնի էին որպես հրաշագեղ եղյակ: Ավագին՝ թուխ գեղեցկուիուն, որ ապրում էր ամուսնու հետ Կահիրենում, ես երբեք չճանաչեցի: Միջնեկը՝ Սաթենիկը, խարտյաշ էր և պահպանել էր գեղեցկությունը, իսկ կրտսերը՝ սիրուն ու աշխույժ Ռիտան, շագանակագույն մազեր ուներ: Ես Սաթենիկին նշել եմ իմ գրքում որպես աղբյուր, քանի որ նա ինձ ժամերով պատմել է իր պատմությունը:

Նիցայից վերադառնալու եմ հոկտեմբերի կեսերին, որպեսզի նախապատրաստվեմ նոյեմբերի սկզբին տեղի ունենալիք մի գիտաժողովի: Դրանցից առաջ ելույթ եմ ունենալու Սենթ Լուիս (St. Louis): Սակայն Հետ Համալյանը՝ «Արարատ» ամսագրի խմբագիրը, խնդրել է ինձ Զեր գրքի մասին գրել մի կարճ գրախոսական: Անշուշտ այդ գրախոսականը մինչև նոյեմբերի կեսերը պատրաստ կունենամ: Լավ գրքի համար երբեմն շատ ավելի դժվար է գրել կարճ, քան երկար գրախոսական: Տվյալ դեպքում Դուք իմ գործը հեշտացրել եք, քանի որ այն բոլորով, ինչ դուք գրել եք օրագրի և Զեր մեծ հոր մասին, ամեն ինչ սպառված է: Մյուս կողմից, ես համարում եմ, որ այս նա-

մակով ես արդեն գրախոսել եմ Ձեր գիրքը:

Ծնորհակաղի եմ այն հսկայական աշխատանքի համար, որ ստանձնել եք այս անգին աղբյուրը թարգմանելու, ինչպես նաև այն մանրակրկիտ կերպով մշակելու ու փաստերով հիմնավորելու ուղղությամբ: Մեծ հաճույք զգացի՝ օրերս լսելով [Վաշինգտոնի Capitol Hills-ում կազմակերպված Զմյուռնիայի աղետի 75-ամյակին նվիրված գիտաժողովի ժամանակ] Ձեր ելույթը և, որքան էլ որ թուուիկ ձևով, Ձեզ հետ ծանոթանալով: Հոյս ունեմ, որ մի օր մենք կկարողանանք իրար այցելել:

Ակնհայտ է, որ ես երբեք մեծ հորս չեմ ճանաչել. ո՞չ էլ ինձ երբեք, առանց ինքս պրատելու, որնէ մեկը ասել է, թե ինչ է նրա հետ պատահել, և նույնիսկ հարցնելուց հետո էլ, շատ քիչ բան եմ իմացել, քանի որ մորս համար շատ դժվար է եղել խոսել նրա կյանքի վերջավորության մասին: Մայրս մեծ հորս հետ շատ մոտ է եղել (որպես նրա միակ և արտակարգ խելացի դուստրը՝ մայրս եղել է մեծ հորս սիրելին այնպես, ինչպես մեծ մայրս նախապատվություն է տվել իր երկու որդիներին): Երբ հեռագիր գտա, պատկերացրի այն մեծ ուրախությունը, որ տվել է նրան հարազատների շուտափույթ ժամանման սպասումը, ինչպես նաև այն վիշտը, որ նա զգացել է՝ անմիջապես դրանից հետո սարսափելի կորուսն ապրելով: Երբ ես Ձեր պապիկի օրագիր էջերում հանդիպեցի մեծ հորս և տեղեկացա, որ նրանք ընկերներ են եղել, մեծ հայրս զարմանալիորեն կարծես ինձ համար կյանք առավ:

Խորին շնորհակալությամբ՝

Մարջորի Հուսեփյան-Դոբկին

Prof. Marjorie Housepian-Dobkin

Columbia University, New York

Պրոֆեսոր Մ. Հուսեփյանը հեղինակ է Զմյուռնիայի կործանման նվիրված միակ և կարևորագույն մենագրության՝ *Smyrna 1922: The destruction of a city* («Զմյուռնիա 1922. մի քաղաքի կործանումը»): Այս գիրքը 1972-ին ԱՄՆ-ում հոչակվել է տարվա գիրք:

(Փոստով առաքված նամակ. թարգմանությունը՝ անգլերենից)

Մարտ 23, 2002

Սիրելի տիկին Սաքայան,

Ծնորհակալությամբ ստացա դ-ր Խաչերյանի օրագրի հունարեն և իսպաներեն տարրերակների գեղեցիկ հրատարակություններից երկուական օրինակ. անշափ գոռ եմ, որ այժմ իմ մայրենի լեզվով է լույս տեսել այս արժեքավոր և իր տեսակի մեջ միակ պատմական վկայությունը, և սրտանց շնորհավորում եմ Ձեզ որպես հրատարակչի ու խմբագրի: Համոզված եմ, որ հույն հասարակությունն ամենուր մեծ ոգևորությամբ է ընդունելու այս՝ փաստաթղթի արժեք ունեցող և միաժամանակ մեծ հետաքրքրությամբ ընթերցվող գիրքը: Սպասելով Ձեր նոր լավ լուրերին՝

Զերդ՝

Պրոֆ. Խոաննիս Խասիոտիս՝

Professor Ioannis Hassiotis

Անլանիկի Արհաստուելի անվան համալսարանի

նորագույն պատմության բաժանմունք

(Ելեկտրոնային նամակ. թարգմանությունը՝ անգլերենից)



**«Սաքայանը վերապատմում է իր մեծ հոր գողգոթան
Զմյուռնիայում»**

Հատված՝ Ռուբինա Փիրումյանի գրախոսությունից

Asharez Daily, Saturday, October 11, 1997

(...) Հայոց Յեղասպանության գրականության մեջ շատ քիչ է ասված հայերի ցեղասպանությունը շարունակելու գործում ժամանակակից Թուրքիայի դերի և Մուսուլֆա Քեմալի մասնակցության մասին: Այդ հասատով դ-ր Խաչերյանի օրագիրը արժեքավոր մի վկայություն է և անկասկած իր արժանի տեղը պետք է գրավի հայոց ցեղասպանության գրականության մեջ: Օրագիրը հատկապես ազ-

ηեցիկ է դարձել Սաքայանի գիտական ներդրման շնորհիվ, քանի որ վերջինս պատմական տեղեկություններ է տալիս նկարագրվող յուրաքանչյուր դեպքի մասին: (...)

(Թարգմանությունը՝ անգլերենից)



Մեպո. 2, 2002

Սիրելի արոֆ. Սաքայան,

Մեծ հետաքրքրությամբ կարդացի Զեր մեծ հոր կյանքի մի փոքրիկ մասը նկարագրող ուշագրավ օրագիրը, որը գաղափար է տալիս հայ բազմաշարչար ժողովրդի կյանքի մասին՝ թուրքական տիրապետության օրոք: Չափազանց գնահատելի են Զեր շանքերը՝ պահանջելու և ապագա սերունդներին փոխանցելու Զեր բազմաշարչար ժողովրդի պատմության ողբերգական ժամանակաշրջաններից մեկը՝ դրա ժամանակակից դ-ր Խաչերյանի կողմից: Այդ գիրքը շատ կարևոր է, քանի որ Զեր մեծ հոր ապրածը շատ հատկանշական էր Թուրքիայում ապրող ոչ միայն հայերի, այլև քրիստոնյա և ոչ քրիստոնյա բոլոր փոքրամասնությունների համար: ԶԵՐ որ Օսմանյան Թուրքիան ձգտում էր պանթուրքիզմի, այսինքն «Թուրքիան թուրքերի համար» ցայսօր իշխող իդեալից:

Մեծ գնահատանքով՝

Dr. Claude Meere

(Փոստով առաքված ձեռագիր նամակ. թարգմանությունը՝ անգլերենից)



Տախիդրոմու (Նամակաբեր)
հունական շարաթաթերթ, հոկտեմբեր 25, 2001
գրախոսող՝ Յուստինի Ֆրանգուլի (Խոստին Փրացչունի)

**«Հրի, սրի ու ջրի միջն»
Ողբերգական մի պատմություն**

.... Հայ բժիշկ Կարապետ Խաչերյանը իր անձնական օրագրի մեջ փշաքաղիչ մանրամասներով նկարագրում է քեմալական բանակի մուտքը Զմյուռնիա: Նա դասական զավածությամբ ու ճշգրտությամբ ականատեսի վկայությունն է տալիս այն տագնապի մասին, որ նա, իր կինը և իրենց հինգ երեխաները ապրեցին «դժոխային Զմյուռնիայում»՝ վերջինիս կործանմանը հաջորդող երկու շարաթվա ընթացքում: Կ. Խաչերյանի օրագիրը կատարյալ վավերագրությունն է այն մասին, թե ինչպես մի քաղաք ենթարկվեց վայրագության, տմարդության և ապա՝ կործանման: Նա հազվագյուտ մարդկանցից է, որոնց հաջողվել է նախ՝ վերապերել և ապա՝ բնութագրել այն եղերական օրերը, երբ հույներն ու հայերը գերբնական ճիգեր էին գործադրում՝ փրկվելու այդ անհջաղ վայրերից ու ապաստանելու այն «Ալվետյաց երկրում», որը իրենց համար ոչ այլ էր, քան Հունատանը:

Օրագիրը, սակայն, միայն մի հայ ընտանիքի՝ Զմյուռնիայի աղետից փրկվելու պատմությունը չէ, քանի որ այն ներկայանում է հույն նորագույն պատմության ավելի լայն համապատկերում՝ տալով դրա մասին բազմաթիվ կարևոր և հավաստի տեղեկություններ: Անհարա այդ փաստաթղթային բնույթի մեջ պետք է տեսնել գրքի ամբողջ արժեքը:

ՄակԳիլ համալսարանի պրոֆեսոր Դորա Սաքայանը հրատարակության է պատրաստել մի գիրք, որը սեփական ներդրումով հարստացնում է իր մեծ հոր օրագիրը՝ տալով Զմյուռնիայի աղետից փրկված Խաչերյանների, ինչպես նաև հույն ու հայ քրիստոնյաների ստարեգրության ամրող ջական պատկերը:

(Թարգմանություն՝ Բունարենից)

«Հրի, սրի ու ջրի միջն»

Մոնթեալի ՀՈՐԻԶՈՆ շաբաթաթերթ

Նոյեմբեր 12, 2001

Բեղինակ՝ Վրեժ-Արմեն Արթինյան

Այսպես է վերնագրված բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի՝ «Ձմյունիական արկածներս 1922-ին» հաստորի հունարեն տարբերակը, որ վերջերս լույս տեսավ և որին նվիրված էր Մոնթեալի Հունական համայնքային կենտրոնում՝ հոկտեմբերի 19-ին տեղի ունեցած շնորհանդեսը՝ նախաձեռնությամբ Քվերեքի հելլեն կոնգրեսի և Մոնթեալի Հայ Դատի հանձնախմբի, հովանավորությամբ Հունաստանի հյուպատոսության և Կանադայի խորհրդարանի փոխնախագահ ու դեպուտատ Էլենի Բաքրիանոսի:

Երեկույթի պատվո հյուրերն էին ՀՀ լիազոր դեսպան պրն. Արա Պապյանը և Ձմյունիայի աղետը վերապրած պարոններ Վարդգես Սարաֆյանը և Եղվարդ Ավրիլյանը:

Ձմյունիայի 1922-ի ջարդին ականատես թժ. Խաչերյանի օրագրի հայերեն բնագիրը լույս է տեսել 1995-ին, ապա վերահրատարակվել է 1997-ին, անգլերեն թարգմանությունը լույս է տեսել 1997-ին, ֆրանսերենը՝ 2000-ին, իսպաներենը՝ 2001-ին, և ահա այժմ՝ հունարենը՝ նակոս Պրոտոպապասի թարգմանությամբ :

Հանդիսության բացումը կատարեց ՄակԳիլ համալսարանից՝ պրոֆ. Դիմիտրիոս Բերկը, որը ներկայացրեց գործի խմբագիր ու հրատարակիչ և Բեղինակի թոռնութի՝ պրոֆ. Դորա Սաքայանին, որը վերջերս արժանացել է գերմանական կառավարության «Արժանաց Կարգի Խաչ» բարձրագույն շքանշանին: Հաջորդաբար խոսք վերցրեցին պրն. Արա Պապյանը, հույս ընդհանուր հյուպատոս պրն. Յոան-Շիս Փափառոպուլոսը, տիկ. Էլենի Բաքրիանոսը, Հայ Դատի ներկայացուցիչ՝ ընկ. Մամուլ Քյույյանը և Քվերեքի հույս կոնգրեսի ներկայացուցիչ՝ պրն. Նիկ Քաթալիփոսը:

Պարոն Պապյանը իր խոսքի մեջ բժիշկ Խաչերյանի գործը բնութագրեց որպես Ցեղասպանության ժխտման դեմ ուժեղ գենք, ինչպես նաև որպես հայ և հույն դարավոր բարեկամությունն ամրապնդող հզոր գործոն:

Տիկին Բաքրիանոսը նշեց, որ կարդալով սույն հաստորք, նա

այսուհետև գինված է լինելու հեղինակի արժանահավատ վկայություններով ու ավելի վստահորեն է մասնակցելու Յեղասպանության հարցերի շորջ տեղի ունեցող վիճարանություններին:

Պարոն Փափադոպուսը վեր հանեց այս հասորի կարևորությունը որպես խիստ արդիական նյութ:

Ընկեր Քյուեյանն ընդգծեց պրոֆ. Սաքայանի մեջբերած պատմագրական ու քաղաքական ընույթի ծանոթագրությունների դերը, որոնք լույս են սփռում պատմական բազմապիսի հարցերի վրա:

Լինելով մանկավարժ՝ պարոն Քաթալիֆոսը առաջարկեց այս ու նման բովանդակությամբ գործերը դարձնել դպրոցական ուսումնադաստիրակաչական ծրագրերի պարտադիր մաս, որպեսզի աճող սերունդները լավ ճանաչեն իրենց հախնիների պատմությունը:

Գլխավոր բանախոսը եղավ ինքը՝ դոկտ. Դորա Սաքայանը, որը մանրամասնորեն ներկայացրեց իր մեծ հոր անցած ուղին և նրա վավերագրական արժեք ունեցող օրագիրը: Նա մի շարք էջերի ընթերցանությամբ կարողացավ ներկաներին գաղափար տալ հասորի բնույթի մասին:

Ելույթն ավարտելուց հետո տիկ. Սաքայանը պատասխանեց ներկաների հարցերին, ապա անցավ վաճառվող գործերի մակագրության:

(Տեքստը փոխադրված է արևմտահայերենից արևելայերենի)



Դեկտ. 1, 2001

Հարգելի Տիկին Սաքայան,

.... Զերս շնորհակալություններս Ձեր «Հրի, սրի և ջրի միջն. 1922-ին՝ Զմյուռնիայում» վերնագիրը կրող գործի հունարեն տարրերակի համար, որ Ձեր անոռանալի մեծ հոր օրագրի մասին է: Շնորհակալ եմ նաև գրքում ինձ ձռնած տողերի համար: Գիրքը կարդացի մեծ հուզմունքով, քանի որ փոքրասիական պատերազմն ու նրա փորձությունները մոտիկից եմ ապրել և՝ զգացականորեն, և՝

աշխարհագրական տեսակեսոյց: ԶԵ՞՞ որ Խմբրու կղզին, որն իմ ծննդավայրն է, պատկանում է Եգեականի հյուսիսային մասի կղզեխմբին:

Ծնորհակալություն Զեզ, որ այս արժեքավոր նյութը հրատարակել եք մինչ այսօր հինգ լեզուներով, այդ թվում՝ հունարենով, որին դուք գերազանցապես տիրապետում եք, քանի որ ծնվել եք Սելանիկում:

Սա Զմյուռնիայի մասին միակ օրագիրն է, որով դուք՝ հայերդ կարող եք հպարտանալ, և այժմ մենք՝ հույներս կարող ենք Զեզ միանալ: Դեպքերը վերապրող Խաչերյանը անաշառությամբ, բայց և ցնցող մանրամասներով նկարագրում է այն մեծ ողբերգությունը, որ տարիներ անց ուրիշ գրողներ բազմից ջանացել են ներկայացնել իր իսկական գույներով, բայց չեն կարողացել:

Հայրական օրինամքով
Արքեպիսկոպոս Յակովոս

Միացյալ Նահանգների հյուսիսարևելյան թեմի հույն առաջնորդ

Archbishop Jakovos
31 Park Drive South
New York 10580

(Փոստով առաքված նամակ. թարգմանությունը՝ հունարենից)



Սեպտ. 24, 2003

.... Բժիշկ Խաչերյանի օրագրի վերջնական ընթերցման ժամանակ ինձ մի անգամ ևս պարզ դարձավ, որ նրա սխալմունքը իր իսկ բնափորությունից էր բխում և այդ իսկ պատճառով անխուսափելի էր: Որպես խոհեմ, չափազանցություններից խոսափող և հավանաբար, բազմաթիվ այլ հայերի նման, պահպանողական մուածողության տեր մարդ՝ նա չէր կարող կանխատեսել դեպքերի վատագույն ելքը (ի դեպք սա մարդկային գոյատևման միակ գրավականն է, քանի որ մարդ, որպեսզի կարողանա ապրել, մշտապես պետք է վաճի այն միտքը, որ վայրկյանից-վայրկյան կարող է

Մեռնել: Դորայի մեջբերած Խաչերյանի խոսքերը՝ «Թո՞ղ որ մի դուռը բաց մնա», բացատրում է վերջինիս մտածելակերպն ու Ակարագիրը: Այն, ինչ «քնականոն» կյանքում կարող էր ընկալվել որպես բնավորության առավելություն, թուրքական ազգայնականության հետև անքով ստեղծված միանգամայն տարրեր պայմաններում դիտվում է որպես թերացում: Մարդասիրաբար մտածող ո՞ր մարդը պիտի կարողանար կամ ուզենար պատկերացնել, որ իրար հաջորդող երկու թուրքական կառավարություններ ամբողջացնելու էին երկրի «ազգային մաքրագործման» ծրագիրը:

Ահա իմ մտքերի ընթացքը՝ այս տեքստի կապակցությամբ: Ի դեպ՝ Խաչերյանի աշխարհայացքի հեղաշրջումը կամ ցնցումը պարզորշ կերպով արտահայտվում է նաև նրա ոճի մեջ: Դա հատկապես այն հատվածներում է, որ սկզբում զուսպ, գոեթե արձանագրության բնույթի ոճը դառնում է խիստ զգացական, այն աստիճանի զգացական, որ այն այսօրվա եկորապացի ընթերցողին կարող է անսովոր թվալ: Այստեղ է, որ այլապես պահպանողական բնագրի համապատկերում ընթերցողին ընկալելի են դառնում բոլոր այն իրավիճակները, որոնց մեջ խախտվում են ընդունված արժեքները:

Դ-ր Թեսա Հոֆման

(Dr. Tessa Hofmann)

(Էլեկտրոնային նամակ. թարգմանություն՝ գերմաներենից)



Ապրիլ 7, 2002

Հենց նոր վերջացրի Դորա Սաքայանի An Armenian Doctor in Turkey գիրքը: Ինչպես տեղեկացանք երկու շաբաթ առաջ իր իսկ՝ հեղինակի կողմից, իր մեծ հոր՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրն է, որ ընդգրկում է 1922 թ. այրվող Ջմունիայի ժամանակաշրջանը: Լինելով ականատես՝ օրագիր հեղինակը եղելությունները կարուցում է անմիջապես իրենց ընթացքում. այդ իմաստով գիրքը կարևոր սկզբնաղբյուր է:

Գիրքը կարդացվում է մեծ դյուրությամբ, և ես այն պարտեցի՝ երկու անգամ նատելով: Դեպքերը նկարագրվում են ժամանակագրական ճշգրտությամբ և ընթերցողին աստիճանաբար առաջնոր-

դում Զմյուռնիայի աղետի տարրեր փուլերի միջով, որ վերապրում են հույն ու հայ զմյուռնիացիները: Ընտանեկան սովորական առօրյայից հետո նկարագրում է առաջին փախստականների ժամանումը, ապա ջարդերն ու կրակը: Բժիշկ Խաչերյանը նախ որոշում է քաղաքում մնալ, սակայն իրավիճակը վատթարանում է, հայկական թաղամասը կրակի է տրվում, և նա հազիվ է հասցնում փրկվել իր անմիջական ընտանիքի հետ: Սակայն մինչ այդ նա ձերքակալվում է և մնում է վեց օր բանտարկված: Վերջապես նրան հաջողվում է ապաստան գտնել Միտիլի կղզում, որտեղից նա տեղափոխվում է Սելանի և այնտեղ հաստատվում:

Բժիշկ Խաչերյանի պատմածը հափշտակում է ընթերցողին ու գամում նրան իր տեղում մինչև ընթերցումը վերջացնելը: Դեպքերի նկարագրության մեջ նա անաշառ է, կողմնապահություն չունի ու կարծիքներ չի հայտնում: Զնայած դրան՝ ընթերցողի աչքի առաջ երկրին նվիրված քաղաքացին դառնում է ըմբռուտ քաղաքացի, որը երդվում է երբեք այլևս չապրել այնտեղ, ուր իշխում է թուրքը: Շահեկան է գրքում նաև Սաքայանի Աերդրումը, որը հիմնավորում ու պարզաբանում է Խաչերյանի ասածները ոչ միայն մանրամասն ու խորաթափանց վերլուծություններով և ծանոթագրություններով, այլև ընտանեկան ու Զմյուռնիա քաղաքին վերաբերող նկարներով:

Նոր էի սկսել Զմյուռնիայի աղետի պատմությանը ծանոթանալ Marjorie Housepian-Dobkin-ի գրքից, երբ տեղեկացա նաև Սաքայանի գրքի մասին AHEPA-ի (American Hellenic Educational Progressive Association) միջոցով: Անմիջապես այն ձեռք բերեցի, և երկու գրքերի գուգահեն ընթերցումը ինձ շատ օգնեց Զմյուռնիայի աղետի ամբողջական պատկերը ստանալու գործում, քանի որ այդ երկու գրքերի մեջ գտա կանոնավոր համապատասխանություններ: Մինչ Marjorie Housepian-Dobkin-ի գիրքը ինձ ամբողջական գաղափար տվեց Զմյուռնիայի հարցի պատմության մասին, Խաչերյանի ապրած օրերի նկարագրությունը ինձ տեղադրեց իրադրածությունների մեջ, որոնք ինձ այնքան իրական թվացին, կարծես թե ես էի դրանց ապրողը: Ով ուզում է իսկապես հասկանալ, թե որոնք են Զմյուռնիայի աղետի դրապատճառները, թե ինչպիսին էր դաշնակիցների վարքագիծը այդ օրերին և շատ ուրիշ՝ մինչ օրս հունական մամուլում չպարզաբանված հարցեր, շատ հաճարարենի է, որ գոնե այս երկու հայ հեղինակների գրքերը կարդա:

Թեդ Վիտաս, հայսագահ

Ted Vittas, President

AHEPA (American Hellenic Educational Progressive Association)

(Էլեկտրոնային նամակ՝ ուղղված ԱՀԵՊԱ-ի անդամներին. թարգ-մանությունը՝ անգլերենից)



2005 թ. ապրիլի 27-ին Երևանի Հայաստանի գրողների Միության կողմանը լեփ-լեցուն էր: Այստեղ՝ Մեծ եղեռնի 90-ամյակի առթիվ կազմակերպվող Միջոցառությունների շարքում տեղի էր ունենում մի արտակարգ շնորհանդես: Առաջին անգամ ներկայացվում էր բժիշկ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագիրն նվիրված Դորա Սաքայանի գիրքը երեք լեզուներով՝ ուսուերեն, արևելահայերեն և թուրքերեն: Միջոցառումը համատեղ կազմակերպված էր Հայաստանի գրողների միության և ԳԱ Ցեղապահության ինստիտուտի կողմից: Այդ հիշատակելի հավաքի մասին անգլերեն լեզվով հրատարակված հաղորդագրությունից ստորև թարգմանարար բերվելու են որոշ հատվածներ:

Անդրադառնալով հատկապես եղեռնի 90-ամյակի օրերի հայթուրքական հարաբերություններին և մասնավորապես վարչապետ Էրդողանի առաջարկին՝ պատմական փաստերը վերաստուգող մասնագետների երկողով հանձնաժողով ստեղծելու առաջարկին, գրողների միության նախագահ պարոն Լոռն Անանյանը նշեց, որ Կ. Խաչերյանի օրագիրը՝ որպես ականատեսի վկայություն, հարցի քննարկումն ավելորդ է դարձնում, իսկ թուրքական կողմի առաջարկը՝ ցեղասպանության մեղադրանքից խուսափելու միջոց: Ինչ վերաբերում է Խաչերյանի օրագրի ոճին, պարոն Անանյանը ճանաչեց օրագրի հատկապես որոշ մասերի գրական արժեքը: Ապա նա գնահատեց Սաքայանի աշխատանքը ոչ միայն որպես հուչարձան նվիրված իր մեծ հորը, այլև որպես «ներդրում ցեղասպանության պատմության մեջ»: (...)

Ծնորհանդեսին ներկա՝ հայտնի ցեղասպանագետ, հայ ժողովրդի բարեկամ դ.-ր Թեսա Հոփմանը իր ելույթում ասաց հետևյալը. – «Մեր ուշադրության կենտրոնում գտնվող օրագիրը ականա-

տեսի կարևորագույն գեկույցն է, ինչպես ֆրանսացիներն են ասում, սովորական (մարդկային մի փաստաթուղթ), մի վկայություն՝ տասնամյակներ շարունակ անպատճի մնացած ցեղասպանությունների վերջին փուլի մասին: Դեպքերը կատարվում են Օսմանյան կայսրությունից դեպքերի հանրապետություն անցման շրջանում, երբ բազմազգ և բազմակրոն պետությունը վերածվում էր միազգ և միակրոն պետության: Այստեղ խոսքը հինգ միլիոն քրիստոնյաներին հույների, հայերի և ասորիների մասին է, որոնք անհետացել են ցեղասպանության, աքսորների և ուժացման հետևանքով: Հանցագործության վերջին փուլը Զմյունիայի հրկիզումն էր»: Ապա դուք Հոֆմանը նկարագրեց այդ օրերի Զմյունիան ու նրա՝ «Իրի, սրի ու ջրի» միջն մնացած քրիստոնյա բնակչության ողբերգական վիճակը: Եզրափակելով իր ելույթը, դուք Հոֆմանն ասաց. «Թուրքերի ձեռքով իրագործված Զմյունիայի աղեստը հաստատում է իրթիադիտների ու քեմալականների միջն կապն ու նրանց հանցագործությունների շարունակականությունը»:

Ակադեմիկոս Սիմոն Կրկյաշարյանի ելույթից. «Սա մի ցմցող գիրք է, որով ընթերցողը երես-առ-երես է գտիս իր մարդկայնության հետս» (...) «Բարձր եմ գնահատում նաև Դ. Սաքյանի խորաթափանց գիտական աշխատանքը. նա դուք Կ. Խաչերյանի գիրքը Բարստացրել է 65 պատմական ծանոթագրություններով ու գրականությամբ, բազմաթիվ նկարներով ու քարտեզներով, որոնք օգնում են բոլոր նրանց, որոնք ճշմարտություն ու արդարություն են փշնտում»: (...)

Գրող և լրագրող Մարգո Ղուկասյանի ելույթից. «Իր այս առանձնահատուկ օրագրով, բժիշկ Խաչերյանն իրեն որոշակիորեն հաստատել է որպես լիիրավ գրող»: (...)

Դոցենտ Խորեն Պալյանի ելույթից. «Այս գիրքը ցեղասպանության գրականության մեջ մի մասունք է, իսկ նրա թուրքերեն իրատարակությունը փուլ է՝ խոված թուրքերի կողի մեջ, որոնք մինչև օրս քաջությունը չեն ունեցել դիմագրավելու իրենց սեփական պատմությունը»: (...)

Դոցենտ Արտեմ Հարությունյանի ելույթից. «Կամ փաստագրական գործեր, որոնք ավելի արժեքավոր են քան գեղարվեստական ստեղծագործությունները կամ հավասար են նրանց: Այդպիսին է բժիշկ Խաչերյանի օրագիրը»:

Դոցենտ Լուսինե Սահակյանի ելույթից. «Ողջունում եմ բժիշկ

Խաչերյանի օրագրի թուրքերեն տարրերակի հրատարակումը և փառաբանում քաջարի հրատարակիշ՝ Ռ. Զարաքղուին»: (...) Որպես թուրքերենի մասնագետ Սահակյանը բարձր գնահատնեց գրքի թուրք թարգմանիչ Աթիլա Թույգանի աշխատանքը և ապա ավելացրեց. «Որնէ անտեղյակ թուրք քաղաքացու համար այս գիրքը հայ ցեղասպանության մասին տեղեկության ամենահավաստի աղբյուրն է»: (...)

Պրոֆեսոր Վերժին Սվազլյանի ելույթից. «Գրքեր հայ ցեղասպանության վերաբերյալ գրվել են տարբեր ժամերով, սակայն ցեղասպանությունը վերապրողի ձայնը մինչև վերջերս հազիվ էր լսելի: Բժիշկ Խաչերյանի օրագիրը հատուկ փաստագրական-պատմական արժեք ունի, քանի որ այն անգնահատելի պատկերացում է տալիս Զմյուռնիայի աղետի արհավիրքի մասին՝ հենց վերապրողի տեսանկյունից, փաստագրված՝ օրը-օրին և ժամը-ժամին»: (...) «Իմ կարծիքով, 20 էջ կազմող նրա բանտարկության հինգ օրերի նկարագրությունը պատմության համար ամենանշանակալիցն են»:

Դորո Սաքայանի ելույթից. «Օրագրի հայաստանյան հրատարակության հետ՝ այսօր ես մեծ հորս հայրենադարձի: Այժմ Հա իր ժողովրդի հետ է, իր հայրենիքում, որտեղ այսուհետև Հա ապրելու է նոր, հոգեոր կյանքով»: (...) «Մեծ հորս օրագրի թարգմանությունների շարքում ինձ համար գագաթնակետը թուրքական հրատարակությունն է: Փա՞ռ ու պատիվ Ռ. Զարաքղուին, որը հերոսաբար հանդես է գալիս իր երկրում տիրող գրաքննության դեմ և պայքարում հանուն խոսքի և մամուլի ազատության: Ցավում եմ, որ Հա չկարողացավ ներկա գտնվել այս շնորհանդեսին, այս օրերին նրա դեմ ուղղված նոր դատաքննությունների պատճառով»:



Թուրքերեն հրատարակությունը, որ լույս տեսավ 2005 թ. Վաղ գարնանը, հսկայական աղմուկ բարձրացրեց Թուրքիայում: Այդ մասին ես նախ տեղեկացա հանգույցալ Հրանդ Դիմքից, որն այդ օրերին իր տիկնոց՝ Ռաքենի հետ նույնպես եկել էր Հայաստան՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 90-ամյակի առթիվ կազմակերպված գիտաժողովներին: Երբ մենք հանդիպեցինք, առաջին բանը, որ Հա ինձ հայտնեց, մեծ հորս գրքի թուրքերեն հրատարակության

հաջողությունն էր իր երկրում: «Ձեր գիրքը Թուրքիո մեջ տաք հացի պես կերթա», ասաց նա: Իրապես, գրքի թուրքերեն առաջին հրատարակությունն անմիջապես սպառվեց: Սակայն որքան դրական էր գրքի ընդունելությունը Թուրքիայում, նույնքան խիստ էր նրա գրաքննությունը: Դեռ ավելին. հրատարակիչ Զարաքոլուն այս գրքի, ինչպես նաև հայ ցեղասպանությունը ճանաչող մի այլ՝ նոր հրատարակության կապակցությամբ դեռևս 2005-ին դատարան կանչվեց: Նա մեղադրվում էր Քրեական օրենսգրքի 301 հոդվածով՝ թրքությանը և թուրքական բանակին վիրավորանք հասցնելու համար:

2006 թվականի մայիսին, երբ Զարաքոլուն իմ հրավերով գրտնը վում էր Մոնթեալում, մեկնելուց առաջ ինձ խնդրեց, որ մի նամակով դիմեմ Խատանբուլի հրավասության երկրորդ ատյանի դատարանին, որտեղ առաջիկա Բունիսին տեղի էր ունենալու նրա երկրորդ դատաքննությունը մեծ հորս օրագիրի թարգմանության ու հրատարակման կապակցությամբ: Այդ նամակում ես պետք է ներկայանայի որպես քաղաքականության հետ որևէ առնչություն չունեցող՝ Մոնթեալի Մակգիլ համալսարանում պաշտոնավարող գերմանագետ-պրոֆեսոր: Այս պետք է ներկայացնեի մեծ հորս՝ որպես Օսմայան կայսրության երեսմնի պատվավոր քաղաքացի: Ակարագրեի այն բոլոր ծառայությունները, որ նա Առաջին աշխարհամարտի ժամանակ մատուցել էր թուրք հասարակությանը և թուրք բանակին որպես բժիշկ: Երկու էջից բաղկացած անգլերենով գրված հոդվածն պետք է համոզեր դատարանին, որ մենք իրական մարդիկ ենք և որ մեծ հորս օրագիրը շինծու մի գրվածք չէ:

Մինչև օրս չգիտեմ, թե նամակս որևէ ազդեցություն կարողացա՞վ ունենալ թուրքական դատարանի վրա: Հայտնի է, որ Զարաքոլուն այս գրքի համար դատարան է ներկայացնել երեք տարվա մեջ վեց անգամ, որից հետո՝ հավանաբար միջազգային կազմակերպությունների ճնշման տակ, 2008-ին ի վերջո ազատ է արձակվել:

Նամակս լայնորեն տարածվեց համացանցով, ե՛ անգլերեն, ե՛ թուրքերեն լեզուներով: Այն լույս տեսավ նաև – ոչ շատ հաջող թարգմանությամբ – արևմտահայերենով՝ Թուրքիայում լույս տեսնող «Margmara» օրաթերթում (09-10-2006, Օրուան Լուրեր): Ստացել եմ Էլեկտրոնային նամակներ նաև՝ Գերմանիայում բնակվող թուրք այլախոր մտավորականներից, որոնք գովեստով լի էին, ապա՝ բազմաթիվ գրություններ Թուրքիայի տարածքից, որոնք պարունակում

Եին կշտամբանքներ, մինչև իսկ հայրոյանքներ: Համացանցային հալածանքները մինչև օրս շարունակվում են. նախ՝ գրածն նամակի և ապա՝ օրագրի թուրքերեն հրատարակության առնչությամբ: Քանից ներխուժել ու ջնջել են կայքեց, հետևում թողնելով իրենց և ստորագրությունը՝ Մուստաֆա Քեմալի դիմանկարով և Թուրքիայի ծածանվող դրոշով... Կարդացել եմ նաև մի քանի թուրքերեն բացասական գրախոսություններ, որոնց մեջ, շգիտես ինչու, Դորա Սաքայանը քննարկվում է որպես տղամարդ... Դա էլ երևի պետք է վերագրել գրախոսողների գիտական մակարդակին ...



Ծուտով Հայաստանի մամուլը ևս տարբեր հոդվածներով ու գրախոսականներով արձագանքեց գրքի հայաստանյան հատորի լույս ընծայման առթիվ: Ստորև բերում ենք հատվածներ ԲԵՀ-ի 2005-ի 2րդ հատորում լույս տեսած Ա. Գ. Մադոյանի ընդարձակ գրախոսականի ներածական և եզրափակիչ մասից:

«Մինչ արդի թրքական իշխանությունները համառորեն պնդում են անցյալ դարասկզբի դեպքերի բնութագրության համար պատմաբանների համատեղ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության մասին, ցեղասպանագիտությունը հարստանում է նորանոր լուրջ հրատարակություններով, մանավանդ նորահայտ պատմական վավերագրերով: Պրոֆ. Դորա Սաքայանի աշխատահրությամբ այս օրերին բազմազան լեզուներով (այդ թվում՝ հունարեն և թուրքերեն) լույս տեսավ նրա մայրական պապի՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի (1876-1952) օրագիրը «Զմյուռնիական արկածներս 1922-ին»: Այս վավերագիրը վերականգնում է հունական մշակույթի վաղեմի կենտրոններից մեկի՝ Զմյուռնիայի՝ քրիստոնյաներից զտման ճշմարիտ պատկերը: Բազմից նկատված է՝ թրքական տարեգրությունը գաղանությունների տարեգրություն է, կարծես “երախտագետ” հետնորդները նախնիների ոճիրները մոռացության տալու համար ժամանակ առ ժամանակ նորերն է ձեռնարկել՝ ավելի կամ նվազ ծավալներով»: (...)

«Բժիշկ Կարապետ Խաչերյանի սույն գիրքը նրանցից է, որ խոսուն վավերականությամբ կարող են թիմնահարցերը շրջանցել փորձող թրքական իշխանություններին “ազատել” պատմաբանների հա-

մատեղ ուսումնասիրություններ կազմակերպելու անտեղի մտահոգություննից»:



Հասուկ ընդունելություն գտավ գրքի գերմաներեն թարգմանությունը, որը մի քանի տարի առաջ ավարտել էի, բայց հրատարակության համար փնտրում էի ճիշտ հրատարակչին, որպեսզի գիրքն ընթերցվեր ամբողջ գերմանախոս աշխարհում: Ի վերջո գիրքը լույս տեսավ 2006-ին Ավստրիայի Քիթաք (Kitab) հրատարակչությունում և անմիջապես լայն տարածում ստացավ բոլոր գերմանախոս երկրներում: Հաջողությունը հսկայական էր: Իրար հետևից հաջորդեցին գրքի մասին դրական գրախոսականները, ինչպես նաև գրքից արտատպված հատվածներով հրապարակումները Գերմանիայի, Ավստրիայի և Ծվեյցարիայի մամուլում: Ինձ համար ամենաուրախալին այն էր, որ սույն գրքում զետեղված մեծիորս կենսագրությունը գերմաներեն իմ թարգմանությամբ ընդգրկվեց BBKL (Biographisch-Bibliographisches Kirchenlexikon = կենսամատենագիտական եկեղեցական բառարանում [http://www.bautz.de/bbkl/h-hatscherian_g.shtml]): Դրանով իսկ մեծ հորս անունը մտավ համաշխարհային գրականության մեջ:

Ստորև թարգմանաբար բերվելու են հատվածներ գերմանախոս երկրներում տպագրված գրախոսականներից, ցավոք՝ միայն մի քանիսից, քանի որ բոլորը չեն կարող հիշատակվել այս գրքի ամբողջությունում:

Ահա թե ինչպես է 2006-ին գիրքը ներկայացնում իր իսկ Քիթաք հրատարակչության կայքէջում հրատարակիչ, պատմական և աստվածաբանական գիտությունների դ-ր Վիլմելմ Բաում (Wilhelm Baum):

«Հայտնի է, որ 1922-ի Զմյունիայի (այսօր՝ Իզմիր) աղետի ժամանակ Մուստաֆա Քեմալ փաշա Աթաթուրքի բանակը բնաջնջեց մեծ թվով հույների և հայերի: Հայազգի բժիշկ Կ. Խաչերյանը այդ աղետից մազապուրծ եղած քշերից մեկն է: Նրա օրագիրը, որ լույս է տեսել հայերեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, ինչպես նաև թուրքերեն լեզուներով, 1-ին աշխարհամարտից հետո էլ շարունակվող՝ հույների և հայերի նկատմամբ թուրքերի իրագործած ցեղասպանության մասին կարևորագույն

աղբյուրներից է: Գրքի բարձր արժեքն այն է, որ օրագրի գրանցումները կատարվել են եղելությունների հետ միաժամանակ, մինչդեռ Զմյուռնիայի աղետին վերաբերող բոլոր մնացած գրքերը գրրվել են դեպքերից շատ անց: Գրքում պատկերավոր կերպով նկարագրվում են թուրք ոստիկանության, բանակի ու աշխարհազորի գազանությունները, այդ թվում՝ հայտնի նաև այլ աղբյուրներից՝ քրիստոնյա կանանց բռնաբարումը, քաղաքի ամբողջ թաղամասերի հրկիզումները, ինչպես նաև անմեղ մարդկանց հրեշավոր խոշտանգումները: Բուրժուական վերնախավին պատկանող Խաչերյան ընտանիքը հանկարծակի է գալիս տեսնելով թուրքերի որդեգրած բնաշնչման քաղաքականությունը, որն անտեսում է ընտանիքի հոր՝ Առաջին աշխարհամարտում մատուցած ծառայությունները Աթաթուրքի առաջնորդած թուրքական բանակում, ինչպես նաև այն, որ նա պարգևադրվել է բարձր շքանշաններով, գրավել կարևոր պաշտոններ Թուրքիայի հայ համայնքի հաստատություններում (դպրոցներում, բուժիչմենարկներում, մամուլում) և այլն: Տեղին է համեմատությունը նացիստական Գերմանիայի հրեա մտավորականության ճակատագրի հետ. բարբարոսության, մարդատյացության և սոցիալական սառնասրության նույն կառույցներն են, որոնք անխուսափելիորեն հանգեցնում են նման հանցագործությունների»:

(Թարգմանությունը գերմաներենից)



2007-ին գերմաներեն հրատարակությունը արժանանում է նորագույն պատմության մասնագետ՝ գերմանուրի պրոֆեսոր Սաբինե Մանգոլդի (Professor Dr. Sabine Mangold) բարձր գնահատականին: Ահա թե նա ինչ է գրում.

«(...) Ինչպես հնում Այնեասը իր հոր հետ այրվող Տրոյայից, այնպես էլ Կարապետ Խաչերյանը փախչում էր՝ դատիրերից մեկին գրկած, Մուստաֆա Քեմալի ազգայնական ջոկատների կողմից գրավված Զմյուռնիայից: Դա հալածյալ գաղթականի գերագույն տիպարն է, որ գրականության մեջ այս անգամ ներկայանում է հայ բժշկի կերպարով, որը փախչում է, մինչև նրան հաջողվում է ամերիկյան նավի վրա հեռանալ երբևէ „Արևելքի

Փարիզ՝ հոչակված քաղաքից:

Եվ ամա մենք տեսնում ենք մարդկային ողբերգության մի նոր դրվագի կրկնությունը, այս էլ քանի երորդ անգամ, և ամենահուզակին այստեղ այն է, որ օրագիրը գոված է այդ ողբերգությունից մազապուրծ եղած մի մարդու կողմից՝ դեպքերից միայն մի քանի շաբաթ անց: Հենց դրա մեջ պետք է տեսնել օրագրի քաղաքական կարևորությունը: Իրանով է, որ այս օրագիրն իր անպահունությամբ հանդերձ նոր է ու ցնցող: Ինչպես գրել է իր օրագրության մեջ հրեա պատմաբան Վիլի Քոնը (Willy Cohn) իր մասին, բալկանյան պատերազմում բազմաթիվ շքանշաններ ստացած Խաչերյանի համար ևս՝ իր հայրենիքի քաղաքակրթության նկատմամբ ունեցած վստահությունը արգելք է հանդիսանում, որ նա ժամանակին փախուստի դիմի»:

Das historisch-Politische Buch 2007, B. 55, էջ 25

(Պատմա-քաղաքական Ամսագիր, 2007, հատ. 55, էջ 25)



2008-ին գրքի գերմաներեն հրատարակությունը քննարկվում և գրախոսվում է պատրիոտիկ իրավաբան-պատմաբան Քրիստինա Լանգգարտները (Christina Langgartner): Ամա նոր գրախոսականի վերջին պարբերություններից երեքը:

«(...) Գրքում զարմացնողը այն սթափությունն ու չափավորվածությունն է, որով բժիշկ Կարապետ Խաչերյանը նկարագրում է ամբողջ դեպքերը: Նրա ոճը կշտամբող է, բայց ոչ մեղադրական: Այնուամենայնիվ, Զմյուռնայի դեպքերը, այսպես կոչված «փոքրասիական աղետը» օրագրում ներկայանում են որպես 19րդ դարում սկսված ցեղասպանության շարունակությունը: Ըստ որում այդ “հայասպանությունը” Թուրքիայում հետևողականորեն իրագործվել է տարբեր ուժերի կողմից երեք ներթական փուլերում. Արդուլ Համիդ 2-րդը՝ 1894-1896 թթ., երիտթուրքերը՝ 1915/16 թթ., իսկ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքը՝ 1922-ին: Կարապետ Խաչերյանը քննադատում է նաև Եվրոպայի մեծ տերությունների և Միացյալ Նահանգների պահվածքը. նրանց անտարբերությունը

սարսափի է ազդում: Նրանք վարաճում են որևէ կերպ միջամտել կամ թեկուց իրենց նավերի վրա փախատականներին ապաստան տայ: Նման վերաբերմունք արդեն ծանոթ էր 1915/16 թթ. ցեղասպանության ժամանակվանից: Միաժամանակ սակայն առիթն օգտագործվում էր, որպեսզի Եվրոպայում ու Միացյալ Նահանգներում ուրույն քաղաքական նպատակների համար տրամադրություններ ստեղծող շարժանկարների համար նյութեր հավաքվեին:

Հանցագործներն իրենց արարքների համար Մեծ տերությունների կողմից ոչ միայն երբեք պատասխանատվության չկանչը-վեցին, այլև նույնիսկ պաշտպանության տակ առնվեցին: Թվով շատ քիչ պետություններ են առ այսօր ճանաչել հայկական ցեղասպանությունը: Թուրքիան շարունակում է ժմւտել ամեն պատասխանատվություն: Ով որ այսօր Թուրքիայում հրապարակորեն խոսի հայասպանության մասին, նրա դեմք քրեական գործ կհարուցվի:

Որպես ականատեսի ժամանակագրություն Կարապետ Խաչենի օրագիրը կարևոր փաստաթուղթ է, մի վկայություն, որ Թուրքիայի իրադարձությունները հայերի կողմից հնարած պատմություն չեն: Օրագիրը հայոց պատմության համար մեծ ներդրում է. իր անհողողող փաստականությամբ այս օրագիրը անցյալը փաստագրող կարևոր ազդակ է:

Mitteilungen des Instituts für österreichische Geschichtsforschung,
116. Band, Heft 1-2, S. 207-209 (Ավստրիական պատմաքննության
ինստիտուտի հաղորդումներ, հատոր 116, պրակ 1-2, էջ 207-208)



Մեծիորս օրագրին նվիրված գրքի գերմաներեն հրատարակությունն արժանացավ գերմանացի հայտնի հասարակագետ և հոգեբան, նաև ցեղասպանության փորձագետ՝ պրոֆ. դ.-ր. Ռիխարդ Ալբրեխտի (Prof. Dr. Richard Albrecht) հատուկ ուշադրության: Ի դեպք վերջինիս կենսագրությունը ցույց է տալիս, որ նրա երակներում հոսում է նաև հայկական արյուն: Պատահական չե, որ դեռևս մինչև 2006 թ., պրոֆ. Ալբրեխտն արդեն զրադկել էր հայ ցեղասպանության հարցերով և որպես առաջինն օգտագոր-

ծել “Հայասպանություն” (Armenozid) տերմինը: Եվ ահա 2000-ին գիտնականը Գերմանիայի Աախեն (Aachen) քաղաքում իր “20րդ դարի ցեղասպանության քաղաքականություն” շարքի “Հայասպանություն” (Armenozid) վերնագիրը կրող 2րդ հատորը նվիրել է սույն գրքի գերմաներեն հրատարակությանը: Նա դրվատանքով է խոսում Դ. Սաքայանի մասին և ուրախությամբ նշում, որ վերջինիս շնորհիվ այժմ Զմյուռնիայի ողջակիզմանը նվիրված երեք հիմնական գրքերը (Ռենե Բաս, René Bas, George Horton և Majorie Housepian) լրացվում են պատմական կարևոր նշանակություն ունեցող այս սկզբնաղբյուրով: Նա մաճրամասնորեն վերլուծում է բժիշկ Կ. Խաչերյանի օրագրում նկարագրված եղելու-թյունները և տեղադրում դրանք Մուսթաֆա Քեմալի Թուրքիայի քաղաքական իրադրության մեջ: Գիտնականը խիստ քննադատության է ենթարկում քեմալական շարժումը, որը Զմյուռնիան կործանելուց մի քանի շաբաթ անց՝ վերջինիս աճյունների վրա հիմնել է Թուրքիայի հանրապետությունը: Զուգահեռներ անց-կացնելով ողջակիզումների միջև, որ իրագործվել են 1922-ին Աթաթուրքի կողմից Զմյուռնիայի քրիստոնյաների նկատմամբ և 20 տարի անց Հիւլերի կողմից՝ հրեաների՝ դ.-ր. Ռիխարդ Ալբրեխտը մեջ է բերում հայտնի, ծագումով հրեա, գերմանացի քաղաքական տեսաբան Հաննա Արենտի (Hannah Arendt) խոսքերն հրեաների ողջակիզման կապակցությամբ.

**«Այդ բանը երբեք չպետք էր տեղի ունենար...»
(Dies hätte nie geschehen dürfen...)**

Այս տողով է տոգորվված դ.-ր. Ալբրեխտի “Հայասպանություն” վերնագիրը կրող ամբողջ աշխատությունը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակումի, Ս. Միլիոն մը հայերու ջարդին պատմութիւնը, Կ. Պոլիս, 1919:

Ահարոնեան, Աւետիս. Սարդարապատից մինչև Սկը և Լոգան (Քաղաքական օրագիր), Պոստն, 1943:

Աճառեան Հրաչեայ. Տաճկահայոց հարցի պատմութիւնը (Ակզրից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915:

Անոյշ, Արմեն. Այրուած քաղաքի մը պատմութիւնը, Հալեպ, 1948:

Անտոնեան, Արամ. Այն սկ օրերուն ..., Բոստոն, 1919:

Եսայան, Աղասի. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965:

Թեհիլիրեան, Սողոմոն. Վերյիշումներ (Թալեաթի ահաբեկումը), Գաֆիրէ, 1956:

Թիրապեան, Արամ. Հայ ժողովրդի դատաստանին առջն, 1914-1925, Մարսել, 1925:

Լենկ Տեյվիտ Մարշըլ և Ուոքը Քրիստոֆոր Փ. Հայերը, Թարգմ. տոքթ. Թորոս Թորանեանի, Հայեապ, 1978

Խաչերեան, Կարապետ. Զմիւնիական արկածներս 1922-ին, Դորա Սաքայեան (խմբ.) Montréal: Arod Books, 1995 և 1997:

Կեորկիզեան, Արսեն. Մեր ազգային գոյապայքարը 1915-1922-ի գուլումի տարիներուն, Բեյրութ, 1965:

Կիրակոսյան, Ջոն Ս. Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1965:

Կիրլեքեան, Ցակոր. Զնահանջնք՝ այլ ճակտինք. Մեծ եղեռնի 50-ամեակին առթիւ, Թորոնթոն, 1969:

Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր. խմբագրական հանձնաժողով՝ Լ. Ա. Բարսեղյան և ուրիշներ. ՀՀ Գիտությունների ակադեմիա, Երևան, 2001:

Հյուսյան, Մինաս. Մեծ եղեռնի զոհ գրողները, Երևան, 1965:

Մեր Իզմիրը և շրջակայ քաղաքները, Նյու-Յորք, 1960:

Մակարեան, Ասատոր Յ. Ցուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929:

Մևլան Զատէ Ռիֆար. Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը և իթթիհատի հայացինց ծրագրերը, Բ տպագրութիւն, Վերամշակուած և պատկերազարդ, Պեյրութ, 1968:

Միսալեան, Գրիգոր Յ. Պարտիզակը ու Պարտիզակցին,
Գաբիրէ, Տպարան Սահմակ-Մեսրոպ, 1938:

Մորկընթառու, Հենրի. Ամերիկեան դեսպանի յիշատակները և
Հայկական Եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919:

Ներսիսյան, Մկրտիչ Գ. Հայ ժողովոյի ճակատագրական
պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Երև
ան, 1955:

Պոյաճեան, Գուրգեն. Եգեականի դիցունին: Զմիւնիան և
զմիւնահիայ գաղութը, Փարիզ, «Յառաջ», 1972:

Հայկական սովետական հանրագիտարան, Բ. 4, ՀԽՍՀ ԳԱ,
Երևան, 1978:

Սվագլյան, Վերֆին. Հայոց ցեղասպանություն. Ականատես
վերապրողների վկայություններ, Երևան, 2000:

Վերֆել, Ֆրանց. Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964:

Տաշեան, Հ. Հայ ազգի տարագրութիւնը գերմանական
վավերագիրներու համեմատ, մասն Ա., Վիննա, 1921:

Տարօնեցի, Աղան. Տարօնապատում, Պատասխանատուները
Տարօնի Եղեռնին. Պեյրութ, 1966:

Քուեան, Յակոբ. Հայք ի Զմիւնիա և ի շրջակայք, Wien:
Mechitaristeng., 1899:

Օսեան, Երուանդ. Արինուտ յիշատակումը. Կ. Պոլիս, 1920:



Авакян, Арсен, *Геноцид 1915. Механизмы принятия и исполнения решений*. Ереван, 1999.

Михайлова, В., *Кровавый султан*, Москва, 1912.

Нерсисян, Мкртич Г. (ред.), *Геноцид Армян в Османской Империи*, Ереван, 1982.

Петросян, Ю. А. *Младотурецкое движение (вторая половина XIX - начало XX вв.)*, Москва, 1971.

Саркисян, Е. К., *Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.*, Ереван, 1972.

Степанян, С.С., *Армения в политике империалистической Германии*, Ереван, 1975.



Akçam, Taner: *Armenien und der Völkermord: Die Istanbuler Prozesse und die türkische Nationalbewegung*. Hamburg 1996.

Alexander, Edward: *A Crime of Vengeance. An Armenian Struggle for Justice*. Lincoln: Universe, 1991.

Alexandres, Alexes: *The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations, 1918-1974*. Athens: Center for Asia Minor Studies, 1983.

Astourian, Stephan H.: "Genocidal Process: Reflections on the Armeno-Turkish Polarization", in: Hovannisian, Richard G. (Juüp.) *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, 53-79.

Bædeker, Karl: *Konstantinopel und das Westliche Kleinasiens. Handbuch für Reisende*. Leipzig: Verlag Karl Bædeker, 1905.

Baghdjian, Kevork K.: *La confiscation, par le gouvernement turc des biens arméniens -dits «abandonnés»*. Préface de Yves Ternon. St. Lambert: Payette & Simms, 1987.

Beylerian, Arthur (Juüp.): *Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les arméniens dans les archives françaises (1914-1918); Recueil de documents*. Paris, 1983 (Publications de la Sorbonne. Série Documents 34.).

Bibescu, Martha: *The Eight Paradises: Travel Pictures in Persia, Asia Minor and Constantinople*. New York: E.P. Dutton & Company, 1923.

Cadoux, Cecil John: *Ancient Smyrna. A History of the City from the Earliest Times to 324 A.D.* Oxford: Basil Blackwell, 1938.

Childs, W. J.: *Across Asia Minor On Foot*. Edinburgh: W. Blackwood, 1917.

Cramer, John Anthony: *A Geographical and Historical Description of Asia Minor*. Amsterdam: Adolf M. Hakket, 1971.

Dadrian, Vahakn N.: "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide", in: Hovannisian Richard G. (Juüp.) *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, £ 280-310.

Dadrian, Vahakn N.: "Genocide As a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications." *The Yale Journal of International Law*, Vol. 14, Number 2, Summer 1989.

Դադրիան. *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*. 2nd rev. Providence; Oxford, 1997.

Դադրիան. *German Responsibility in the Armenian Genocide: A Review of the Historical Evidence of German Complicity*. Watertown, Mass., 1996.

Davies, Leslie A.: *The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*. Susan K. Blair (Juüp.). New Rochelle, N.Y.: Aristide D. Caratzas, Orpheus Pub., 1989.

Doulis, Thomas: *Disaster and Fiction: Modern Greek Fiction and the Asia Minor Disaster of 1922*. Berkeley: University of California Press, 1977.

Lord Eversley: *The Turkish Empire from 1288 to 1914 and from 1914 to 1924*. By Chirol, Sir Valentine. New York: Howard Fertig, 1969.

Foss, Clive: "The Turkish View of Armenian History: A Vanishing Nation." In: Hovannisian, Richard G. (ԽՍՀ.): *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992. էջ 250-279.

Fuchs, Günter; Lüdemann Hans-Ulrich: *Mördermord*. Rostock 2002.

Georgacas, Demetrius J.: *The Names for Asia Minor Peninsula, and a Register of Surviving Anatolian Pre-Turkish Placenames*. Heidelberg: C. Winter, 1971.

Gorman, Robert F.: *Historical Dictionary of Refugee and Disaster Relief Organizations*. Metuchen, N.J.: Scarecrow Press, 1994.

Graber, G.S.: *Caravans to Oblivion: the Armenian Genocide, 1915*. New York, Chichester (u.a.), 1996.

Gust, Wolfgang: *Der Völkermord an den Armeniern: Die Tragödie des ältestens Christenvolkes der Welt*. München, 1993.

Hale, William: *Turkish Politics and the Military*. London: Routledge, 1994.

Hartunian, Abraham H.: *Neither to Laugh Nor to Weep: A Memoir of the Armenian Genocide*. Boston: Beacon Press, 1968.

Hassiotis, Ioannis K.: "The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915-1923)." In: Hovannisian, Richard G. (ԽՍՀ.): *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, էջ 129-151.

Hirschon, Renee: *Heirs of the Greek Catastrophe: the Social Life of Asia Minor Refugees in Piraeus*. Oxford: Clarendon Press, 1989

Hofmann, Tessa: *Annäherung an Armenien: Geschichte und Gegenwart*. München: Verlag C.H. Beck, 1997. (Beck'sche Reihe. 1223)

Դուլիս. (ԽՍՀ.): *Armenier und Armenien: Heimat und Exil*. Reinbek bei Hamburg: Rowohlt, 1994. (rororo-Sachbuch Nr. 9554).

Դուլիս. *Die Armenier: Schicksal, Kultur, Geschichte*. Nürnberg: DA Verlag, 1993.

Դուլիս (ԽՍՀ.): *Das Verbrechen des Schweigens: Die Verhandlung des türkischen Völkermordes an den Armeniern vor dem Ständigen Tribunal der Völker*. Vorw. u. redaktionelle Bearb.: Tessa Hofmann. Göttingen, Wien: Gesellschaft für bedrohte Völker, (1985). (pogrom Taschenbücher. Bd. 1012).

Դուլիս և Koutcharian, Gerayer (ԽՍՀ.): *Armenien: Völkermord, Vertreibung*.

bung, Exil; 1979-1987: *Neun Jahre Menschenrechtsarbeit für die Armenier, neun Jahre Berichterstattung über einen verleugneten Völkermord*. Göttingen, Wien: Gesellschaft für bedrohte Völker, 1987. (pogrom. themen. Bd. 1).

Horton, George. *The Blight of Asia: An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; with the True Story of the Burning of Smyrna*. Indianapolis, 1926.

Առևտյան. *Report on Turkey. USA Consular Documents*. Athens: The Journalists' Union of the Athens Daily Newspapers, 1995.

Housepian, Marjorie: *The Smyrna Affair: The First Comprehensive Account of the Burning of the City and the Expulsion of the Christians from Turkey in 1922*. New York, 1971

Hovannisian, Richard G. *Armenia on the Road to Independence*. Berkeley: University of California Press, 1967

Առևտյան. *The Armenian Holocaust: A Bibliography Relating to the Deportations, Massacres, and Dispersion of the Armenian People, 1915-1923*. Cambridge Mass.: National Association for Armenian Studies and Research; Armenian Heritage Press, 1978.

Առևտյան. (իսլ.) *The Armenian Genocide in Perspective. Introduction by Terrence Des Pres*; Préface de Israel W. Charny. New Brunswick, N.J.: Transaction Books, 1986.

Առևտյան. (իսլ.) *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992.

Kienitz, Friedrich K.: *Städte unter dem Halbmond*. München: Verlag C.H. Beck, 1972.

Kieser, Hans-Lukas; Dominik J. Schaller (իսլ.): *Der Völkermord an den Armeniern und die Shoah. The Armenian Genocide and the Shoah*. Chronos Verlag, Zürich. 2002.

Κλεάνθης, Φώνης: *Έτσι χάσαμε την Μικρά Ασία*. Αθήνα: Εστία, 1983.

Koutcharian, Gerayer: *Der Siedlungsraum der Armenier unter dem Einfluß der historisch-politischen Ereignisse seit dem Berliner Kongreß 1878. Eine politisch-geographische Analyse und Dokumentation*. Dietrich Reimer Verlag, Berlin 1989 (Abhandlungen des geographischen Instituts/Anthropogeographie. Freie Universität Berlin. Bd. 43).

Künzler, Jakob: *Im Land des Blutes und der Tränen. Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918)*. Potsdam: Tempel-Verlag, 1921. Neue Auflage von Hans-Lukas Kieser (իսլ.), Zürich: Chronos Verlag, 1999.

Lang, David Marshall; Walker, Christopher J.. *The Armenians*. London.

1987 (Minority Rights Group Report).

Lang, David Marshall: *The Armenians: A People in Exile*. London: George Allen & Unwin, 1988.

Lepsius, Johannes: *Armenien und Europa*. 4. u. 5. Aufl. Westend, Berlin 1897.

Նոյնը. Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei. Potsdam, 1916 (weitere Auflagen unter dem Titel "Der Todesgang des armenisches Volkes in der Türkei während des Weltkrieges").

Նոյնը (իսլր.) *Deutschland und Armenien 1914-1918: Sammlung diplomatischer Aktenstücke*. Potsdam: Tempel-Verlag, 1919. Neuausg. Bremen: Donat-Verlag, 1986 (Online-Edition der ungetilgten Aktenstücke: <http://www.armenocide.de>).

Marashlian, Levon: *Politics and Demography: Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire*. Cambridge Mass.: Zoryan Institute, 1991.

McIntyre, Robert J.: *Bulgaria: Politics, Economics and Society*. London: Pinter Publishers Ltd., 1988.

Melson, Robert F.: *Revolution and Genocide. On the Origins of the Armenian Genocide and the Holocaust*. Chicago: University of Chicago Press, 1992.

Նոյնը. "Revolution and Genocide: On the Causes of the Armenian Genocide and the Holocaust." In: Hovannisian, Richard G. (իսլր.): *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, էջ 80-102.

Miller, Donald; Touryan Miller, Lorna. *Survivors: An Oral History of the Armenian Genocide*. Berkeley: University of California Press, 1993.

Morgenthau, Henry (sen.): *Ambassador Morgenthau's Story*. Garden City, N.Y.: Doubleday, Page and Co., 1919.

Նոյնը: All In a Life-time (French Strother-ի համագործակցությամբ). Garden City, N.Y.: Doubleday, Page and Co., 1922.

Նոյնը: *I Was Sent to Athens* (En collaboration avec French Strother). Garden City, New York: Doubleday, Doran & Cie, 1929.

Nassibian, Akaby: *Britain and the Armenian Question 1915-1923*. London: Croom Helm Ltd., 1984.

Nazer, James: *The first genocide of the 20th century; the story of the Armenian massacres in text and pictures*. New York: T & T Publishing 1968.

Our Smyrna and Outlying Cities. New York: The U.S. Smyrna Association, 1960.

Peroomian, Rubina: "Armenian Literary Responses to Genocide: The

Artistic Struggle to Comprehend and Survive." In: Hovannisian, Richard G. (ԽՍՀ.): *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, էջ 222-249.

Մույզը. *Literary Response to Catastrophe. A Comparison of the Armenian and Jewish Experience*. Atlanta, Georgia: Scholars Press, 1993.

Puaux, René: *Les derniers jours de Smyrne*. Paris: Société Générale d'Imprimerie, 1923.

Reid, James J.: "Total War, the Annihilation Ethic, and the Armenian Genocide, 1870-1918." In: Hovannisian, Richard G. (ԽՍՀ.) *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York: St. Martin's Press, 1992, էջ 21-52.

Report: *America's Relief Expedition to Asia Minor under the Red Cross*. Washington, D. C.: The Red Cross, 1896.

Robert, Louis: *Noms indigènes dans l'Asie-Mineure gréco-romaine*. Paris: A. Maisonneuve, 1963.

Sommer, Ernst: *Die Wahrheit über die Leiden des armenischen Volks in der Türkei während des Kriegs*. Frankfurt am Main: Verlag Orient, 1917.

Smith, Roger W.: "The Armenian Genocide: Memory, Politics, and the Future." In: Hovannisian, Richard G. (ԽՍՀ.) *The Armenian Genocide: History, Politics, Ethics*. New York : St. Martin's Press, 1992, էջ 1-20.

Sonyel, Salahi Ramsdan: *Turkish Diplomacy 1918-1923. Mustafa Kemal and the Turkish National Movement*. London: Sage Publications, 1975.

Svazlian, Verjine: *The Armenian Genocide in the Memoirs and Turkish-Language Songs of the Eye-Witnesses*. Yerevan 1999.- Internet-Internet: http://www.cilicia.com/armo_genosongs.html.

Տէր-Ցակորեան Ցակոր: *Պարսիզակը խասուսիկ*. Paris: Imp. A. Der Acopian, 1961.

Ternon, Yves. *The Armenian Cause*. Delmar, N.Y.: Caravan Books, 1985.

Մույզը. *Tabu Armenien: Geschichte eines Völkermordes*. Berlin, 1988.

Toynbee, Arnold J.: *Armenian Atrocities: the Murder of a Nation*. London: Hodder & Stoughton, 1915.

Մույզը. "The Truth about Near East Atrocities." In: *Current History*, July 1923, էջ 544-551.

Մույզը. Kirkwood, Kenneth P.: Turkey. Repr. Westport, Connecticut: Greenwood Press, 1976.

The Treatment of the Armenians in the Ottoman Empire 1913-1916: Documents presented by Viscount Grey of Fallodon, Secretary of State Foreign Affairs. London, 1916 (2. Aufl. Beirut 1979).

Trebilco, Paul R.: *Jewish Communities in Asia Minor*. Cambridge: Cambridge University Press, 1991.

Tsirkinidis, Harry: "At last we uprooted them...": *The genocide of Greeks of Pontos, Thrace and Asia Minor, through the French archives*. Thessaloniki: Kyriakidis Brothers, 1995.

Անլիդ. *The Red Rivers: The tragedy of Hellenism of Anatolia, 1908-1923; a historical tale*. Thessaloniki: Kyriakidis Brothers, 1995.

Vierbücher, Heinrich: *Was die Kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat: Armenien 1915, die Abschlachtung eines Kulturvolkes durch die Türken*. Reprint der Ausgabe 1930, Bremen: Donat Verlag, 1987.

Der Völkermord an den Armeniern vor Gericht: der Prozess Talaat Pascha. Hrsg. u. eingeleitet von Tessa Hofmann im Auftrag der Gesellschaft für bedrohte Völker. 3., erg. U. überarb. Ausg. Göttingen: Gesellschaft für bedrohte Völker, 1985.

Walker, Christopher. *Armenia: The Survival of a Nation*. London: St. Martins Press, 1980. Second edition: New York, 1990.

Werfel, Franz: *Die vierzig Tage des Musa Dagh*. Roman (1933). Frankfurt am Main, 1985.

ԴՈՐԱ ՍԱՔԱՅԵԱՆ
ԶՄՅՈՒՇՆԻԱ 1922

ԲԺԻՇԿ Կարապետ Խաչեռյանի
օրագիրը

Ստորագրված է տպագրության՝ 25.02.2011 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Չրատ. 11.0 մամոլ, տպագր. 12.5 մամոլ = 11.6 պայմ. մամոլի:
Տպաքանակ՝ 300: Պատվեր՝ 8:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52